Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1874
5499
491.99-5
F-13

4 350

# ՏԱՐԵՐՔ

ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

5971
25 FEB 2013

04 MAY 2010
491.99-5
F-13
425
39-ԲԱ
1004
16342

# ՏԱՐԵՐՔ

## ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

*դպրատանց տղոց համար*

ՅՕՐԻՆԵՑ

Հ. ԱՐՍԷՆ ԿՈՄԻՏԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆՑ.

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1874 — ՌՅԻԳ

## ԱՌ ԱԶՆԻՒ ՅՈՎՀԱՆՆԷՍԻԿ

## ԴԵՌԱԲՈՅՍ ՈՐԴԻ

## ՎԵՀԱԶԻՆ ՅԱԿՈԲԱՅ ՏԻԿԶԵԱՆ

## ՆՈՒԷՐ

*Այդպիսւոյ հօր պայազատ և նազելի շառաւիղ*
*Որ մըտաց և սըրտի մըտեր մարգից 'ի շաւիղ,*
*Բաստ մեծ եղցէ յիս՝ գըրքոյն թէ զոյգ հայրական*
*Ինձ սովին տացի տառիւք լինել փութոյդ օգնական*
*Ցըմբըռնել ըզհայկին և զհայրենեացըդ լեզու,*
*Անդուստ՝ ըզգօնութեան պէսպէս ձայնից զող հասու,*
*Զի կեցցես միշտ պարծանք տան քում և հօր արժանի.*
*Թէ սիրով ընդունիցիս՝ լիցիմ խնիք պիտանի.*
*Շնորհիւ քով վայելեալք 'ի սոյն մանկունք Թորգոմայ*
*Առ 'ի քէն պարգեւառուք դաւանեսցին 'ի սըմոյ.*

**1846.**

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր օրերն ազգիս իր լեզուն աղէկ սորվելու մեծ փոյթը տեսնելով և յազգասիրաց ստիպեալ, աս համառօտ քերականութիւնս հանեցինք մեր նոր կարգով աւելի զարգացելոց համար շինած ընդարձակ գրաբառ քերականութենէն: Վասն զի թուեցաւ որ մինչև հիմայ ունեցած համառօտ քերականութիւններնիս, թէպէտ և մէկմէկէ աղէկ, բայց կամ տղոց յարմար չէին, կամ հարկաւոր բաները պէտք եղածին չափ բաւական չէին սորվեցըներ:

Որը յարմար չէր երևէր, զի դիւրին ու կարճ ճամբայ չունէր, լեզուին գիտելիքն խստակ ու վայլած կարգով չէր սորվեցըներ, ու տղոց կարողութենէ վեր՝ մանր մունր ու շատը փուճ կամ աւելորդ ու բառգրքի վայլելու բաներու կ'լինար. կամ պարզ ըլլայ ըսելով՝ վարպետին ընելու երկայն ճղճղած մեկնութիւններն ալ ինք կ'ընէր, որ քերականութիւն գրողին պարտքը չէ և շատ անգամ տղոց աւելի մութ կ'լինայ կամ ինքնիրեն յայտնի է: Որն ալ՝ համառօտ ըլլայ ըսելով, լեզուին խիստ պէտքի բաներն ալ ու կանոնը լուսաւորելու չափ պէտք եղած օրինակներն ալ դուրս ձգեր էր, ու գրեթէ բոլոր երկրորդ կարգի գիտելիքներն, որ թէ և տղուն իր շարադրելուն համար ալ պէտք

չըլլան նէ, գոնէ չափաւոր պարզ և ընտիր գրքերը շիտակ ու ճիշտ հասկընալու հարկաւոր են։ Թող որ տեղ տեղ քանի մը սխալ ալ մնած կայ, որ ժամանակը չտկեր էր։

Մենք աս նոր համառօտ քերականութեանս առջի մասին մէջ՝ ութը մասանց բանին խիստ հարկաւոր գիտելիքը կարճ կարճ դրինք․ քիչ մը խրթին կամ քիչ մը բարձրագոյն բաները մանր գրով զատեցինք կարգին մէջ, որ վարժապետը տղոց ընդունակութեանը յարմար չտեսնէ նէ առջի բերանը, երկրորդ անգամ դառնալուն կարդացընէ։

Իսկ շարադրութեան կանոններն երկու դասի բաժնեցինք, ինչպէս որ սովորութիւն է ամէն կարգաւորեալ դպրոցները։ Երկրորդ մասին մէջ՝ պարզ շարադրութեան խիստ պէտքի և առաջին կարգի գիտելիքը միայն համառօտ ու խտակ ճամբով և ընտիր գրոց օրինակներով դրինք առաջին դասի ուսանողաց համար։

Երրորդ մասին մէջ՝ ձևաւոր շարադրութեան խիստ շատ կամ երբեմն երբեմն պարզ ու միջակ շարադրութեանց մէջ ալ գործածուած բաները նոյնպէս համառօտ ու խտակ ոճով և ընտիր օրինակներով դրինք՝ երկրորդ դասի ուսանողաց համար, որ առջի դասին մէջ աղէկ մը վարժելէն ետքը պիտի կարդացընէ վարժապետը, և անոնց վրայ ալ կրթութիւն ընել տայ, թէ որ ինչուկ հոն երթալու միտք և ատեն ունենան նէ։ Եթէ մէկուն շատ երևնայ աս ձևաւոր շարադրութեան բաները, ընդարձակ քերականութիւններ որ տեսնէ նէ՝ աս անոր քովն ոչինչ պիտի երևնայ։ Ուգիտնայ որ և ոչ իսկ ամենէն յայտնի և ընդունելի

գրքին՝ Աստուածաշնչին մէջ գտնուած ձևերն ամէնը դրած ենք հոս. ինչու որ ամէն խրթին բաները դուրս ձգեցինք։

Ուրիշ մանր մունր կարգի կամ բանի փոփոխութիւն որ ըրեր ենք նէ, շիտակութեան ու դիւրութեան համար ըրեր ենք՝ տարիներով մտածելէն ու քննելէն ու փորձելէն ետքը, որ ընդարձակին մէջ բաւականապէս պատճառն ալ տուած ենք. ու հոս համառօտիս մէջն ալ կարճ ակնարկութեամբ մը իմացուցեր ենք ուզողին ու կրցողին հասկընալու չափ։

Բայց միայն ուղղականին վրայ մինակ հինգ հոլով դնելնուս ու ինը չդնելնուս պատճառը՝ քիչ մ'աւելի որոշ հասկըցընել կ'ուզենք հոս տեղս։ Հինգ դնելնուս պատճառն ան է, որ նշանակութեան դիէն ալ, շէնքի դիէն ալ հինգ հոլով միայն ունի հայկական լեզուն, և ոչ աւելի։ — Նշանակութեան դիէն, վասն զի հոլով ըսուած բանն՝ անանկ մէկ պարզ որոշ միտք մը միայն տալու է բառին ինքնիրեն իր մէջն՝ որ ալ ուրիշ կերպով չկարենայ զրուցուիլ, և ալ ուրիշ կերպ կերպ մտքի չառնուի։ Ասանկ են միայն հինգ հոլովնիս, որ ուրիշ կերպով մ'ալ չեն կրնար զրուցուիլ՝ ամենևին նոյն մտքով, և առանց աս հինգ հոլովին մէկուն կարօտ ըլլալու. և միշտ մէկ միտք մը միայն կուտան. սեռականը միշտ որոտմը (ժէմն) կընշանակէ, տրականը որոտ (ժէմ), գործիականը որոտն, բացառականը որմ, հայցականը որը (ժէմ)։ Կամ թէ և ուրիշ մտքով մ'ալ առնուին նէ, նոյնպէս պարզ հոլովի մը մտքով է. ինչպէս երբեմն բացառականն ու հայցականը գործիականի ու նախդրիւ տրականի մտքով. ան ալ ուրիշ շատ կերպ մեկնութիւն ալ կրվերցընէ։ — Իսկ

շէնքի դիէն, վասն զի աս հինգ հոլովը միայն զատ զատ վերջ ունին, պարզ վերջահոլով են։ Եւ թէպէտ անուանց մէկ երկու հոլովը նման են մէկմէկու կամ ուղղականին, բայց ես, դու դերանուանցը՝ հինգն ալ, ու միայն հինգը, զատ են իրարմէ։ Աս երկու պատճառիս համար՝ հինգէն ոչ աւելի և ոչ ալ պակաս կրնայ դրուիլ։

Աս ըսածէս կըհասկըցուի ինչ չդնելնուս պատճառն ալ։ Վասն զի մէկալ իրեքը, պատմական, պարառական, ներգոյական ըսուածները, նշանակութեան դիէն անանկ մէկ իրենք իրենց պարզ որոշ միտք մը չեն տար՝ որ ուրիշ կերպով չկարենայ զրուցուիլ. առանց իրենց կարօտ ըլլալու՝ ուրիշ շատ կերպով ալ կըզրուցուին այլեայլ նախդրով ու հոլովառու բառերով. ինչպէս աշխարհաբառին մէջն ալ անոնց հոլովը չունինք, վրան կամ համար, չորս դէն, մէջը ըսելով կըբացատրենք։ Եւ մէկ միտք մը միայն չեն տար, հապա զանազան մտքեր, ինչպէս կըտեսնես նախդրաց մէջ, մանաւանդ ընդարձակ քերականութեան ու բառգրքի մէջը։ Շէնքի դիէն ալ մէկ նոր վերջահոլով մը չեն. նոյն պարզ վերջահոլովներուն վրայ ՚ի կամ է դրուած է. գործիականին վրայ ՚ի դրեր՝ պարառական են ըսեր, բացառականին վրայ ՚ի դրեր՝ պատմական են ըսեր, եզակի վերջահոլով տրականին վրայ է դրեր՝ ներգոյական են ըսեր։ Իսկ թէ որ ամէն պարզ հոլովի վրայ նախդիր մը դրուելով միտքը փոխուիլը՝ զատ հոլով սեպելու ըլլանք նէ, ան ատենը չէ թէ ինը՝ տասը, հապա քսասուն հոլովի երկան բարակ անհատնում շարոց մը շինելու կախելու է։ Վասն զի ամէն պարզ նախդիր ալ, ՚ի, ՚է, յ, ց, առ, առ ՚է, ընդ, ըստ, որ հոլովակերտ ալ

ըսուեր են, ամէն հոլովի վրայ կըդրուի խիստ շատ անգամ, ու կերպ կերպ մտքեր կուտայ բառին, ինչպէս կըտեսնուի ընդարձակ քերականութեան ու բառգրքի մէջ. բայց անով՝ հոլով սեպուած ու հոլովի կարգ-անցած չեն, նախդիրներուն կամ նախադրութիւննե-րուն մէջ մնացեր են: Ինչպէս ասոնք հոն պիտի սորվի նէ տղան, ան իրեքն ալ՝ աւելի աղէկ ու լման կըսորվի հոն՝ իրենց այլեւայլ նշանակութեամբը: Նիւթապէս սերտելը դիւրին է տղոց, կ'ըսուի. իրաւ է. բայց նախ-դիրներուն մէկալ առմունքներն ալ նիւթապէս օրի-նակներով կըսորվի տղան, և ոչ վերացեալ վարդապե-տութեամբ. Ինչուան հոլովի տեղ չդրուին նէ, միթէ նիւթական չե՞ն ըլլար. անանկ է նէ, ընտոր ըսինք, մէկալ նախդիրներն ալ ամենն առնենք շարենք հո-լովի տեղ. ի՞նչ կըմնայ, անոնց ալ մէյմէկ աղւոր աղ-ւոր անուններ դնելը բա՞ն մըն է: Ու տղաքնիս ատանկ առանց խելքերնին բանալու կըթելու՝ բոլորովին նիւ-թապէս սորվեցընելն ալ աղէկ բա՞ն մըն է, թող ի-մաստուն մանկավարժք մտածեն:

Իսկ կոչական ըսուած հոլովը՝ մեր յատուկ լեզուին մէջ ամենեւին փոփոխութիւն մը չունի. ուղղականն ինչ է նէ, անանկ ալ կանչելու կըբանի, ինչպէս աշխար-հաբառին մէջն ալ: Ուսկի՞ց անանկ է նէ հոլով կ'ըլլայ:

Աս չորս հոլովի տեղ դրուածները՝ մեր բուն հին լեզուագէտ նախնիքն ալ ամենեւին չեն ճանչնար ի-րենց քերականութեան մէջ, ու կ'ըսեն ալ յայտնա-պէս հռոմին հակառակ՝ որ հինգ հոլով միայն ունի՝ թէ մեր հոլովները վեց են, ուղղականը մէկտեղ առ-նելով հռոմին պէս, և անանկ ալ կըդնեն: Ետքերը տգիտութեան դարու մէջ օտարազգիներէն ստեղ-

ծուած, և առանց քննելու մեր գիտնոց քերականութեան մէջ ալ մնած են։ Եւ օգուտ մը չունենալէն ՚ի զատ, կրկին վնաս ունին. մէյմը՝ սխալ բան սորվեցընելով, այսինքն՝ սուտ հոլով և որպէս թէ այնչափ միայն է ան սուտ հոլովին նշանակութիւնը. մէյմ՚ալ՝ հոլովմունքը երկնցընելովը՝ տղոց նիւթական սերտողութեան աշխատանքն աւելցընելով ու յիշողութիւննին ու բերաննին փուճ՝ տեղը յոգնեցընելով։

Անանկ է նէ՝ ուղղականէն զուրս հինգ հոլով միայն ընդունիլը բուն խելքի և մեր լեզուագէտ նախնեաց համաձայն է, ու տղոց դիւրութիւն։ Եւ երեկուան առօրուան ալ բան չէ աս փոփոխութիւնս. 1815 էն ՚ի վեր եղած ու պատճառներն ալ համառօտ հասկըցուած է մեր Աւետիքեան վարդապետին ընդարձակ քերականութեան մէջը։ Բայց ի՞նչ օգուտ որ գէշ սովորութեան նախապաշարումն և աչառութիւնը մըտքերը կապեր են, թող չեն տար որ չիտակն, աղէկն, օգտակարը տիրէ։ Բայց այսուհետև ով որ չիտակին, աղէկին և օգտակարին ազգային նախանձով անաչառ փոյթ և սէր ունի նէ, ինչ ընելուքին տարակուսելու չէ։

Ամէն կտոր մը նոր բան առջի բերանը քիչ մը դըժուար կուգայ, մանաւանդ վարժապետաց. վասն զի տղան դեռ բան մը չիտէ որ ընտրէ, ճերմակ թուղթ մըն է, ինչ որ գրես՝ ան կ՚առնէ։ Կըմնայ որ անանկ է նէ վարժապետները նոր բան մը տեսածնուն պէս՝ մէկէն չարհամարհեն. խելքով քննեն բանին իրաւունքն ու յարգը, փորձով ալ աղէկ մը հասկընալ ուզեն դիւրութիւնն ու օգուտը. անկէ ետքը կ՚ուզեն նէ թող մէկդի նետեն. չէ նէ՝ ծուռ հինը ձգեն, չիտակ նորին

հետեւին ու սովորութիւն ընեն։ Մեկն որ իրաւացի պատճառներէ ետքը՝ գիտցածէն չուզեր շարժիլ ու նոր բան մ՚ընդունիլ նէ, ոչ երբէք կըլուսաւորի, ոչ երբէք առաջ կ՚երթայ։

Բայց մէկ բանին օգուտն ալ տեսնելու համար՝ պէտք է սրտով ու գործքով փոյթ ու ջանք ունենալ աղէկ առաջնորդելու տղոց, ու չափաւոր երկայնամիտ ալ ըլլալ՝ պտուղը տեսնելու։ Ապա թէ ոչ, տղոց յարմար քերականութիւն ըսելը՝ մէկ երեւակայութիւն մը կ՚ըլլայ. եւ ինչ քերականութիւն որ շինուի տղոց, անկարելի է որ ամենեւին ու կատարեալ յարմար ըլլայ անոնց մըտքին ու հասկացողութեանն, որ դեռ ոչինչ է եւ աս դռնէն պիտի մտնէ խելքի ու մտածութեան ճամբան, ու հասնի իմաստութեան տաճարը։ Սէրն ու ջանքն ամէն բան կըդիւրացընէ, եւ առանց անոնց բան մը չըլլար։ Ազգիս լեզուին կատարելութեան ու տղոց օգտին փոյթը չըլլար սրտերնուս մէջը նէ, բան չունէինք որ այնչափ քերականութիւններէն ետեւ ելլէինք նորէն տղոց համար սիրտ ու գրիչ մաշեցընելու։

Գրաբարը դիմացը մեկնել պէտք եղած տեղերը՝ աշխարհաբառ միայն մեկնեցինք, տաճկերէն չդրինք՝ բաց ՚ի քանի մը բառէ։ Վասն զի չենք հասկընար թէ աշխարհաբառ քերականութիւն գրողները տաճկերէն որ կը դնեն՝ ինչ կ՚ուզեն ըսել։ Թէ որ բոլոր աշխարհաբառ գրուած քերականութիւնը կարդացողը կըհասկընայ նէ, ան աշխարհաբառ մեկնութիւններն ալ կըհասկընայ. չէ, թէ որ ան մեկնութիւնները չհասկընար նէ, քերականութիւնն ինչպէս պիտի հասկընայ, եւ ինչո՞ւն պէտք է ան ատեն ան քերականութիւնը։

1846.

# ԳԼՈՒԽՆԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ԲԱՌԵՐՈՒՆ ՎՐԱՅ


| | | |
|---|---|---|
| ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ | | 1 |
| ԳԼՈՒԽ Ա. | *Անուն* | 3 |
| | *Անուններուն հոլովումը* | 6 |
| | *Զարտուղի հոլովումք* | 20 |
| | *Հոլովներուն վրայ գիտելիք* | 24 |
| | *Միջակ անուններուն հոլովումը* | 29 |
| ԳԼՈՒԽ Բ. | *Դերանուն* | 39 |
| | *Էական կամ գոյական դերանուններ* | — |
| | *Ածական դերանուններ* | 42 |
| ԳԼՈՒԽ Գ. | *Նախդիր* | 48 |
| ԳԼՈՒԽ Դ. | *Բայ* | 57 |
| | *Էական բայերուն խոնարհումը* | 61 |
| | *Առաջին Լծորդութիւն*, ԱՄ | 67 |
| | *Երկրորդ Լծորդութիւն*, ԵՄ | 75 |
| | *Երրորդ Լծորդութիւն*, ԻՄ | 81 |
| | *Չորրորդ Լծորդութիւն*, ՈՒՄ | 90 |
| | *Զարտուղի բայեր* | 96 |
| | *Պակասաւոր բայեր* | 104 |
| | *Անդէմ բայեր* | 109 |
| | *Խոնարհումներուն վրայ գիտելիք* | 110 |
| ԳԼՈՒԽ Ե. | *Դերբայ* | 113 |
| ԳԼՈՒԽ Զ. | *Մակբայ* | 123 |
| ԳԼՈՒԽ Է. | *Շաղկապ* | 126 |
| ԳԼՈՒԽ Ը. | *Ձայնարկութիւն* | 127 |

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՊԱՐԶ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

### ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ՀԱՄԱՐ


ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ . . . . . . . . . 129
ԳԼՈՒԽ Ա. *Անուն բայի և բայ* . . . . . 133
ԳԼՈՒԽ Բ. *Բայերու և անուններու խնդիրներ* . . . 139
ԳԼՈՒԽ Գ. *Յատկացուցիչ և Բացայայտիչ* . . . 156
ԳԼՈՒԽ Դ. *Ածական անուն գոյականի հետ* . . . 160
ԳԼՈՒԽ Ե. *Յարաբերական դերանուն որ* . . . 175
ԳԼՈՒԽ Զ. *Դիմորոշ յօդեր* Ս, Դ, Ն . . . . 179
ԳԼՈՒԽ Է. *Նախդիրներ* . . . . . . 196
ԳԼՈՒԽ Ը. *Ուղղագրութիւն* . . . . . 204


## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

## ՁԵՒԱԻՈՐ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

### ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ ՀԱՄԱՐ


ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ . . . . . . . . . 211

ԳԼՈՒԽ Ա. *Զեղչում* . . . . . . 212
ԳԼՈՒԽ Բ. *Աւելադրութիւն* . . . . . 227
ԳԼՈՒԽ Գ. *Բակառութիւն* . . . . . 241
ԳԼՈՒԽ Դ. *Փոխադրութիւն* . . . . . 257
ԳԼՈՒԽ Ե. *Արտաուղութիւն* . . . . . 287

ՎԵՐՋԱԲԱՆ . . . . . . . . 306

# ՏԱՐԵՐՔ

## ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ԲԱՌԵՐՈՒՆ ՎՐԱՅ

### ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

1. Քերականութիւնը շիտակ խօսելու և գրելու արուեստն ու կանոնն է։

2. Խօսքն, որ բան ալ կ'ըսուի, բառերով կ'ըլլայ, բառը վանկով, վանկը տառով՝ որ գրով կը գրուի։ Լուր, որդեակ, խրատու հօր քոյ. հինգ բառով խօսք մըն է, լուր, հօր, քոյ, մէյմէկ վանկ ու բառ են, որդեակ, խրատու, երկու վանկով բառեր են։

3. Գրերէն ութը հատը, ա, ե, է, ը, ի, ո, ւ, օ, ձայնաւոր են ինքիրեն ձայն կը հանեն. մնացած երսունը բաղաձայն են, ձայնաւորի մը հետ ձայն կը հանեն. գոնէ ը ձայնաւորը դնելու է քովերնին որ ձայն հանեն. ինչպէս բը, գը, դը, կամ ըղ, ըմ, ըն։

4. Օ գիրն ետքէն մտած է, որ հիներն աւ երկբարբառ կը գրէին։ Երկբարբառ կ'ըսուի երկու ձայնաւոր մէկ ձայն՝ մէկ վանկ որ ըլլայ. ինչպէս աւ, եա, եւ, իւ, ու։

5. Բառն ութը տեսակ է. Անուն, Դերանուն, Նախդիր, Բայ, Դերբայ, Մակբայ, Շաղկապ, Ձայնարկութիւն, որ կ'ըսուին ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ։

6. Շիտակ խօսելու համար՝ առաջ ասոնց ինչ ըլլալն ու պէտք եղածին պէս կերպ կերպ փոխուիլը սորվելու է, ետքն ալ ասոնք կարգով շարելն, որ ԽՕՍՔ ըլլայ։

7. Ասոնցմէ չորսը միայն կըփոփոխի. անունը, դերանունը, բայն, դերբայն. մէկալ չորսն ամենեւին չեն փոխուիր։

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԱՆՈՒՆ

8. Անունը կամ յատուկ է մարդու մը, տեղի մը, ինչպէս Հայկ, Աթէնք. կամ հասարակ անուն է բանի մը, ու կը նշանակէ ինչ ըլլալը կամ ինչպիսի ըլլալը։

9. Ինչ ըլլալը նշանակող անունը՝ գոյական կ'ըսուի, ինչպիսի ըլլալը նշանակողն՝ ածական։ — Բան, մարդ, ծառ՝ գոյական են, բարի, չար, մեծ, ածական են. վասն զի կ'ըսուի բան բարի, մարդ չար, մեծ ծառ։

10. Անունը մէկու մը վրայ ըսուի նէ, եզակի կ'ըսուի. շատի վրայ ըսուի նէ, յոգնակի կ'ըսուի, մէկ մարդ մ'ուզենանք ըսել նէ, կ'ըսենք մարդ. շատ մարդ որ ուզենք ըսել, ք կամ ս կը դնենք ծայրը, կ'ըսենք մարդք, մարդս։ Աս եզակի ու յոգնակի ըլլալն՝ անունին թիւը կ'ըսուի։

11. Բայց կայ անուն որ եզակի չունի. ինչպէս աղք, փառք, որ եզակի աղ, փառ չըլլար։ Կայ ալ որ յոգնակի չունի. ինչպէս խաւար, հարաւ, որ յոգնակի խաւարք, հարաւք չըլլար։

12. Անունը՝ խօսողին միտքին նայելով կը փոխուի իր վերջին եզակի ու յոգնակի. ինչպէս մարդ՝ կ'ըլլայ մարդոյ, մարդով, 'ի մարդոյ. մարդք՝ մարդոց, մարդովք, 'ի մարդոց։ Աս փոփոխմունքս կ'ըսուի անունին հոլովը կամ վերջահոլովքը. ու հինգ են, որ անուններուն ու իրենց պարզ և որոշ[1] վերջահոլովի շէնքին կարգովը վարը կը տեսնես։

---

1 Պարզ ըսելով կը հասկընանք առանց նախդրի ըլլալն ու նոյն տառով ձեւանալը. ինչպէս են ամէն պարզ հոլովմանց մէջ միայն սեռականը, տրականն ու գործիականը։ Իսկ որոշ ըսելով կ'իմանանք որ անով մէկէն որոշուի բառը մէկալ հոլովմունքներէն. ինչպէս են դարձեալ ամէն հոլովմանց համար սեռական կամ տրականն ու գործիականը։ Զոր օրինակ. Բառ, բառի, 'ի բառէ, կամ Քաղաք, քաղաքի, 'ի քաղաքէ

13. Կայ հոլով ալ որ սկիզբը տառ մը կամ վանկ մը կ'առնէ, որ Նախդիր կ'ըսուի. ինչպէս, զմարդ, 'ի մարդ: Բառը ձայնաւորով սկսի նէ՝ ինիին տեղը յ, երբեմն ալ 'ի յ կ'առնէ. ինչպէս յազգ, յերեսս, 'ի յանձն, 'ի յերկինս:

14. Բայց կայ անուն որ վերջահոլով չունի եզակին. ինչպէս, արտօր, երկոս. կայ ալ որ յոգնակին չունի վերջահոլով. ինչպէս, սէր, ջուռն: Ասոնք նախդրիւ հոլով միայն ունին կ'ըսուի. այսինքն եզակին՝ կամ քէով սէով յոգնակինին կըբանի մինակ և նախդրով ալ. ինչպէս, զարտօր, յերկոս. ջուռնք, զջուռնս. սէրք, 'ի սէրս:

15. Ամէն անուն մէկ կերպ չհոլովուիր. Հայր կ'ըլլայ հայրոյ, հայրօք. մարդ՝ կ'ըլլայ մարդոյ, մարդով: Աս այլ և այլ կերպս կ'ըսուի անուններին հոլովմունքը:

16. Հոլովմունքն եօթն են. հինգը պարզ, որ կարգաւ ա, ե, ի, ո, ու ձայնաւորներուն մէկուն միայն կ'ըլլայ վերջահոլովներին. երկուքը խառն, որ ի և ա, ո և ա ձայնաւորներով կ'ըլլայ: Պարզ՝ ա, ու, և խառն՝ ի և ա ձայնաւորներով եղողներն՝ երկերկու կերպ են. ուստի հոլովմունքներու օրինակն է տասը: Ըսածներս բոլոր կըտեսնես վարը օրինակներուն վրայ:

Աս ձայնաւորներուն կանոնն որ բռնես նէ, շուտով կը սորվիս հոլովներն, ու չես սխալիր, չես ալ մոռնար:

17. Միայն աս ալ գիտնալու է չիտակ հոլովելու համար, որ բառին ետքի բաղաձայնէն առաջ եղած ձայնաւորներուն և երկբարբառներուն մէկ քանին կըփոխուի հոլովելուն ատենն, ալ այնուհետև վերջին վանկ չըլլալուն համար:

Է　　կը փոխուի Ի, Ե. Սէր, սիրոյ, էգ, իգի, եղէգն, եղեգան.

Ի, ՈՒ կըփոխուին Ը. չգրուած. Գիր, գրոյ. Ջուր, ջրոյ.

---

լսես նէ, չես իմանար մէկէն թէ որ հոլովման տակ կ'երթայ, երրորդին թէ վեցերորդին. իսկ Բառ, Բառի, Բառիւ. Թաղաւ, Թաղաւի, Թաղաւաւ ըսածիդ պէս կ'իմանաս որը որ հոլովման տակ կ'երթայ: Ահա աս պատճառներուս համար աս կարգով պէտք է շարել վերջահոլովները: Ուղղականը հոլով չէ. իսկ անուանց հայցականը վերջահոլով չունի. ու նախդրիւ հոլովներուն առաջինն ու գլխաւորն է:

# ՑՈՒՑԱԿ ԵՕԹԱՆԵՑՈՒՆՑ ՀՈԼՈՎՄԱՆՑ

ԵՒ ՏԱՍՆ ՕՐԻՆԱԿԱՑՆ

| | ՊԱՐԶ ՀՈԼՈՎՈՒՆՔ | | | | | | | ԽԱՌՆ ՀՈԼՈՎՈՒՆՔ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Առաջին | | Երկրորդ | Երրորդ | Չորրորդ | Հինգերորդ | | Վեցերորդ | | Եօթներորդ |
| Նշանագիր | Ա | | Ե | Ի | Ո | ՈՒ | | ԻԱ | | ՈԱ |
| | Օրինակ ա | Օրինակ բ | | | | Օրինակ ա | Օրինակ բ | Օրինակ ա | Օրինակ բ | |
| | Եզ. Յոգ. | Եզ. Յոգ. | Եզ. Յոգ. | Եզ. Յոգ. | Եզ. Յոգ. | Եզ. Յոգ. | Եզ. Յոգ. | Եզ. Յոգ. | Եզ. Յոգ. | Եզ. Յոգ. |
| Ուղ. | —[1] —ք, | ըն, անք, ունք, ին, ինք, | ըր, երք, ըղ, եղք, | — —ք, | — —ք, | — —ք, | ըր, ունք, | — —ք, | ըն, ինք, ունք, | —ի, —իք, |
| Սեռ. Տրա. | այ, աց, | ան, անց, եան, եանց, | եր, երց, եղ, եղց, | ի,ից, | ոյ, ոց, | ու, ուց, | ու, ունց, | ի, աց, | ին, անց, | ոյ, եաց, |
| Գործ. | աւ, աւք, (օք) | ամբ, ամբք, եամբ, եամբք, | երբ, երբք, եղբ, եղբք, | իւ, իւք, | ով, ովք, | ու, ուք, | ումբ, ումբք ու, | աւ, աւք, (օք) | ամբ, ամբք | եաւ, եաւք, (եօք) |
| Բաց. | այ, աց, | անէ, անց, ենէ, եանց, | երէ, երց, եղէ, եղց, | է,ից, | ոյ, ոց, | ուէ, ուց, է, ու, | ուէ, ունց, ու, | է, աց, | նէ, անց, | ոյ, եաց, |

1 — Ըսել է որ ուղղականը յայտնի վերջ մը չունի. — ք, ըսել է որ յոգնակին կ'ըլլայ ք միայն դնելով եզակին։

ԻՒ (Իւ), կըփոխուի ՈՒ, ԸՒ. Հովիւ, հովուի. Թիւ, Թուոյ կամ Թըւոյ.
ԵԱ կըփոխուի Ե, Է. Կեանք, կենաց. Հրեայ, Հրէի.
ՈՅ կըփոխուի ՈՒ. Լոյս, լուսոյ. կոյր, կուրի:

18. Իսկ Ա, Ե, Ո, Օ, ԻՒ բաղաձայնով մը՝ երկբարբառ [1], չեն փոխուիր սովորաբար:

---

# ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔԸ

## 19. ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

### ՊԱՐԶ—Ա.

### ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

*Եզակի*

| | | |
|---|---|---|
| Ուղղական, | Տիտան. | Տիտան. |
| Սեռական, | Տիտանայ. | Տիտանին. |
| Տրական, | Տիտանայ, 'ի Տիտան. | Տիտանին. |
| Գործիական, | Տիտանաւ. | Տիտանով. |
| Բացառական, 'ի | Տիտանայ. | Տիտանէն. |
| Հայցական, | զՏիտան. | Տիտանը. |

*Յոգնակի*

| | | |
|---|---|---|
| Ուղղական, | Տիտանք. | Տիտաններ. |
| Սեռական, | Տիտանաց. | Տիտաններուն. |
| Տրական, | Տիտանաց, 'ի Տիտանս. | Տիտաններու. |
| Գործիական, | Տիտանօք [2]. | Տիտաններով. |
| Բացառական, 'ի | Տիտանաց. | Տիտաններէն. |
| Հայցական, | զՏիտանս. | Տիտանները: |

---

1 Աս եզքի բաղաձայնէ մ'առաջ Իւ երկբարբառը՝ հիները շատ տեղ Եւ կը գրէին, ու կը փոխուէր Իւ. ինչպէս, Եւղ, Իւղոյ. Բեւր, Բիւրոյ. Ձեւ, Ձիւոյ. հիմայ կը գրուի Իւղ, Բիւր, Ձիւ, ու չփոխուիր: Միայն առջի հոլովման տակ Իւն կ'ըլլայ Եան, արիւն, արեան. ձիւն, ձեան. երկրորդ հոլովման տակ Իւր կ'ըլլայ Եր. ալիւր, ալեր. աղբիւր, աղբեր:

2 Հիներն օք չէին գրեր, աւք կը գրէին (4), որով հոլովին ա գիրը կը պահուի (16):

20. Այսպէս կը հոլովին յատուկ անուններն (8), ու սովորաբար յոգնակի չունին.

| | |
|---|---|
| Հայկ, հայկայ, հայկաւ, 'ի հայկայ. | Հայկ Մեր ազգին նախահայրը: |
| Այրարատ, այրարատայ, այրարատաւ, յայրարատայ. | Այրարատ գաւառը: |
| Նանէ[1], նանեայ, նանեաւ, 'ի նանեայ. | Նանէ, Հայոց կուռքը: |
| Տիգրանուհի, տիգրանուհեայ, տիգրանուհեաւ. | Տիգրանայ թոռը: |
| Մարիամ, մարիամայ կամ մարեմայ, մարեմաւ [2]. | Մարիամ: |
| Աթէնք, աթենայ, աթենաւ, յաթէնս. | Աթէնք քաղաքը: |
| Գուրգէն, գուրգենայ կամ գուրգինայ. | Գուրգէն: |
| Անահիտ, անահտայ, անահտաւ, յանահտայ. | Անահիտ, Հայոց կուռքը: |
| Գամիրք, գամրաց, գամրօք, 'ի գամրաց. | Ղայսէրիէ երկիրը: |
| Յուդա կամ Յուդաս, յուդայ, 'ի յուդայ. | Յուդա: |
| Սափիրա, սափիրայ, սափիրաւ. | Սափիրա: |
| Աբգիաս, աբգիայ, աբգիաւ. | Աբգիաս: |
| Սամարիա, սամարիայ կամ սամարեայ. | Սամարիա գաւառը: |
| Սին կամ Սինա, սինայ կամ սինեայ. | Սինա անապատը կամ լեռը: |
| Յասոն, յասոնեայ. | Յասոն: |
| Անդրէաս, անդրեայ. | Անդրէաս: |
| Զաքարիաս, զաքարիայ կամ զաքարեայ. | Զաքարիա: |
| Սոկրատէս, սոկրատեայ կամ սոկրատայ. | Սոկրատէս: |
| Դիոս, դիայ, դիաւ. | Դիոս կուռք կամ մարդ: |

1 Է ու Ի վերջացած բառերուն ան է ու ի տառերը այբին քով ե կը փոխուին հոլովին նէ: Անկից մտեր է երբեմն անանկ տառ չունեցողներուն ալ:

2 Իա իբրև եա առնուելով (17):

Աւգոստոս, աւգոստեայ, աւգոստեաւ. Օգոստոս հայերը:
Կոռնելիոս, կոռնելեայ, կոռնելեաւ. Կոռնելիոս:

21. Յատուկ անունները երբեմն ուրիշ հոլովմանց պէս ալ կըհոլովին. ա վերջացածները յետոյ կ'առնեն վերջահոլովի ձայնաւորը և յոգնակին ք, ս. Յուդա, յուդայի, 'ի յուդայէ. Յուդայք, զՅուդայս. Հայկ, հայկի. Մովսէս, մովսեսի կամ մովսիսի. Գալիլիա կամ Գալիլեա, գալիլէի. Այրարատ, այրարատոյ կամ այրարատու. Սամարիա, սամարիոյ կամ սամարւոյ. Մարիամ, մարիամու. Աքգիաս, աքգիու. Կոռնելիոս, կոռնելիու:

22. Ոմանք ալ ոս, աս վերջացածներէն՝ կանչուելով զրուցուին նէ, հռոմի կերպով երբեմն է, ա կըվերջանան. Պետրոս, պետրէ. Կոռնելիոս, կոռնելիէ. Ագրիպպաս, ագրիպպա:

23. Իսկ բուն հայերէն, ամէն անուն՝ ուղղականն ինչ է նէ՝ կանչելու ալ անանկ կըբանի, ով գրեր ես չես գրեր. Պետրոս կամ ով Պետրոս. Գրիգորիոս կամ ով Գրիգորիոս. Ագրիպպաս կամ ով Ագրիպպաս:

## 24. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

*Եզակի*

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Սերմն, սերմ. | հունտ. |
| Սեռ. | Սերման. | հունտի. |
| Տրա. | Սերման, 'ի սերմն | հունտի. |
| Գործ. | Սերմամբ. | հունտով. |
| Բաց. | 'ի Սերմանէ. | հունտէ. |
| Հայց. | զՍերմն. | հունտը. |

*Յոգնակի*

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Սերմանք, սերմունք. | հունտեր. |
| Սեռ. | Սերմանց. | հունտերու. |
| Տրա. | Սերմանց, 'ի սերմանս. | հունտերու. |
| Գործ. | Սերմամբք. | հունտերով. |
| Բաց. | 'ի Սերմանց. | հունտերէ. |
| Հայց. | զՍերմանս. | հունտերը: |

25. Ասանկ կըհոլովուին ըն, էն վերջացած բառերը՝ նուէն առաջ առնելով ա. և քանի մը ուրիշ ալ:
Ակն,ական, ականք, ակունք. Աչք. Ջրի աղբիւր. ազնիւ քար:

| | |
|---|---|
| Կողմն , կողս , կողման , մանք , մունք . | տէ , կողմ : |
| Ամառն , ամառան , ամարունք . | ամառ : |
| Ձմեռն , ձմերան , ձմերունք . | ձմեռ : |
| Գեղարդն , գեղարդան կամ գեղար- դեան , գեղարդունք . | տէգ , նիզակ : |
| Անուն , անուան , անուանք , անունք , անուանց . | անուն : |
| Ձեղուն , ձեղուան , ձեղունք , ձե- ղուանց . | տան ծածք , առիք : |
| Մահ , մահուան , մահուանք , մահունք . | մահ : |
| Պաշտօն , պաշտաման , պաշտամունք , պաշտօնք . | պաշտօն , ծառայու- թիւն : |
| Ձիւն , ձեան , 'ի ձեանէ , ձիւնք . | ձիւն : |
| Սիւն , սեան , 'ի սեանէ , սիւնք . | սիւն , դիրէկ : |
| Արիւն , արեան , յարենէ[1] , արիւնք . | արիւն : |
| Զօրութիւն , զօրութեան , 'ի զօրու- թենէ , զօրութիւնք . | ոյժ , զօրութիւն : |
| Ստին , ստեան , 'ի ստենէ , ստինք . | ծիծ : |
| Ադամանք , ադամանց , ադամամբք . | Ադամին մօր մար- դիկը : |
| Իրաւունք , իրաւանց , իրաւամբք . | իրաւունք : |
| Սրունք , սրուանց կամ սրանց . | ծուներ , պաճախներ : |
| Եղէգն , եղեգան , եղեգունք . | եղէգ , խամիշ : |
| Սկիզբն , սկզբան , սկզբունք . | սկիզբ , ծայր : |
| Գուռն , գրան , գրունք , գրանց կամ գուրք , գրաց (39) . | գուռ : |
| Նուռն , նռան , նռունք . | նուռ : |
| Պաշտումն , պաշտման , պաշտմունք . | ծառայութիւն , պաշ- տելը : |
| Եղեամն , եղեման , եղեմունք . | եղեմ , խառաղը : |

---

1 Սեռականն ու տրականը եան եղօղ բառերը թէ որ մէկ վանկով բառեր են նէ՝ բացառականը եանէ կ'ըլլայ . իսկ աւելի վանկովներունը սովորաբար ենէ կ'ըլլայ , եա փոխուելով՝ի է ըստ 17 . և աս մէկ պզտիկ բանովս զատ հոլովում չեն ըլլար :

| | |
|---|---|
| Աղջիկ, աղջկան, աղջկունք, աղջկանց կամ աղջկաց. | աղջիկ։ |
| Մարդիկ, մարդկան, մարդկամբ կամ մարդկաւ[1]. | մարդեր, մարդիկ։ |
| Մանուկ, մանկան, մանկունք. | տղայ, մանչ։ |
| Գարուն, գարնան, գարունք. | գարուն, տուջի ամառ։ |
| Տուն, տան, տունք։ | տուն։ |
| Տեսիլ, տեսլեան, տեսիլք. | տեսիլ, տեսք։ |
| Հանգիստ, հանգստեան, հանգիստք. | հանգիստ։ |
| Գալուստ, գալստեան, գալուստք. | գալուստ, գալը։ |
| Ժողովուրդ, ժողովրդեան, ժողովուրդք, ժողովրդոց. | ժողովուրդ։ |
| Ծնունդ, ծննդեան, ծնունդք, ծննդոց. | ծնունդ, ծնանիլը։ |
| Վաղիւ, վաղուեան, 'ի վաղուենէ. | վաղը, վաղուան օրը։ |
| Տիւ, տուընջեան, տուընջեամբ, տիւք. | ցերեկ։ |

## 26. ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

### ՊԱՐԶ—Ե.

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Համր. | մունջ, տիլսիզ։ |
| Սեռ. | Համեր. | մունջի. |
| Տրա. | Համեր, 'ի համր. | մունջի. |
| Գործ. | Համերբ. | մունջով. |
| Բաց. | 'ի Համերէ. | մունջէ. |
| Հայց. | զՀամր. | մունջը. |

1 Զայնով յոգնակի չունի սովորաբար. բայց կըգտուի մարդկօք, մարդկամբք, բազում մարդկին։

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ· | Համերը· | մունճէր· |
| Սեռ· | Համերց· | մունճէրու· |
| Տրա· | Համերց, 'ի համերս· | մունճէրա· |
| Գործ· | Համերբք· | մունճէրով· |
| Բաց· | 'ի Համերց· | մունճէրէ· |
| Հայց· | զՀամերս· | մունճէրը: |

27. Այսպէս կը հոլովին ըր, ըղ վերջացած բառերը՝ րէէն ու ղատէն առաջ առնելով է, ու մէկ քանի եւր·

| | | | |
|---|---|---|---|
| Ագդր, | ագդեր, | ագդերց· | աղըր, պուտ, գալչա: |
| Տարր, | տարեր | տարերց· | մանր մասունք, անզգուշունք: |
| Ոսկր, | ոսկեր, | ոսկերց· | ոսկոր: |
| Ուստր, | ուստեր, | ուստերց· | մանչ զաւակ, որդի: |
| Կայսր, | կայսեր, | կայսերց· | կայսր: |
| Դուստր, | դստեր, | դստերց· | աղջիկ զաւակ: |
| Ալեւր, | ալեր, | ալերց· | ալիւր: |
| Աղբեւր, | աղբեր, | աղբերց· | աղբիւր: |
| Եղջեւր, | եղջեր, | եղջերց· | եղջիւր, պոյնուզ: |
| Աստղ, | աստեղ, | աստեղց· | աստղ ըլտըզ: |
| Եոտղ, | ետեղ· | | տեղ: |
| Շիգղ, | շգեղ· | | պատառոյ ղարդ մը: |

28. Եզակի գործիականն ու յոգնակի հոլովները շատ անգամ կ'ըլլայ նաև (ըստ 39) Համերաւ, համերաց, համերօք· ագդերաց, ագդերօք· ոսկերաց, ոսկերօք· ուստերաց, ուստերօք· աղբերաց կամ աղբիւրաց, աղբերօք, զաղբիւրս· աստեղաց, աստեղօք: Այսպէս է սովորաբար՝ անեզական

Տիեզերք, տիեզերաց, տիեզերօք· աշխարհք, բոլոր աշխարհք:

## 29. ԵՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

### ՊԱՐԶ—Ի.

*Եզակի*

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Այր. | քարայր, մաղարա. |
| Սեռ. | Այրի. | քարայրի. |
| Տր. | Այրի, յայր. | քարայրի. |
| Գործ. | Այրիւ. | քարայրով. |
| Բաց. | յԱյրէ. | քարայրէ. |
| Հայց. | զԱյր. | քարայրը. |

*Յոգնակի*

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Այրք. | քարայրներ. |
| Սեռ. | Այրից. | քարայրներու. |
| Տր. | Այրից, յայրս. | քարայրներու. |
| Գործ. | Այրիւք. | քարայրներով. |
| Բաց. | յԱյրից. | քարայրներէ. |
| Հայց, | զԱյրս. | քարայրները: |

30. Այսպէս կը հոլովին շատ անուններ.

| | | | |
|---|---|---|---|
| Արքայ, | արքայի, | արքայիւ. | արքայ, թագաւոր: |
| Մայր | մայրի, | մայրիւ. | մայր ծառ, չամ: |
| Իժ, | իժի. | իժիւ. | իժ օձ, էնկերէք: |
| Ուխտ, | ուխտի, | ուխտիւ. | ուխտ: |
| Մարգարէ, | մարգարէի, | մարգարէիւ. | մարգարէ: |
| Աղօթք, | աղօթից, | աղօթիւք. | աղօթք: |
| Ինչք, | ընչից, | ընչիւք. | ստացուածք, ըռաշան: |
| Սիրտ, | սրտի, | սրտիւ. | սիրտ: |
| Իղձ, | ըղձի, | ըղձիւ. | բաղձանք: |
| Շէն, | շինի, | շինիւ. | շէնք, գեղ: |
| Խուլ, | խլի, | խլիւ. | խուլ: |
| Ատեան, | ատենի, | ատենիւ. | ատեան, դիվան: |
| Հրեայ, | հրէի, | հրէիւ. | հրեայ: |
| Համբոյր, | համբուրի, | համբուրիւ. | պագնելը, պագ: |
| Վաղիւ, | վաղուի, | 'ի վաղուէ. | վաղը, վաղուան օրը: |

## 31. ՉՈՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

### ՊԱՐԶ—Ո.

#### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Մարդ. | մարդ. |
| Սեռ. | Մարդոյ. | մարդու. |
| Տրա. | Մարդոյ, 'ի մարդ. | մարդու. |
| Գործ. | Մարդով. | մարդով. |
| Բաց. | 'ի Մարդոյ. | մարդէ. |
| Հայց. | զՄարդ. | մարդը. |

#### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Մարդք. | մարդեր, մարդիկ. |
| Սեռ. | Մարդոյ. | մարդերու. |
| Տրա. | Մարդոց, 'ի մարդս. | մարդերու. |
| Գործ. | Մարդովք, մարդօք. | մարդերով. |
| Բաց. | 'ի Մարդոց. | մարդերէ. |
| Հայց. | զՄարդս. | մարդերը: |

32. Այսանկ կը հոլովին շատ անուններ.

Աստուած, աստուծոյ, աստուծով. Աստուած:
Աստուած, աստուծոյ, աստուածոց և աստուծոց. չկայ:
Հարաւ, հարաւոյ, հարաւով. հարաւ, շոգոտ դէն:
Ծեր, ծերոյ, ծերով. ծեր, հալուոր:
Ձի, ձիոյ, ձիով. ձի:
Ուս, ուսոյ, ուսով. ուս, օմուզ:
Ձու, ձուոյ, ձուով. հաւկիթ:
Պահք, պահոց, պահովք. պաս:
Դժոխք, դժոխոց, դժոխովք. դժոխք:
Սէր, սիրոյ, սիրով. սէր:
Գիր, գրոյ, գրով. գիր:
Վէրն, վերնոյ, վերնով. վերին:
Ջուր, ջրոյ, ջրով. ջուր:
Հուր, հրոյ, հրով. կրակ:
Ունդ, ընդոյ, ընդով. հունտ, ընդեղէն:

| | | | |
|---|---|---|---|
| Սեաւ, | սևոյ, | սևով. | սև: |
| Թիւ, | Թուոյ, | Թուով. | թիվ, համրանք: |
| Լոյս, | լուսոյ, | լուսով. | լոյս: |
| Ույժ, | ուժոյ, | ուժով. | ուժ: |

33. Աս հոլովման բառերն երբեմն ում ալ կ'ըլլան եզակի սեռականն ու մանաւանդ տրականը. և անկից մէկ քանիին բացառականն ալ մէ կ'ըլլայ: Սովորականներն ասոնք են.

| | | |
|---|---|---|
| Մարդ | մարդում. | մարդ: |
| Սուրբ, | սրբում. | սուրբ: |
| Պիղծ, | պղծում. | պիղծ, կիր: |
| Հին, | հնում. | հին: |
| Նոր, | նորում. | նոր. |
| Անցեալ, | անցելում. | անցած: |
| Առաջին, | առաջնում, յառաջնմէ. | առջի: |
| Աջ, | աջում, յաջմէ. | աջ, սաղ: |
| Ձախ, | ձախում, 'ի ձախմէ. | ձախ, սօլ: |

34. Քիչ անգամ ուրիշ հոլովմանցն ալ կ'ըլլայ ասանկ, աւելի եօթ-ներորդինն՝ որ ասոր նման է:

## 35. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

### ՊԱՐԶ—ՈՒ

### ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

*Եզակի*

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Զարդ. | ղարդ. |
| Սեռ. | Զարդու. | ղարդի. |
| Տրա. | Զարդու, 'ի զարդ. | ղարդի. |
| Գործ | Զարդու. | ղարդով. |
| Բաց. | 'ի Զարդուէ, 'ի զարդէ, 'ի զարդու. | ղարդէ. |
| Հայց. | զԶարդ. | ղարդը. |

*Յոգնակի*

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Զարդք. | ղարդեր. |
| Սեռ. | Զարդուց. | ղարդերու: |
| Տրա. | Զարդուց, 'ի զարդս. | ղարդերու. |
| Գործ. | Զարդուք. | ղարդերով. |
| Բաց. | 'ի Զարդուց. | ղարդերէ. |
| Հայց. | զԶարդս. | ղարդերը: |

36. Ասանկ կը հոլովին.

| | | | |
|---|---|---|---|
| Այգ, | այգու, | յայգուէ. | առտու, վաղը առտու: |
| Գանձ, | գանձու, | 'ի գանձուէ, 'ի գանձէ. | գանձ: |
| Դաս, | դասու, | 'ի դասուէ, 'ի դասէ. | դաս, խումբ, կարգ: |
| Զգեստ, | զգեստու, | 'ի զգեստուէ, 'ի զգեստէ. | հագուստ, լաթ: |
| Զօր, | զօրու, | 'ի զօրուէ, 'ի զօրէ. | զօրք: |
| Առաւօտ, | առաւօտու, | յառաւօտէ. | առտու: |
| Արեւ, | արեւու, | յարեւէ. | արեւ: |
| Ժամ, | ժամու, | 'ի ժամէ. | ժամ, սահաթ: |
| Ծով, | ծովու, | 'ի ծովէ. | ծով: |
| Մահ, | մահու, | մահու. | մահ: |
| Վարք, | վարուց, | վարուք. | վարք: |
| Պարտք, | պարտուց, | պարտուք. | պարտք: |
| Զէն, | զինու, | 'ի զինէ, 'ի զինուէ. | զէնք, սիլահ: |
| Ցուլ, | ցլու, | 'ի ցլէ. | ցուլ, պուղա: |

## 37. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Փոքր. | պզտիկ. |
| Սեռ. | Փոքու. | պզտիկին. |
| Տրա. | Փոքու, 'ի փոքր. | պզտիկին. |
| Գործ. | Փոքումբ, փոքու. | պզտիկով. |
| Բաց. | 'ի Փոքուէ, 'ի փոքու. | պզտիկէ. |
| Հայց. | զՓոքր. | պզտիկը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Փոքունք. | պզտիկներ. |
| Սեռ. | Փոքունց. | պզտիկներու. |
| Տրա. | Փոքունց, 'ի փոքունս. | պզտիկներով. |
| Գործ. | Փոքումբք, փոքուք | պզտիկներով. |
| Բաց. | 'ի Փոքունց. | պզտիկներէ. |
| Հայց. | զՓոքունս. | պզտիկները: |

38. Ասանկ կը հոլովին քանի մը ըր վերջացած բառեր, մէկ երկու ուրիշ ալ. ու տեղ տեղ կը խոտորին քիչ մը.

| | |
|---|---|
| Այր, աստու, յաստուէ. | մարդ: |
| Ծաղր, ծաղու, 'ի ծաղուէ. | ծիծաղ, խնտալը: |
| Մեղր, մեղու, 'ի մեղուէ. | մեղր, պալ: |
| Թանձր, թանձու, ձունք, ձունց. | թանձր, հաստ: |
| Ծանր, ծանու, նունք, նունց, նուք. | ծանր: |
| Մանր, մանու, նունք, նունց, նումբք. | մանր: |
| Քաղցր, քաղցու, ցունք, ցունց, ցուք. | անուշ: |
| Բարձր, բարձու, բարձու կամ բարձամբ, ձունք, ձանց, ձամբք. | բարձր: |
| Յոգն, յոգունք, յոգունց, յոգումբք. | շատ: |
| Երէց, երիցու, երիցու կամ երիցամբ, երիցունք, երիցանց, երիցամբք. | տարէքով մեծ, կարգով մեծ: |

## 39. ՎԵՑԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

### ԽԱՌՆ—Ի և Ա.

### ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

*Եզակի*

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ազգ. | ազգ. |
| Սեռ. | Ազգի. | ազգի. |
| Տրա. | Ազգի, յազգ. | ազգի. |
| Գործ. | Ազգաւ. | ազգով. |
| Բաց. | յԱզգէ. | ազգէ. |
| Հայց. | զԱզգ. | ազգը. |

*Յոգնակի*

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ազգք. | ազգեր. |
| Սեռ. | Ազգաց. | ազգերու. |
| Տրա. | Ազգաց, յազգս. | ազգերու. |
| Գործ. | Ազգօք, ազգովք. | ազգերով. |
| Բաց. | յԱզգաց. | ազգերէ. |
| Հայց. | զԱզգս. | ազգերը: |

40. Ասանկ կը հոլովին շատ մը բառեր.

| | | | |
|---|---|---|---|
| Կարգ, | կարգի, | կարգաւ. | կարգ։ |
| Քաղաք, | քաղաքի, | քաղաքաւ. | քաղաք։ |
| Իր, | իրի, | իրաւ. | բան, եղած բան մը։ |
| Լեզու, | լեզուի, | լեզուաւ. | լեզու։ |
| Խաւար, | խաւարի, | խաւարաւ. | մութ։ |
| Աչք, | աչաց, | աչօք. | աչք։ |
| Փառք, | փառաց, | փառօք. | փառք։ |
| Աղաչանք, | աղաչանաց, | աղաչանօք. | աղաչանք։ |
| Էգ, | էգի, | էգաւ. | էգ, տիշի։ |
| Բժիշկ, | բժշկի, | բժշկաւ. | բժիշկ, հէքիմ։ |
| Բազում, | բազմի, | բազմաւ. | շատ։ |
| Կեանք, | կենաց, | կենօք. | կեանք։ |
| Ունչք | ընչաց, | ընչօք. | քիթ։ |
| Հովիւ, | հովուի, | հովուաւ. | հովիւ, չօպան։ |
| Վարագոյր, | վարագուրի, | վարագուրաւ. | վարագոյր, փէրտէ։ |

41. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Անձն. | անձ, հոգի, ինք. |
| Սեռ. | Անձին. | անձի. |
| Տրա. | Անձին, յանձն. | անձի. |
| Գործ. | Անձամբ. | անձով. |
| Բաց. | յԱնձնէ. | անձէ. |
| Հայց. | զԱնձն. | անձը. |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Անձինք. | անձեր. |
| Սեռ. | Անձանց. | անձերու. |
| Տրա. | Անձանց, յանձինս. | անձերու. |
| Գործ. | Անձամբք. | անձերով. |
| Բաց. | յԱնձանց. | անձերէ. |
| Հայց. | զԱնձինս. | անձերը։ |

1004/16349

... Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

42. Ասանկ կըհոլովէին ըն վերջացած բառերուն մէկ քանին: Երբեմն ասոր զատ հոլովները՝ առջի հոլովման երկրորդ օրինակին պէս կ'ըլլան, անորին ալ ասոր պէս.

Ազն, ազին, յազնէ, ազինք. ազգ. ցեղ:
Դաշն, դաշին, 'ի դաշնէ, դաշինք. դաշն, պայման, խաղաղ:
Դառն, դառին, 'ի դառնէ, դառինք. լեղի:
Բեռն, բեռին, 'ի բեռանէ, 'ի բեռնէ, բեռինք. բեռ:
Գառն, գառին, 'ի գառանէ, 'ի գառնէ,
 գառինք. գառ, խոռողէ:
Թոռն, թոռին, 'ի թոռնէ, 'ի թոռա-
 նէ, թոռունք. թոռ:
Հարսն, հարսին, 'ի հարսնէ, 'ի հար-
 սանէ, հարսունք. հարս:
Մասն, մասին, 'ի մասնէ, 'ի մասանէ,
 մասունք. մաս, բաժին:
Մատն, մատին, 'ի մատանէ, 'ի մատնէ, մատունք. մատ:
Լեառն, լերին, 'ի լեռնէ, լերինք. լեռ:
Ձեռն, ձեռին, 'ի ձեռանէ, ձեռք, ձե-
 ռաց, ձեռօք. ձեռք:
Ոտն, ոտին, յոտանէ, ոտք, ոտիւք. ոտք:

## 43. ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

### ԽԱՌՆ—Ո և Ա.

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Բարի. | աղէկ. |
| Սեռ. | Բարւոյ[1]. | աղէկի. |
| Տր. | Բարւոյ, 'ի բարի. | աղէկի. |
| Գործ. | Բարեաւ. | աղէկով. |
| Բաց. | 'ի Բարւոյ | աղէկէ. |
| Հայց. | զԲարի. | աղէկը. |

1 Ուղղականին ետին ոյին քովը – կըփոխուի, այբին քովը՝ է:

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Բարիք. | աղէկներ. |
| Սեռ. | Բարեաց. | աղէկներու. |
| Տր. | Բարեաց,'ի բարիս. | աղէկներու. |
| Գործ. | Բարեօք. | աղէկներով. |
| Բաց. | 'ի Բարեաց. | աղէկներէ. |
| Հայց. | զԲարիս. | աղէկները։ |

44. Ասանկ կը հոլովին մէկ վանկէն աւելի է վերջացող բառերը։ Ոմանց եզակի գործիականն ու բոլոր յոգնակին՝ աւելի չորրորդ հոլովման պէս կ'ըլլայ. երբեմն մէկալընցն ալ անանկ կ'ըլլայ.

| | | | |
|---|---|---|---|
| Այգի, | այգւոյ, | այգեաւ. | էգի։ |
| Գինի, | գինւոյ, | գինեաւ. | գինի։ |
| Եկեղեցի, | եկեղեցւոյ, | եկեղեցեաւ. | էկեղեցի, ճամ։ |
| Սիրելի, | սիրելւոյ, | սիրելեաւ. | սիրելի։ |
| Տարի, | տարւոյ, | տարեաւ. | տարի։ |
| Տեղի, | տեղւոյ, | տեղեաւ. | տեղ։ |
| Ոսկի, | ոսկւոյ, | ոսկւով. | ոսկի։ |
| Փոշի, | փոշւոյ, | փոշւով. | փոշի, թօզ։ |
| Որդի, | որդւոյ, | որդւով, որդւոց. | որդի։ |
| Հոգի, | հոգւոյ, | հոգւով, հոգւոց. | հոգի։ |
| Աւետիք, | աւետեաց, | աւետեօք. | աւետիս, մուժդէ։ |
| Կարծիք, | կարծեաց, | կարծեօք. | կարծիք։ |

45. Ասոր հոլովները շատ տեղ առանց ւիւնի ալ կ'ըլլան. Բարոյ, բարւով կամ բարով. 'ի բարոյ. Գինոյ, գինւով կամ գինով. Սիրելոյ, սիրելւով կամ սիրելով. Ոսկոյ, ոսկով. Որդոյ, որդով, որդոց, որդովք։

46. Աս հոլովման բառերն երբեմն ոջ ալ կ'ըլլան եզակի սեռականն ու տրականը. և անկից մէկ քանիին բացառականն ալ ոջէ կ'ըլլայ.

| | | |
|---|---|---|
| Բարի. | բարւոջ. | բարի, աղէկ։ |
| Այգի, | այգւոջ. | էգի։ |
| Գինի, | գինւոջ. | գինի։ |
| Եկեղեցի, | եկեղեցւոջ. | էկեղեցի, ճամ։ |
| Տարի, | տարւոջ,'ի տարւոջէ. | տարի։ |
| Տեղի, | տեղւոջ,'ի տեղւոջէ. | տեղ։ |

47. Քիչ անգամ ուրիշ հոլովմանցն ալ կ'ըլլայ ասանկ, աւելի չորրորդինն՝ որ ասոր նման է։

## ՉԱՐՏՈՒՂԻ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

48. Քանի մը բառ կայ որ հոլովմունքնին եօթը հոլովմունքէն դուրս է, թէպէտ տեղ տեղ կընմանի մէկուն կամ մէկալին. և ասոնք են.

### 49. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Այր. | էրիկ մարդ, էրիկ, մարդ. |
| Սեռ. | Առն [1]. | էրիկ մարդու. |
| Տրա. | Առն, յայր. | էրիկ մարդու. |
| Գործ. | Արամբ. | էրիկ մարդով. |
| Բաց | յԱռնէ. | էրիկ մարդէ. |
| Հայց. | զԱյր. | էրիկ մարդը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Արք. | էրիկ մարդիկ. |
| Սեռ. | Արանց. | էրիկ մարդոց. |
| Տրա. | Արանց, յարս. | էրիկ մարդոց. |
| Գործ. | Արամբք. | էրիկ մարդերով. |
| Բաց. | յԱրանց. | էրիկ մարդերէ. |
| Հայց. | զԱրս. | էրիկ մարդերը։ |

Ասանկ կը հոլովի Տէր, որ է տէ այր, այս ինքն մեծ կամ հզօր այր. տէր.
Տէր, տեառն, տեառն, 'ի տէր, տերամբ, 'ի տեառնէ կամ 'ի տեւնէ, զտէր.

---

1 Մեր լեզուին մէջ՝ բառին բնական եղօղ նուէ առաջ՝ ամենևին ը չկայ. անոր համար աս բառիս ու Տէր բառին մէջն ալ ըէն — կը փոխուի երբոր քովը ն գայ։ Ընդ հակառակն՝ ասյն քովն նուն հոլովով որ հեռանայ նէ, երբեմն ռան ը կը փոխուի. ինչպէս տեսանք ամառն, ձմեռն, գառն, ձեռն բառերուն վրայ (25, 42)։ Աս երկու բանս բայերուն վրայ ալ կ'երևնայ (182, 195, 239, 245)։

Տեարք, տերանց կամ տեարց, 'ի տեարս, տերամբք, 'ի տերանց կամ 'ի տեարց, զտեարս։

## 50. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Հայր. | հար. |
| Սեռ. | Հօր[1]. | հօր. |
| Տր. | Հօր, 'ի Հայր. | հօր. |
| Գործ. | Հարբ, հարամբ. | հարով. |
| Բաց. | 'ի Հօրէ. | հօրմէ. |
| Հայց. | զՀայր. | հարը. |

## Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Հարք. | հարեր. |
| Սեռ. | Հարց, հարանց. | հարերու. |
| Տր. | Հարց, հարանց, 'ի հարս. | հարերու. |
| Գործ. | Հարբք, հարամբք. | հարերով. |
| Բաց. | 'ի Հարց, 'ի հարանց. | հարերէ. |
| Հայց. | զՀարս. | հարերը։ |

| | |
|---|---|
| Մայր, մօր, մարբ, մարք, մարց. | մար։ |
| Եղբայր, եղբօր, եղբարբ, եղբարք, եղբարց. | եղբար, աղբար։ |

## 51. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Կին. | կնիկ. |
| Սեռ. | Կնոջ. | կնկան. |
| Տր. | Կնոջ, 'ի կին. | կնկան. |
| Գործ. | Կնաւ, կանամբ. | կնկով. |
| Բաց. | 'ի Կնոջէ. | կնիկէ. |
| Հայց. | զԿին. | կնիկը. |

1 Հիներուն գրուածքովը հայր, հաւր, 'ի հաւրէ (4)։

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Կանայք. | կնիկներ, կնկտիք. |
| Սեռ. | Կանանց. | կնիկներու. |
| Տրա. | Կանանց, 'ի կանայս. | կնիկներու. |
| Գործ. | Կանամբք. | կնիկներով. |
| Բաց. | 'ի Կանանց. | կնիկներէ. |
| Հայց. | զԿանայս. | կնիկները: |

Տիկին, Մեծ կին, խառնուած. տիկնոջ, տիկնաւ կամ տիկնամբ, 'ի տիկնոջէ, զտիկին.

Տիկնայք, տիկնանց կամ տիկնայց, տիկնօք կամ տիկնամբք, 'ի տիկնանց կամ 'ի տիկնայց, զտիկնայս:

52. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Քոյր. | քոյր. |
| Սեռ. | Քեռ. | քրոջ. |
| Տրա. | Քեռ, 'ի քոյր. | քրոջ. |
| Գործ. | Քերբ, քեռբ. | քոյրով. |
| Բաց. | 'ի Քեռէ. | քոյրէ. |
| Հայց. | զՔոյր. | քոյրը. |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Քորք. | քոյրեր. |
| Սեռ. | Քերց, քեռց. | քոյրերու. |
| Տրա. | Քերց, քեռց, 'ի քորս. | քոյրերու. |
| Գործ. | Քերբք, քեռբք. | քոյրերով. |
| Բաց. | 'ի Քերց, քեռց. | քոյրերէ. |
| Հայց. | զՔորս. | քոյրերը: |

## 53. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Գիւղ, գեօղ. | գեղ. |
| Սեռ. | Գեղջ. | գեղջի. |
| Տրա. | Գեղջ, 'ի գիւղ. | գեղջի. |
| Գործ. | Գիւղիւ, գեօղիւ. | գեղով. |
| Բաց. | 'ի Գեղջէ. | գեղջէ. |
| Հայց. | զԳիւղ, զգեօղ. | գեղը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Գիւղք, գեօղք. | գեղեր. |
| Սեռ. | Գիւղից, գեօղից. | գեղերու. |
| Տրա. | Գիւղից, գեօղից, 'ի գիւղս. | գեղերու. |
| Գործ. | Գիւղիւք, գեօղիւք, գիւղօք. | գեղերով. |
| Բաց. | 'ի Գիւղից, 'ի գեօղից. | գեղերէ. |
| Հայց. | զԳիւղս, զգեօղս. | գեղերը։ |

Իսկ Գեղ, գեղ, կը հոլովի ըստ 29 գեղի, գեղիւ, 'ի գեղէ։

## 54. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Օր [1]. | օր. |
| Սեռ. | Աւուր. | օրի. |
| Տրա. | Աւուր, յօր. | օրի. |
| Գործ. | Աւուրբ. | օրով. |
| Բաց. | յՕրէ. | օրէ. |
| Հայց. | զՕր. | օրը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Աւուրք. | օրեր. |
| Սեռ. | Աւուրց. | օրերու. |
| Տրա. | Աւուրց, յաւուրս. | օրերով. |
| Գործ. | Աւուրբք. | օրերով. |
| Բաց. | յԱւուրց. | օրերէ. |
| Հայց. | զԱւուրս. | օրերը։ |

---

1 Հիններուն գրուածքումն Աւր, աւուր, յաւրէ, զաւր (4)։

# ՀՈԼՈՎՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

55, Ձայնաւորով մը ն, ր վերջացած բառեր՝ գործիական կ՚ըլլան երբեմն մինակ է մը առնելով ծայրը. ու նուն բենին քովը մ կըփոխուի. ինչպէս.

Վեցթևեան, վեցթևեամբ, վեցթևեամբք. վեց թև ունեցող:
Բնաւին, բնաւիմբ. բոլոր, բոլորովին:
Սովեր, (58) սովերբ, սովերբք. սով:
Հուր, հուրբ. կրակ:
Ջուր, ջուրբ, ջուրբք. ջուր:
Համուր, համուրբ, համուրբք. ամէն, բոլոր:

56. Բացառական հոլով կ՚ըլլայ երբեմն ուստ վերջով ալ. ինչպէս,

Երկինք, յերկնուստ. երկինքէն:
Ամէն, յամենուստ. յամենուստ ծառայութենէ. ամէնէն, ամէն տեղէն. ամէն ծառայութենէն:
Աստուածուստ, յաստուածուստ. աստուծմէ:
Բուն, 'ի բնուստ. 'ի բնէ, ալընտան:
Արքունիք, յարքունուստ. յարքունուստ հրամանէ. արքունիքէն, մէրէն. արքունի հրամանէն:

Երբեմն առանց նախդրի ալ. Այլուստ կողմանէ. ուրիշ տեղէն. մօտուստ, մօտէն:

57. Անձայն յ, կամ որ նոյն է՝ պարզ ձայնաւոր վերջացած, ու ձայնաւորով մը ն, ր վերջացած բառերը յոգնակի սեռական կ՚ըլլան երբեմն մինակ ց առնելով ծայրը. և անկից բացառական ալ կ՚ըլլան ըստ օրինի. ինչպէս,

Արևելեայ, արևելեայք, արևելեայց կամ արևելեաց, արևելեօք, (եօթներորդ հոլովման պէս). արևելցի:
Դուզնաքեայ, դուզնաքեայք, դուզնաքեայց կամ դուզնաքեաց, դուզնաքեօք. պզտիկ, քիչ մը:
Հայաստանեայ, հայաստանեայք, հայաստանեայց կամ հայաստանեաց, հայաստանեօք. հայաստանցի:
Հայկազնեայ, հայկազնեայք, հայկազնեայց կամ հայկազնեաց, հայկազնեօք. Հայկայ ազգէն. հայ:
Առհաւատչեայ, առհաւատչեայք, առհաւատչեայց կամ առհաւատչեաց, առհաւատչեօք. գլուխ, քէյ:
Աղախնեայք, աղախնեայց կամ աղախնեաց, աղախնեօք. Աղախնայք, աղախնայց կամ աղախնաց, աղախնօք. } աղախիններ, հարճիններ:
Կանայք, կանայց կամ կանաց. կնիկներ:
Սարոյ, սարոյք, սարոյց. չամ ծառ:
Արաստոյ, արաստոյք, արաստոյց. ձեղուն, կտուր:
Դիպուածոյ, դիպուածոյք, դիպուածոյց. դիպուածական:
Գրեան, գրեանք, գրեանց. գրեր:

| | |
|---|---|
| Յաւիտեան, յաւիտեանք, յաւիտեանց. | Երկան ատեն, շատ դար: |
| Վեցթևեան, վեցթևեանք, վեցթևեանց. | Վեց թեւ ունեցող: |
| Արամեան, արամեանք, արամեանց. | Արամայ ազգէն, հայ: |
| Աղախին, աղախնանք, աղախնանց. | աղախին, հալայըք: |
| Ամենայն, ամենայնք, ամենայնց. | ամէն: |
| Դառն, դառինք, դառինց. | լեղի: |
| Արբուն, արբունք, արբունց. | կտրիճ հասակ: |
| Պատկեր, պատկերք, պատկերց. | պատկեր: |
| Ջուր, ջուրք, ջուրց. | ջուր: |
| Հանուր, հանուրք, հանուրց. | ամէն, բոլոր: |
| Քոյր, քորք, քորց. | քոյր: |

58. Երբեմն ալ սեռականի մը նման վերջ ունեցող ուղղական անուններն՝ ան հոլովին սեռականը կամ տրականը կըսեպուին, և ըստ այնմ ուրիշ հոլովն ալ կըշինուի. ինչպէս, Հրաչեայ, ասորեստանեայ, չորեքօրեայ. Սատեր, սկտեղ կամ սկուտեղ. Տամուսի, Սեմեի, Եւլ՚օժի, ասորի, նամականի, ամեհի, յուռի, ամարանի. Բրգիշյ [?], այժմու, որ ուղղական են, իւրաքանչիւր իրեն նման սեռականի կամ տրականի տեղ ալ առնուած կան գրոց մէջ: Եւ անկէց ան վերջին նմանութեամբը գործիական շինուած է Եղջերեայ, եղջերեաւ. Եղևնեայ, եղևնեաւ. Դուզնաքեայ, դուզնաքեաւ. Սկտեղ, սկտեղբ. Թագուհի, թագուհիւ. Նամականի, նամականիւ.— Բացառական, Տափիղայ, 'ի տափիղայ. Երեկորեայ, յերեկորեայ.— Յոգնակի սեռական, Ամեհի, ամեհից. Յուռի, յուռից. Ամարանի, ամարանից. Այժմու, այժմուց: Վերի գրած (57, 55) եայ, եայք, եան, եր վերջացած բառերուն յոգնակի հոլովներն՝ աս կերպիս ալ նման են. ասոր յոգնակիներն ալ՝ անոնց:

59. Յոգնակի ուղղականն երբեմն սէով կ՚ըլլայ՝ մանաւանդ անեզական անուններուն. ինչպէս, Ոչ գոյր ընդ նոսա աստուածս օտարս. փոխանակ ըսելու՝ աստուածք օտարք. չկար անոնց հետ օտար աստուածներ: Օրէնս արդարութեան բանութիւն մեր եղիցի. փոխանակ ըսելու օրէնք. արդարութեան օրէնք՝ մեր ուժն ըլլայ: Ոչ է ինձ պէտս և ոչինչ. փոխանակ ըսելու՝ պէտք. բան մը պէտք չէ ինծի: Տիեզերս լցաւ. փոխանակ ըսելու՝ տիեզերք լցաւ. բոլոր աշխարհք լեցուեցաւ:

60. Հայցականն և ուրիշ նախդրիւ հոլովներն ալ երբեմն քէով կ՚ըլլան. ինչպէս, Զլեզուք, զհրեշտակք, զիրքն, զկեանքն, զցիրքն, փոխանակ ըսելու՝ զլեզուս, զհրեշտակս, զիրսն, զկեանսն, զցիրսն: Հեղին արտասուք. Ետուն նմա խրատունք. փոխանակ ըսելու՝ հեղին արտասուս, ետուն նմա խրատունս: Ի դժոխքն, 'ի զօրքն, յարքունիքն, փոխանակ ըսելու՝ 'ի դժոխսն, 'ի զօրսն, յարքունիսն: Ասանկ գիտցիր ամէն տեսակ բառի համար:

61. Յոգնակի ուղղական և անկէց հայցական ալ կ՚ըլլայ երբեմն աս յոգնակի վերջերովս ալ.

այք, եայք, աղախին աղախնայք կամ աղախնեայք. աղախիններ:

անք. Նու, նուանք հարսներ. աղախին, աղախնանք. աղախիններ:

իք, ինք · պարտ, պարտիք · պօրճլէր · սերմանք, սերմանիք, թօխումլէր:
խոպոպք, խոպոպիք · ուզուն սաչլէր · դատ, դատինք · դաւալէր:
ոյք · գահ, գահոյք · թախտլէր · բարք, բարոյք · խույլէր:
ունք · հողմ, հողմունք · եէլլէր · ճրագ, ճրագունք · մումլէր · անոյշ, անուշունք, թաթլըլէր · նուագ, նուագունք · սազլէր:

62. Առջի չորսը այք կամ եայք, անք, իք, ոյք վերջահոլով ալ ունին, այց կամ եայց, անց, եաց, ոյից կամ ոյց: Իսկ ունք չունի սովորաբար, զի չըլլար հողմունք, հողմոց, բաց 'ի քանի մը բառէ · ինչպէս, պառաւ, պառաւունք, պառաւանց · ձիրան, ձիրանունք, ձիրանանց, ձիրանամբք · կոչունք, կոչնոց:

63. Երբեմն ալ յոգնակի ուղղական ու անկից հայցական կ'ըլլայ աս եզակի վերջերովս, որ սովորաբար եզակի կը հոլովին ամէն հոլով ալ.
ան · էշ, իշան · էշլէր · ձի, ձիան, աթլէր:
անի · աւագ, աւագանի · պէյլէր · նամակ, նամականի · մէքթուպլէր · կանայք, կանանի · գատընլէր:
եան · գիրք, գրեան · գիթապլէր · խոզ, խոզեան · տօմուզլէր · էշ, իշեան · էշէկլէր:
եար, եր · էշ, իշեար · էշէկլէր · վանք, վանեար կամ վաներ · վանքլէր · բան, բանեար կամ բաներ · շէյլէր, սէօզլէր:
կան · զօր, զօրական · ասքէր, ասքէրլէր · բազմական · նըսսըլէր:
նեար · բարձիկ, բարձկնեար · կիւչիւք եասթըգլէր, եասթըգճըգլէր · քաղաքիկ, քաղաքկնեար · կիւչիւք քասապալէր, քասապաճըգլէր:
որայ · } կալ, կալորայ · խալքլէր · խարմանլէր · արտ, արտորայ կամ արտո-
որեայ · } րեայ · թարլալէր · վանք, վանորայ կամ վանորեայ, վանօրեայ · վանքլէր · գեղ, գեղօրեայ կամ գեղօրէք · քէօյլէր:
ուի · շուն, շնուի կամ շընուի · իթլէր · էշ, իշուի · էշէկլէր · աչք, աչուի · գէօզլէր:
ստան · անդ, անդաստան · թարլալէր · տանիք, տանեստան · տամլէր:
տի, ոտի · մանուկ, մանկտի · չօճուգլէր · ոսկր, ոսկրոտի · քէմիքլէր:

64. Եար՝ սովորաբար միավանկները կ'ըլլան, նեար՝ բազմավանկները: — Աս եզակիներս երբեմն նորէն յոգնակի կ'ըլլան քէով ու սէով, ոմանք վերջահոլովով ալ, ինչպէս, գրեանք, զգրեանս, գրենաց, գրենօք (57) · արտորայք կամ արտորեայք, զարտորայս, արտորայոց կամ արտորէից · անդաստանք, յանդաստանս, անդաստանաց · զմանկտիս, մանկտւոց, մանկտւովք կամ մանկտեամբք:

65. Շատ անգամ ալ յոգնակիի տեղ նոյն անունը կրկնուի · որ շատ տեղ ալ կը նշանակէ ամէն մէկ, ամէն, չափ · ինչպէս, ազգ, ազգ, ազգլէր · այր այր, առն առն, ամէն մէկ մարդ, ամէն մէկ մարդուն · քաղաքի քաղաքի, ամէն քաղաքի · աւուր աւուր, ամէն օրուան, զբարի բարին, ազէկները · զլոյսի լոյսին, գէշերը · զծանր ծանր, ծանրերը · ազգ ազգք, ազգեր, չափ ազգեր · լեզուք լեզուք, լեզուներ, չափ լեզուներ, ազգաց ազգաց, քաղաքաց քաղաքաց, չափ ազգերու, չափ քաղաքներու · 'ի տեղեաց տեղեաց, չափ տեղերէ · 'ի տունս տունս, չափ տներու, չափ տներ կամ չափ տներու մէջ:

66. Իսկ ածականն որ յայտնի գոյականի քով կրկնուի նէ, անոր չատը կամ սաստիկը կը նշանակէ · ինչպէս, ծանր ծանր երդմամբք,

ըսել է շատ կամ խիստ ծանր. մանր մանր մասունք, շատ կամ խիստ մանր. ընտիր ընտիր երկիրն, խիստ ընտիր. բազում բազում ինչ իրս, խիստ շատ բաներ. նման նման, խիստ նման:

Ասանկ ալ մեծին յոգնակին տեղը Մեծամեծ կ'ըսուի սովորաբար. մեծամեծ դատաստանօք, քաղաքք մեծամեծք. — որ եթէ եզակի հետ ըսուի, խիստ մեծ կընշանակէ. մեծամեծ տագնապ, մեծամեծ մարտն:

67. Եզակի յատուկ անունները յոգնակի չունին ըսինք սովորաբար (20). բայց երբեմն նոյն անունն ունեցողները կամ նմանները ըսել պէտք ըլլայ նէ, յոգնակի կ'ըլլան քէով, սէով, կամ եանք վերջով (63), ու կը հոլովին ալ. ս վերջացածները՝ յիով կ'առնեն յոգնակին քէն ու սէն. Տիգրանք, Քրիստոսք, Յուդայք, Յուդայից. Սիմոնք, Սիմոնից. Անտոնք, Անտոնից. Անտիոքոսք կամ Անտիոքք, Անտիոքօք. երկուս Քրիստոսս:— Տիտանեանք, տիտանեանց, տիտանները. Անտիոքեանք, անտիոքցիները. Գրիգորեանք, Գրիգորները:

68. Յոգնակի ք, ս կը դրուի երբեմն բառին սեռականին, գործիականին, բացառականին ու նախդրիւ հոլովներուն վրայ ալ, ու կընշանակէ անոնք որ անոր են, անով են, անկէ են, և այլն. ու նորէն ալ կը հոլովին երբեմն. ինչպէս ՚Քրիստոսիք, զքրիստոսիսն. Քրիստոսինքն. Աստուծոյք, աստուծոյց, զաստուծոյսն. Մարմնոյք, զմարմնոյսն. Երկրիք, զերկրիսն. Սիրելեաց, սիրելեացքն:— Մարմնովքն, զմարմնովսն. — Ի յարենէք, ՚ի յարենէց. Յերկրէքս, յերկրէցս. Առ ՚ի յերկրէք, զառ ՚ի յերկրէսն:— Յերկրիքս. Առ ՚ի ներքոյք, զառ ՚ի ներքոյս. Առ ՚ի տորեք, զառ ՚ի տորեսն. Ընդ մէջքն, զընդ մէջսն. Ըստ մասինքն, ըստ մասինցն (57). Մի ըստ միոջէքն, մի ըստ միոջէցն, զմի ըստ միոջէսն:

Ասանկ դերանուններուն ալ կ'ըլլայ, ուրիշ անսովոր հոլովներով ալ: Հոս դրածներուն մէջն ալ գիտէ սեռական ու բացառական անսովոր հոլովը, ՚ի յարենէց, յերկրէց, ընդ մէջէց, որ ալ ուրիշ տեղ չկայ, ու կընմանի 57 թուին,

69. Մէկ հոլովման անուններն երբեմն ուրիշ հոլովման պէս ալ կը հոլովին, մանաւանդ երրորդ, չորրորդ, հինգերորդ ու վեցերորդ հոլովումներունը մէկմէկու պէս. ամէն հոլովին պէս ալ չէ նէ, մէկ քանիին պէս: Առջևի օրինակներէդ՝ քիչէն շատը հասկըցիր.

Ծաղիկ, ծաղկան. ծաղկի, ծաղկաւ. ծաղկոյ, ծաղկով. ծաղիկ:
Անկիւն, անկեան. անկիւնի, յանկիւնէ. անկիւն, քէօշէ:
Ժողովուրդ, ժողովրդեան. ժողովրդոյ, ժողովրդով.
 ժողովրդի, ժողովրդիւ. ժողովուրդ:
Խորհուրդ, խորհրդոյ կամ խորհրդեան. խորհրդի,
 խորհրդիւ. խորհուրդ:
Սանձ, սանձի, սանձիւ, սանձից. սանձաւ, սանձաց.
 սանձուց. սանձ, կէմ:
Լաւագոյն, լաւագունի, լաւագունիւ, լաւագունից.
 լաւագունաւ, լաւագունաց. աղէկ, էն աղէկ:

Թուղթ, թղթոյ · թղթի, 'ի թղթէ · թուղթ:
Թև, թևոյ · թևի, 'ի թևէ · թեւ:
Ջաւ, ջաւոյ, ջաւու, ջաւուց · ջաւի, ջաւաւ, ջաւից · ցաւ:
Զգեստ, զգեստու, զգեստուց, զգեստով · զգեստի, զգեստիւ, զգեստից, զգեստիւք · հագուստ, լաթ:
Զէն, զինու, զինուց · զինուք · զինով · զինաւ · զինից, զինօք · զէնք, սիլահ ·
Ասր, ասու · ասրու, ասրոյ, ասրով · ասերբ · բուրդ:
Մեղր, մեղու · մեղեր, մեղերբ · մեղրոյ, մեղրով · մեղրի · մեղր, պալ:
Նաւ, նաւի, նաւաւ, նաւաց · նաւով, նաւու, նաւուց · նաւ:
Վանք, վանաց · վանից, վանիւք, վանուց · վանք · բնակարան:
Ամիս, ամսոյ · ամսեան · ամիս:
Բաժին, բաժնի, բաժնից · բաժեան, բաժեանց · մաս, բաժին:
Ժամանակ, ժամանակի · ժամանակեան · ատեն:
Բազուկ, բազկի, բազկաւ · բազկամբ · թեւ, բազուկ:
Կող, կողի, կողիւ, կողիւք, կողամբք · կող:
Գօտի, գօտւոյ, գօտւով կամ գօտեաւ, գօտեամբ · գօտի:
Բլուր, բլրոյ կամ բլրի · բլեր · բլերբ · բլուր, պզտի լեռ:
Ձեռն, ձեռին, ձեռամբ · ձեռք, ձեռաց, ձեռօք · ձերբ կամ ձեռք · ձեռինք, ձեռամբք · ձեռք:
Յեսան, յեսանի · յեսանայ · սրելու քար:
Շեփոր, շեփորի · շեփորայ · փող, զուռնա:
Քրմանոյշ, քրմանուշի · քրմանուշայ · քրմի կին, կին քուրմ:
Աստուածուհի, աստուածուհւոյ · աստուածուհեայ · կնիկ աստուած:

70 · Ոմանց ալ եզակին մէկ կերպ, յոգնակին մէկալ կերպ կ՚ըլլայ սովորաբար · ինչպէս,

Ժողովուրդ, ժողովրդեան · — ժողովուրդք, ժողովրդոց, ժողովուրդ:
Խորհուրդ, խորհրդոյ կամ խորհրդեան · — խորհուրդք, խորհրդոց · խորհուրդ:
Ծնունդ, ծննդեան կամ ծննդոյ · — ծնունդք, ծննդոց · ծնունդ, ծնանիլը:
Շնորհ, շնորհի, շնորհիւ · — շնորհք, շնորհաց, շնորհօք · շնորք:
Երկին, երկնի, երկնաւ · — երկինք, երկնից, երկնիւք · երկինք:
Քար, քարի, քարիւ կամ քարամբ · — քարինք, քարանց · քարամբք կամ քարիւք · քար:
Պառաւ, պառաւոյ · — պառաւունք, պառաւանց · պառաւ:
Աղախին, աղախնոյ կամ աղախնի, աղախնով, աղախնաւ, աղախնիւ · — աղախնայք, և այլն (57, 61) · քիչ տեղ, աղախինք, զաղախինս · աղախին, հալայըկ:

71 · Նոյն բառն ուրիշ ուրիշ բան որ նշանակէ նէ, հոլովը կըփոխուի սովորաբար · ինչպէս,

| | |
|---|---|
| Այր · մաղարա · այրի, այրիւ · | Այր · էրիկ մարդ · առն, արամբ: |
| Մայր · չամ ծառ · մայրի, մայրիւ · | Մայր · մար · մօր, մարբ: |
| Գեղ · գեղ · գեղի · գեղիւ · | Գեղ · աղուորութիւն · գեղոյ, գեղով: |

Փող․ պողոտ․ փողի փողիւ․ Փող․ որակ, պօղոտա․ փողոյ, փողով:
Օդ․ տօթէջ ամառ․ օդի, օդից․ Օդ․ օդ, հովեր․ օդոյ, օդոց:
Որթ․ ուղտ․ որթոյ, որթով․ Որթ․ հորթ, տունկ, որթու, որթուց:

72․ Անուն մը մասնիկի մը հետ միացած կամ ուրիշ անուան հետ բարդած որ ըլլայ նէ, անեզականն եզական ալ կ՚ըլլայ, վերջահոլով չունեցողը վերջահոլով ալ կ՚առնէ, ու սովորաբար հոլովը կը փոխէ, մանաւանդ չորրորդ ու հինգերորդ հոլովմանց բառերը․ ինչպէս,

Միտք, մտաց․ Անմիտ, անմտի, անմտից կամ անմտաց:
Փառք, փառաց․ Վեհափառ, վեհափառի, վեհափառից:
Յոյս, յուսոյ․ Անյոյս, անյուսի, անյոյսք, անյուսից, անյուսաց:
Սէր, սիրոյ․ Բարեսէր, բարեսիրի, բարեսէրք, բարեսիրաց:
Աստուած, աստուծոյ, աստուծոց, աստուածոց․ Անաստուած, անաստուածի, անաստուածից:
Գործ, գործոյ, գործոց․ Այգեգործ, այգեգործի, այգեգործաց:
Զէն, զինու, զինուց․ Սպառազէն, սպառազինի, սպառազինաց:
Խրատ, խրատու, խրատուց․ Անխրատ, անխրատի անխրատից:
Կիրք, կրից, կրիւք․ Զինակիր, զինակրի, զինակրաց, զինակրօք:
Սիրտ, սրտի, սրտից․ Խստասիրտ, խստասրտի, խստասրտաց:

## ՄԻՋԱԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔԸ

73․ Մէջէն և անորէն կ՚ըսուին քանի մը գոյական և ածական անուններ, որ որոշ բան մը կամ ինչութիւն մը չեն ցուցըներ, ու հասարակ անուան ու դերանուան մէջ տեղը կըսեպուին: Ասոնցմէ մէկ քանին ալ զատ հոլովում ունին, որ գիտնալու է:

74․ Մի․ միոյ կամ միոջ (47)․ միում,
միով, 'ի միոյ կամ 'ի միոջէ, զմի․ Մէկ․
Երկու․ երկուք, երկուց, երկուք, զերկուս․ Երկու, Երկուք:
Երեք․ երից, երիւք, զերիս․ Երեք:
Չորք, (չորեք)․ չորից, չորիւք, զչորս․ Չորս:
Հինգ․ հնգի, հնգիւ․ հինգք, հնգից,
հնգիւք․ հնգաւ, հնգաց, հնգօք․ Հինգ:
Վեց․ վեցի, վեցիւ․ վեցք, վեցից, վեցիւք․ Վեց:

Եօթն[1]. եօթան, եօթեան, եօթին. եօ-
թանք, եօթեանք, եօթունք. կամ եօթ-
նի, եօթնից. եօթը, օխտը:

Ութ. ութի, ութիւ. ութք, ութից, ութիւք. ութը:

Ինն. ըննի, ըննիւ. ինունք կամ իննունք, ինը:
ինունց, ինանց, ինամբք, իննուք. կամ ըննից, ըննիւք.

Տասն. տասին, տասամբ. տասունք, տա- տասը:
սանց, տասամբք. կամ տասնից, տասնիւք.

Մետասան, երկոտասան, և այլն. մետա- տասնըմէկ, տաս-
սանի, մետասանից. նըերկու, և այլն:

Եօթն և տասն, եօթն և տասին. եօթն տասնըեօթը:
և տասունք, եօթն և տասանց, եօթն
և տասնից կամ եօթանց և տասանց.

Եօթնուտասն, եօթնուտասին. եօթնու- տասնըեօթը:
տասանք, եօթնուտասանից, եօթնուտասնից.

Քսան, երեսուն, և այլն. քսանի, քսա- քսան, երեսուն:
նիւ, քսանից. երեսնի, երեսնից. և այլն:

Քսան և մի, քսան և երկու. քսան և քսանըմէկ, քսան-
միոյ, քսան և երկուց. կամ քսանից և ըերկու, և
միոյ, քսանից և երկուց. այլն:

Հարիւր, երկու հարիւր կամ երկերիւր, հարիւր, երկու
երեք հարիւր կամ երեքարիւր, չորեք հարիւր, և այլն:
հարիւր կամ չորեքարիւր, հինգ հարիւր,
և այլն. հարիւրոյ. հարիւրոց. հարիւ-
րի. հարիւրից. երկու հարիւրոյ կամ եր-
կուց հարիւրոց, երեք հարիւրոյ կամ
երից հարիւրոց, չորեք հարիւրոյ, կամ
չորից հարիւրոց, հինգ հարիւրոյ, հինգ
հարիւրոց կամ հնգից հարիւրոց, և այլն.
կամ Հարիւրք երկու, հարիւրոց երկուց, երկու հարիւր,
և այլն. և այլն.

---

1 Հիներուն գրուածքներուն մէջ եօթն, էօթն (18. դար.) կամ եօթան. հի-քենի ալ էօթն:

Հարիւր և մի, հարիւր և երկու, հարիւր — հարուր մէկ, հա-
և տասն կամ հարիւր տասն. հարիւր և — րուր երկու,
միոյ, հարիւր և երկուց, հարիւր և տա- — և այլն:
սանց, հարիւր տասանց. կամ հարիւրոց
և երկուց, հարիւրոց և տասանց.

Հազար, երկու հազար, և այլն. հազա- — հազար, երկու
րի, հազարաւ, հազարաց. հազարիւ, — հազար, և այլն:
հազարից. երկու հազարի կամ երկուց հազարաց.
կամ Հազարք երկու, հազարաց երկուց. — երկու հազար:
և այլն. — և այլն:

Հազար և մի, հազար և երկու, հազար — հազար մէկ, հա-
և տասն, հազար և եօթն և տասն կամ — զար երկու, և
հազար եօթն և տասն. հազար և միոյ, — այլն:
հազար և երկուց, հազար և տասանց.
կամ հազարաց և երկուց, հազարաց և տասանց.

Բիւր, որ Տասն հազար ալ կ'ըսուի. բիւ-
րու, բիւրուց. բիւրոյ, բիւրոց. բիւրի,
բիւրաւ, բիւրիւ. — Բէւր, տասը հազար:

Հարիւր բիւր, հազար հազարք կամ հա-
զարք հազարաց. — մէկ միլիոն:

Հազար բիւր. — տասը միլիոն:

Բիւր բիւրք կամ բիւրք բիւրոց. — հարուր միլիոն:

75. Թուոյ կարգ ցուցնելը ասոնց վերջը որդ կամ երորդ կցելով կ'ըլլայ, բայց 'ի մի էն՝ որ կ'ըսուի Առաջին, առաջներորդ կամ առաջնորդ. — երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, քսաներորդ չորրորդ կամ քսաներորդ և չորրորդ կամ քսան և չորրորդ, երեսներորդ, հարիւրերորդ կամ հարիւրորդ. հարիւր տասներորդ: Առաջին, առաջնոյն, կը հոլովի ըստ 31. մէկալները ըստ 39, առաջներորդի, երկրորդի, քսաներորդի չորրորդի կամ քսան և չորրորդի, 'ի քսան և չորրորդ կամ 'ի քսան և 'ի չորրորդի, յերեսներորդէ երկրորդէ կամ յերեսուն և երկրորդէ: — Պարզ Թիւերն ալ երբեմն աս մտքով կը բանին. Յեօթն ամին. 'ի չորրորդ ամէն մինչև 'ի մետասան ամն:

76. Երկոքեան կամ երկոքին, երեքեան կամ երեքին, չորեքեան կամ չորեքին, և այլն. — երկուքն ալ, երկուքը. երեքն ալ, երեքը. չորսն ալ, չորսը, ևն. ասանկ կը հոլովին.

Ցոգնակի

Ուղ. Երկոքեան, երկոքին. երկուքն ալ, երկուքը.
Սեռ. Երկոցուն, երկոցունց. երկուքին ալ, երկուքին.
Տր. Երկոցուն, երկոցունց,
յերկոսեան, յերկոսին. երկուքին ալ, երկուքին.
Գործ. Երկոքումբ, երկոքումբք. երկուքովն ալ, երկուքովը.
Բաց. յԵրկոցունց. երկուքէն ալ, երկուքէն.
Հայց. զԵրկոսեան, զերկոսին. երկուքն ալ. երկուքը։

77. Ասանկ կըհոլովին

Ամենեքեան, ամենեքին, ամենեցուն. ամէնքն ալ, ամէնքը։
Բոլորեքեան, բոլորեքին, բոլորեցուն. բոլորն ալ. բոլորը։

78. Բացառականը գոյականի հետ կ՚ըսուի եւ Յերկոցուն կողմանց. ՚ի ձէնջ երկոցուն. յայլոցն ամենեցուն. ՚ի մէնջ ամենեցուն։

79. Երկաքանչիւր, երկուքն ալ. կըհոլովի ըստ 31. երկաքանչիւրոյ, երկաքանչիւրում, երկաքանչիւրով, յերկաքանչիւրոյ կամ յերկաքանչիւրմէ (33), զերկաքանչիւր.— Երկաքանչիւրք, երկաքանչիւրոց, երկաքանչիւրեից կամ երկաքանչիւրց (57), երկաքանչիւրովք, յերկաքանչիւրոց, զերկաքանչիւրս։

80. Եզակի անյոդնական, գոյական և ածական։

Ուղ. Զի, զինչ, ինչ. ինչ բան, ինչ. ինչ որ. որ.
Սեռ. Էր, եր. ինչ բանի, ինչու.
Տր. Իմ, հիմ, էրում,
երում, յինչ. ինչ բանի, ինչու.
Գործ. Իւ. ինչ բանով, ինչով, որով.
Բաց. յիմէ. ինչ բանէ, ինչէ.
Հայց Զի, զինչ, ինչ. ինչ բան, ինչ, ինչ որ, որ։

81. Ասի առանց հարցընելու ալ կըբանի, հարցընելու ալ։ Տրականը հիմ, էրում՝ աւելի հարցական կըբանին, ինչո՞ւ։ Բացառականը յիմէ՝ ու նախդրով զիմէ՝ գտուեցաւ ընտիր գրոց մէջ. Զիմէ և իցէ՝ ինչ

բանի համար կամ ինչ բանի վրայ որ ըլլայ [1]: Սովորաբար գոյական է. ինչ ինչ ածական ալ կը բանին շատ, մէկալ հոլովները խիստ քիչ. ու իրաց կ՚ըսուին աւելի սովորաբար.

82. Եզակի անյօդնական, գոյական և ածական.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Իմն. | Իք. | Ինչ. | բան մը, իր մը, մը՝ մըն, քանի մը. |
| Սեռ. | | Իրիք. | | բանի մը, մը. |
| Տր. | Իմեմն. | Իմիք. | յինչ. | բանի մը, մը. |
| Գործ. | | Իւիք. | | բանով մը, մը. |
| Բաց. | յիմեմնէ. | յիմեքէ. | | բանէ մը, մը. |
| Հայց. | Իմն. | | Ինչ. | բան մը, մը: |

83. Իք ուղղականը չգործածուիր: Իմն միայն՝ ընաւ նախդիր չառներ, ոչ զ, ոչ յ. միայն ալ չբանիր հայցական, հապա ածականի կամ գոյականի հետ. Այլ իմն աղաղակել. Մեծ իմն անուն փառաց ժառանգել, Մի իմն շնորհել. Զիմն մի՛ ի նոցանէ: — Իւ կ՚առնէ միայն յ նախդիր. ամենևին զ չառներ: — Ածական՝ իրաց կ՚ըսուին շատ, անձանց քիչ:

84. Վերի ինչը աս ինչին հետ ալ կը բանի՝ հարցական և առանց հարցականի, ու երկուքն ալ մէկտեղ կը հոլովուին.

Զինչ ինչ, եր իրիք, իմ իմիք, իւ իւիք, ինչ բան, որ յիմէ իմեքէ, զինչ ինչ, յինչ ինչ. բան:

85. Իմն, ինչ ինքնիրեննուն կրկնած ալ կը բանին, ու կը հոլովուին ասանկ.

| | | |
|---|---|---|
| Իմն իմն | իրիք իրիք, իմիք իմիք, իւիք | քանի մը բան, |
| Ինչ ինչ | իւիք, իմն իմն, ինչ ինչ. | քանի մը: |

Աս իմն իմն հայցական ալ կը բանի. Իմն իմն խոստանան տալ. քանի մը բան կը խոստանան տալու:

86. Ոչ ինչ, ոչ իրիք, ոչ իմիք, ոչ իւիք, ոչ յիմեքէ, ոչ ինչ, ոչ յինչ. ոչ ինչ, հիչ բան մը: Ասոր նախդրիւ

---

1 Նոյն զ նախդրով բացառականն ըլլալու է զմէ, որպէս թէ զինչ, որ սովորաբար հարցական կը բանի զմ՞ ու կը նշանակէ ինչո՞ւ համար, ինչ բանի համար:

հոլովները չըստուիր ոչէնչ, յոչէնչ[1], հապա ընտոր տեսար ոչ էնչ ոչ յէնչ։

## 87. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ո, ով. | ով, ով որ, որը. |
| Սեռ. | Ոյր. | որոյ, որոյ որ. |
| Տրա. | Ում, յո, յով. | որոյ, որոյ որ. |
| Գործ. | — | — — |
| Բաց. | յՈւմէ, յումմէ. | որմէ, որմէ, որ. |
| Հայց. | զՈ, զով. | ով, ով որ, որը. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ոյք. | որոնք, որոնք որ. |
| Սեռ. | Ոյց. | որոնց, որոնց որ. |
| Տրա. | Ոյց, յոյս. | որոնց, որոնց որ. |
| Գործ. | — | — — |
| Բաց. | յՈյց. | որոնցմէ, որոնցմէ որ. |
| Հայց. | զՈյս. | որոնք, որոնք որ։ |

88. Գործիականին տեղը կ'ըսուի Իւ, որով, որովք։ — Սովորաբար գոյական է. հարցական և առանց հարցականի ալ շատ կըբանի. ինչպէս.
Ով զայս արարեց, քերովբէինմանի. ով որ աս բանս ըրէ նէ, քերովբէի նմանի։
Ամենայն տուն կազմի՝ յումէ կազմի. ամէն տուն կըշինուի որմէ որ կըշինուի նէ։
Զի զով սիրէ ոք՝ նմին և ողորմի. ինչու ով որ կըսիրէ նէ մէկը՝ անոր կ'ողորմի ալ։
Քիչ տեղ ածական ալ կըբանի։

89. Եզակի ուղղականը յոգնակի ալ կընշանակէ երբեմն. Ո՞վ են ժողովուրդս այս. ո՞վ են սոքա. ո՞վ էաք. ո՞վ էիք. ես և դու ո՞վ լիցուք. ո՞վ և ո՞վ լիցեն՝ որ երթայցեն. ո՛ լիցեն. ո՛ այնոքիկ լիցեն։

90. Նախդրիւ տրականը Յո, յով, ուր ալ ըսել է. Յո՞վ երթաս. ո՞ւր կ'երթաս։ Գնացին յո և գնացին. գացին ուր որ գացին նէ։

91. Որ, ով որ, ո՛ր որ, ինչ որ, ինչն որ, որը. ՀՈՐՈՐԴ հոլովման պէս կըհոլովի.

---

1 Իսկ Ոչինչ, ոչընչի, ոչինք, ոչընչից, ուրիշ բառ է՝ գոյական և ածական, և ըսել է չեղած բան, ան բանն որ չկայ. փուճ անպիտան. որ լման ամէն հոլովն ունի ըստ 29, ուստի ոչէնչ, յոչէնչ ալ կ'ըլլայ։ Շինած է հասարակ գոյական անուանէն Ինչ, ընչի, ինչիւ, ինչք ընչից. որ բան ըսել է։

**Որ, որոյ, որում, որով, յորմէ կամ յորոյ, զոր, յոր․**
**Որք, որոց, որոց, որովք, յորոց, զորս, յորս։**

Ա՛ս Որս ալ առանց հարցընելու ալ կըրանի՝ հարցընելով ալ, գոյական և ածական։

92․ Կրկնուած ոմանք ալ ըսել է․ ինչպէս․

Ծաղկեցին որ շատ և որ սակաւ․ Ծաղիկին օլու չօք օլու ազ, ոմանք չօք ոմանք ազ։

Որ ՚ի ներքս որ արտաքս թօթափէին․ օլու իչէրի օլու տըշարը սիլքէլէրտի։

Կոտորել զորս ՚ի դաշտս զորս ՚ի լերինս․ Ջուրտէն օլու տաղտէն օլունէրը։

93․ **Որ ինչ, որ զինչ, ինչ որ, զինչ որ․** ինչ որ, ինչ բան որ, որ բան որ, ևն։

**Առջինը միայն կը հոլովի, ու եզակի միայն․**

**Որոյ իրիք կամ ոյր իրիք, որում իմիք, կամ ում իմիք, որով իւիք, յորմէ իմեքէ․ որ ինչ, ինչ որ կամ ինչ զոր, զոր ինչ, որ զինչ, զինչ որ, յոր ինչ։**

Սովորաբար գոյական է և առանց հարցընելու կըրանի․ երբեմն ալ ածական կամ հարցական։

## 94․ Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղ․ | Ո՞վ․ | Ոք․ | Բիր, բիր քիմ, քիմ․ |
| Սեռ․ | Ուրուշն, որուշն․ | Ուրուք․ | Բիրին քիմ, քիմ․ |
| Տրա․ | Ումեշն, յոշն․ | Ումեք, յոք․ | Բիրին քիմ, քիմ․ |
| Գործ․ | Ոմամբ․ | — | Բիրօլ քիմ, քիմ․ |
| Բաց․ | յՈւմեշնէ․ | յՈւմեքէ․ | Բիրէ քիմ, քիմ․ |
| Հայց․ | զՈշն․ | զՈք․ | Բիր, բիր քիմ, քիմ․ |

## Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ․ | Ոմանք, ոք․ | Բիր քանի․ |
| Սեռ․ | Ոմանց․ | Բիր քանիլի․ |
| Տրա․ | Ոմանց, յոմանս | Բիր քանիլի․ |
| Գործ․ | Ոմամբք․ | Բիր քանիլօվ․ |
| Բաց․ | յՈմանց․ | Բիր քանիլէ․ |
| Հայց․ | զՈմանս․ | Բիր քանին։ |

95. Գոյական է և ածական. մարդու ալ կ'ըսուի, իրաց ալ. Այր ոմն, այր ոք, կանայք ոմանք. ըերին ուրուք, կշռօք ոմամբք։

96. Ոք զատ յոգնական չունենալուն՝ յոգնակի ալ կըբանի տեղ տեղ. Թէ ոք պիտանիք իցեն, ոք արք անօրէնք, որպիսիք ոք, գուշնաքեայք ոք. երկու ոք միաբանք. զերկուս ոք. զհպարտս ոք. բազմաց ումեք. ոչ ոք իցեն որ բնակիցեն։ Երբեմն ալ ոյք կըգրուի. Եւ որ ընդ նմա էին ոյք. ո՞ր ոյք. բազում ոյք. որպիսիք ոյք իցեն։

97. Հոլովները կրկնելով ալ կ'ըսուի,
Ուրուք ուրուք, ումեք ումեք, ոմանք ոմանք, ոմանց ոմանց, զոմանս ոմանս, [illegible], [illegible]։

98. Ով ոքին և ոչին հետ ալ կըբանի, ու երկուքն ալ կըհոլովին.

Ո ոք, ով ոք, ոյր ուրուք, ում ումեք, յումէ կամ յումմէ ումեքէ, կամ յում ումեքէ, զո ոք, զով ոք.

Ո ոք կամ ոյք ոմանք, ոյց ոմանց, յոյց ոմանց, զոյս ոմանս. — [illegible]։

99. Որ ոք, որոյ ուրուք, որում ումեք, որով ոմամբ, յորմէ ումեքէ, զոր ոք.

Որ ոք, որոց ոմանց, որովք ոմամբք, յորոց ոմանց, զորս ոմանս. — [illegible]։

100. Ոչ ոք, ոչ ուրուք, ոչ ումեք, ոչ յումեքէ, ոչ զոք, ոչ յոք. [illegible]. — ամենևին չըսուիր [illegible]. բայց ըսած կայ [illegible]։ — Սովորաբար գոյական է. երբեմն ածական. Ոչ ոք ծառայ։

101. Միմեանց, [illegible]. եզակի չունի և ոչ ուղղական. կըհոլովի ըստ 24.

Միմեանց, 'ի միմեանս, միմեամբք, 'ի միմեանց, զմիմեանս. [illegible]։

102. Իրերաց, [illegible]. եզակի չունի և ոչ ուղղական. կըհոլովի ըստ 19 կամ 39.

Իրերաց, յիրեարս կամ յիրեար, յիրար, իրերօք, յիրերաց, զիրեարս կամ զիրեար, զիրար. [illegible]։

103. Մի, մը. ածական է. Բան մի, բան մը. Այր մի, մարդ մը. առն միոջ կամ միում, մարդու մը. կը հոլովի համ֊րանքի Մէկին պէս (74) ըստ 31 առանց յոգնակիի.

Մի, միոյ կամ միոջ, միում, միով, 'ի միոյ կամ 'ի միոջէ։

104. Մի մի, Մէն մի, Մէն. ամէն մէկը, մէյմէկ. առ֊ջինը միայն կը հոլովի երկուքն ալ՝ ըստ 31.

Մի մի, միոյ միոյ, միում միում, միով միով, 'ի միոյ միոյ կամ 'ի միոջէ միոջէ, զմի մի։

105. Միւս, մէկալ. կը հոլովի ըստ 31.

Միւս, միւսոյ, միւսում, 'ի միւս, միւսով, 'ի միւսոյ կամ 'ի միւսմէ, զմիւս.

Միւսք (որ քիչ կը բանի), միւսոց, միւսովք, 'ի միւսոց։

106. Այլ, ուրիշ, մէկալ. նոյնպէս կը հոլովի.

Այլ, այլոյ, այլում, յայլ, այլով, յայլոյ կամ յայլմէ, զայլ.

Այլք, այլոց, այլոց, յայլս, այլովք, յայլոց, զայլս։

107. Քանի, քանի. Այսքանի, Այդքանի, Այն֊քանի, ասչափ, ատչափ, անչափ. կը հոլովին ըստ 43.

Քանի, քանւոյ կամ քանոյ, քանեաց. Այսքանի, այս֊քանւոյ կամ այսքանոյ, այսքանեաւ, այսքանեաց։

Իսկ Այսքան, Այսչափ, կը հոլովին ըստ 29.

Այսքանի, այսքանիւ. Այսչափի, այսչափիւ։

108. Իւրաքանչիւր, Անձնիւր կամ անձնիւր. ամէն մէկս, ամէն մէկդ, ամէն մէկը. ամէն մէկերնիս, ամէն մէկերնիդ, ամէն մէկերնին. կը հոլովին ըստ 31.

Իւրաքանչիւր, իւրաքանչիւրոյ, իւրաքանչիւրում, իւ֊րաքանչիւրով, յիւրաքանչիւրոյ կամ յիւրաքանչիւր֊մէ, զիւրաքանչիւր.

Իւրաքանչիւրք, իւրաքանչիւրոց, իւրաքանչիւրից կամ իւրաքանչիւրց (57), իւրաքանչիւրովք, յիւրաքան֊չիւրոց, զիւրաքանչիւրս։

— Անձնիւրոց, անձնիւրց կամ անձներց (27)։

109. Բայց Իւրաքանչիւր, Անձնիւր, ինչպէս Երկա֊քանչիւրն ալ (79), անփոփոխ մնալով սեռականի ու֊տրականի տեղ ալ կը բանին, եզակի և յոգնակի։ —

Յոգնակի են ալ ամէն դէմք. Մեք իւրաքանչիւր, դուք իւրաքանչիւր, նոքա իւրաքանչիւր։

110. Ամէն կամ Ամեն, Ամենայն, ամէն, ամէնը. կըհոլովին ըստ 29.

Ամէն, ամենի, ամենի կամ ամենում (34), ամենիւ, յամենէ, զամէն.

Ամէնք, ամենից, ամենիւք, յամենից։

Ամենայն, ամենայնի, ամենայնի կամ ամենայնում, ամենայնիւ, յամենայնէ, զամենայն։

Ամենայնք, ամենայնից կամ ամենայնց (57), ամենայնիւք, յամենայնից, զամենայնս։ — Բայց ամէն քիչ կըբանի. յոգնակի ամենայնք ըսելու տեղն ալ աւելի ամենեքեան կ՚ըսուի (77), երբեմն ալ ամենայն։

111. Իմն, ինչ, ումն, ոք, աս վերջիններուն հետ ալ մէկտեղ կըբանին. Մի իմն, մի ինչ, այլ իմն, այլ ինչ, իւրաքանչիւր ինչ, ամենայն ինչ։ — Մի ումն, մի ոք կամ ոք մի, այլ ումն, այլ ոք, իւրաքանչիւր ոք, ամենայն ոք։

Մի, Այլ, սովորաբար իրենք ալ մէկտեղ կըհոլովին. Միոյ իրիք, միով իւիք, զմի ինչ. Այլում իմիք, այլով իւիք. Միոյ ուրումն կամ ուրուք, ումեքէ, ումեք. Այլով ոմամբ, յայլմէ ումեմնէ կամ ումեքէ, զայլ ոք. այլք ոմանք, այլոց ոմանց։ — Քիչ տեղ մինակ եղքինը. Այլ իրիք, այլ իւիք. այլ ուրուք, այլ ումեք, յայլ ումեքէ. այլ ոմանք, այլ ոմանց։

Իսկ Իւրաքանչիւր, Ամենայն, սովորաբար չեն հոլովիր. Իւրաքանչիւր իրիք կամ իմիք. ամենայն իրիք կամ իմիք, ամենայն իւիք, յամենայն իմեքէ կամ յամենայնէ իմեքէ, զամենայն ինչ. Իւրաքանչիւր ուրուք կամ ումեք, յիւրաքանչիւր ումեքէ։ Ամենայն ուրուք կամ ումեք, յամենայն ումեքէ։ — Չըսուիր ամենայն իմն, ամենայն ումն, ամենայն ոմամբ. և ոչ յոգնակի կըբանի։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԴԵՐԱՆՈՒՆ

112. Դերանունը քանի մը բառ է որ դէմք մը կամ դէմքերուն համեմատ կարգ մը կը ցուցընեն. և անունի տեղ կը դրուին չկրկնելու համար: Որը գոյական է, որը ածական: Անունին պէս կը հոլովին, շատերնին ալ յատուկ հոլովումունին:

## ԽԱԿԱՆ ԿԱՄ ԳՈՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

### 113. ԱՌԱՋԻՆ ԴԷՄՔ

| | *Եզակի* | | *Յոգնակի* | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Ես | ես. | Մեք. | մենք. |
| Սեռ. | Իմ. | իմ. | Մեր. | մեր. |
| Տրա. | Ինձ, յիս. | ինծի. | Մեզ, 'ի մեզ. | մեզի. |
| Գործ. | Ինև. | ինծմով. | Մեւք[1]. | մեզմով. |
| Բաց. | յինէն. | ինծմէ. | 'ի Մէնջ. | մեզմէ. |
| Հայց. | զիս. | ես. | զՄեզ. | մեզ: |

1 Մեօք, ձեօք կը կարդանք հիմայ ռամկօրէն. բայց բուն հին շիտակ գրուածքն է մեւք, ձեւք. քիչ կ'երևի մեաւք, ձեաւք:

## 114. ԵՐԿՐՈՐԴ ԴԷՄՔ

| | *Եզակի* | | *Յոգնակի* | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Դու. | դուն. | Դուք. | դուք. |
| Սեռ. | Քո. | քու. | Ձեր. | ձեր. |
| Տրա. | Քեզ, 'ի քեզ. | քեզի. | Ձեզ, 'ի ձեզ. | ձեզի. |
| Գործ. | Քեւ. | քեզմով. | Ձեւք. | ձեզմով. |
| Բաց. | 'ի Քէն. | քեզմէ. | 'ի Ձէնջ. | ձեզմէ. |
| Հայց. | զՔեզ. | քեզ. | զՁեզ. | ձեզ։ |

## ԵՐՐՈՐԴ ԴԷՄՔ

**115.** Ինքն. *առջի հոլովման երկրորդ օրինակին պէս կը հոլովի.* (24).

*Եզակի*

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ինքն. | ինք, ինքը. |
| Սեռ. | Ինքեան. | իրեն. |
| Տրա. | Ինքեան, յինքն. | իրեն. |
| Գործ. | Ինքեամբ. | իրմով. |
| Բաց. | յԻնքենէ. | իրմէ. |
| Հայց. | զԻնքն. | ինքը, զինքը. |

*Յոգնակի*

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ինքեանք. | իրենք. |
| Սեռ. | Ինքեանց. | իրենց. |
| Տրա. | Ինքեանց, յինքեանս. | իրենց. |
| Գործ. | Ինքեամբք. | իրենցմով. |
| Բաց. | յԻնքեանց. | իրենցմէ. |
| Հայց. | զԻնքեանս. | իրենք, զիրենք։ |

**116.** *Ածականի պէս ալ կըլլանի.* Ինքն *տէր.* բուն ինքը տէրը. Ինքն *ամուրն.* բուն ինքը բերդը. *Ինքն մարմին.* բուն ինքը մարմինը. *Թագաւորն ինքն.* բուն ինքը թագաւորը կամ թագաւորն ալ. *Տեղւոյն ինքն,* բուն ինքը տեղը։

**117.** *Ասանկ մէկալնոնց հետ ալ կ'ըսուի.* Ես *ինքն, իմ ինքեան՝ զիս ինքն. դու ինքն, քեզ ինքեան, զքեզ ինքն.* Մեք *ինքեան, մեզ ինքեանց, զմեզ ինքեանս.* Դուք *ինքեանք, ձեզ ինքեանց, 'ի ձեզ ինքեանս։*

118. Երբեմն մինակ ալ առջի կամ երկրորդ դէմք կըցուցընէ բային հետ. Գրեմ ինձէն զինքենէ. Ես իմ ձեռքս կըգրեմ։ Ինքեանք 'ի նմին կառոյ եմք. ըսել է՝ մեք ինքեանք։ Բաւական եմք ինքեանց. — Մենք մեզի։

119. Իւր. Նոյնպէս կըհոլովի եզակին տեղ տեղ ու բոլոր յոգնակին։ Եզակի ուղղական ու հայցական չունի, անոնց տեղը ինքն կըբանի. բայց նախդրիւ տրական ունի յիւր, որ կընշանակէ յինքն, իրեն. Ցիւր վտարել, իրեն տանուլ. Ցիւր կերպարանել, իրեն նմանցընել։

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | — | — |
| Սեռ. | Իւր, իւրեան. | իրեն, իր. |
| Տրա. | Իւր, իւրեան, յիւր. | իրեն. |
| Գործ | Իւրև, իւրեաւ, իւրեամբ. | իրմով. |
| Բաց. | յիւրմէ. | իրմէ. |
| Հայց. | — | — |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Իւրեանք. | իրենք. |
| Սեռ. | Իւրեանց. | իրենց. |
| Տրա. | Իւրեանց, յիւրեանս. | իրենց. |
| Գործ. | Իւրեամբք. | իրենցմով. |
| Բաց. | յիւրեանց. | իրենցմէ. |
| Հայց. | զիւրեանս. | իրենք, զիրենք։ |

120. Ինքն մէյտեղ կ'ըսուի ինք ինքեան և այլն։

121. Սա, աս. Դա, ատ, Նա, ան։

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Նա. | ան. |
| Սեռ. | Նորա. | անոր. |
| Տրա. | Նմա, 'ի նա. | անոր. |
| Գործ. | Նովաւ. | անով. |
| Բաց. | 'ի նմանէ, 'ի նմանէն. | անկէ. |
| Հայց. | զնա. | ան. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Նոքա. | անոնք. |
| Սեռ. | Նոցա. | անոնց. |
| Տրա. | Նոցա, 'ի նոսա. | անոնց. |
| Գործ. | Նոքօք. | անոնցմով. |
| Բաց. | 'ի Նոցանէ, 'ի նոցանէն. | անոնցմէ. |
| Հայց. | զՆոսա. | անոնք։ |

122. Ասանկ կըհոլովին Սա, Դա։ Յոգնակին երբեմն կ'ըլլայ Նայք, նայց. Սայք, սայց, (57)։ Կ'ըսուին մարդու ալ իրաց ալ։

123. Ինքն մէյտեղ կ'ըսուի Սա ինքն, դա ինքն, նա ինքն. սորա ինքեան, դոքա ինքեանք, նոցա ինքեանց, զնա ինքն կամ զնա զինքն։

124. Որ, ո. որ. յարաբերական դերանուն կ'ըսուի, որ անուն մը կամ դերանուն մը մէջ կըբերէ. Ես որ խօսիմ. դու որ լսես. Նա կամ ծառայ որ գործէ։ Հոլովները նոյն է որ, ո միջակ անուններուն հետ, որ տեսար վերը (87, 91)։

125. Երբոր որ, ո կընշանակեն ով որ, որն որ, ես որ, դուն որ, ան որ, յարաբերական դերանուն չեն, հապա միջակ անուն՝ որ վերը տեսար։ Իսկ երբոր նշանակեն միայն որ, որ խօսքին մէջի եղած մէկ բանը յարաբերելով ու բան բանի հետ կապելով մը կ'ըլլայ, ան ատենը յարաբերական դերանուն են, ինչպէս օրինակներուդ մէջ տեսար։

## ԱԾԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

126. Այս, աս. Այդ, ադ. Այն, ան։

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Այն. | ան. |
| Սեռ. | Այնր, այնորիկ. | անոր. |
| Տրա. | Այնմ, այնմիկ, յայն. | անոր. |
| Գործ. | Այնու, այնուիկ. | անով. |
| Բաց. | յԱյնմանէ. | անկէ. |
| Հայց. | զԱյն. | ան. |

### Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ․ | Այնք, այնոքիկ․ | անոնք․ |
| Սեռ․ | Այնց, այնոցիկ․ | անոնց․ |
| Տրա․ | Այնց, այնոցիկ, յայնս, յայնոսիկ․ | անոնց․ |
| Գործ․ | Այնոքիւք, այնոքիմբք․ | անոնցմով․ |
| Բաց․ | յԱյնց, յայնցանէ, յայնոցիկ․ | անոնցմէ․ |
| Հայց․ | զԱյնս, զայնոսիկ․ | անոնք ։ |

127․ Ասանկ կըհոլովլին Այս, Այդ․ միայն ասոնք չեն ըսուիր զայսս, զայդս, բայց եթէ դիմորոշ յօդով (140)։ Գործիականը երբեմն կ՚ըլլայ այսիւ, այդիւ, այնիւ ։ Մէկալ հոլովներն ալ ուրիշ անսովոր կերպով կըդանուլին ։ Յայնոցիկ բացառականը մինակ ալ կայ, բայց աւելի գոյականի հետ կըբանի ։— Մարդու ալ կ՚ըսուլին՝ իրաց ալ․ թէ գոյականի հետ և թէ առանձին ։

128․ Գոյականէ առաջ սովորաբար կարճ վերջահոլովները կըբանին, ու եզակի բացառականի հետ յայնմ ալ կ՚ըսուի․ Այնր բանի, այնմ բանի, այնու բանիւ, յայնմ բանէ (98)․ այնց բանից, յայնց բանից ։ Գոյականէ ետև սովորաբար մէկալ հոլովները կըբանին․ Բանին այնորիկ․ բանին այնմիկ․ բանիւն այնուիկ․ ՚ի բանէն յայնմանէ․ բանիցն այնոցիկ, ՚ի բանիցն յայնցանէ կամ յայնոցիկ ։

129․ Եզակի ձայնով շատ բան մէյտեղ ալ կըցուցընեն իբրև Այս ամենայն, այդ ամենայն, այն ամենայն․ Ինչպէս, Այս են ծնունդք Նոյի․ այս են բանք Թղթոյն․ որոց անուանքն են այս․ այս ուք տասցանս․ քեզ լիցին այդ ։ Չինդ նկանակ և երկուս ձկունս այլ այն զի՞նչ է, կամ բերէք այսր զայն․ շատք ևս այն են․ այն որ ՚ի ներքս անդ էին․ այն որ ընդ նմայն էին ։ Յայնմանէ՝ որ զմարմին սպանանեն ։ Զայն մի՛ ուսուցէք որ որոձեն և թաթաշերձ և կճղակաբաշխ ոչ իցեն ։

130․ Երրորդ դէմքի դերանուանց հետ կ՚ըսուին, Այս ինքն, այդ ինքն, այն ինքն․ Սա այս, դա այդ, նա այն․ ու երկուքն ալ կըհոլովլին ։

### 131․ Սոյն, աս․ Դոյն, ատ․ Նոյն, ան ։

### Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ․ | Նոյն․ | ան, նոյն․ |
| Սեռ․ | Նորին, Նորուն․ | անոր․ |
| Տրա․ | Նմին, ՚ի նոյն․ | անոր․ |
| Գործ․ | Նովին, Նովիմբ․ | անով․ |
| Բաց․ | — | — |
| Հայց․ | զՆոյն․ | ան․ |

## Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Նոյնք, նոքին. | [illegible] |
| Սեռ. | Նոցին, նոցունց, նոցունց. | [illegible] |
| Տր. | Նոցին, նոցուն, նոցունց, 'ի նոյնս, 'ի նոսին. | [illegible] |
| Գործ. | Նովիմբք, նոքիմբք, նոքումբք. | [illegible] |
| Բաց. | 'ի Նոցունց. | [illegible] |
| Հայց. | զՆոյնս, զնոսին. | [illegible] |

132. Այսանկ կը հոլովուին Սոյն, Դոյն։ Եզակի բացառականին տեղը 'ի սմանէ, 'ի դմանէ, 'ի նմանէ (121) կ'ըսուի սովորաբար միայն. իսկ գոյականի հետ կ'ըսուի Ի սոյն օրէ կամ 'ի սմին տեղւոջէ, 'ի նմին բե-րանոյ. ինչպէս յոգնակին ալ՝ Ի նոցին գասուց, 'ի նոցուն գահճացն (98, 118)։ — Քանի մը անսովոր հոլովներն ալ կը գտնուին։

133. Ինքն, սա, այս ասոնց հետ մէյտեղ շատ կը բանին. Սոյն ինքն, դոյն ինքն, նոյն ինքն, նոյն ինքեան կամ նորին ինքեանք, նմին ինքեան, զնոյն ինքն կամ զնոյն զինքն. նոյն ինքեանք կամ նոքին ինքեանք, զնոյն ինքեանս կամ զնոսին ինքեանս։

Սոյն սա, դոյն դա, նոյն նա, նոյն սա նախդրիւ կը հոլովուին (14)։

Սոյն այս, դոյն այդ, նոյն այն, նոյն այս. երկուքն ալ կը հոլովուին սովորաբար. երբեմն ալ մէկը միայն, սոյն այսր, սոյն այսմ։

Երբեմն Սոյն ինքն այս կամ սա, դոյն ինքն այդ կամ դա, նոյն ինքն այն կամ նա ալ կ'ըսուին։

**134. Իմ, քո, քոյ, մեր, ձեր, իւր, սորա, սոցա, դո-րա, դոցա, նորա, նոցա, դերանուանական ածականներ են, որոնցմէ միայն Քո զատ կերպ հոլովում մը ունի։**

## 135. Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Քո. | սէն—քէնտի. |
| Սեռ. | Քոյ, քում. | սէն—քէնտինին. |
| Տր. | Քոյ, քում, 'ի քո. | սէն—քէնտինէ. |
| Գործ. | Քով. | սէն—քէնտինօլէ. |
| Բաց. | 'ի Քոյ, 'ի քումմէ. | սէն—քէնտինտէն. |
| Հայց. | զՔո. | սէն—քէնտի. |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Քոյք. | քուկիններդ. |
| Սեռ. | Քոց. | քուկիններուդ. |
| Տր. | Քոց, 'ի քոյս. | քուկիններուդ. |
| Գործ. | Քովք. | քուկիններովդ. |
| Բաց. | 'ի Քոց. | քուկիններէդ. |
| Հայց. | զՔոյս. | քուկիններդ։ |

136. Ասոր վերջահոլովները սովորաբար գոյականի հետ կըբանին. Հրամանի քոյ կամ քում. քում հրամանի. քուկին հրամանիդ. ձեռամբ քով, քով ձեռամբդ. քուկին ձեռքովդ. 'ի բանից քոց, 'ի քոց բանից. քուկին խօսքերէդ։

137. Մէկաները չորրորդ հոլովման պէս կըհոլովուին.

Իմ. իմին. իմոյ, իմում, իմով, յիմոյ կամ յիմմէ. իմք, իմոց, իմովք։

Քո. քուկին. քոյոյ, քոյում, քոյով, 'ի քոյոյ կամ 'ի քումմէ. քոյք, քոյոց, քոյովք։

Մեր. մերին. մերոյ, մերում, մերով, 'ի մերոյ կամ 'ի մերմէ. մերք, մերոց, մերովք։

Ձեր. ձերին. ձերոյ, ձերում, ձերով, 'ի ձերոյ կամ 'ի ձերմէ. ձերք, ձերոց, ձերովք։

Իւր. իրեն. իւրոյ, իւրում, իւրով, յիւրոյ, կամ յիւրմէ. իւրք, իւրոց, իւրովք։

Սորա. ասոր. սորայոյ, սորայում, սորայով, 'ի սորայոյ. սորայք, սորայոց կամ սորայց (57)։

Սոցա. ասոնց. սոցայոյ, սոցայում, սոցայով, 'ի սոցայոյ. սոցայք, սոցայոց կամ սոցայց։

Դորա. ատոր. դորայոյ, դորայում, դորայով, 'ի դորայոյ, դորայք, դորայոց կամ դորայց։

Դոցա. ատոնց. դոցայոյ, դոցայում, դոցայով, 'ի դոցայոյ. դոցայք. դոցայոց կամ դոցայց։

Նորա. անոր. Նորայոյ, Նորայում, Նորայով, 'ի Նորայոյ. Նորայք, Նորայոց կամ Նորայից, Նորայց։

Նոցա. անոնց. Նոցայոյ, Նոցայում, Նոցայով, 'ի Նոցայոյ.

նոցայք, նոցայոց կամ նոցայից, նոցայց, նոցայովք կամ նոցայիւք, 'ի նոցայոց կամ 'ի նոցայց, զնոցայսն։

138. Ասանկ կըհոլովուին ասոնցմէ ին մասնիկով շինուածներն ալ. որ են ասոնք.

Իմային. իմէն, իմայոյ կամ իմայնոյ[1], իմայով կամ իմայնով, իմայինք, իմայոց կամ իմայնոց, իմայովք կամ իմայնովք, իմայիւք։

Մերային. մերէն. մերայոյ կամ մերայնոյ, մերայով կամ մերայնով. մերայինք։

Ձերային. ձերէն. ձերայոյ կամ ձերայնոյ, ձերայով կամ ձերայնով. ձերայինք։

Իւրային. իւրէն. իւրայոյ կամ իւրայնոյ, իւրայով կամ իւրայնով. իւրայինք։

Իւրեանցային. իւրենց. իւրեանցայոյ կամ իւրեանցայնոյ. իւրեանցայինք։

139. Բայց իմոյին, իմովին. քոյին, քովին. մերոյին, մերովին. ձերոյին, ձերովին. իւրոյին, իւրովին, վերջահոլով չունին, նախդրիւ միայն կըբանին եզակի ու յոգնակի (14)։

140. Իրեք պարզ դերանուններուն արմատ տառերը ս, դ, ն, դէմքերուն յօդ կ'ըսուին, որ շատ հեղ տառերու ծայրը փակչելով՝ անոնց ուժը ունին. ինչպէս,

Տէրս՝ ըսել է ես տէրս, իմ տէրս, այս տէր կամ սա՝ տէրս.

Տէրդ՝ ըսել է դու տէրդ, քո տէրդ, այդ տէր կամ դա՝ տէրդ։

Տէրն՝ ըսել է ինքն տէրն, իւր տէրն, այն տէր կամ նա՝ տէրն. տէրը։

Իմս, իմդ, իմն, իմինս, իմինդ, իմինը, կամ աս, ադ, ան որ իմս է։

Քոյս, մերդ, ձերն, իւրն, աս որ քուկդ է, ադ որ մերն է, ան որ ձերն է, ան որ իրենն է, իրենը։

---

1 Աւելի առանց նունի կըբանի լաւ գրոց մէջ, իմայոյ քան իմայնոյ, և այլն. ինչպէս երբեմն ուրիշ բառերն ալ կ'ըլլան. Մեղացային, մեղացայոյ, փոխանակ ըսելու մեղացայնոյ, ինչպէս երկնային, երկնայնոյ։

Սորայս, դորայդ, նորայն, աս որ ասորն է, ադ որ ադորն է, ան որ անորն է, անորը։

Սոցայս, դոցայդ, նոցայն, աս որ ասոնցն է, ադ որ ադոնցն է, ան որ անոնցն է, անոնցը։

141. Ինչպէս տեսար՝ ա վերջացած բառերը յետ կ՚առնեն յօդերը, ինչպէս յոգնակիի քէն ու սէն (21, 67). սորա, սորայս. դոցա, դոցայդ. նորա, նոցայն։ Ասանկ գիտցիր ուրիշ ամէն բառի ալ. Տաղէտայս, Եղիայն, յապայն, սայս, դայդ, նայն, 'ի նմայն, նո-քայն, 'ի նոսայն։

Քիչ տեղ Ո ին ալ պէտք կ՚ըլլայ ասանկ ;· ինչպէս, Որ վասն քոյն մատնեցաւ. որ է ըսել Ան որ վասն քո մատնեցաւ (463)։

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՆԱԽԴԻՐ

**142.** Նախդիրն՝ անուան ու դերանուան մէկ կտորն է, որ միայն անոնց հետ կրբանի՝ անոնց հոլովները շի- նելու և ուրիշ այլ և այլ մտքեր տալու։

**143.** Բուն նախդիր են զ, 'ի, յ, ց, առ, ընդ, ըստ, որ բառին և անոր հոլովներուն առջևը դրուելով՝ տեսակ տեսակ նշանակութիւն կուտան, ինչպէս տեսանք որ ըրին զ և 'ի կամ յ նախդիրները։ Հիմայ տեսնենք օրի- նակի համար մնացածներուն մէկ քանի գլխաւորները։

### 144. Զ.

| | |
|---|---|
| Զքարի, զգետնի (զար- կանել). | Քարէ, գէտնէ (զարնէլ)։ |
| Զահի, զամօթի (հարկա- նիլ.) | Վախէ, ամօթէ մէջ (ինկալ)։ |
| Զտամբ, զլինև. | Տանը չորս դէն, իմ չորս դէն կամ իմ վրաս։ |
| Զգլխով, զմիջաւուրբ. | Գլխուն վրայ, կէս օրուան մօտ։ |
| Զբանիւ, զօրինօք, զնո- վաւ (անցանել). | Խօսքէն անցնիլ, օրէնքը չպա- հել, ան անցնիլ։ |
| Զխուլք, զնովաւ (ծիծա- ղել). | Բանի մը վրայ, անոր վրայ (խնդալ)։ |
| Զաստուծոյ (խօսել, գո- հանալ). | Աստուծոյ վրայ (խօսիլ). Աս- տուծմէ (շնորհակալ ըլլալ)։ |
| Զձեռանէ, զլեզուէ (ու- նել). | Ձեռքէն, լեզուէն (բռնել)։ |

| | |
|---|---|
| *Զծառոյն (կախել).* | Ծառէն կամ ծառէն վար (կախել)։ |
| *Զջրոյ, զումեքէ (գալ).* | Ջրէ համար, մէկու մը համար (գալ)։ |
| *Զայս օրինակ (գրել, խօսել).* | Աս չափով, աս կերպով (գրել, խօսել)։ |
| *Զտիւ և զգիշեր (աշխատ լինել).* | Գիշերն ու ցորեկը, գիշեր ցորեկ (աշխատիլ)։ |

## 145. Ի, Յ.

| | |
|---|---|
| Ի *սերման, 'ի տան, յաղբեր.* | Հունտէ մէջ, տան մէջ, աղբիւրէ մէջ։ |
| Յ*այրի, 'ի սրտի, 'ի ծովու.* | Քարայրէ մէջ, սրտէ մէջ, ծովու մէջ կամ վրան։ |
| Յ*ազգի, 'ի տաճարի, յերկրի.* | Ազգէ մէջ, տաճարէ մէջ, երկրէ մէջ կամ վրան։ |
| Յ*անձին իւրում, 'ի լերին, 'ի հօր իմում.* | Ինք իր մէջ կամ վրան, լեռան վրան, հօրս մէջը կամ վրան։ |
| Ի *Թղթի, 'ի ծոցի, 'ի բերանի* [1]. | Թղթէ մէջ, ծոցէ մէջ, բերնէ մէջ։ |
| Ի *մարդում, 'ի սրբում, յառաջնում.* | Մարդուն մէջ, սուրբէ մէջ, առջինին մէջ։ |
| Ի *հանոյքում, 'ի ճշմարտի որդւոյ նորա.* | Մամուտ մէջ կամ վրան, անոր ճշմարիտ որդւոյն մէջ։ |
| Ի *տեղւոջ, 'ի տարւոջ, 'ի բարւոջ, յոգւոջ.* | Տեղն մէջ, տարուան մէջ, աղէկէ մէջ, հոգիին մէջ կամ վրան։ |
| Յ*իս, 'ի քեզ, 'ի մեզ, 'ի ձեզ, 'ի նմա, յայնմ.* | Իմ, քու, մեր, ձեր, անոր մէջը կամ վրան։ |

---

1 Ինչպէս տեսանք 'ի 69 որ չորրորդ հոլովման բառերը երբեմն երրորդին պէս ալ կը հոլովին, գիտցիր որ երբոր վերջահոլով տրականին վրայ 'ի, յ պիտի առնենք՝ սովորաբար երրորդին պէս կ'ըլլայ տրականնին, ինչպէս կը տեսնես Ի Թղթի, 'ի ծոցի, 'ի բերանի. որպէս զի բացառականէն որոշուի։ Բայց ամէն բառի ալ չըլլար. 'Ի մարդի չըսուիր։

| | |
|---|---|
| Ցերկոցունց ձեռացն (աջո- ղակ). | Երկու ձեռքէն ալ (աջող)։ |
| Ի ցպոյ (շրջել), 'ի բա- նից (պատմել), յանձնէ (փոքր). | Գաւազանով (ման գալ), խօսքով (պատմել), մարմնով (պզտիկ)։ |
| Ցաջմէ, 'ի ձախմէ, 'ի հիւ- սիսոյ. | Աջ դին, ձախ դին, հիւսիսի դին։ |
| Ցայգունէ, 'ի տուէ. | Առտուանց, ցորեկը։ |
| Ցամէ ևս. | Տարիէ մը ետքը, տարիէ մը։ |
| Ի տուն, 'ի քաղաքս (դառ- նալ). | Տուն, քաղաքները (դառնալ)։ |
| Ի մարդն, 'ի ծոց իւր, յո- գի իւր. | Մարդուն մէջ, իր ծոցին մէջ, հոգիին մէջ։ |
| Ի տուն, յայր, 'ի սիրտ, 'ի տաճար, յանձն իւր. | Տան մէջ, քարայրի մէջ, սրտի մէջ, տաճարի մէջ, ինք իր մէջ կամ վրան։ |
| Ի տունս, յայրս, 'ի սիրտս, 'ի տաճարս, յանձինս. | Տուներու մէջ, քարայրներու մէջ, սրտերու մէջ, տաճարներու մէջ, իրենց մէջ կամ վրան։ |
| Ի խրատ, 'ի փրկութիւն. | Խրատի համար կամ տեղը, փըր- կութեան համար։ |
| Ի ձայն մեծ (աղաղակել). | Մեծ ձայնով (պոռալ)։ |
| Ի սուր (կոտորել). | Թըրով (ջարդել)։ |

146. Ց Նախդիրն երբեմն բաղաձայնով սկսող բառի ալ կըդրուի, որն որ ըթով կ'ըսուի նէ. ինչպէս, յսկիզբն, յշտեմարանս, յզգեստից, յռամկաց. որ կըկարդացուի յըսկիզբն, յըշտեմարանս, յըզգեստից, յըռամկաց կամ յռամկաց։

## 147. Ց

| | |
|---|---|
| Ցարքայ, ցծերս, ցիս (ա- սել). | Արքային, ծերերուն, ինծի (ը- սել)։ |
| Ցայգ վայր, ցերեկոյ. | Ինչուան առտու, ինչուան իրիկուն։ |

| | |
|---|---|
| Ցաւուրսն ցայնոսիկ. | Ինչուան ան օրերը։ |
| Ցյագ (ուտել), ցարբենալ. | Կշտանալու չափ (ուտել), ինչուան գինովնալու չափ։ |

## 148. ԱՌ, ԱՌ Ի

| | |
|---|---|
| Առ ահին, առ ամօթոյ. | Վախին համար կամ վախէն, ամօթէ համար։ |
| Առ արքայի, առ դատողին. | Արքային քովը, դատողին քովը կամ առջին։ |
| Առ լերամբն, առ Նոյիւ. առ դրօքն (անցանել). | Լեռանը քով կամ մօտ, Նոյին ատենը, դրան քովէն (անցնիլ)։ |
| Առ Նովաւ, առ ցորենով. | Անոր քով, ցորենին քով, այսինքն՝ անոր կամ ցորենին նայելով, բաղդատելով։ |
| Առ ճանապարհաւն. | Ճամբուն վրայ կամ քովը։ |
| Առ բարոյիւք. | Բարոյը համար։ |
| Առ երկիւղէ, առ հարկէ. | Վախէ համար կամ վախէն, հարկէ համար։ |
| Առ առակէ. | Խաղքութեան համար։ |
| Առ ականէ (ծառայել). | Երեսանց, աչքի առջին (ծառայել)։ |
| Առ 'ի մարդկանէ, առ 'ի յԱստուծոյ, առ 'ի յորդւոցն. | Մարդիկներէ, Աստուծմէ, որդիքներէն։ |
| Առ 'ի վկայութենէ, առ 'ի չգոյէ. առ յինքենէ. | Վկայութեան համար, չըլլալուն համար. իրմէն։ |
| Առ իմ՞, առ ի՞նչ. | Ինչո՞ւ համար, ինչո՞ւ։ |
| Առ արքայ, առ ոք (գնալ). | Արքային, մէկու մը (երթալ։) |
| Առ իս, առ մեզ (գալ). | Ինծի, մեզի, դէպ ինծի՝ մեզի (գալ)։ |
| Առ սէր ընչիցն, առ 'ի խըրատ. | Ստակին սիրոյն համար, խրատի համար։ |
| Առ օր, առ ամ. | Ամէն մէկ օրուան, ամէն մէկ տարուն կամ տարը գլուխ։ |

| | |
|---|---|
| *Առ ոտն (հարկանել, կոխել).* | Ոտքի տակ (նետել, կոխել)։ |
| *Որպէս լոյս առ խաւար.* | Ինչպէս լոյսը մութին քով, մութին բաղդատելով։ |
| *Առ յանցանս, առ լաւս (ունել).* | Մեղքի տեղ, լաւի տեղ (դնել)։ |

## 149. ԸՆԴ

| | |
|---|---|
| *Ընդ իմ և ընդ քո.* | Իմ ու քու տեղը, ինծի ու քեզի համար։ |
| *Ընդ ամենայն դատարկ բանի (համարս տալ).* | Ամէն փուճ խօսքի համար (համար տալ)։ |
| *Ակն ընդ ական, սեր ընդ սիրոյ.* | Աչքի տեղ աչք, սիրոյ դէմ սէր։ |
| *Ընդ ում, ընդ նմա, ընդ մարդկան.* | Որո՞ւ հետ, անոր հետ, մարդկանց հետ։ |
| *Ընդ դմա (ասել), ընդ բանին (խաւսել), ընդ նմա (նախանձել).* | Ատոր (ըսել), ան խօսքին կամ ան խօսքին վրայ (խօսիլ), անոր (նախանձիլ)։ |
| *Ընդ տնկոյն (նստել), ընդ թուոյ (մտանել), ընդ կարգաւ (նուաճիլ.)* | Ծառին տակ (նստիլ), համրանքի տակ (մտնել), կարգերու տակ (իյնալ)։ |
| *Ընդ ծառով, ընդ հողով.* | Ծառի տակ, հողի տակ։ |
| *Ընդ ինև (կամ).* | Իմ տակս, իմ հետս (էն, կան)։ |
| *Ընդ աջմէ, ընդ ձախմէ.* | Աջ դին, ձախ դին։ |
| *Ընդ երկիւղէն, ընդ կորստենէն.* | Վախէն, վախին համար, կորուստին համար։ |
| *Ընդ կողմանէ քումմէ.* | Քու դիէդ։ |
| *Ընդ արքայ, ընդ մարդ (նայել).* | Արքային, մարդուն նայիլ։ |
| *Ընդ իս, ընդ քեզ.* | Ինծի, քեզի կամ իմ՝ քու հետ։ |
| *Ընդ հրեշտակս, ընդ նոսա.* | Հրեշտակներու հետ, անոնց հետ։ |
| *Ընդ դուռն, ընդ բերան (անցանել, մտանել).* | Դռնէն, բերնէն ներս (անցնիլ, մտնել)։ |

| | |
|---|---|
| *Ընդ ճանապարհ (գնալ).* | Ճամբան, ճամբէն (էրթալ)։ |
| *Ընդ քաղաքս, ընդ երկայ-նութիւն դաշտին (շրջել).* | Քաղաքները (պտըտել), դաշ-տին երկանքին (ծոռ գալ)։ |
| *Ընդ մէջ (կտրել).* | Մէջքէն կիմիջ տեղէն (կտրել)։ |
| *Ընդ երկինս և ընդ երկիր.* | Երկնքի ու երկրի միջ տեղը։ |
| *Ընդ իս և ընդ քեզ.* | Իմ ու քու միջը։ |
| *Ընդ բազումն և ընդ սա-կաւն.* | Շատին ու քիչին միջ։ |
| *Ընդ ամ տամն.* | Տարը տարուան միջ։ |
| *Ընդ ամենն, ընդ ամենայն.* | Ամէնը մէկտեղ, ամէնը մէկէն առ-նելով։ |
| *Ընդ այր և ընդ կին և ընդ մանկտի.* | Էրէկ մարդ՝ կնէկ մարդ ու տը-ղաք մէկտեղ առնելով։ |
| *Ընդ արևելս, ընդ երեկս.* | Արևելքի դին, դէպ 'ի արևելք, իրիկուան դէմ. |
| *Ընդ խաղ, ընդ քէն.* | Կատակի (շախայի) համար, քէնի համար, քէնով։ |
| *Ընդ մի բերան (ասել գո-վել).* | Մէկ բերան, մէկ բերնով (բոլոր գովել)։ |
| *Ընդ երևումն, ընդ անցա-նելն.* | Երևնալուն պէս, անցնելուն պէս։ |

## 150. ԸՍՏ

| | |
|---|---|
| *Ըստ բանի քում.* | Քու խօսքիդ պէս (կէօրէ)։ քու խօսքիդ նայելով։ |
| *Ըստ հրամանին, ըստ գոր-ծոց.* | Հրամանին պէս՝ նման, գործ-քին պէս, համեմատ։ |
| *Ըստ ինքեան.* | Ինք իրեն, ինք իրմէ, ինքիրմով։ |
| *Ըստ անձին (սիրել, բառ-նալ).* | Իրեն պէս, իրեն շատ (սիրել), իր վրան (վերցընել)։ |
| *Ըստ յանցանացն, ըստ նա-խանձու.* | Յանցանքին համար, նախանձի համար։ |
| *Ըստ ճանապարհին.* | Ճամբուն վրայ։ |

| | |
|---|---|
| *Ըստ նմանէ, ըստ նոցանէ.* | Անոր ետևէն, անոնց ետևէն։ |
| *Մի ըստ միոջէ, այր ըստ առնէ.* | Մէկմէկու ետևէ. մարդ մար-դու ետևէ։ |
| *Օր ըստ օրէ, ամ ըստ ամէ.* | Օրէ օր, տարուէ տարի։ |
| *Ըստ հիւսիսոյ.* | Հիւսիսի դէն, դէպ 'ի հիւսիս։ |
| *Ըստ գործս, ըստ միտս, ըստ պէտս.* | Գործքին պէս, մտքին յարմար, պէտքին չափ կամ համեմատ։ |
| *Ըստ կարգութեան մանկանց.* | Տղոց կրնալուն չափ։ |
| *Ըստ վարել հալածչաց.* | Հալածողներուն ուզելուն չափ։ |
| *Ըստ աճել, ըստ պակասել.* | Աճելուն չափ, պակսելուն չափ։ |
| *Ըստ գլուխ, ըստ բերան, — ըստ երդ.* | Մարդ գլուխ, — տուն գլուխ։ |
| *Ըստ չափ, ըստ քաղաքն, ըստ դուռն, ըստ միտս (անցանել, ելանել).* | Չափէ դուրս, քաղաքէն դուրս, դռնէն դուրս, մտքէ դուրս (անցնիլ, ելլել)։ |
| *Ըստ օրէնս, ըստ երդումն (անցանել).* | Օրէնքէ, երդումէ դուրս (ելլել)։ |

**151.** *Աս նախդիրներս ուրիշ հոլովներ ալ կ'առնեն և ուրիշ մտքեր ալ կուտան, որ բառգրքէն սորվելու է։*

**152.** *Կան շատ* հոլովական *բառեր ալ՝ որ հոլովով մը կըբանկին, ու բառին մէկ միտք մը կուտան. որը առաջ միայն՝ որ* նախադրութեան *ալ կ'ըսուին, որը ետքը, որն ալ առաջ ու ետքը. ինչպէս.*

### 153. ԱՌԱՋ

| | |
|---|---|
| *Իբրև կամ* որպէս *զմարդ, մարդ, մարդոյ, 'ի մարդ, մարդով, 'ի մարդոյ.* | Ինչպէս մարդ, մարդու, մար-դով, մարդէ։ |
| *Քան զմարդ, մարդոյ, 'ի մարդ, մարդով, 'ի մարդոյ.* | Մարդէ աւելի կամ վեր, քան մար-դու, քան մարդով, քան մարդէ։ |
| *Քան զհատն մանանխոյ.* | Մանանեխի հատի չափ կամ պէս։ |
| *Մինչ 'ի գետին, մինչև յերկինս.* | Ինչուան գետին, ինչուան երկինք։ |

Յետ մահու, յետ այսորիկ. Մահուանէ ետքը, ասկէ ետքը։
Առանց իմ, առանց մեղաց. Առանց ինծի, առանց մեղքի։
Բայց՚ի քէն, բաց՚ի սոցանէ. Քեզմէ զատ, ասոնցմէ զատ։

## 154. ԵՏՔԸ

Ի սկզբանէ հետէ, յԱդամայ հետէ. Առաջուընէ ՚ի վեր, Ադամէն ՚ի վեր։
Միջօրէք ետէ, մահու ետէ. Ինչուան մէջը, ինչուան ՚ի մահ կամ մեռնելու ետք։
Ողջոյն ետէ, ձեռք ետէ. Հոգւէն ետք, ձեռքէ ետք։
Ի կէսն կողմ, ՚ի Թիկունս կողմ. Դէպ ՚ի կէսը, դէպ ՚ի կռնակը, ետևի դին։
Առ նա կոյս, առ ՚ի նայն կոյս. Դէպ ՚ի ան, անոր դին։

## 155. ԱՌԱՋ ՈՒ ԵՏՔԸ

Վասն սիրոյ, օրինակի վասն. Սիրոյ համար, օրինակի համար։
Սակս, ՚ի սակս ձեր, ՚ի ձեր սակս. Ձեզի համար, ձեր պատճառաւ։
Հանդերձ մարքն, ոտիւքն հանդերձ. Մօրը հետ մէկտեղ, ոտքերովը մէկտեղ։
Հանդերձ առանձինն մտից և ռոճկաց. Յատուկ եկամուտով ու ռոճկով։
Առաջի աչաց, իմ առաջի. Աչքի առջև, իմ առջևս։
Ի վերայ երկրի. Գետնի կամ երկրի վրայ։
Ի ճշմարտութեան վերայ. Ճշմարտութեան վրայ։
Ցե՞ր վերայ, յո՞յր վերայ. Ինչ բանի վրայ, որու՞ն վրայ։
Ի վերայ բազմաց. Շատերուն վրայ կամ համար։
Զկնի մեր, չարին զկնի. Մեր ետևէն, չարին ետևէն։
Զհետ նորա, որոյ զհետ. Անոր ետևէն, որուն ետևէն։
Ընդդէմ խաչին, ո՞յր ընդդէմ. Խաչին դէմ, որո՞ւ դէմ։
Առ ընդդէմ սորին, առ ո՞յր ընդդէմ. Ասոր դէմը, որուն դէմն որ։

| | |
|---|---|
| *Քո պէս, գետոյ պէս.* | Քեզի պէս, գետի պէս։ |
| *Պէս փոխանակ Տրդատայ.* | Տրդատին պէս։ |
| *Դէպ ձեզ, հանդէպ տանն, իմ հանդէպ.* | Դէպ 'ի ձեզ, տանը դիմացը, իմ դիմացս։ |
| *Յանդիման դրախտին, ինձ.* | Դրախտին դիմացը, իմ դիմացս։ |
| *Յանդիման ձեր, ձեզ.* | Ձեր դիմացը։ |
| *Արտաքոյ քաղաքին.* | Քաղքէն դուրս։ |
| *Աստուծոյ կամացն արտաքոյ.* | Աստուծոյ կամքէն դուրս, առանց Աստուծոյ կամքին։ |
| *Յետոյ դրանն.* | Դրանն ետին։ |
| *Երկոտասան աւուրբք յետոյ.* | Տասնըերկու օր ետքը։ |
| *Ամաւ յառաջ, յառաջ երկու աւուրբք.* | Տարիով կամ տարի մ'առաջ, երկու օր առաջ։ |
| *Շուրջ զքաղաքաւն, զգետովն.* | Քաղքին՝ գետին չորս դին։ |
| *Զօրահիւն շուրջ, զմեւք շուրջ.* | Օրհին չորս դին, մեր չորս դին։ |
| *Շուրջ ծովուն, սեղանոյն շուրջ.* | Ծովին չորս դին, սեղանին չորս դին։ |
| *Ներքոյ, 'ի ներքոյ իմ, քո, երկնից, կաթսային. նորա 'ի ներքոյ.* | Իմ՝ քու՝ երկնքին՝ կաթսային տակը. անոր տակը։ |
| *Ներքոյ վարագուրին.* | Վարագուրին տակը, ետին։ |
| *Ի ձեռն Մովսիսի, 'ի ձեռն հրեշտակաց (խօսել, տալ).* | Մովսէսով, հրեշտակներով (խօսիլ, տալ)։ |
| *Ի ձեռն գաւազանի, 'ի ձեռն հաւատոց.* | Գաւազանով, հաւատքով։ |

**156.** *Ասոնք ուրիշ կերպ կերպ մտքեր ալ կուտան. և ուրիշ շատ ասանկ հոլովառու բառեր ալ կան, որ կարդալով ու բառգրքէ սորվելու է։*

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ԲԱՅ

157. Բայն բառ մըն է՝ որ կը նշանակէ ըլլալ կամ ընել կամ ըլլուիլ. ինչպէս, Ես եմ կամ լինիմ, ես եմ կամ կ'ըլլամ. գնամ, կ'երթամ. սիրեմ, կը սիրեմ. սիրիմ, կը սիրուիմ. քաղցնում, կ'անօթենամ:

158. Բային այս նշանակութիւնը՝ դերանուան երեք դէմքովը կ'ըլլայ. ես, դու, ինքն կամ նա. ուստի այս երեք դէմքն ունի բայն, և ասոնց պէս երկու թիւ՝ եզակի ու յոգնակի. ինչպէս, Ես եմ, դու ես, նա է. մեք եմք, դուք էք, նոքա են:

159. Եւ որովհետև բան մը ժամանակի մէջ կ'ըլլայ ու կ'ըլլուի, ու եղանակով մը, բայն ալ երեք ժամանակ ունի. — Ներկայ, որ հիմայ է. ինչպէս, Սիրեմ, կը սիրեմ, կը սիրեմ կոր. — Անցեալ, որ անցած բանի վրայ կը խօսի, որ եթէ չլմնցած է նէ՝ անկատար կ'ըսուի. ինչպէս, Սիրէի, կը սիրէի, կը սիրէի կոր. լմնցած է նէ՝ կատարեալ կ'ըսուի. ինչպէս, Սիրեցի, սիրեցի. — Ապառնի, որ դեռ ըլլալու է. ինչպէս, Սիրեցից, սիրեմ, պիտի սիրեմ:

160. Եղանակն ալ երեք կերպ է. — Սահմանական, որ բանը կը ցուցնէ միայն. ինչպէս, Գնամ, կ'երթամ, կ'երթամ կոր. — Հրամայական, որ կը հրամմէ կամ կ'արգելէ. ինչպէս, Գնա, մի գնար, գնա, մ'երթար. — Ստորադասական, որ պայմանով մը ուրիշ եղանակի հետ կախուած կը յայտնէ բանը. ինչպէս, (զի) Գնայցեմ, (որ) երթամ. (եթէ) Գնայցեմ, (թէ որ) երթամ, երթամ (նէ):

161. Բայն այս ամէն բանը կը ցուցընէ իր փոփոխմունքներովն, որ խոնարհումն կ'ըսուին:

162. Կան երեք դերբայ ալ, այս ինքն բային տեղը դրուողներ։

Աներեւոյթ դերբայ, որ ինքիրեն դէմք, ժամանակ կամ եղանակ չյայտներ, հապա միայն ըլլալ կամ ընել կամ ըլլուիլ մը կցուցընէ, ու բային տեղը կդրուի՝ ամէն ժամանակի ու եղանակի ու դէմքի յարմարուելով. ինչպէս, Լինել, ըլլալ. գնալ, երթալ. սիրել, սիրել. սիրիլ, սիրուիլ. քաղցնուլ, անօթենալ։

Անցեալ դերբայ, որ եղած կամ ըրած անցածը կցուցընէ. ինչպէս, Լեալ, եղած. գնացեալ, գացած. սիրեցեալ, սիրած կամ սիրուած։

Ապառնի դերբայ, որ ըլլալիքը կամ ընելիքը կցուցընէ. ինչպէս, Լինելոց, ըլլալու. գնալոց, երթալու. սիրելոց, սիրելու կամ սիրուելու, որ պիտի սիրէ կամ պիտի սիրուի։

163. Նշանակութեան դիէն՝ չորս տեսակ բայ կայ. Էական, որ ըլլալ կնշանակէ. Ես եմ, ես եմ. Ես լինիմ, ես կ'ըլլամ։

Ներգործական, որ ուրիշին կամ ուրիշին վրայ բան մ'ընել կնշանակէ. Սիրեմ, կը սիրեմ. Գրեմ, կը գրեմ։

Կրաւորական, որ ուրիշմէ ըլլուիլ կամ կրել մը կնշանակէ. Սիրիմ, կը սիրուիմ. Գրիմ, կը գրուիմ։

Այս երեք տեսակը զատ զատ խոնարհում ունի։

164. Չորրորդ տեսակ է Չէզոք բայերը, որ ընել մը և ըլլալ մը ինքիրեն միայն կնշանակէն, առանց ուրիշին կամ ուրիշին վրայ բան մ'ընելու կամ ուրիշէն ըլլուելու. Դառնամ, կը դառնամ. ամաչեմ, կ'ամչնամ։ Ասոնք ներգործականներու պէս կամ կրաւորականներու պէս կխոնարհին, ուստի կ'ըսուին ներգործական չէզոք կամ կրաւորական չէզոք։

165. Ամէն ներգործական ունի իր կրաւորականը. բայց կան բայեր ալ, որ մէկ ձայնով՝ ընել ալ ըլլուիլ ալ կնշանակեն, ներգործական են ու կրաւորական, և անոր համար կ'ըսուին Հասարակ. ինչպէս, Ծնանիմ, կը ծնանիմ որդին և կը ծնիմ որդիէն. ընթեռնում, կը կար-

դամ ու կըհարցադրուիմ։ Ասոնք ալ զատ խոնարհում չէին ըներ, կրաւորականներու պէս կըխոնարհէին։

166. Բայց շատ ներգործական, կրաւորական ու հասարակ բայեր կան, որ չէզոք ալ կըբանին. ինչպէս, Լամ, լուեմ. — Կանգնիմ, շարժիմ. — Համարիմ, սկըսանիմ. — Թողում, յաւելում։

167. Բայերուն խոնարհմունքը չորս կանոնաւոր լծորդութեան կըբաժնուի, բոլոր բայերուն չորս կերպ վերջին պէս, որ ձայնաւոր տառերուն կարգովն ասոնք են, ամ, եմ, իմ, ում. Աղամ, կ'աղամ. Սիրեմ, կըսիրեմ. Սիրիմ, կըսիրուիմ. Զենում, կըմորթեմ։ Ամէն տեսակ բայերէն կըգտնուի աս վերջերովս, միայն կրաւորական ու հասարակ չկայ ում վերջով։

168. Խոնարհմունքներուն մէկ մեծ զանազանութիւնն ալ իրենց Կատարեալէն կ'առնուի, որ կամ աց, եաց, ոյց ածանցեալ արմատով կ'ըլլայ, կամ Սահմանականի ներկային պարզ արմատովը, եաքի ձայնաւորը փոխուելով միշտ հոլովներուն պէս (17), և արմատին և ամ, եմ, իմ, ում, վերջերուն մէջ տեղը գտնուած ան, են, ն, չ, նչ ածանցական մասնիկները ձգուելով միշտ։ Եւ աս արմատները՝ ներգործական ու ներգործակերպ չէզոք բայերուն Կատարելին եզակի երրորդ դէմքն են. ու եզակի Հրամայական ալ են, միայն բազմավանկներուն ետևի ցոն ձգուելով։

Առջի լծորդութեան ամ բայերուն Կատարեալը՝ գրեթէ ամէնն ալ՝ աց կամ եաց ածանցեալ արմատով կ'ըլլայ. Աղամ, աղացի, աղաց, աղա. Կեամ, կեցի, կեաց. Աղամ, աղացայ։ — Չորրորդ լծորդութեան ում բայերունը՝ բոլորն ալ պարզ արմատով. Զենում, զենի, զեն. Զենում, զենայ։

Իսկ երկրորդ ու երրորդ լծորդութեան եմ, իմ բայերունը՝ երկու կերպով կ'ըլլայ. կամ եաց ածանցեալ արմատով. Սիրեմ, սիրեցի, սիրեաց, սիրեա. Սիրիմ, սիրեցայ. կամ պարզ արմատով, և անոր պէս ոյց ածանցով ալ. Տեսանեմ, տեսի, տես. Տեսանիմ, տեսայ. Դարձուցանեմ, դարձուցի, դարձոյց, դարձո. Դարձուցանիմ, դարձուցայ։ Ասոր համար աս երկու լծորդութիւնն երկերկու օրինակ ունին. ուստի խոնարհումներու օրինակն է ութը։

Աս արմատներուն կանոնն որ բռնես՝ խոնարհմունքներուն շէնքն աղէկ կըհասկընաս, դիւրաւ միտք կ'առնես ու կըպահես. ու լծորդութեանց օրինակները շատցընելու հարկ չըլլար, և ոչ ալ անկանոն ըսուած, այսինքն կանոնէ դուրս ելլող բայերը։

# ՅՈՒՑԱԿ ԽՈՆԱՐՀՄԱՆՑ
## ՉՈՐԻՑ ԿԱՆՈՆԱՒՈՐ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆՑ

| ԵՂԱՆԱԿ | ԺԱՄԱՆԱԿ | ԱՌԱՋԻՆ | | ԵՐԿՐՈՐԴ | | ԵՐՐՈՐԴ | | ՉՈՐՐՈՐԴ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ԱՄ | | ԵՄ | | ԻՄ | | ՈՒՄ | |
| | | | | ա Օրինակ | բ Օրինակ | ա Օրինակ | բ Օրինակ | | |
| | | ՆԵՐԳ. | ԿՐԱՒ. | ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ | | ԿՐԱՒՈՐԱԿԱՆ | | ՆԵՐԳ. | ԿՐԱՒ. |
| | | արմատք ԱՄ ԱՄԱՑ | | արմատք ՍԷՐ ՍԻՐԵԱՑ | արմատ ՏԵՍ | արմատք ՍԷՐ ՍԻՐԵԱՑ | արմատ ՏԵՍ | արմատ ՉԵՆ | |
| ՍԱՀՄԱՆԱԿ. | Ներկայ | Ամ ամ. | ամ. | Սիր եմ. | Տես անեմ. | Սիր իմ. | Տես անիմ. | Չեն ում. | ում. |
| | Անց. Անկ. | — այի. | այի. | — էի. | — անէի. | — էի. | — անէի. | — ուի. | ուի. |
| | Անց. Կատ. | Ամաց ի. | այ. | Սիրեց ի. | — ի. | Սիրեց այ. | — այ. | — ի. | այ. |
| | Ապառնի | — ից. | այց. | — ից. | — ից. | — այց. | — այց. | — ից. | այց. |
| ՀՐԱՄԱՅԱԿ. | —— | Ամ ա. | ացիր. | Սիր եա. | Տես. | Սիր եաց, եցիր. | — իր. | Չեն. | — իր. |
| ՍՏՈՐԱԴԱՍ. | —— | — այցեմ. | այցիմ. | — իցեմ. | — անիցեմ. | — իցիմ. | — անիցիմ. | — ուցում. | ուցում. |
| ԴԵՐԲԱՅՔ. | Անորոշ. | — ալ. | ալ. | — ել. | — անել. | — ել, իլ. | — անել, անիլ. | — ուլ. | ուլ. |
| | Անցեալ. | Ամաց եալ. | եալ. | Սիրեց եալ, սիրեալ. | — եալ. | Սիրեց եալ, սիրեալ. | — եալ. | — եալ. | եալ. |
| | Ապառնի. | Ամ ալոց. | ալոց. | Սիր ելոց. | — անելոց. | Սիր ելոց. | — անելոց. | — լոց. | լոց. |

169. Ամէն բային Ապառնին ալ իր Կատարեալէն կ'ելլէ, բազմավանկ անանցեալ արմատներուն ետքի ցին շատը սէ փոխելով. Ամացի, ամաց. Ամացից կամ ամասցեմ, ամասցես. Սիրեցի, սիրեաց. Սիրեցից կամ սիրեսցեմ, սիրեսցես:

170. Անցեալ դերբայներն ալ սովորաբար Կատարեալէն կ'ելլեն. Ամացի, ամացեալ. Սիրեցի, սիրեցեալ կամ սիրեալ. Տեսի, տեսեալ:

171. Իսկ բային մէկալ ամէն կտորները, Անկատարը, Ստորադասականը, Անորոշ ու Ապառնի դերբայները՝ Սահմանականի ներկայէն կ'ելլեն:

## ԷԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

### 172. ԵՄ. *արմատ է* [1].

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| *Եզակի* | | *Յոգնակի* | |
|---|---|---|---|
| Եմ. | ես եմ, ես կամ. | Եմք. | մենք ենք, մենք կանք. |
| Ես. | դու ես. | Էք. | դուք էք. |
| Է. | ան է. | Են. | անոնք են: |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Էի. | ես էի. | Էաք. | մենք էինք. |
| Էիր. | դու էիր. | Էիք. | դուք էիք. |
| Էր. | ան էր. | Էին. | անոնք էին: |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Եր. | եղիր. | Էք, երուք. | եղէք: |

---

1 Բուն էական բայ՝ աս միայն է, մէկալ երեքը չէզոք են ըստ նշանակութեան:

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Իցեմ. ես ըլլամ[1], պէտք ըլլամ. Իցեմք. մենք ըլլանք, պէտք ըլլանք.
Իցես. դուն ըլլաս, պէտք ըլլաս. Իցէք. դուք ըլլաք, պէտք ըլլաք.
Իցէ. ան ըլլայ, պէտք ըլլայ. Իցեն. անոնք ըլլան, պէտք ըլլան:

ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ. Ել. ըլլալ:
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Եալ. եղած, ըլլալով:
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Ելոց. ըլլալու, որ պէտք ըլլայ:

**173.** *Հրամայականները, մանաւանդ էքը, մինակ չեն բանիր.*
*Ոչ բառին հետ կ'ըսուին Ողջ եր, ողջ էք, ողջ երուք:*
*Ասոր դերբայներն ալ շատ չեն բանիր:*

## 174. ԵՂԱՆԻՄ. *արմատ* Եղ.:

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Եղանիմ. | կ'ըլլամ. | Եղանիմք. | կ'ըլլանք. |
| Եղանիս. | կ'ըլլաս. | Եղանիք. | կ'ըլլաք. |
| Եղանի. | կ'ըլլայ. | Եղանին. | կ'ըլլան: |

---

1 *Ստորադասականներն ինքիրեննուն մինակ չեն նշանակեր ըլլամ նէ, [illegible] նէ, [illegible] նէ, [illegible] նէ, [illegible] նէ, և այլն. հապա՝ յորժամ, երբ, ու թէ, և կամ թէ, որ, բառերուն հետ, որոնց ամենուն մէջն ալ յորժամն, երբն մէկ կ'իմացուի զօրութեամբ. ու նէն ալ ան կընշանակէ. Յորժամ իցեմ, եթէ իցեմ, երբոր, թէ որ ըլլամ, ըլլամ նէ. Զինչ իցէ, ով իցէ, որ իցէ, ինչ որ ըլլայ նէ, որուն որ ըլլայ նէ, որ կամ որն որ ըլլայ նէ, կ'իմացուի միշտ երբոր կամ թէ որ ըլլայ:*

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Եղանէի. | չ'ըլլայի. | Եղանէաք. | չ'ըլլայինք. |
| Եղանէիր. | չ'ըլլայիր. | Եղանէիք. | չ'ըլլայիք. |
| Եղանէր, եղանիւր. | չ'ըլլար. | Եղանէին. | չ'ըլլային։ |

Անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Եղէ. | եղայ. | Եղաք. | եղանք. |
| Եղեր. | եղար. | Եղէք, եղերուք. | եղաք. |
| Եղև. | եղաւ. | Եղեն. | եղան։ |

Ուրիշ անցեալ կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| Եղայ, եղեայ. | եղայ. | Եղաք, եղեաք. | եղանք. |
| Եղար. | եղար. | Եղայք, եղեայք. | եղաք. |
| Եղաւ. | եղաւ. | Եղան. | եղան։ |

Ապառնի.

| | |
|---|---|
| Եղէց, եղիցիմ. | ըլլամ, պիտի ըլլամ. |
| Եղիցիս, եղիցես. | ըլլաս, պիտի ըլլաս. |
| Եղիցի. | ըլլայ, պիտի ըլլայ. |
| Եղիցուք, եղիցիմք. | ըլլանք, պիտի ըլլանք. |
| Եղիջիք, եղիցիք. | ըլլաք, պիտի ըլլաք. |
| Եղիցին. | ըլլան, պիտի ըլլան։ |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| — | | Եղերուք. | եղէք. |
| Եղիջիր, եղանիջիր. | եղիր, ըլլաս. | . . . . | |
| Մի եղանիր. | մ'ըլլար. | Մի եղանիք. | մ'ըլլաք. |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Եղանիցիմ. | ըլլամ, պէտք ըլլամ. |
| Եղանիցիս. | ըլլաս, պէտք ըլլաս. |
| Եղանիցի. | ըլլայ, պէտք ըլլայ. |
| Եղանիցիմք. | ըլլանք, պէտք ըլլանք. |
| Եղանիցիք, եղանիջիք. | ըլլաք, պէտք ըլլաք. |
| Եղանիցին. | ըլլան, պէտք ըլլան։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Եղանել, եղանիլ. ըլլալ.

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Եղեալ. եղած, ըլլալու։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Եղանելոց. ըլլալու, որ պէտք ըլլայ։

**175.** *Եզակի հրամայական* Եղի՛ր *որ կ'ըսենք աշխարհաբառ, գրաբառ կընանի, բայց գրոց մէջ չկայանոր համար տեղը պարապ թողուած է։*

**176.** *Երկրորդ* Եղիջիր, եղանիջիր *հրամայականին յոգնակին՝ ապառնիէն ու ստորադասականէն կ'առնէ.* Եղիջիք, եղանիջիք. *ասանկ գիտցիր ամէն բայերուն ալ։*

## 177. ԼԻՆԻՄ. *արմատ* Լ,Ի։

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Լինիմ. | կ'ըլլամ. | Լինիմք. | կ'ըլլանք. |
| Լինիս. | կ'ըլլաս. | Լինիք. | կ'ըլլաք. |
| Լինի. | կ'ըլլայ. | Լինին. | կ'ըլլան։ |

Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Լինէի. | կ'ըլլայի. | Լինէաք. | կ'ըլլայինք. |
| Լինէիր. | կ'ըլլայիր. | Լինէիք. | կ'ըլլայիք. |
| Լինէր. | կ'ըլլար. | Լինէին. | կ'ըլլային։ |

Ապառնի.

| | |
|---|---|
| Լիցիմ։ | ըլլամ, պէտք ըլլամ. |
| Լիցիս, լիցես. | ըլլաս, պէտք ըլլաս. |
| Լիցի. | ըլլայ, պէտք ըլլայ. |
| Լիցուք, լիցիմք. | ըլլանք, պէտք ըլլանք. |
| Լիջիք, լիցիք. | ըլլաք, պէտք ըլլաք. |
| Լիցին. | ըլլան, պէտք ըլլան։ |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Լեր. | եղիր. | Լերուք, լիք. | եղէք. |
| Լիջիր, լինիջիր. | եղիր, ըլլաս . . . . (176). | | |
| Մի լինիր. | մ'ըլլար։ | Մի լինիք. | մ'ըլլաք։ |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Լինիցիմ. | ըլլամ, պէտք ըլլամ. |
| Լինիցիս. | ըլլաս, պէտք ըլլաս. |
| Լինիցի. | ըլլայ, պէտք ըլլայ. |
| Լինիցիմք. | ըլլանք, պէտք ըլլանք. |
| Լինիցիք, լինիջիք. | ըլլաք, պէտք ըլլաք. |
| Լինիցին. | ըլլան, պէտք ըլլան։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Լինել. ըլլալ։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Լիեալ, լեալ. եղած, ըլլալը։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Լինելոց. ըլլալու, որ պէտք ըլլայ։

178. Անցեալ կատարեալն Եղանիմէն կ'առնէ. Եղէ, եղեր, եղև, և այլն։

## 179. ԳՈՄ. արմատ ԳՈՅ։

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Գոմ. | կամ, եմ. | Գոմք. | կանք, ենք. |
| Գոս. | կաս, ես. | Գոյք. | կաք, էք. |
| Գոյ. | կայ, է. | Գոն. | կան, են։ |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Գոյի. | կայի, էի. | Գոյաք. | կայինք, էինք, |
| Գոյիր. | կայիր, էիր. | Գոյիք. | կայիք, էիք. |
| Գոյր. | կար, էր. | Գոյին. | կային, էին։ |

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| Գուցեմ. | գտնուիմ, ըլլամ. | Գուցեմք. | գտնուինք, ըլլանք. |
| Գուցես. | գտնուիս, ըլլաս. | Գուցէք. | գտնուիք, ըլլաք. |
| Գուցէ. | գտնուի, ըլլայ. | Գուցեն. | գտնուին, ըլլան։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Գոլ. ըլլալ։

180. Կայ ու Գ. բայն ալ, երրորդ դէմք, որ ըսել է կայ, է. բայց հիմայ մինակ չբանիր, հապա չ մակբայով. Չիք, չկայ, չէ. չիք հնար, ճար չկայ. չիք աստ, հոս չը-կայ, հոս չէ։

## ԱՌԱՋԻՆ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ — ԱՄ.

**181.** *Ներգործական* **ԱՄԱՄ.** *արմատ* ԱՄ, ԱՄԱՑ [1]:

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

*Ներկայ.*

| | | | |
|---|---|---|---|
| Ամամ. | կըվառեմ, կըլեցընեմ. | Ամամք. | կըվառենք. |
| Ամաս. | կըվառես. | Ամայք. | կըվառէք. |
| Ամայ. | կըվառէ. | Աման. | կըվառեն: |

*Անցեալ անկատար.*

| | | | |
|---|---|---|---|
| Ամայի. | կըվառէի. | Ամայաք. | կըվառէինք. |
| Ամայիր. | կըվառէիր. | Ամայիք. | կըվառէիք. |
| Ամայր. | կըվառէր. | Ամային. | կըվառէին: |

*Անցեալ կատարեալ.*

| | | | |
|---|---|---|---|
| Ամացի. | վառեցի. | Ամացաք. | վառեցինք. |
| Ամացեր | վառեցիր. | Ամացէք, ամացիք. | վառեցիք. |
| Ամաց. | վառեց. | Ամացին. | վառեցին: |

---

1 Այս պարզ արմատէն շինուած են անցեալ բառերն ամառն, գե-ղամայն, ծովամայն, ու բարդն ամածանք: Իսկ ամաց անցեալ արմատէն շինուած է ծովամաց: Այսանկ գիտցիր ուրիշ ամէն բայերուն արմատնե-րուն համար ալ, որ թէ և առանձին չգտնուին նէ ալ, անցմանց կամ բարդութեանց մէջ կան. ոմանցը չգտնուի նէ ալ, մեկալլոնց պէս կըսե-պուի որ ըլլալու է: Այսանկ գիտցիր մեկալ լծորդութեանց վրայ ալ:

### Ապառնի.

| | |
|---|---|
| *Ամացից, ամասցեմ.* | կենամ, պիտի կենամ. |
| *Ամասցես.* | կենաս, պիտի կենաս. |
| *Ամասցէ.* | կենայ, պիտի կենայ. |
| | |
| *Ամասցուք, ամասցեմք.* | կենանք, պիտի կենանք. |
| *Ամասջիք, ամասցէք.* | կենաք, պիտի կենաք. |
| *Ամասցեն.* | կենան, պիտի կենան։ |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | | |
|---|---|---|---|
| *Ամա.* | կենա. | *Ամացէք.* | կենացէք. |
| *Ամասջիր, ամայջիր.* | կենա, կենաս. | | . . . . (176). |
| *Մի ամար.* | մի կենար. | *Մի ամայք.* | մի կենաք։ |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| *Ամայցեմ.* | կենամ, պիտի կենամ. |
| *Ամայցես.* | կենաս, պիտի կենաս. |
| *Ամայցէ.* | կենայ, պիտի կենայ. |
| | |
| *Ամայցեմք.* | կենանք, պիտի կենանք. |
| *Ամայցէք, ամայջիք.* | կենաք, պիտի կենաք. |
| *Ամայցեն.* | կենան, պիտի կենան։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. *Ամալ.* կենալ։

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. *Ամացեալ.* կեցած, կենալով։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. *Ամալոց.* կենալու, որ պիտի կենայ։

**182.** *Ասանկ կը խոնարհին*

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐ

*Կարդամ, կարդացի, կարդաց, կարդա.* կանչեմ, կարդամ։

*Հաւատամ, հաւատացի, հաւատաց, հաւատա.* հաւատամ։

*Լուանամ, լուացի, լուաց, լուա.* լուամ։

Լամ, լացի, լաց կամ ելաց, լաց. լամ։
Բանամ, բացի, բաց կամ եբաց, բաց. բանամ։
Բառնամ, բարձի[1], բարձ կամ եբարձ, բարձ. վերցնեմ։

## 183. ՁԷՁՈՔ ԲԱՅԵՐ

Գնամ, գնացի, գնաց, գնա. երթամ։
Խաղամ, խաղացի, խաղաց, խաղա. խաղամ, շարժեմ։
Կամ, կացի, կաց կամ եկաց, կաց. կենամ, կայնիմ։
Մնամ, մնացի, մնաց, մնա. մնամ, սպասեմ։

184. Այսօր տակն է Կեամ, որուն եա երբեմն վերջի վանկ չէ նէ՝ և կամ է կրփոխուի հոլովներուն պէս (17). ստորադասականն երկու կերպ ալ կ'ըլլայ։ Ամբողջ դընենք որ տեսնես.

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. ներկ. | կեամ. կ'ապրիմ. | կեամք. կ'ապրինք. |
| | կեաս. | կեայք. |
| | կեայ. | կեան։ |
| անկ. | կէի. | կէաք. |
| | կէիր. | կէիք. |
| | կեայր. | կէին։ |
| կատ. | կեցի. | կեցաք. |
| | կեցեր. | կեցէք, կեցիք. |
| | կեաց, եկեաց. | կեցին։ |
| ապա. | կեցից, կեցցեմ. | կեցցուք, կեցցեմք. |
| | կեցցես, | կեցջիք, կեցցէք. |
| | կեցցէ. | կեցցեն։ |
| ՀՐԱՄ. | կեաց. | կեցէք. |
| | կեցջիր. | . . . (176) |
| | Մի կեար. | Մի կեայք։ |

---

1 Տես 49. ծանօթութիւն։

ՍՏՈՐ. կեայցեմ, կեցեմ[1]. կեայցեմք, կեցեմք.
կեայցես, կեցես. կեայցէք, կեցէք.
կեայցէ, կեցէ. կեայցեն, կեցեն:
ԴԵՐԲ. կեալ.—կեցեալ.—կելոց:

185. Ասանկ ալ Առեամ, չ'առնեմ. առէի, առեցի, առեցից կամ առեսցեմ, առեա, առեսջիր. բայց ստորադասական՝ առիցեմ. Անորոշ դերբայ՝ առեալ կամ առել. վասն զի Առեմ, առեցի, առել ալ կ'ըսուի, և Առիմ, առեցայ, առիլ, երկրորդ ու երրորդ լծորդութեանց պէս:

186. Տեսար որ Լամ, բանամ, բառնամ, կամ, կեամ բայերուն կատարեալ եզակի երրորդ դէմքը, որ միավանկ արմատն է բային (168), է ալ առաւ սկիզբը. ելաց, եբաց եբարձ, եկաց, եկեաց: Ասանկ գիտցիր երկրորդ լծորդութեան երկրորդ օրինակին համար ալ, ու չորրորդ լծորդութեան համար ալ: — Եչին տեղ՝ է ալ կ'ըլլայ բաղաձայններուն, Էլաց, էբաց, էբարձ, իսկ ձայնաւորներուն՝ միայն այբէն կըգրուի երբեմն, ան ալ միշտ է. էարկ, էանց, էած, էառ, որ վարը պիտի տեսնես[2]:

## 187. Կրաւորական, ԱՄԱՄ.

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ամամ. | կըհաթուիմ. | Ամամք. | կըհաթուինք. |
| Ամաս. | կըհաթուիս. | Ամայք. | կըհաթուիք. |
| Ամայ. | կըհաթուի. | Աման. | կըհաթուին: |

---

1 Ասանկ մէկ ցոյով կըգրուի ստորադասականը կեցեմ, և անով կըզատուի ապառնիէն կեցցեմ:

2 Իսկ օժանդ բային նոյն դէմքը՝ ըստ հին նախնեաց առծ կամ էառծ է (4):

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Ամայի. | կըհաւնուէի. | Ամայաք. | կըհաւնուէինք. |
| Ամայիր. | կըհաւնուէիր. | Ամայիք. | կըհաւնուէիք. |
| Ամայր. | կըհաւնուէր. | Ամային. | կըհաւնուէին։ |

Անցեալ կատարեալ.

| | |
|---|---|
| Ամացայ. | հաւնուեցայ. |
| Ամացար. | հաւնուեցար. |
| Ամացաւ. | հաւնուեցաւ. |
| Ամացաք. | հաւնուեցանք. |
| Ամացայք, ամացարուք. | հաւնուեցաք. |
| Ամացան. | հաւնուեցան։ |

Ապառնի։

| | |
|---|---|
| Ամացայց, ամասցիմ. | հաւնուիմ, պիտի հաւնուիմ. |
| Ամասցիս. | հաւնուիս, պիտի հաւնուիս։ |
| Ամասցի. | հաւնուի, պիտի հաւնուի. |
| Ամասցուք, ամասցիմք. | հաւնուինք, պիտի հաւնուինք. |
| Ամասջիք, ամասցիք. | հաւնուիք, պիտի հաւնուիք. |
| Ամասցին. | հաւնուին, պիտի հաւնուին։ |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Ամացիր. | հաւնուէ. |
| Ամասջիր, ամայջիր. | հաւնուէ, հաւնուիր. |
| Մի ամար. | մի հաւնուիր. |

Ամացարուք, ամացիք, ամացայք. հաւնուեցէք.

. . . . . (176)։

Մի ամայք. մի հաւնուիք։

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| *Ամայցիմ.* | վախնամ, պէտք վախնամ. |
| *Ամայցիս.* | վախնաս, պէտք վախնաս. |
| *Ամայցի.* | վախնայ, պէտք վախնայ. |
| | |
| *Ամայցիմք.* | վախնանք, պէտք վախնանք. |
| *Ամայցիք, ամայջիք.* | վախնաք, պէտք վախնաք. |
| *Ամայցին.* | վախնան, պէտք վախնան: |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. *Ամալ.* վախնալ:
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ *Ամացեալ.* վախցած, վախցելով:
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. *Ամալոց.* վախնալու, որ պէտք վախնայ:

188. *Կրաւորական հրամանները քանի մը տեղը ներգործականին պէս է: Ասոնք աւելի որոշ հասկցուելու համար անցեալ դերբայով ու լինիմ էականով ալ կ'ըլլան. երբեմն մէկալովնք ալ. Ամացեալ լինիմ, լինէի, եղաք. լիցուք կամ եղիցուք, լիջիք կամ եղիջիք, լիջիր կամ եղիջիր, ամացեալ լինել* (287): *Ասանկ գիտցիր մէկալ ամէն լծորդութեանց և ուրիշ կրաւորական խոնարհմանց վրայ ալ:*

189. *Ոմանց ալ սահմանական ներկայն ու ստորադասականը խմ կ'ըլլայ երբեմն՝ երրորդ լծորդութեան պէս. Լուանիմ, լուանիցիմ, լուանիլ. բանիմ, բանիլ. բառնիմ, բառնիլ. խմանիմ, խմանիլ. մոռանիմ:*

190. *Ասանկ կը խոնարհին ներգործականներուն կրաւորականները.*

*Կարդամ, կարդացայ, կարդացիր.* կանչուեմ, կարդացուեմ:
*Հաւատամ, հաւատացայ, հաւատացիր.* հաւատացուեմ:
*Լուանամ, լուացայ, լուացիր.* լուացուեմ:
*Լամ, լացայ, լացիր.* լացուեմ:
*Բանամ, բացայ, բացիր,* բացուեմ:
*Բառնամ, բարձայ, բարձիր.* վերցուեմ, չեզոքաբար՝ վերնամ (166):

## ՀԱՄԱՐԱԿ ՈՒ ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

191. Հասարակ բայերն որ ներգործական մօքով առնուին, ու կրաւորակերպ չէզոք բայերուն յատուկ տարբեր տեղերը, ինչպէս կատարեալն ու հրամայականը, երբեմն ներգործականին պէս ալ կ'ըլլան. Մոռանամ, մոռացայ կամ մոռաց, մոռացիր կամ մոռա. Որսամ, որսացայ կամ որսացի, որսացիր կամ որսա. Իմանամ, իմացիր կամ իմա, իմաց. — Ընթանամ, ընթացիր կամ ընթա, ընթաց. Զղջանամ, զղջամ, զղջացայ կամ զղջացի, զղջացիր կամ զղջա: Այսանկ ալ Լուանամ կրաւորականը չէզոքաբար առնելով (166) [illegible], կ'ըլլայ լուացիր կամ լուա:

192. Նոյնպէս ներգործական մօքով առնուած հասարակ բայերուն ու կրաւորակերպ չէզոք բայերուն ապառնին ալ շատ հեղ ներգործականին պէս կ'ըլլայ ցեմ, ցես, ցէ, ցեմք, ցեք, ցեն. Իմացես, իմացէ, իմացեն. Գոհացես, գոհացէ, գոհացեն: Այսանկ գիտցիր երրորդ լծորդութեան նոյնպիսի հասարակ ու չէզոք բայերուն ապառնիին համար ալ, ու ստորադասականին համար ալ, որ երբեմն անոնք ալ ներգործականին պէս ցեմ, ցես, ցէ, ցեմք, ցեք, ցեն կը վերջանան:

193. Աս լծորդութեանս հասարակ բայերն երբոր ներգործաբար առնուին, ու չէզոք բայերունն ալ, ստորադասականն ամենևին կրաւորականին պէս ցիմ չվերջանար, թէ և աս խոնարհմանս տակը կ'երթան, հապա միշտ ներգործականին պէս կ'ըլլայ ցեմ, և այլն. Իմանամ, իմանայցեմ. Մոռանամ, մոռանայցես. Գոհանամ, գոհանայցէ. Դառնամ, դառնայցեմք. Ընթանամ, ընթանայցէք. Յուսամ, յուսայցեն: Այսանկ ալ Բանամ, բառնամ, չէզոքաբար, [illegible], կ'ըլլան՝ բանայցեմ, բառնայցեմ, [illegible]:

### 194. ՀԱՄԱՐԱԿ ԲԱՅԵՐ

| | |
|---|---|
| Ամանամ, ամացայ, ամացիր. | [illegible] |
| Իմանամ, իմացայ, իմացիր կամ իմաց կամ իմա. | [illegible] |
| Մարգարէանամ, մարգարէացայ, մարգարէացիր կամ մարգա- | |

| | |
|---|---|
| րեաց կամ մարգարեա. | մարգարէանամ. մարգարէացուիմ։ |
| Մոռանամ, մոռացայ, մոռացաւ կամ մոռաց, մոռացիր կամ մոռա. | մոռնամ. մոռցուիմ։ |
| Ստանամ, ստացայ, ստացիր. | ունենամ, առնեմ. առնեցուիմ։ |
| Հոգամ, հոգացայ, հոգացից. | հոգամ. հոգացուիմ։ |
| Որսամ, որսացայ կամ որսացի, որսացիր կամ որսա. | որս բռնեմ. բռնուիմ։ |

## 195. ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

| | |
|---|---|
| Գոհանամ, գոհացայ, գոհացիր, գոհանայցեմ. | շնորհակալ ըլլամ։ |
| Դառնամ, դարձայ, դարձիր կամ դարձ, դառնայցեմ. (49, ծան.) | դառնամ։ |
| Ընթանամ, ընթացայ, ընթացիր կամ ընթաց կամ ընթա, ընթանայցեմ. | վազեմ։ |
| Զղջանամ / Զղջամ } զղջացայ կամ զղջացի, զղջացիր կամ զղջա, զղջանայցեմ. | զղջամ։ |
| Հոգամ, հոգացայ կամ հոգացի, հոգացիր կամ հոգա, հոգայցեմ. | հոգ ընեմ։ |
| Յուսամ, յուսացայ կամ յուսացի, յուսացիր կամ յուսա, յուսայցեմ. | յուսամ։ |
| Ցնծամ, ցնծացայ կամ ցնծացի, ցնծացիր կամ ցնծա, ցնծայցեմ. | ուրախանամ։ |
| Արբենամ, արբեցայ, արբեցիր, արբենայցեմ. | գինովնամ։ |
| Մերձենամ, մերձեցայ, մերձեցիր, մերձենայցեմ. | մօտենամ։ |
| Յագենամ, յագեցայ, յագեցիր, յագենայցեմ. | կշտանամ։ |
| Քաղցենամ, քաղցեցայ, քաղցեցիր, քաղցենայցեմ. | անօթենամ։ |

## ԵՐԿՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ — ԵՄ․

### 196․ ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

*Ներգործական* **ՍԻՐԵՄ**․ *արմատ* ՍԻՐ․ ՍԻՐԵԱՑ

### ՍԱՀՄԱՆԱՀԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ․

| | | | |
|---|---|---|---|
| *Սիրեմ*․ | հըւէրէմ․ | *Սիրեմք*․ | հըւէրէնք․ |
| *Սիրես*․ | հըւէրէս․ | *Սիրէք*․ | հըւէրէք․ |
| *Սիրէ*․ | հըւէրէ․ | *Սիրեն*․ | հըւէրէն։ |

Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| *Սիրէի*․ | հըւէրէի․ | *Սիրէաք*․ | հըւէրէին․ |
| *Սիրէիր*․ | հըւէրէիր․ | *Սիրէիք*․ | հըւէրէիք․ |
| *Սիրէր*․ | հըւէրէր․ | *Սիրէին*․ | հըւէրէին։ |

Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| *Սիրեցի*․ | ւէրէյի․ | *Սիրեցաք*․ | ւէրէյինք․ |
| *Սիրեցեր*․ | ւէրէյէր․ | *Սիրեցէք, սիրեցիք*․ | ւէրէյիք․ |
| *Սիրեաց*․ | ւէրէյ․ | *Սիրեցին*․ | ւէրէյին։ |

Ապառնի․

*Սիրեցից, սիրեսցեմ*․ ւէրէմ, պէտք ւէրէմ․
*Սիրեսցես*․ ւէրէս, պէտք ւէրէս․
*Սիրեսցէ*․ ւէրէ, պէտք ւէրէ․

*Սիրեսցուք, սիրեսցեմք*․ ւէրէնք, պէտք ւէրէնք․
*Սիրեսջիք, սիրեսցէք*․ ւէրէք, պէտք ւէրէք․
*Սիրեսցեն*․ ւէրէն, պէտք ւէրէն։

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Սիրեա. սիրէ. Սիրեցէք. սիրեցէք.
Սիրեսջիր, սիրիջիր. սիրէ, սիրես . . . . (176).
Մի սիրեր. Մի սիրեր. Մի սիրէք. Մի սիրէք։

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Սիրիցեմ. սիրեմ, պիտի սիրեմ.
Սիրիցես. սիրես, պիտի սիրես.
Սիրիցէ. սիրէ, պիտի սիրէ.

Սիրիցեմք. սիրենք, պիտի սիրենք.
Սիրիցէք, սիրիջիք. սիրէք, պիտի սիրէք.
Սիրիցեն. սիրեն, պիտի սիրեն։

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Սիրել. սիրել։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Սիրեցեալ, սիրեալ. սիրած, սիրուած։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Սիրելոց. սիրելու, որ պիտի սիրեն։

**197.** Ասանկ կը խոնարհին

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Գրեմ, գրեցի, գրեա. գրեմ։
Ըմբռնեմ, ըմբռնեցի, ըմբռնեա. բռնեմ։
Կարեմ, կարեցի, կարեա. կարեմ, կար կարեմ։
Շինեմ, շինեցի, շինեա. շինեմ։
Փրկեմ, փրկեցի, փրկեա. ազատեմ, փրկեմ։
Ամանեմ, ամանեցի, ամանեա. ամանը լեցնեմ։
Սերմանեմ, սերմանեցի, սերմանեա. ցանեմ։
Վանեմ, վանեցի, վանեա. վռնտեմ։

**198.** Ետեւի չորս բային արմատն աց ըլլալուն (168), կատարեալն և ապառնին կ'ըլլայ ացի, ացէց:

Ասեմ, ասացի, ասացից, ասա. ըսեմ.
Գիտեմ, գիտացի, գիտացից, գիտա կամ գիտեա. գիտեմ:
Կարեմ, կարացի, կարացից, կարացիր. կրնամ:
Մարթեմ, մարթացի, մարթացից, մարթացիր, կարենամ:

## 199. ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

Ամաչեմ, ամաչեցի, ամաչեա. ամչնամ:
Դիմեմ, դիմեցի, դիմեա. վազեմ:
Թագաւորեմ, թագաւորեցի, թագաւորեա. թագաւորեմ:
Տիրեմ, տիրեցի, տիրեա. տիրեմ:
Ժամանեմ, ժամանեցի, ժամանեա. հասնիմ:
Մռնչեմ, մռնչեցի, մռնչեա. մռմռամ:

## 200. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

Ներգործական **ՏԵՍԱՆԵՄ**. արմատ ՏԵՍ:

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Տեսանեմ. | կը տեսնեմ. | Տեսանեմք. | կը տեսնենք. |
| Տեսանես. | կը տեսնես. | Տեսանէք. | կը տեսնէք. |
| Տեսանէ. | կը տեսնէ. | Տեսանեն. | կը տեսնեն: |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Տեսանէի. | կը տեսնէի. | Տեսանէաք. | կը տեսնէինք. |
| Տեսանէիր, | կը տեսնէիր. | Տեսանէիք. | կը տեսնէիք. |
| Տեսանէր. | կը տեսնէր. | Տեսանէին. | կը տեսնէին: |

### Անցեալ կատարեալ·

Տեսի· տէսայ· Տեսաք· տէսանք·
Տեսեր· տէսար· Տեսէք, տեսիք· տէսաք·
Տես, ետես· տէսաւ· Տեսին· տէսան:

### Ապառնի·

Տեսից, տեսցեմ· տէսնեմ, պիտի տէսնեմ·
Տեսցես· տէսնես, պիտի տէսնես·
Տեսցէ· տէսնէ, պիտի տէսնէ·

Տեսցուք, տեսցեմք· տէսնենք, պիտի տէսնենք·
Տեսջիք, տեսցէք· տէսնէք, պիտի տէսնէք·
Տեսցեն· տէսնեն, պիտի տէսնեն:

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Տես· տէս Տեսէք· տէսէք·
Տեսջիր, տեսանիջիր· տէս, տէսնէս . . . . (176).
Մի տեսաներ· մի տէսնէր· Մի տեսանէք· մի տէսնէք:

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Տեսանիցեմ· տէսնեմ, պիտի տէսնեմ·
Տեսանիցես· տէսնես, պիտի տէսնես·
Տեսանիցէ· տէսնէ, պիտի տէսնէ·

Տեսանիցեմք· տէսնենք, պիտի տէսնենք·
Տեսանիցէք, տեսանիջիք· տէսնէք, պիտի տէսնէք·
Տեսանիցեն· տէսնեն, պիտի տէսնեն:

ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ· Տեսանել· տէսնել:
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ· Տեսեալ· տէսած, տէսներըդ:
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ· Տեսանելոց· տէսնելու, որ պիտի տէսնէ:

**201**. Ասանկ կը խոնարհին

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Անիծանեմ, անիծի, անէծ. անիծեմ։
Արկանեմ, արկի, արկ, էարկ. ձգեմ, նետեմ։
Գտանեմ, գտի, գիտ, եգիտ. գտնեմ։
Դիզանեմ, դիզի, դէզ, եդէզ. դիզեմ։
Կլանեմ, կլի, կուլ, եկուլ. կլլեմ։
Հատանեմ, հատի, հատ, եհատ. կտրեմ։
Հարցանեմ, հարցի, հարց, եհարց. հարցընեմ։
Սպանանեմ, սպանի, սպան, եսպան. սպաննեմ, մեռցընեմ։
Ցուցանեմ, ցուցի, ցոյց, եցոյց. ցուցընեմ։
Հարկանեմ, հարի, հար, եհար. զարնեմ։

**202**. Ասանկ կը խոնարհին ետևի չորս բայն ալ պարզ արմատովը, եւս արմատ չունենալնուն (168)։

| | | | |
|---|---|---|---|
| Ածեմ, | ածի, | ած, էած. | բերեմ։ |
| Բերեմ, | բերի, | բեր, եբեր. | բերեմ։ |
| Հանեմ, | հանի, | հան, եհան. | հանեմ։ |
| Հեղուսեմ, | հեղուսի, | հեղոյս. | գամեմ։ |

**203**. Ասանկ կը խոնարհին ուցանեմ վերջացած ներգործական բայերն ալ՝ իրենց այդ անցեալ արմատովն (168) ուսկից որ կ'ելլեն[1], որ ոյց, ոյզ ալ կ'ըլլայ.

Դարձուցանեմ, դարձուցի, դարձոյց, դարձո. դարձընեմ։
Զեկուցանեմ, զեկուցի, զեկոյց, զեկո. իմացընեմ, իմաց տամ։

---

1 Ասոնց այդ վերջացած արմատէն շինուած ըլլալուն ապացոյցն է, մէկ մը՝ օրինակ իմն Զեկուցանեմ բայն. որ ուրիշ մէկ բայէ մը չելլեր, հապա զէկէն ածանցեալ՝ զէկոյց արմատէն. ասանկ ըսելու է մէկալ-լոնց ամենուն համար ալ։ Մէյմ' ալ որ, նոյն արմատը կատարեալին եզակի երրորդ դէմքն է, ինչպէս ամէն ուրիշ բայերունն ալ։

Մատուցանեմ, մատուցի, մատոյց, մատո. տամ, մօտ բերեմ։
Ամրացուցանեմ, ամրացուցի, ամրացոյց,
 ամրացո. ամրցընեմ։
Ապրեցուցանեմ, ապրեցուցի, ապրեցոյց,
 ապրեցո. ապրեցընեմ։
Կորուսանեմ, կորուսի, կորոյս, կորո. կորսնցընեմ։
Փլուզանեմ, փլուզի, փլոյզ, փլո. թլցընեմ։

204. Որովհետեւ այսպիսի բայերուն շատին նշանակութիւնն ընել տալ կամ ըլլալ տալ է, նոյն մտքով շատ տեղ Տամ և Առնեմ բայերը կը բանին ամէն պարզ բայի հետ. Իմացուցանեմ ըսելու տեղը՝ կ'ըսուի Տամ կամ Առնեմ քեզ իմանալ, առնեմ զքեզ՝ իմանալ, առնեմ՝ զի իմասցիս կամ իմանայցես. Գնացուցանեմ ըսելու տեղը՝ Տամ կամ Առնեմ գնալ, առնեմ զի գնասցես կամ գնայցես։ Այսանկ ալ կ'ըսուի Անցուցանեմ կամ Տամ անցանել. Խաղացուցանեմ կամ Տամ խաղալ։ Բայց ուսումն չունեցողներուն հետ՝ հարկաւ ըսելու է Տամ ածել, տամ բերել, տամ առնել, և այլն. նմանապէս Տամ անցուցանել, տամ խաղացուցանել. ուրիշի մը անցընել կուտամ, ուրիշի մը խաղցընել կուտամ։ Տամ կամ Առնեմ լինել, առնեմ զի լինիցի. ըլլալ կուտամ, կ'ընեմ որ ըլլայ։ Առնեմ զի ընթերցցի. կ'ընեմ որ կարդայ կամ կարդացուի։

## 205. ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Անցանեմ, | անցի, | անց, էանց. | անցնիմ։ |
| Ելանեմ, | ելի, | ել. | ելլեմ։ |
| Իջանեմ, | իջի, | էջ. | իջնամ։ |
| Հասանեմ, | հասի, | հաս, եհաս. | հասնիմ։ |
| Մտանեմ, | մտի, | մուտ, եմուտ. | մտնեմ։ |
| Համբերեմ, | համբերի, համբեր, | | համբերեմ։ |

206. Աս ետքինը Համբերեմ, համբերեցի ալ կ'ըլլայ առջի օրինակին պէս։ Նմանապէս ուրիշ բայերն որ մէջի ան ձգուած է ներկայէն. Անտեսեմ, անտեսեցի. լրտեսեմ, լրտեսեցի. անիծեմ, անիծեցի. ձեռնարկեմ, ձեռնարկեցի. դիզեմ, դիզեցի. յուսահատեմ, յուսահատեցի. բռնահարեմ, բռնահարեցի։ Այսանկ ալ Երկիր պագանեմ, կ'ըլլայ երկիր պագի, եպագ, երկիր պագ. իսկ Երկրպագեմ, երկրպագեցի, երկրպագեա։ Վերածեմ, կ'ըլլայ վերածեցի կամ վերածի։ Ակնածեմ, ակնածեցի. Ակն ածեմ, ակն ածի։

## ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ — *ԽՄ*․

### 207․ ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

### Կրաւորական, ՍԻՐԻՄ․

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ․

| | | | |
|---|---|---|---|
| *Սիրիմ*․ | կը սիրուիմ․ | *Սիրիմք*․ | կը սիրուինք․ |
| *Սիրիս*․ | կը սիրուիս․ | *Սիրիք*․ | կը սիրուիք․ |
| *Սիրի*․ | կը սիրուի․ | *Սիրին*․ | կը սիրուին։ |

Անցեալ անկատար․

| | | | |
|---|---|---|---|
| *Սիրէի*․ | կը սիրուէի․ | *Սիրէաք*․ | կը սիրուէինք․ |
| *Սիրէիր*․ | կը սիրուէիր․ | *Սիրէիք*․ | կը սիրուէիք․ |
| *Սիրէր, սիրիւր*․ | կը սիրուէր․ | *Սիրէին*․ | կը սիրուէին։ |

Անցեալ կատարեալ․

| | |
|---|---|
| *Սիրեցայ*․ | սիրուեցայ․ |
| *Սիրեցար*․ | սիրուեցար․ |
| *Սիրեցաւ*․ | սիրուեցաւ․ |
| *Սիրեցաք*․ | սիրուեցանք․ |
| *Սիրեցայք, սիրեցարուք*․ | սիրուեցաք․ |
| *Սիրեցան*․ | սիրուեցան։ |

Ապառնի․

| | |
|---|---|
| *Սիրեցայց, սիրեսցիմ*․ | սիրուիմ, պիտի սիրուիմ․ |
| *Սիրեսցիս*․ | սիրուիս, պիտի սիրուիս․ |
| *Սիրեսցի*․ | սիրուի, պիտի սիրուի․ |

Սիրեսցուք, սիրեսցիմք. սէրո—էնք, դէտէ սէրո—էնք.
Սիրեսջիք, սիրեսցիք. սէրո—էք, դէտէ սէրո—էք.
Սիրեսցին. սէրո—էն, դէտէ սէրո—էն։

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Սիրեա, սիրեցիր. սէրո—է.
Սիրեսջիր, սիրիջիր. սէրո—է, սէրո—էս.
Մի սիրեր. մի սէրո—էր.

Սիրեցարուք, սիրեցայք. սէրո—էցէք.
. . . . (176).
Մի սիրէք. մի սէրո—էք։

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Սիրիցիմ. սէրո—էմ, դէտէ սէրո—էմ.
Սիրիցիս. սէրո—էս, դէտէ սէրո—էս.
Սիրիցի. սէրո—է, դէտէ սէրո—է.

Սիրիցիմք. սէրո—էնք, դէտէ սէրո—էնք.
Սիրիցիք, սիրիջիք. սէրո—էք, դէտէ սէրո—էք.
Սիրիցին. սէրո—էն, դէտէ սէրո—էն։

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Սիրել, սիրիլ. սէրո—էլ։
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Սիրեցեալ, սիրեալ. սէրո—ած, սէ-
րո—էլու։
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Սիրելոց. սէրո—էլու, որ դէտէ սէրո—է։

208. Տես ըստ ծնիս 'ի 188։ Այսանկ կըլխանարհին ներգործականներուն կրաւորականները,

Գրիմ, գրեցայ. գրո—էմ։
Ըմբռնիմ, ըմբռնեցայ. ը—նո—էմ։
Կարիմ, կարեցայ. կարո—էմ։
Շինիմ, շինեցայ. շինո—էմ։

| | | |
|---|---|---|
| Փրկիմ, | փրկեցայ. | ազատուիմ, փրկուիմ, չէզոքաբար՝ ազատիմ։ |
| Ամանիմ, | ամանեցայ. | ամանը լեցուիմ։ |
| Սերմանիմ, | սերմանեցայ. | ցանուիմ։ |
| Վանիմ, | վանեցայ. | վռնտուիմ։ |
| Ասիմ, | ասացայ. | ըսուիմ։ |
| Գիտիմ, | գիտացայ. | գիտցուիմ։ |

209. Կարեմ, Մարթեմ, կրաւորական չեն ըլլար, սովորաբար չէզոքի պէս բանելնուն համար։

## ՀԱՄԱՐԱԿ ՈՒ ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

210. Համարակ բայերն որ ներգործաբար առնուին, հրամայականնին միայն եա կ'ըլլայ, շատ անգամ ալ ներգործականնին պէս եա. Խօսեաց, Նայեաց, ողորմեաց. Դատեա, խօսեա, նայեա. ողորմեա. Խօսեցիր, նայեցիր, ողորմեցիր չըլլար ներգործական մտքով։

211. Ասանկ եայի տեղ՝ եա կ'ըլլայ. երբեմն աս օրինակիս չէզոք բայերուն ու չէզոքաբար առնուած կրաւորականներուն հրամայականն ալ. Աշխատեա, երեւեա, ձեմեա։ — Ցայտնեա, լուսաւորեա, քաջալերեա։

212. Ներգործաբար առնուած համարակ բայերուն ու կրաւորակերպ չէզոք բայերուն անորոշ դերբայն աւելի էլ կ'ըլլայ. Խօսել, նայել, ողորմել։ — Աշխատել, երեւել. որ իլ ալ կ'ըլլան բայց ոմանք միայն էլ կ'ըլլան. Դատել, կապել, ձեմել, վիճել։ — Ասանկ ալ երկուորդ օրինակին. Ծնանել կամ ծնանիլ. Մեռանել կամ մեռանիլ։

## 213. ՀԱՄԱՐԱԿ ԲԱՅԵՐ

| | | |
|---|---|---|
| Բարբառիմ, | բարբառեցայ. | խօսիմ, ըսեմ. խօսուիմ, ըսուիմ։ |
| Դատիմ, | դատեցայ. | դատեմ. դատուիմ։ |
| Խոստովանիմ, | խոստովանեցայ. | խոստովանիմ. խոստովանուիմ։ |
| Խօսիմ, | խօսեցայ. | խօսիմ. խօսուիմ։ |

Կամիմ, կամեցայ. կամիմ, ուզեմ. կամեցուիմ, ուզուիմ։
Համարիմ, համարեցայ. սեպեմ, համրեմ. սեպուիմ, համրուիմ։
Նայիմ, նայեցայ. նայիմ. նայուիմ։
Ողորմիմ, ողորմեցայ. ողորմիմ. ողորմուիմ։

## 214. ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

Աշխատիմ, աշխատեցայ. աշխատիմ, յոգնիմ։
Երևիմ, երևեցայ. երևնամ։
Կագիմ, կագեցայ. կռուիմ։
Ճեմիմ, ճեմեցայ. ճռուռ գամ, վեր վար քալեմ։
Վիճիմ, վիճեցայ. հակաճառութիւն ընեմ։
Ապրիմ, ապրեցայ. ապրիմ։
Բնակիմ, բնակեցայ. բնակիմ։
Դադարիմ, դադարեցայ. դադրիմ, կենամ։

215. Հասարակ բայերէն մէկ քանին ներգործաբար, ու չէզոքներէն ա՛լ աւելին, իմ վերջն եմ կփոխեն ու ներգործականի պէս կխոնարհին երբեմն. Դատեմ, դատեցի. Խոստովանեմ, խոստովանեցի. Համարեմ, համարեցի։ — Ապրեմ, ապրեցի. Բնակեմ, բնակեցի. Դադարեմ, դադարեցի։

216. Բայց չէզոքներէն մէկ քանին ալ՝ իմ փոխուին նէ, ներգործական կ'ըլլան. ինչպէս, Աշխատեմ, աշխատցնեմ, յոգնեցնեմ ըսել է. Խոնարհեմ, խոնարհեցնեմ. Բերկրեմ, ուրախացնեմ. Հնազանդեմ, հնազանդեցնեմ. Ցիմարեմ, խենթեցնեմ։

### 217. ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ

## Կրաւորական, ՏԵՍԱՆԻՄ.

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Տեսանիմ. | կըտեսնեմ. | Տեսանիմք. | կըտեսնենք. |
| Տեսանիս. | կըտեսնես. | Տեսանիք. | կըտեսնէք. |
| Տեսանի. | կըտեսնէ. | Տեսանին. | կըտեսնեն: |

Անցեալ անկատար.

| | |
|---|---|
| Տեսանէի. | կըտեսնէի. |
| Տեսանէիր. | կըտեսնէիր. |
| Տեսանէր, տեսանիւր. | կըտեսնէր. |
| Տեսանէաք. | կըտեսնէինք. |
| Տեսանէիք. | կըտեսնէիք. |
| Տեսանէին. | կըտեսնէին: |

Անցեալ կատարեալ.

| | |
|---|---|
| Տեսայ. | տեսնեցայ. |
| Տեսար. | տեսնեցար. |
| Տեսաւ. | տեսնեցաւ. |
| Տեսաք. | տեսնեցանք. |
| Տեսայք, տեսարուք. | տեսնեցաք. |
| Տեսան. | տեսնեցան: |

### Ապառնի.

| | |
|---|---|
| *Տեսայց, տեսցիմ.* | տեսնեմ, պիտի տեսնեմ. |
| *Տեսցես.* | տեսնես, պիտի տեսնես. |
| *Տեսցէ.* | տեսնէ, պիտի տեսնէ. |
| | |
| *Տեսցուք, տեսցումք.* | տեսնենք, պիտի տեսնենք. |
| *Տեսջիք, տեսցիք.* | տեսնէք, պիտի տեսնէք. |
| *Տեսցեն.* | տեսնեն, պիտի տեսնեն։ |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| *Տեսիր.* | տեսէ. |
| *Տեսջիր, տեսանիջիր.* | տեսէ, տեսիր. |
| *Մի տեսանիր.* | մի տեսներ. |
| | |
| *Տեսարուք, տեսայք.* | տեսնեցէք. |
| . . . . (176). | |
| *Մի տեսանէք.* | մի տեսնէք։ |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| *Տեսանիցեմ.* | տեսնեմ, պիտի տեսնեմ. |
| *Տեսանիցես.* | տեսնես, պիտի տեսնես. |
| *Տեսանիցէ.* | տեսնէ, պիտի տեսնէ. |
| | |
| *Տեսանիցեմք.* | տեսնենք, պիտի տեսնենք. |
| *Տեսանիցէք, տեսանիջիք.* | տեսնէք, պիտի տեսնէք. |
| *Տեսանիցեն.* | տեսնեն, պիտի տեսնեն։ |

ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ. *Տեսանել, տեսանիլ.* տեսնել։

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. *Տեսեալ.* տեսած, տեսնելով։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. *Տեսանելոց.* տեսնելու, որ պիտի տեսնէ։

218. Տես ըստ ծնիս 'ի 188։ Այսանկ կըլսոնարհէն ներգործականներուն կրաւորականները,

| | | |
|---|---|---|
| Անիծանիմ, | անիծայ. | անիծուիմ։ |
| Արկանիմ, | արկայ. | ձգուիմ, նետուիմ։ |
| Գտանիմ, | գտայ. | գտուիմ, գտնուիմ։ |
| Դիզանիմ, | դիզայ. | դիզուիմ։ |
| Կլանիմ, | կլայ. | կլլուիմ։ |
| Հատանիմ, | հատայ. | կտրուիմ, չէզոքաբար՝ կտրիմ։ |
| Հարցանիմ, | հարցայ. | հարցուիմ։ |
| Սպանանիմ, | սպանայ. | սպանուիմ, մեռցուիմ։ |
| Ցուցանիմ, | ցուցայ. | ցուցուիմ, չէզոք. երեւնամ։ |
| Հարկանիմ, | հարայ. | զարնուիմ։ |
| Ածիմ, | ածայ. | բերուիմ։ |
| Բերիմ, | բերայ. | բերուիմ, չէզոք. շարժիմ։ |
| Հանիմ, | հանայ. | հանուիմ (դուրս)։ |
| Հեղուսիմ, | հեղուսայ. | քամուիմ։ |
| Դարձուցանիմ, | դարձուցայ. | դարձուիմ։ |
| Զեկուցանիմ, | զեկուցայ. | իմացուիմ, իմաց տրուիմ։ |
| Մատուցանիմ, | մատուցայ. | տրուիմ, մօտ բերուիմ։ |
| Կորուսանիմ, | կորուսայ. | կորսնցուիմ, կորուսուիմ, չէզոքաբար՝ կորսուիմ։ |
| Փլուզանիմ, | փլուզայ. | փլցուիմ, չէզոքաբար՝ փլչիմ։ |

219. Աս տարանէմբայերուն երկանները, որ դոյ ածանցէն 'ի զատ՝ ալ, եւս ալ ունին մէջերնին, շատ սովոր չեն կրաւորական ըլլալու. անոնց տեղը աւելի չէզոքները կըբանին. Ամրացուցանիմ, ապրեցուցանիմ ըսելու տեղը՝ ամրանամ, ապրիմ կ'ըսուի։

## 220. ՀԱՄԱՐԱԿ ԲԱՅԵՐ

*Ագանիմ, ագայ, ագիր, ագուցեալ,*
*ագեալ.* հագնիմ. հագնուիմ։
*Ծնանիմ, ծնայ, ծնիր, ծնեալ.* ծնանիմ. ծնիմ կամ
ծնուիմ։
*Ուսանիմ, ուսայ, ուսիր, ուսարուք*
*կամ ուսիք, ուսեալ.* սորվիմ. սորվուիմ։
*Սկսանիմ, սկսայ, սկսիր, սկսարուք,*
*սկսեալ.* սկսիմ. սկսուիմ։
*Տանիմ, տարայ, տար՝* ներգործական.
*տարայք, տարերուք, տարեալ.* տանիմ. տարուիմ։

## 221. ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

*Ագանիմ, ագայ, ագիր, ագարուք կամ ա- * տեղ մը իջնամ,
*գերուք, ագուցեալ.* գիշեր կենամ։
*Անկանիմ, անկայ, անկիր, անկերուք,*
*անկեալ.* իյնամ։
*Հեծանիմ, հեծայ, հեծիր, հեծարուք,*
*հեծեալ.* հեծնամ։
*Մեռանիմ, մեռայ, մեռիր, մեռարուք,*
*մեռեալ.* մեռնիմ։
*Նստիմ, նստայ, նիստ* (211), *նստարուք,*
*նստեալ.* նստիմ։

222. *Այսանկ կրխոնարհին՝* չիմ, նչիմ *ու մէկ երկու նչիմ, անիմ վերջացած չէզոք բայերն ալ։ Բայց քանի մը տեղ սովորաբար քիչ մը տարբերութիւն ունենալնուն՝ ամբողջ դնենք օրինակ մը։*

## 223. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Ներկ. | Թաքչիմ. կը պահուըտիմ. | Թաքչիմք. կը պահուըտինք. |
| | Թաքչիս. | Թաքչիք. |
| | Թաքչի. | Թաքչին: |
| Անց. | Թաքչէի. | Թաքչէաք. |
| | Թաքչէիր. | Թաքչէիք. |
| | Թաքչէր. | Թաքչէին: |
| Կտր. | Թաքեայ. | Թաքեաք. |
| | Թաքեար. | Թաքեայք, Թաքերուք. |
| | Թաքեաւ. | Թաքեան: |
| Ապռ. | Թաքեայց, Թաքիցեմ. | Թաքիցուք, Թաքիցեմք. |
| | Թաքիցես. | Թաքիջիք, Թաքիցէք. |
| | Թաքիցէ. | Թաքիցեն: |
| ՀՐԱՄ. | Թաքիր. | Թաքերուք. |
| | Թաքիջիր, Թաքչիջիր. | . . . (176). |
| | Մի Թաքչիր. | Մի Թաքչիք: |
| ՍՏՈՐ. | Թաքչիցիմ. | Թաքչիցիմք. |
| | Թաքչիցիս. | Թաքչիցիք, Թաքչիջիք. |
| | Թաքչիցի. | Թաքչիցին: |

ԴԵՐԲ. Թաքչել.— Թաքուցեալ, երբեմն Թաքեալ. — Թաքչելոց:

Թռչիմ, Թռեայ, Թռիր, Թռուցեալ. թռչեմ:
Հանգչիմ, հանգեայ, հանգիր, հանգուցեալ. հանգչեմ:
Մատչիմ, մատեայ, մատիր, մատուցեալ. դրուեմ, մօտենամ:
Փախչիմ, փախեայ, փախիր, փախուցեալ. փախչեմ:
Երկնչիմ, երկեայ, երկիր, երկուցեալ. վախենամ:
Կորնչիմ, կորեայ, կորիր, կորուսեալ. կորսուեմ:
Մարտնչիմ, մարտեայ, մարտիր, մարտուցեալ. կռուեմ:
Յարնչիմ, յարեայ, յարիր, յարուցեալ ճակչեմ, վեր-նամ, յարմարեմ:

Մեղանչեմ, մեղայ, մեղիր, մեղարուք, մե-
ղանչիցեմ, մեղուցեալ. մեղանչէմ։
Ցանցանեմ, ցանցեայ կամ ցանցայ, ցանցիր,
ցանցանիցեմ, ցանցուցեալ, ցանցեալ. ախալըմ։
—Մարտնչիմ, մարտնչեցայ. Մեղանչեմ, մեղանչեցի
ալ կ'ըլլայ երբեմն։

## ՉՈՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ. — ՈՒՄ.

### 224. Ներգործական ՁԵՆՈՒՄ. արմատ ՁԵՆ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Ձենում. | կըճօրըեմ. | Ձենումք. | կըճօրըենք. |
| Ձենուս. | կըճօրըես. | Ձենուք. | կըճօրըէք. |
| Ձենու. | կըճօրըէ. | Ձենուն. | կըճօրըեն։ |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Ձենուի[1]. | կըճօրըէի. | Ձենուաք. | կըճօրըէինք. |
| Ձենուիր. | կըճօրըէիր. | Ձենուիք. | կըճօրըէիք. |
| Ձենոյր. | կըճօրըէր. | Ձենուին. | կըճօրըէին։ |

Անցեալ կատարեալ։

| | | | |
|---|---|---|---|
| Ձենի. | ճօրըեցի. | Ձենաք. | ճօրըեցինք. |
| Ձեներ. | ճօրըեցիր. | Ձենէք, ձենիք. | ճօրըեցիք. |
| Ձեն, եձեն. | ճօրըեց. | Ձենին. | ճօրըեցին։ |

---

1 Շատ տեղ Ձենոյի, ձենոյինք, ձենոյաք, ձենոյիք, ձենոյին ալ կը-գրուի։

Ապառնի.

Զենից, զենցեմ. մորթեմ, պէտք մորթեմ.
Զենցես. մորթես, պէտք մորթես.
Զենցէ. մորթէ, պէտք մորթէ.

Զենցուք, զենցեմք. մորթենք, պէտք մորթենք.
Զենջիք, զենցէք. մորթէք, պէտք մորթէք.
Զենցեն. մորթեն, պէտք մորթեն։

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Զեն. մորթէ. Զենէք. մորթեցէք.
Զենջիր. մորթէ, մորթես. . . (176). .
Մի զենուր. մի մորթեր. Մի զենուք. մի մորթէք։

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Զենուցում. մորթեմ, պէտք մորթեմ.
Զենուցուս. մորթես, պէտք մորթես.
Զենուցու. մորթէ, պէտք մորթէ։

Զենուցումք. մորթենք, պէտք մորթենք.
Զենուցուք. մորթէք, պէտք մորթէք.
Զենուցուն. մորթեն, պէտք մորթեն.

ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ. Զենուլ. մորթել.
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Զենեալ. մորթած, մորթելուն.
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Զենլոց. մորթելու, որ պէտք մորթէ։

225. Այսանկ կը խոնարհին

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Արգելում, | արգելի, | արգել. | արգելեմ, թող չտամ։ |
| Թողում, | թողի, | թող, եթող. | թողնամ, թող տամ։ |
| Կիզում, | կիզի, | կեզ, եկեզ. | քերեմ։ |
| Հեղում, | հեղի, | հեղ, եհեղ. | թափեմ։ |
| Յաւելում, | յաւելի, | յաւել. | աւելցընեմ։ |
| Առնում, | առի, | առ, էառ. | առնում, առնեմ։ |
| Ընկենում, | ընկեցի, | ընկեաց, կամ ընկէց. | նետեմ, ձգեմ։ |
| Լնում, | լցի, | լից, ելից. | լեցընեմ։ |
| Խնում, | խցի, | խից, եխից. | թխեմ, գոցեմ։ |

226. Աս խոնարհմանս տակը չեզոք չկայ. ըսել է որ աս լծորդութիւնս ներգործակաները չեզոք չունի։

## 227. Կրաւորական, ԶԵՆՈՒՄ.

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ.

| | | | |
|---|---|---|---|
| Զենում. | կը մորթուիմ. | Զենումք. | կը մորթուինք. |
| Զենուս. | կը մորթուիս. | Զենուք. | կը մորթուիք. |
| Զենու. | կը մորթուի. | Զենուն. | կը մորթուին։ |

Անցեալ անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| Զենուի. | կը մորթուէի. | Զենուաք. | կը մորթուէինք. |
| Զենուիր. | կը մորթուէիր. | Զենուիք. | կը մորթուէիք. |
| Զենոյր. | կը մորթուէր. | Զենուին. | կը մորթուէին։ |

### Անցեալ կատարեալ.

Զենայ. մորթուեցայ.
Զենար. մորթուեցար.
Զենաւ. մորթուեցաւ.

Զենաք. մորթուեցանք.
Զենայք, զենարուք. մորթուեցաք.
Զենան. մորթուեցան։

### Ապառնի.

Զենայց, զենցիմ. մորթուիմ, պիտի մորթուիմ.
Զենցիս. մորթուիս, պիտի մորթուիս.
Զենցի. մորթուի, պիտի մորթուի.

Զենցուք, զենցիմք. մորթուինք, պիտի մորթուինք.
Զենջիք, զենցիք. մորթուիք, պիտի մորթուիք.
Զենցին. մորթուին, պիտի մորթուին։

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Զենիր. մորթուէ.
Զենջիր. մորթուէ, մորթուիս.
Մի զենուր. մի մորթուիր.

Զենարուք, զենայք. մորթուեցէք.
. . . . (176).
Մի զենուք. մի մորթուիք։

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Զենուցում. մորթուիմ, պիտի մորթուիմ.
Զենուցուս. մորթուիս, պիտի մորթուիս.
Զենուցու. մորթուի, պիտի մորթուի.

| | |
|---|---|
| Ջենուցումք. | մորթուէնք, պէտք մորթուէնք. |
| Ջենուցուք. | մորթուէք, պէտք մորթուէք. |
| Ջենուցուն. | մորթուէն, պէտք մորթուէն։ |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ. Ջենուլ. մորթուիլ։

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ. Ջենեալ. մորթուած, մորթուելու։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ. Ջենլոց. մորթուելու, որ պէտք մորթուի.

228. *Տես ըսածնիս ՚ի* 188։ *Ինչպէս կըտեսնես, աս լծորդութեան կատարեալը, ապառնին ու հրամայականը նոյն է ամենեւին երկրորդ ու երրորդ լծորդութեան երկրորդ օրինակներուն հետ։*

229. *Ոմանց սահմանական ներկայն ու ստորադասականն իմ ալ կ՚ըլլայ երբեմն. Ջենանիմ, զենանիցիմ, զենանիլ. Թողանիմ, Թողանիլ. հեղանիմ, հեղանիլ. լնանիմ, լնանիլ։*

230. *Ասանկ կըխոնարհին ներգործականներուն կրաւորականները,*

| | | |
|---|---|---|
| Արգելում, | արգելայ. | արգիլուիմ։ |
| Թողում, | թողայ. | թողուիմ, չէզոքաբար՝ մնամ։ |
| Կիզում, | կիզայ. | էրուիմ, — էրիմ։ |
| Հեղում, | հեղայ. | թափուիմ, — թափիմ։ |
| Յաւելում, | յաւելայ. | աւելցուիմ, — աւելնամ։ |
| Առնում, | առայ. | առնուիմ։ |
| Ընկենում, | ընկեցայ. | նետուիմ, ձգուիմ, — իյնամ։ |
| Լնում, | լցայ. | լեցուիմ։ |
| Խնում, | խցայ. | թխուիմ, գոցուիմ։ |

## 231. ՀԱՍԱՐԱԿ ԲԱՅԵՐ

Զգենում, զգեցայ, զգեցիր. հագնիմ. հագնուիմ:
Ընթեռնում, ընթերցայ, ընթերցիր. կարդամ. կարդացուիմ:
Կալնում / Կալում } կալայ, կալ չամ կա, կա-լէք՝ ներգործական . կա-լուք, կալայք. բռնեմ. բռնուիմ:
Կլնում, կլայ, կլիր. կլլեմ. կլլուիմ:
Հանում, հանայ, հանիր. հինեմ. հինուիմ:

## 232. ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ

Ասոնցմէ որոնց որ կատարեալը եայ է, եմ բայերուն պէս կը խոնարհին (223), շատը եմ ալ կ'ըլլան. մէկ քանին ալ տեղ տեղ քիչ մը կը խոտորին.

Զբօսնում, զբօսայ, զբօսեալ. զբօսանք (սէֆա) ընեմ:
Յենում, յեցայ, յեցեալ. կռթնիմ:
Ջեռնում, ջեռայ, ջեռեալ. տաքնամ:
Երդնում, երդուայ, երդուեալ. երդում ընեմ:
Քաղցնում, քաղցեայ, քաղցեալ. անօթենամ:
Զարթնում, զարթեայ, զարթուցեալ. արթննամ:
Թաքնում, թաքեայ, թաքուցեալ. պահուըտիմ:
Պակնում, պակեայ, պակուցեալ. վախնամ:
Ցածնում, ցածեայ, ցածուցեալ. ցածնամ, էջնամ:
Ցասնում, ցասեայ, ցասուցեալ. սրդողիմ:
Փախնում, փախեայ, փախուցեալ. փախչիմ:

## ԶԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ

233. Քանի մը բայ կայ, որ տեղ տեղ կըխոտորին կանոնաւոր խոնարհմունքէ, կամ թէ ըսենք՝ երկու անկատար բայէ մէկ լման բայ մը կ'ըլլան. և ասոնք են:

### ԱՌԱՋԻՆ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ

234. Ներգործական ՏԱՄ. արմատ ՏՈՒ, ՏՈՒՐ:

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. ներկ. | Տամ. կուտամ. | Տամք. կուտանք. |
| | Տաս. | Տայք. |
| | Տայ. | Տան: |
| անկ. | Տայի. | Տայաք. |
| | Տայիր. | Տայիք. |
| | Տայր. | Տային: |
| կտր. | Ետու. | Տուաք. |
| | Ետուր. | Ետուք. |
| | Ետ. | Ետուն: |
| ապռ. | Տաց, տացեմ. | Տացուք. |
| | Տացես. | Տաջիք, տացէք. |
| | Տացէ. | Տացեն: |
| ՀՐԱՄ. | Տուր. | Տուք. |
| | Տաջիր, տայջիր. | . . . (176). |
| | Մի տար. | Մի տայք: |
| ՍՏՈՐ. | Տայցեմ. | Տայցեմք. |
| | Տայցես. | Տայցէք, տայջիք. |
| | Տայցէ. | Տայցեն: |

ԴԵՐԲ. Տալ. — Տուեալ. — Տալոց:

Հասարակ բայի պէս կրաւորաբար ալ կըգտուի Տայի, տային, տալ. կըտրուէի, կըտրուէին, տրուիլ:

### 235. Կրաւորական.

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. կտր. | Տուայ. տրւ–էցայ. | Տուաք. տրւ–էցանք. |
| | Տուար. | Տուայք |
| | Տուաւ. | Տուան : |
| ապ. | Տացիմ, տուայց. | Տացիմք. |
| | Տացիս. | Տացիք. |
| | Տացի. | Տացին : |
| ՍՏՈՐ. | Տայցիմ. | Տայցիմք. |
| | Տայցիս. | Տայցիք, տայջիք. |
| | Տայցի. | Տայցին : |

ԴԵՐԲ.ԱՆՑԵԱԼ. Տուեալ, տուեցեալ :

236. Պակաս տեղերը սովորաբար կ'ըլլայ Տուեալ լի-նիմ, լինել, լինել. երբեմն ալ՝ Տայի, տային, տալ. բայց կայ ալ Տուիմ, տուիս, տուի. տուիմք, տուիք, տուին :

### 237. Ջեղոք ԳԱՄ. արմատ ԵԿ :

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ.ներկ. | Գամ. կու–գամ. | Գամք. կու–գանք. |
| | Գաս. | Գայք. |
| | Գայ. | Գան : |
| անկ. | Գայի. | Գայաք. |
| | Գայիր. | Գայիք. |
| | Գայր. | Գային : |
| կտր. | Եկի. | Եկաք. |
| | Եկիր. | Եկիք[1]. |
| | Եկն. | Եկին : |

---

1 Եկէք կամ Եկայք չըլլար ամենևին կատարեալին յոգնակի երկրորդ-դէմքը :

| | | |
|---|---|---|
| ապռ. | Եկից, եկեսցեմ. | Եկեսցուք, եկեսցեմք. |
| | Եկեսցես. | Եկեսջիք, եկեսցէք. |
| | Եկեսցէ. | Եկեսցեն։ |
| ՀՐԱՄ. | Եկ. | Եկայք. |
| | Եկեսջիր, գայջիր. | . . (176). |
| | Մի գար. | Մի գայք։ |
| ՍՏՈՐ. | Գայցեմ. | Գայցեմք. |
| | Գայցես. | Գայցէք, գայջիք. |
| | Գայցէ. | Գայցեն։ |
| ԴԵՐԲ. | Գալ. — Եկեալ. — Գալոց։ | |

238. Չէզոք **ԵՐԹԱՄ**. արմատ ԵՐԹ, ՉՈԳ[1]։

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. Ներկ. | Երթամ. չ'երթամ. | Երթամք. չ'երթանք. |
| | Երթաս. | Երթայք. |
| | Երթայ. | Երթան։ |
| Անկ. | Երթայի. | Երթայաք. |
| | Երթայիր. | Երթայիք. |
| | Երթայր. | Երթային։ |
| Կատ. | Չոգայ, չոքայ. | Չոգաք. |
| | Չոգար. | Չոգայք. |
| | Չոգաւ. | Չոգան։ |
| ապռ. | Երթայց, երթիցեմ. | Երթիցուք, երթիցեմք. |
| | Երթիցես. | Երթիջիք, երթիցէք. |
| | Երթիցէ. | Երթիցեն։ |
| ՀՐԱՄ. | Երթ, չոգ. | Երթայք. |
| | Երթիջիր, երթայջիր. | . . . (176). |
| | Մի երթար. | Մի երթայք։ |

1 Չոգ արմատէն կայ Չոգամ, չոգաս, չոգայ, չոգայի, չոգային, չոգաւ, որ անսովոր են. միայն կատարեալը ըստ սովորական եղեր է. ու ըստ հրամայականը լաւ գրոց մէջ կայ քիչ տեղ։

| | | |
|---|---|---|
| ՍՏՈՐ. | Երթայցեմ. | Երթայցեմք. |
| | Երթայցես. | Երթայցէք, երթայջիք. |
| | Երթայցէ. | Երթայցեն։ |

ԴԵՐԲ. Երթալ.— Երթեալ.— Երթալոց։

## ԵՐԿՐՈՐԴ ՈՒ ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ

### ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿԻՆ ՊԷՍ

239. Ներգործական **ԱՌՆԵՄ**. *արմատ առար*։

ՍՀՄ.

| | | |
|---|---|---|
| ներկ. | Առնեմ. կ'ընեմ, կըշինեմ. | Առնեմք. կ'ընենք, կըշինենք. |
| | Առնես. | Առնէք. |
| | Առնէ. | Առնեն։ |
| անկ. | Առնէի. | Առնէաք. |
| | Առնէիր. | Առնէիք. |
| | Առնէր. | Առնէին։ |
| կատ. | Արարի. | Արարաք. |
| | Արարեր. | Արարէք, արարիք. |
| | Արար. | Արարին։ |
| ապա. | Արարից, արասցեմ. | Արասցուք, արասցեմք. |
| | Արասցես. | Արասջիք, արասցէք. |
| | Արասցէ. | Արասցեն։ |
| ՀՐԱՄ. | Արա. | Արարէք. |
| | Արասջիր, առնիջիր. | . . . (176). |
| | Մի առներ. | Մի առնէք։ |
| ՍՏՈՐ. | Առնիցեմ. | Առնիցեմք. |
| | Առնիցես. | Առնիցէք, առնիջիք. |
| | Առնիցէ. | Առնիցեն։ |

ԴԵՐԲ. Առնել.— Արարեալ.— Առնելոց։

## 240. Կրաւորական, ԱՌՆԻՄ.

ՍՀՄ.

Ներկ. Առնիմ. կ'ըլլ—եմ, կ'ըլլամ. Առնիմք. կ'ըլլ—ենք, կ'ըլլանք.

| | |
|---|---|
| Առնիս. | Առնիք. |
| Առնի. | Առնին: |
| անց. Առնէի. | Առնէաք. |
| Առնէիր. | Առնէիք. |
| Առնէր. | Առնէին: |
| կտր. Արարայ. | Արարաք. |
| Արարար. | Արարայք. |
| Արարաւ. | Արարան: |
| ապռ. Արարայց, արասցիմ. | Արասցուք, արասցիմք. |
| Արասցիս. | Արասջիք, արասցիք. |
| Արասցի. | Արասցին: |
| ՀՐԱՄ. —— | —— |

Արասջիր, առնիջիր . . . . (176).

| | |
|---|---|
| Մի առնիր. | Մի առնիք: |
| ՍՏՈՐ. Առնիցիմ. | Առնիցիմք. |
| Առնիցիս. | Առնիցիք, առնիջիք. |
| Առնիցի. | Առնիցին: |

ԴԵՐԲ. Առնել, առնուլ. — Արարեալ. — Առնելոց:

## 241. Ներգործական ԴՆԵՄ. արմատ ԴԻՐ:

ՍՀՄ.

| | |
|---|---|
| Ներկ. Դնեմ. կըդնեմ. | Դնեմք. կըդնենք. |
| Դնես. | Դնէք. |
| Դնէ. | Դնեն: |
| անց. Դնէի. | Դնէաք. |
| Դնէիր. | Դնէիք. |
| Դնէր. | Դնէին: |

| | | |
|---|---|---|
| Կատ. | Եդի. | Եդաք. |
| | Եդիր, եդեր. | Եդիք. |
| | Եդ. | Եդին: |
| Ապռ. | Եդից, դիցեմ. | Դիցուք, դիցեմք. |
| | Դիցես. | Դիջիք, դիցէք. |
| | Դիցէ. | Դիցեն: |
| ՀՐԱՄ. | Դիր. | Դիք. |
| | Դիջիր, դնիջիր. | . . . . (176). |
| | Մի դներ. | Մի դնէք: |
| ՍՏՈՐ. | Դնիցեմ. | Դնիցեմք. |
| | Դնիցես. | Դնիցէք, դնիջիք. |
| | Դնիցէ. | Դնիցեն: |
| ԴԵՐԲ. | Դնել.— Եդեալ.—Դնելոց: | |

---

## 242. Կրաւորական, ԴՆԻՄ.

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. | | |
| Ներկ. | Դնիմ. կը դրուիմ, կամ. | Դնիմք. կը դրուինք, կանք. |
| | Դնիս. | Դնիք. |
| | Դնի. | Դնին: |
| Անկ. | Դնէի. | Դնէաք. |
| | Դնէիր. | Դնէիք. |
| | Դնէր, դնիւր. | Դնէին: |
| Կատ. | Եդայ. | Եդաք. |
| | Եդար. | Եդայք, եդարուք. |
| | Եդաւ. | Եդան: |
| Ապռ. | Եդայց, դիցիմ. | Դիցուք, դիցիմք. |
| | Դիցիս. | Դիջիք, դիցիք. |
| | Դիցի. | Դիցին: |
| ՀՐԱՄ. | —— | Եդարուք, եդայք. |
| | Դիջիր, դնիջիր. | . . . . (176). |
| | Մի դնիր. | Մի դնիք: |

| | | |
|---|---|---|
| ՍՏՈՐ. | Դնիցիմ. | Դնիցիմք. |
| | Դնիցիս. | Դնիցիք, դնիջիք. |
| | Դնիցի. | Դնիցին։ |

ԴԵՐԲ. Դնել, դնիլ.—Եդեալ.—Դնելոց։

---

## 243. Ներգործական ՈՒՏԵՄ. արմատ (ոյփ), ԿԵՐ։

ՍՀՄ.

| | | |
|---|---|---|
| Ներկ. | Ուտեմ. ն՚ուտեմ. | Ուտեմք. ն՚ուտենք. |
| | Ուտես. | Ուտէք. |
| | Ուտէ. | Ուտեն։ |
| Անկ. | Ուտէի. | Ուտէաք. |
| | Ուտէիր. | Ուտէիք. |
| | Ուտէր. | Ուտէին։ |
| Կտր. | Կերայ[1]. | Կերաք. |
| | Կերար. | Կերայք. |
| | Կերաւ, եկեր. | Կերան։ |
| Ապա. | Կերայց, կերիցեմ. | Կերիցուք, կերիցեմք. |
| | Կերիցես. | Կերիջիք, կերիցէք. |
| | Կերիցէ. | Կերիցեն։ |
| ՀՐԱՄ. | Կեր. | Կերայք, կերէք. |
| | Կերիջիր, ուտիջիր. | . . . (176). |
| | Մի ուտեր. | Մի ուտէք։ |
| ՍՏՈՐ. | Ուտիցեմ. | Ուտիցեմք. |
| | Ուտիցես. | Ուտիցէք, ուտիջիք. |
| | Ուտիցէ. | Ուտիցեն։ |

ԴԵՐԲ. Ուտել.—Կերեալ.—Ուտելոց։

---

1 Կերի, կերեր, կերիք, կերին, ապառնի կերից, չգտուեցաւ բուն հին նախնեաց գրոց մէջ. ինչ որ անանկ տպած տեսնես նէ՝ խանգարուած է կամ սխալ։

## 244. Կրաւորական, ՈՒՏԻՄ.

ՍՀՄ.

| | | |
|---|---|---|
| Ներկ. | Ուտիմ. կ'ուտուիմ. | Ուտիմք. կ'ուտուինք. |
| | Ուտիս. | Ուտիք. |
| | Ուտի. | Ուտին։ |
| Անց. | Ուտէի. | Ուտէաք. |
| | Ուտէիր. | Ուտէիք. |
| | Ուտէր. | Ուտէին։ |
| Կատ. | Կերայ. | Կերաք. |
| | Կերար. | Կերայք. |
| | Կերաւ. | Կերան։ |
| Ապառ. | Կերայց, կերիցիմ. | Կերիցուք, կերիցիմք. |
| | Կերիցիս. | Կերիջիք, կերիցիք. |
| | Կերիցի. | Կերիցին։ |

ՀՐԱՄ. — —

Կերիջիր, ուտիջիր. . . . (176).

Մի ուտիր. Մի ուտիք։

| | | |
|---|---|---|
| ՍՏՈՐ. | Ուտիցիմ. | Ուտիցիմք. |
| | Ուտիցիս. | Ուտիցիք, ուտիջիք. |
| | Ուտիցի. | Ուտիցին։ |

ԴԵՐԲ. Ուտել, ուտիլ. — Կերեալ. — Ուտելոց։

## 245. Չէզոք ՅԱՌՆԵՄ. արմատ ՅԱՐ[1] կամ ՅԱՐԻՐ։

ՍՀՄ.

| | | |
|---|---|---|
| Ներկ. | Յառնեմ. ոտք կ'ելլեմ. | Յառնեմք. ոտք կ'ելլենք. |
| | Յառնես. | Յառնէք. |
| | Յառնէ. | Յառնեն։ |

---

1 Աս բային ու Յարնչիմ բային (223) արմատը մէկ ըլլալուն, խոնարհումն ալ նման է քանի մը տեղ։

| | | |
|---|---|---|
| անէ. | Յառնէի. | Յառնէաք. |
| | Յառնէիր. | Յառնէիք. |
| | Յառնէր. | Յառնէին։ |
| կտր. | Յարեայ. | Յարեաք. |
| | Յարեար. | Յարեայք, յարերուք. |
| | Յարեաւ. | Յարեան։ |
| ապռ. | Յարեայց, յարիցեմ. | Յարիցուք, յարիցեմք. |
| | Յարիցես. | Յարիջիք, յարիցէք. |
| | Յարիցէ. | Յարիցեն։ |
| ՀՐԱՄ. | Արի, յարիր. | Արիք, յարիք, յարերուք. |
| | Յարիջիր, յառնիջիր. . . . (176). | |
| | Մի յառներ. | Մի յառնէք. |
| ՍՏՈՐ. | Յառնիցեմ. | Յառնիցեմք. |
| | Յառնիցես. | Յառնիցէք, յառնիջիք. |
| | Յառնիցէ. | Յառնիցեն։ |

ԴԵՐԲ. Յառնել. — Յարուցեալ. — Յառնելոց։

246. Զարտուղի բայերուն տեղ տեղ անսովոր կերպերն ալ կայ, որ չգրինք։

## ՊԱԿԱՍԱՒՈՐ ԲԱՅԵՐ

247. Քանի մը բայեր ալ կան, որ տեղ տեղ կըպակսին, և ուրիշ ամբողջ բայէ կը լեցուին. և ասոնք են։

### ԵՐԿՐՈՐԴ ՈՒ ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ

#### ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿԻՆ ՊԷՍ

248. Ներգործական **ԱՐԲԻ**. արմատ ԱՐԲ։

ՍՀՄ.

| | | |
|---|---|---|
| կտր. | Արբի. խմեցի. | Արբաք. խմեցինք։ |
| | Արբեր. | Արբէք, արբիք. |
| | Արբ, էարբ. | Արբին։ |

| | |
|---|---|
| ապ. Արբից, արբեցեմ. | Արբցուք, արբցեմք. |
| Արբցես. | Արբջիք, արբցէք. |
| Արբցէ. | Արբցեն։ |
| ՀՐԱՄ. Արբ. | Արբէք. |
| Արբջիր. | . . . (176). |

ԴԵՐԲ. ԱՆՑԵԱԼ. Արբեալ։

249. Մնացածը կը լեցընէ Ըմպեմ, ըմպեցի, ամբողջ բայէն. ինչպէս կրաւորականն ալ, որ կ'ըլլայ նաև Արբայ, արբար, արբաւ. Արբեալ լինիմ, եղէ, և այլն։

250. Ներգործական ԼՈՒԱՅ. արմատ ԼՈՒ, ԼՈՒՐ։

ՍՀՄ.

| | |
|---|---|
| կտր. Լուայ. լսեցի. | Լուաք. լսեցինք. |
| Լուար. | Լուայք, լուարուք. |
| Լուաւ. | Լուան։ |
| ապ. Լուայց, լուիցեմ, | Լուիցուք, լուիցեմք. |
| Լուիցես. | Լուիջիք, լուիցէք. |
| Լուիցէ. | Լուիցեն։ |
| ՀՐԱՄ. Լուր. | Լուարուք. |
| Լուիջիր. | . . . (176). |

ԴԵՐԲ. ԱՆՑԵԱԼ. Լուեալ։

251. Պակասը կ'առնէ Լսեմ, լսեցի, ամբողջ բայէն, ինչպէս կրաւորականն ալ, որ աւելի կ'ըլլայ Լուեալ լինիմ, լուր կամ լու լինիմ, լսելի լինիմ, եղէ, և այլն. երբեմն ալ՝ Լուայ, լուաւ, լուան։

Կրաւորական ապառնին կ'ըլլայ նաև

| | |
|---|---|
| Լուիցիմ. | Լուիցիմք. |
| Լուիցիս. | Լուիջիք, լուիցիք. |
| Լուիցի. | Լուիցին։ |

252. Ներգործական ԾԱՆԵԱՅ. արմատ ԾԱՆ:

ՍՀՄ.

| | | |
|---|---|---|
| Չոր. | Ծանեայ. ճանըչայ. | Ծանեաք. ճանըչանք. |
| | Ծանեար. | Ծանեայք, ծաներուք. |
| | Ծանեաւ. | Ծանեան: |
| Ապա. | Ծանեայց, ծանիցեմ. | Ծանիցուք, ծանիցեմք. |
| | Ծանիցես. | Ծանիջիք, ծանիցէք. |
| | Ծանիցէ. | Ծանիցեն: |
| ՀՐԱՄ. | Ծանիր. | Ծանիք, ծաներուք. |
| | Ծանիջիր. | . . . (176). |

ԴԵՐԲ. ԱՆՑԵԱԼ. Ծանուցեալ:

253. Պակասը կրլեցուի ճանաչեմ, ճանաչեցի, ամբողջ բայէն, ինչպէս կրաւորականն ալ, որ կ'ըլլայ նաև Ծանուցեալ լինիմ, եղէ, և այլն. կամ Ծանուցանիմ, ծանուցայ, ըստ 218:

Կրաւորական ապառնին կ'ըլլայ նաև

| | |
|---|---|
| Ծանիցիմ. | Ծանիցիմք. |
| Ծանիցիս. | Ծանիջիք, ծանիցիք. |
| Ծանիցի. | Ծանիցին: |

254. Հասարակ ՈՒՆԻՄ. արմատ ՈՅՆ, ԿԱԼ:

ՍՀՄ.

| | | |
|---|---|---|
| Ներկ. | Ունիմ. ունեմ, կըբը- նեմ. կըբռնունեմ. | Ունիմք. ունենք, կըբը- նենք. կըբռնունենք. |
| | Ունիս. | Ունիք. |
| | Ունի. | Ունին: |

| | | |
|---|---|---|
| անց. | Ունէի. | Ունէաք. |
| | Ունէիր. | Ունէիք. |
| | Ունէր. | Ունէին։ |
| կտր. | Կալայ. | Կալաք. |
| | Կալար. | Կալայք, կալարուք. |
| | Կալաւ. | Կալան։ |
| ապ. | Կալայց, կալցիմ. կալցեմ, ներգործ. | Կալցուք, կալցիմք. կալցեմք, ներգործ. |
| | Կալցիս. կալցես. | Կալջիք, կալցիք. կալցէք. |
| | Կալցի. կալցէ. | Կալցին. կալցեն։ |
| ՀՐԱՄ. | Կալ, կա. | Կալարուք, կալայք. կալէք, ներգործ. |
| | Կալջիր. ունիջիր. | . . . (176). |
| | Մի ունիր. | Մի ունիք։ |
| ՍՏՈՐ. | Ունիցիմ. | Ունիցիմք. |
| | Ունիցիս. | Ունիցիք, ունիջիք. |
| | Ունիցի. | Ունիցին։ |
| ԴԵՐԲ. | Ունել.—Կալեալ.—Ունելոց։ | |

255. Կալում կալնում ամբողջ բայ է, ինչպէս տեսանք վերը (231). Ունիմ պակասաւորը անոր խառնուեցաւ. և աւելի ասանկ խառն կըլլանի, ինչպէս մէկալ ամէն պակասաւորներն ալ։ Ապառնին Ունեցայց՝ կ'երևի քիչ տեղ. ուսկից կատարեալը կ'իմացուի Ունեցայ։

256. Ասանկ կըխոնարհի Ընդունիմ. միայն կենին քովը դան կըկորսնցընէ. Ընկալայ. ընկալայց, ընկալ, ընկալեալ։ Երբեմն ալ կ'ըլլայ Ընդունեցայ նաև ընդունեցի, ընդունեա, ընդունեալ։

257. Պակասաւոր են ետևի բայերն ալ, որ տեղէ մ'ալ չեն լեցըներ պակասնին, հապա այսչափ միայն կըլլանին։

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. ՆԵՐԿ. | *Պարտիմ.* | պէտք է ինծի որ. |
| | *Պարտիս.* | պէտք է քեզի որ. |
| | *Պարտի.* | պէտք է անոր որ. |
| | *Պարտիմք.* | պէտք է մեզի որ. |
| | *Պարտիք.* | պէտք է ձեզի որ. |
| | *Պարտին։* | պէտք է անոնց որ։ |
| ԱՆԿ. | *Պարտէի.* | պէտք էր ինծի որ. |
| | *Պարտէիր.* | պէտք էր քեզի որ. |
| | *Պարտէր.* | պէտք էր անոր որ. |
| | *Պարտէաք.* | պէտք էր մեզի որ. |
| | *Պարտէիք.* | պէտք էր ձեզի որ. |
| | *Պարտէին։* | պէտք էր անոնց որ։ |
| ՍՏՈՐ. | *Պարտիցիմ.* | պէտք ըլլայ ինծի որ. |
| | *Պարտիցիս.* | պէտք ըլլայ քեզի որ. |
| | *Պարտիցի.* | պէտք ըլլայ անոր որ. |
| | *Պարտիցիմք.* | պէտք ըլլայ մեզի որ. |
| | *Պարտիցիք.* | պէտք ըլլայ ձեզի որ. |
| | *Պարտիցին։* | պէտք ըլլայ անոնց որ։ |
| ԴԵՐԲ. | *Պարտել.* | պէտք ըլլալ։ |

258. Իսկ *Պարտիմ, պարտեցայ, պարտեցայց*, կը նշանակէ պարտական եմ, պարտք ունիմ տալու։ Ուրիշ է *Պարտեմ, պարտիմ ալ*, որ յաղթեմ, յաղթուիմ ըսել է։

259. ՍՀՄ. ապ. ——— ———

| | | |
|---|---|---|
| | *Գոզցես.* | ըսես, սեպես. |
| | *Գոզցէ.* | ըսէ, սեպէ (ան). |
| | *Գոզցուք.* | ըսենք, սեպենք. |
| | *Գոզջիք.* | ըսէք, սեպեցէք. |
| | *Գոզցեն։* | ըսեն, սեպեն։ |
| ՀՐԱՄ. | *Գոզ.* | ըսէ, սեպէ (դուն). |
| | *Գոզջիր.* (176) | ըսէ, ըսես. սեպէ, սեպես. |
| | *Գոզէք,* | ըսէք, սեպեցէք։ |
| | . . . | . . . . |
| ԴԵՐԲ. | *Գոզել.* | ըսել, սեպել։ |

## ԱՆԴԻՄ ԲԱՅԵՐ

260. Քանի մը բայ ալ կայ խիստ պակասաւոր, որ միայն մէկ քանի եզակի երրորդ դէմքերնին կըբանի, ան ալ առանց ուղղական անուանի մը որ գործող դէմք մը յայտնէ։ Եւ ասանկ դէմք յայտնող ուղղական անուան մը չունենալնուն՝ անդէմ ըսուած են. և ասոնք են։

261. Մարթի. կարելի է որ. Մարթի այժմ լինել. կարելի է որ դու ըլլաս. Մարթի լինել. կարելի է որ ըլլամ. Մարթի ինձ ասել, գալ. կարելի է որ ըսեմ, գամ. կրնամ ըսել, գալ. Մարթի ասել, գալ. կարելի է ըսել, գալ։

Մարթէր. կարելի էր որ. Մարթէր քեզ ասել, գալ. կարելի էր որ ըսէիր, գայիր։

Մարթիցի. կարելի ըլլայ որ. Մարթիցի նմա ասել, գալ. կարելի ըլլայ որ ըսէ, գայ։

262. Պիտի. պէտք է. Պիտի ասել, գալ. պէտք է ըսել, գալ։

Պիտէր. պէտք էր. Պիտէր ասել, գալ. պէտք էր ըսել, գալ. Առն պիտէր. մարդու պէտք կար։

Պիտեցաւ. պէտք եղաւ. Պիտեցաւ ժամանակի. ատենի պէտք եղաւ, ատեն պէտք եղաւ։

Պիտեսցի } պէտք ըլլայ. { Պիտիցի ասել, գալ. պէտք ըլլայ ըսել, գալ. պէտք ըլլայ որ ըսեմ, ըսես, ըսէ, և այլն։
Պիտիցի }

263. Ցաւէ ինձ, քեզ, նմա. ցաւ կ'ըլլայ ինծի, քեզի, անոր։

Ցաւէր ինձ քեզ, նմա. ցաւ կ'ըլլար ինծի, քեզի, անոր։

Ցաւեաց ինձ, քեզ, նմա. ցաւ եղաւ ինծի, քեզի, անոր։

Ցաւեսցէ կամ ցաւեսցի } ինձ, քեզ, նմա. { ցաւ ըլլայ ինծի, քեզի, անոր։
Ցաւիցէ կամ ցաւիցի }

**264.** Բայց Մարթեմ (189) որ Մարթանամ ալ կ՚ըսուի, կրնամ. Ցաւիմ, կըցաւիմ, ամբողջ ու դիմաւոր են. ու Պիտի երբոր նշանակէ պարտ (257) կամ բան մը պէտք է, դիմաւոր է ու յոգնակի ալ կըլլանի. Այլ ոչ պիտի ծածկել զգլուխ իւր. էրիկ մարդը ծածկելու չէ գլուխը. Պիտի ինչ. պիտէր կեալն. բազմութիւնք պիտին։

**265.** Ուրիշ դիմաւոր և ամբողջ բայերու եզակի երրորդ դէմքն ալ երբեմն անդէմի պէս կըլլանի.

Դիպեսցի մեզ թողուլ զաշխարհ. ըլլայ որ թողունք աշխարհքս։

Ի կշռի ինչ հասանէ մեզ անկանել. կշռէ մը պէտք իյնանք։

Եհաս նմա թագաւորել. եղաւ որ թագաւորեց։

Թէ և մեռանել հասանիցէ. մեռնիլ ալ ըլլայ նէ։

Այսանկ անդէմի պէս կ՚ըսուի, Ասի, լսի, երևի, թուի, կարծի ինձ, թուեցաւ կամ կարծեցաւ ոմանց։

## ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

**266.** Բայեր կան որ կրաւորական խոնարհումին չեզոքի փոխուելով ամենևին ուրիշ բան կընշանակէ. ինչպէս,

Ժառեմ, խնդրել. Ժառիմ, յանդգնիլ, համարձակիլ։

Կրեմ, կրել, տանիլ. Կրիմ, ըլլալ, գտնուիլ։

Պաշտեմ, ծառայել. Պաշտիմ, բանեցնել, բանի գալ ըլլալ։

**267.** Երբոր բան մը ինք իր վրան ընել նշանակուի, ներգործականի տեղ կրաւորական խոնարհում կըլլանի, հասարակ բայի պէս։ Այսանկ կ՚ըսուի Լուացայց զձեռս իմ. ձեռքերս լուամ կամ ձեռուըներս լուացուիմ։ Բաժանեցան զաւար. աւարը մէջերնին բաժնեցին։ Բաժանեցան զհանդերձս իմ յիւրեանս. լաթերս մէջերնին բաժնեցին։

Գտանի ընդ մէջ իւր ածաւ. իր մէջը գօտի կապեց։

Արկայ հանդերձ. լաթ հագայ։ Արկաւ տեռ և զարդարեցաւ. լաթ կամ քօղ հագեց ու զարդարուեցաւ։ Առեալ ձորձ՝ արկաւ զիւրև։

Եդաւ զթագ. հագաւ կամ իր գլուխը դրաւ թագը։

**268.** Երբեմն ուրիշ ներգործական ու ներգործակերպ չեզոք բայերն ալ՝ կրաւորակերպ խոնարհումով կ՚ըսուին, Տեսանեմ, տեսայ. Գտանեմ, գտայ. Հարցանեմ, հարցաւ զնոյն բան. Յարկանեմ, յարկար զվերնայարկս նորա։— Ելանեմ, ելայ. Հասանեմ, հասանիմ, հասայ. Անցանեմ, անցանիմ, անցայ. փոխանակ ըսելու՝ տեսի, գտի, եհարց զնոյն բան, յարկեր զվերնայարկս նորա, տանիքը կամ վերի յարկերը ծեփեցեր. ելի, հասի, անցի։

269. Ամէն բայերու ապառնին ու ստորադասականը մէկմէկու տեղ ալ կըբանին, ու հրամայականի տեղ ալ։ Վրանին Ժ ալ կըդրուի. Մի սիրեսցես, մի սիրեսջիք, մի սիրեսցեն, մի սիրիցես, մի տեսանիցես, մի տեսանիցէք, մի համարիցիք կամ մի համարիջիք։ Երկրորդ կերպ եզակի հրամայականին ալ կըդրուի երբեմն Ժ. Կերիցես և մի յագեսջիր. Մի կեցջիր, զի սուտ խօսեցար. — մի յագեսցիս, մի կեցցես՝ ըսելու տեղը։

270. Ապառնիները տեսար որ երկու կերպ են. ից, այց կամ ցեմ, ցիմ — ից, այց, ցուք, ջիք վերջացածները՝ սովորական են. ցեմ, ցեմք, ցեք, ցիմ, ցիմք, ցիք վերջացածները՝ շատ չեն գործածուիր ամէն բայի անխտիր։ Որոնց մէջ որ բայի արմատի ցոն՝ սէ փոխուած չկայ նէ (169), անոնք աւելի կըգործածուին. ինչպէս, Կեցցեմ, տեսցեմ, հան-ցեմ, Թաքիցեմ, զէնցեմ, տացեմ, երԹիցեմ, գիցեմ, կերիցեմ, յարի-ցեմ, և այլն. Եղիցիմ, ծնցիմ, ուսցիմ, տարցիմ, լուիցիմ, ծանիցիմ, և այլն. որ ամէնն ալ ապառնի են, և ոչ ստորադասական, ինչպէս ցոն սէ փոխուածներն ալ։

271. Ջիր վերջացած երկրորդ կերպ հրամայականն՝ ապառնիի ու ստորադասականի եզակիի պէս ալ կընշանակէ, չէ Թէ միայն ըլլաս, ըլլես, ընտոր տեսար 'ի կարգին, հապա նաև պիտի ըլլաս, պիտի ըլլես. ինչպէս, Եւ ահա յղասջիր և ծնցես որդի. Ու ահա պիտի յղանաս ու պիտի որդի ծնանիս։

Դու մանուկ՝ մարգարէ Բարձրելոյ կոչեսջիր. զի երԹիցես առաջի ե-րեսաց Տեառն. դուն տղայ՝ Աստուծոյ մարգարէ պիտի ըսուիս. վասն զի Տէրոջը դիմացէն պիտի երԹաս։

Այժմ ոչ գիտես, բայց ապա գիտասջիր. հիմա չես գիտեր, բայց ետքը պիտի գիտնաս։

Բայց ալ ուրիշ կերպ ապառնիի կամ ստորադասականի պէս՝ պայ-մանով մը ուրիշ բայէ կախուած չըբանիր. օրինակ իմն՝ չըսուիր եԹէ յղասջիր. եԹէ կամ զի կոչեսջիր. որպէս զի գիտասջիր։

272. Սահմանական ներկայն և անկատարն՝ ապառնիի ու ստորա-դասականի պէս պայմանով ուրիշ բայէ կախուած ալ կըբանին. ինչ-պէս, Եկ առաքեմ զքեզ. եկուր ղրկեմ քեզի. եկ առաքեցից կամ զի առա-քիցեմ՝ ըսելու տեղը։

Աղաչեմ հրամայես բանալ. կ'աղաչեմ որ հրամմես բանալ. աղաչեմ զի հրա-մայեսցես կամ հրամայիցես՝ ըսելու տեղը։

Թող անիծանէ. Թող անիծէ։ Թող գրեմ և ցուցանեմ. Թող գրեմ ու ցուցնեմ։

Զազգատոհմ իմ խնդրես, Թէ վարձուոր՝ որ երԹայ ընդ ուղեւորդ քում։

Լաւ է ձեզ եԹէ ես երԹամ։ Ապա Թէ աղն անհամի, իւ յաղիցի։

Կամիս զի ծածկես։ Զի որ ընԹեռնուցուն, համարձակ ընԹեռնու։—

Երանի Թէ էի կամ լինէր կամ մի լինէր. Երանի Թէ ըլլայի կամ ըլլար կամ չըլլար։

Մարդ չէր՝ որ գործէր զերկիր. մարդ չկար որ երկիրը բանէր։

ԵԹէ էաք, ոչ հաղորդէաք, Թէ որ ըլլայինք նէ, չէինք մասնակից ըլլար։

Արժան էր՝ զի վկայէին. կըվայելէր որ վկայէին։

Որպէս զի արժանի լինէին · որ արժանի ըլլային ։
Թող ինքն նախ երթայր առնոյր · Թող ինք առաջ երթար առնէր ։

273. Այսանկ ալ կ'ըսուի երբեմն · Իմանաս և ապա պատուհասես · Բարկանայք և մի մեղանչէք · փոխանակ ըսելու, Իմացիր կամ իմաջիր · և ապա պատուհասեսցես կամ պատուհասեսջիր · բարկասջիք կամ բարկանայցէք, բարկացարուք կամ բարկացայք և մի մեղանչէք ։ Մի լինիս, չըլլաս · մի լաս, չլաս · մի ըզ ջանայ, մէկը չջանայ · մի պատմես, չպատմես · մի դատիս, չդատես · մի առնես, չընես · մի անցանէ, չանցնի · մի վաճառեմք, չծախենք · մի զայրացուցանեն, չբարկացընեն ։

274. Սորադասականն և ապառնին՝ երբեմն սահմանականի ներկայի տեղ ալ կըբանին · ինչպէս,
Գիտեմ թէ այդ այդպէս իցէ · գիտեմ որ ատ ատանկ է ։
Եթէ հարցից ինչ զձեզ, չտայք ինձ պատասխանի կամ արձակիցէք ·
Թէ որ ձեզի բան մը հարցընեմ, ինծի պատասխան չէք տար կամ չէք արձըկեր ։
Գիտիցես արդեօք զոր ընթեռնուցուդ · գիտե՞ս ինչ որ կը կարդաս կոր նէ ։
— Ո՞ւր իցեն որ գեհենին չհաւատասցեն · ո՞ւր են անոնք որ դժոխքին չեն հաւտար ։
Ո՞յր վնաս է, սորա՞ թէ հօր և մօր իւրոյ՝ զի կոյր ծնցի · ո՞ւմ է յանցանքը, ասո՞ր՝ չէ նէ հօրը մօրը, որ կոյր ծներ է ։

275. Երբեմն ալ սահմանականի անկատարի պէս՝ սորադասական անկատարի տեղ կըբանին · ինչպէս, Փութայր, եթէ հնար ինչ իցէ նմա · կ'աճապարէր թէ որ կարենալ ըլլար նէ · փոխանակ ըսելու՝ եթէ հնար ինչ էր ։
Որոյ չգոյր տեղի ուր զգլուխն դնիցէ · որ տեղ մը չունէր որ գլուխը վար դնէր ։
Եթէ տրամէր, թագաւորդ ողջքեր, մինչև սթափեցուցէ զնա · Թէ որ դրամէր նէ, ատ թագաւորը զինքը կ'առնէր՝ ինչուան որ ուշաբերէր ։

276. Նախնիք երբեմն երկրորդ լծորդութեան առաջին օրինակի բայերն՝ երկրորդ օրինակին պէս ալ կըխոնարհեն, երկրորդինն ալ՝ առաջինին պէս · զոր օրինակ կ'ըսեն կատարեալը՝ Բժշկեր, քեցին, ձուլար, դիպաւ, կառուաւ, հերքեաւ, պարտեաւ · փոխանակ ըսելու բժշկեցեր, քեցեցին, ձուլեցար, դիպեցաւ, կառուեցաւ, հերքեցաւ, պարտեցաւ ։ Կ'ըսեն հրամայական՝ Խնդրէք, լուէք, ասէք · փոխանակ ըսելու՝ խնդրեցէք, լուեցէք կամ լուարուք, ասացէք ։ — Կ'ըսեն՝ Հանեցի, հանեաց, տարածանեցեր, անիծանեսցես, տեսանեսջիք, տեսիցեմ, տեսիցես, սփածիցիմ, նստեցայ, նստեցան, սպանիցէք · լուծանեալ, տեսեցեալ, սպանանեալ, փոխանակ ըսելու՝ հանի, հան կամ եհան, տարածեր, անիծցես, տեսջիք, տեսանիցեմ, տեսանիցես, սփածանիցիմ, նստայ, նստան, սպանէք · լուծեալ, տեսեալ, սպանեալ ։ Այսանկ ալ՝ Մարթայցեմ, մարթայցես, մարթայցէ, մարթայցեմք, մարթայցէք, մարթայցեն · փոխանակ ըսելու՝ մարթանայցեմ, մարթանայցես, նայցէ, նայցեմք, նայցէք, նայցեն · կրնամ ։

Ուրիշ կերպ կերպ անսովոր բաներ ալ կ'ըննեն, որ ընդարձակ քերականութենէ կամ բառգրքէ սորվելու է ։

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ԴԵՐԲԱՅ

277. Աս բառերս, ինչպէս ըսինք (162), դերբայ կ՚ըսուին իրաւամբք, վասն զի շատ անգամ բայի տեղ կըբանին, ինչպէս որ անուան տեղ դրուած բառերն ալ դերանուն կ՚ըսուին։

278. Անորոշ դերբայն շատ անգամ, մանաւանդ ինչպէս որ է, ուրիշ բայի քով կըդրուի՝ ապառնիի կամ ստորադասականի տեղ. ինչպէս,

Ինձ տացէ Աստուած ասել. Աստուած տայ ինծի որ ըսեմ։

Պատուիրեցի քեզ չուտել. պատուիրեցի քեզի որ չուտես։

Հրամայեաց առ բարեկամս երթալ և դարման գտանել. հրամմեց որ բարեկամներուն երթայ ու դարման գտնէ. կամ երթան ու դարման գտնեն, թէ որ շատի վրայ ըլլայ։

Ակնարկէին ընկերացն՝ գալ օգնել նոցա. նշան կ՚ընէին իրենց ընկերներուն՝ որ գան օգնեն իրենց։

Արբեցուցես զնոսա՝ քահանայանալ նոցա ինձ. կամ զի քահանայասցին ինձ.

Ո՞չ ապաքէն զի քննեսցեն զքաղաքս և դիտել զերկիրս եկին. — այս ինքն՝ և զի դիտեսցեն։

Մի ոք որ չար իցէ, յուսասցի անպարտ լինել. մէկն որ չար է՝ չյուսայ որ անպարտ ըլլայ կամ որ անպարտ պիտի ըլլայ. փոխանակ ըսելու՝ Մի յուսասցի թէ անպարտ լինիցի։

279. Շատ հեղ ալ՝ սահմանական եղանակին մէկալ ժամանակներուն տեղը կըդրուի. ինչպէս,

Զհայկակ ասեն լինել առ Բել՚ոքոսիւ. Հայկակը կ՚ըսեն թէ Բէլ՚ոքոսին ատեն էր։

Ասէին որոտումն լինել. կ՚ըսէին թէ որոտում է կամ որոտում կ՚ըլլայ նոր կամ որոտում եղաւ։

Պատասխանի ետուն չգիտել. պատասխան տալին մէ չի-տէնք կամ մէ չիտէն։

Կարծելին կարել կարկատել. կըկարծէէն մէ կընան կար-կըտէլ. կամ մէ ղէր կարընան կարկըտէլ (278)։

280. Շատ անգամ ալ գոյական անուան պէս կը-բանի, բայանուն կ'ըսուի ու կըհոլովի եզակի ըստ 31, ա-ծական ալ կ'առնէ. Լինել, լինելոյ, լինելով, 'ի լինելոյ, զլինել, 'ի լինել, առ 'ի լինել, 'ի լինելն, ընդ լինելն. Գալ, գալոյ, գալով, 'ի գալոյ զգալն, 'ի գալ. Սիրել կամ Սի-րել, սիրելոյ, սիրելով, 'ի սիրելոյ, զսիրել, 'ի սիրել, առ 'ի սիրել, 'ի սիրելն, ընդ սիրելն. Տեսանել, տեսանե-լոյ, տեսանելով, 'ի տեսանելոյ, զտեսանելն, 'ի տեսա-նելն. Առնուլ, առնլոյ, զառնուլ, յառնուլն, և այլն։ Եւ ասանկ հոլոված ալ բայի տեղ կըբանի երբեմն։

Ածականով ալ կ'ըսուի, Մեծաւ գոչելով, մեծաւ պատուիրելով, 'ի մեծ խրոխտալոյն, 'ի խօսել իմում, 'ի չուել քում, յաղաչել քում, յառնելն իւրում։

281. Ի, առ, առ 'ի նախդրիւ տրականը շատ տեղ կըբանի՝ ըլ օրլէս ըլ, ըսելու տեղը ապառնիով կամ ստորադասականով, ու համար կընշանակէ. ինչպէս, Ի լսել կամ առ 'ի լսել եկեալ եմ. եկեր եմ լսելու, որ լսեմ։ Ոչ առ ատել. չէ ատելու համար, որ ատեմ, կամ ատէս, կամ ատէ, և այլն։

Մտանեմք անդր առ 'ի խուզելոյ զմեզ. հոն կըմտնենք կոր որ վրանիս փնտռեն կամ փնտռելու համար (148)։

282. Նոյն մտքով ուղղական ալ կըսուի շատ տեղ. Կոչեաց հարցանել. կանչեց հարցընելու համար կամ որ հարցընէ։

Եկիր կորուսանել. եկար կորսընցընելու համար, որ կորսընցընես։

Եդ զնոսա՝ լուսատու լինել յերկիր. դրաւ անոնք լոյս տալու համար, որ լոյս տան երկրէ։

Ցարեաւ Եսթեր երթալ 'ի սենեակն արքայի. ելաւ Եսթեր երթալու, որ երթայ արքային սենեակը։

Նոյն էր թէ ըսէիր, առ՚ի հարցանել, առ՚ի կորուսա-նել, առ՚ի լուսատու լինել:

283. Ի, ընդ նախդրիւ տրականն ու գործիականը շատ տեղ կըբանի՝ յորժամ, երբ, որովհետեւ, վասն զի, թէ-պէտ և ըսելու տեղը դիմաւոր բայով. ինչպէս,

Ի տեսանելն զքեզ՝ ըերկրեսցի. երբոր տեսնէ քեզ, պիտի ուրախանայ:

Ցերթալդ քո և ՚ի դառնալդ. երբոր երթաս ու դառնաս կամ երթալուդ ու դառնալուդ:

Ի խօսել իմում, յառնելն իւրում. երբոր խօսիմ կամ կը-խօսէի, երբոր ելնէ կամ կ՚ելնէր:

Ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա. երբոր կ՚երթար նէ կամ երթալնին ժողովուրդները նեղութիւն կու-տային անոր:

Ի դառնալ մեղաւորին՝ կեցցէ. թէ որ դառնայ նէ մեղա-ւորը՝ ապրի:

Ի Պաւղոսի բողոքելն՝ հրամայեցի պահել զնա. որով-հետեւ բողոքեց Պօղոս՝ հրամայեցի որ պահեն զինքը:

Ասելով նոցա զայս. երբոր աս բանս ըսին նէ անոնք.

Ոչ զմեծատունն պատուէ՝ անպատիւ գոլով. ոչ մեծա-տունը կըպատուէ՝ երբոր կամ թէ որ անպատիւ է նէ:

Բարեգործ ծնողաց գոլով որդիք՝ բարի գործոցն նոցա պարտիք նմանել. որովհետեւ կամ վասն զի բարեգործ ծնո-ղաց զաւակ էք՝ պէտք է որ անոնց բարի գործքերուն նմանիք:

Անկարօտք գոլով ըստ բնական պիտոյից, սակայն ան-յագ են. թէպէտ անկարօտ են բնութեան պէտքին դէմ, բայց անյագ են:

284. Անցեալ դերբայն շատ հեղ ուրիշ բայի մը հետ կըբանի՝ առաջ կամ ետև, և անորիշ դերբայի գոր-ծիականի պէս կ՚առնուի կամ քովի բային պէս. ինչպէս,

Եկեալ գնաց. մտեալ բազմեցաւ. հայեցեալ ընդ իս զարմանայք. ըսել է՝ եկեր ու գնաց, մտներ ու նստաւ, ինծի

նայելով հեշտարմանաւ, կամ ելաւ գնաց, մտաւ, նստաւ, ինծի հաճոյք հեշտարմանաւ։

Կալեալ կորուսանել. բռնելով կորսնցնել կամ բռնել կորսնցնել։

Մտցէ դիմեալ. վազելով մտնէ։

Փախեան զարհուրեալք. վախնալով փախան։

285. Շատ տեղ ալ՝ թէ ըն շաղկապով դիմաւոր բայի տեղ կը դրուի. ինչպէս,

Հաւատարմանայ ասացեալն յոմանց, ապաշխարեալ Սողոմոնի զյանցումնն. այս ինքն՝ թէ ապաշխարեալ է կամ ապաշխարեաց կըստուգուի ոմանց ըսածը, թէ Սողոմոն մեղքն ապաշխարեր է կամ ապաշխարեց։

Տեսի՝ անզգամաց արմատս ձգեալ. այս ինքն՝ զի ձգեալ են կամ էին. տեսայ որ անզգամներուն արմատ ձգեր են կամ ձգեր էին։

Ոչ ուրեք գտանեմք ասացեալ նորա 'ի նորումն. այս ինքն թէ ասացեալ է կամ իցէ. չենք գտներ թէ ըսած է կամ ըսած ըլլայ։

Գիտացեալ զկուրոյ այրուձիոյն՝ զերծեալք անվնաս, և թէ չիք ինչ կասկած այնուհետև. այս ինքն՝ թէ կամ զի զերծեալք են և թէ չիք կասկած. գիտնալով որ իր ձիաւոր զօրքը անվնաս ազատեր են, և այլն։

286. Շատ հեղ ալ իբրև յորժամ մակբայներն ու եթէ, որովհետև, թէպէտ և շաղկապներուն ու դիմաւոր բայի տեղ կը բռնէ. ինչպէս,

Եւ հրամայեալ Փեստոսի՝ ածին զՊաւղոս. այս ինքն իբրև հրամայեաց, յետ հրամայելոյն. ու երբոր հրամեց Փեստոս՝ բերին Պօղոսը։

Սպանին զՅովաս յԵրուսաղէմ, թագաւորեալ ամս քառասուն. այս ինքն՝ իբրև թագաւորեաց, յետ թագաւորելոյն. սպաննեցին Յովասը Երուսաղէմ, երբոր քառասուն տարի թագաւորեց, քառասուն տարի թագաւորելէն ետքը։

Հիւանդացեալ, և մի ակն կալցի ողջանալոյ. այս ինքն՝ յորժամ կամ եթէ հիւանդասցի. հիւանդնայ նէ, յոյս չունենայ առողջնալու։

Մի վհատիցիս՝ յանդիմանեալ ՚ի նմանէ. այս ինքն՝ յորժամ նա եթէ յանդիմանիցիս. սիրտդ չկոտրի՝ անկէց յանդիմանուիս նէ։

Ցորոց պահեալ զանձինս՝ բարւոք գործիցէք. այս ինքն՝ եթէ պահիցէք. որոնցմէ զգուշանաք նէ՝ աղէկ կընէք։ —

Եւ դորա ինքնին բողոք կալեալ առ քաջ արանցն, խորհեցայ յղել. այս ինքն՝ որովհետև բողոք կալաւ դա. և որովհետև ինքը կայսեր բողոքեց, միտքս դրի որ խաւրեմ։

Կարօտին Թագաւորին, այլ ումեք ՚ի ծառայիցն ոչ կարացեալ. այս ինքն՝ որովհետև այլոք ոչ կարաց. Թագաւորին կըկարօտին, որովհետև ծառաներէն ուրիշ մէկը չկըցաւ։

Բազմաց զգործ բաժանեալ, բայց սկիզբն և կատարածն շինուածոյն ՚ի բուն Ճարտարապետ անդր հայի. այս ինքն Թէպէտ և բազմաց բաժանեալ է. Թէպէտ գործքը շատի վրայ բաժնուած է, բայց շէնքին սկիզբն ու լմնալը բուն Ճարտարապետին կընայի։

Որ մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող. այս ինքն՝ Թէպէտ և մահկանացու ծնեալ էր. որ Թէպէտ մահկանացու ծներ էր, իր յիշատակը անմահ թողուց։

287. Անցեալ դերբայն շատ տեղ լինիմ, եմ հական բայերով մէկտեղ կըբանի, և ինչ տեսակ բայի դերբայ է նէ, անոր նշանակութիւնը կըպահէ։ Եւ որովհետև ներգործական ու կրաւորական բային անցեալ դերբայն մէկ է, անոր հականով շինուածն ալ հասարակ բայ կ'ըլլայ, այս ինքն ներգործական ու կրաւորական. բայց աւելի կրաւորական կըբանի, (165, 187)։ Համառօտ օրինակ մը դնենք.

288. Սիրեալ լինիմ. կըսիրեմ, կըսիրուիմ. սիրած կ'ըլլամ, սիրուած կ'ըլլամ.

Սիրեալ լինիմք. կըսիրենք, կըսիրուինք. սիրած կ'ըլլանք, սիրուած կ'ըլլանք։

Սիրեալ լինել. կըսիրէի, կըսիրուէի. սիրած կ'ըլլայի, սիրուած կ'ըլլայի.

Սիրեալ լինեաք· նըււէրէէնք, նըււէրււ-էէնք· ււէրււծ ն'ըււււ-յէնք, ււէրււ-ււծ ն'ըււււյէնք։

Սիրեալ եղէ· ււէրէյէ, ււէրււ-էյայ· ււէրււծ էղայ, ււէրււ-ււծ էղայ·

Սիրեալ եղաք· ււէրէյէնք, ււէրււ-էյանք· ււէրււծ էղանք, ււէրււ-ււծ էղանք։

Սիրեալ եմ· ււէրէր էմ, ււէրււ-էր էմ· ււէրււծ էմ, ււէրււ-ււծ էմ·

Սիրեալ եմք· ււէրէր էնք, ււէրււ-էր էնք· ււէրււծ էնք, ււէրււ-ււծ էնք։

Սիրեալ էի· ււէրէր էէ, ււէրււ-էր էէ· ււէրււծ էէ ււէրււ-ււծ էէ·

Սիրեալ էաք· ււէրէր էէնք, ււէրււ-էր էէնք· ււէրււծ էէնք, ււէրււ-ււծ էէնք։

Սիրեալ լիցիմ, եղէց· ււէրէմ, պէտէ ււէրէմ· ււէրււ-էմ, պէտէ ււէրււ-էմ· ււէրււծ ըլլամ, ււէրււ-ււծ ըլլամ։

Սիրեալ լիցուք, եղիցուք· ււէրէնք, պէտէ ււէրէնք· ււէրււ-էնք, պէտէ ււէրււ-էնք· ււէրււծ ըլլանք, ււէրււ-ււծ ըլլանք։

Սիրեալ լէր· ււէրէ, ււէրււ-է· ււէրււծ էղիր, ււէրււ-ււծ էղիր·

Սիրեալ լերուք, եղերուք· ււէրէյէք, ււէրււ-էյէք· ււէրււծ էղէք, ււէրււ-ււծ էղէք։

Սիրեալ լինիցիմ· ււէրէմ, պէտէ ււէրէմ· ււէրււ-էմ, պէտէ ււէրււ-էմ· ււէրււծ ըլլամ, ււէրււ-ււծ ըլլամ· և այլն։

Սիրեալ լինիցիմք· ււէրէնք, պէտէ ււէրէնք· ււէրււ-էնք, պէտէ ււէրււ-էնք· ււէրււծ ըլլանք, ււէրււ-ււծ ըլլանք· և այլն։

Սիրեալ իցեմ· ււէրււծ ըլլամ, պէտէ ււէրււծ ըլլամ· ււէրււ-ււծ ըլլամ։

Սիրեալ իցեմք· ււէրււծ ըլլանք, պէտէ ււէրււծ ըլլանք· ււէրււ-ււծ ըլլանք, պէտէ ււէրււ-ււծ ըլլանք։

Սիրեալ լինել, գոլ· ււէրէլ, ււէրււ-էլ· ււէրււծ ըլլալ, ււէրււ-ււծ ըլլալ։

Սիրեալ լեալ, եղեալ· ււէրււծ, ււէրււ-ււծ· ււէրււծ կամ ււէրււ-ււծ էղած, ըլլալըն։

Սիրեալ լինելոց. սիրելու, սիրուելու. սիրած կամ սիրուած ըլլալու։

289. Էական բայն ալ՝ կ'ըլլայ առանց՝ ինք իր դերբայովը. Լինեալ կամ եղեալ լինիմ, լինէի, եղէ. լինեալ կամ եղեալ եմ, էի. լինեալ կամ եղեալ լիցիմ, եղէց, լինիցիմ, իցեմ. լինեալ կամ եղեալ լինել, գոլ, լինելոց։

290. Էական բայը շատ անգամ առաջ ալ կը դրուի. Լինիմ սիրեալ, եմ սիրեալ։ Ու դերբայն յոգնակի ալ կ'ըլլայ, մանաւանդ կրաւորականն ու չէզոքը. Տնկեալք եղիցին. Հասեալք լինէին։

291. Անցեալ դերբայն շատ տեղ ալ ածական անուան պէս կը բանի. ու Եալ կամ լեալ դերբայէն՝ ի զատ՝ մէկալ ամէնն ալ կը հոլովին եզակի ու յոգնակի (ըստ 31).

Եալ, ելոյ. եալք, ելոց։

Եղեալ, եղելոյ կամ եղելում. եղելով, յեղելոյ, զեղեալ. եղեալք, եղելոց, եղելովք. յեղելոց, զեղեալս։

Գնացեալ գնացելոյ գնացելում. գնացեալք, գնացելոց։

Սիրեալ, սիրելոյ, սիրելով կամ Սիրեցեալ, սիրեցելոյ, սիրեցելում, սիրեցելով, 'ի սիրեցելոյ, զսիրեցեալ. սիրեցեալք սիրեցելոց, սիրեցելովք, 'ի սիրեցելոց, զսիրեցեալս։

Տեսեալ, տեսելոյ, տեսելում. տեսեալք, տեսելոց.

Ձենեալ, զենելոյ, զենելում. զենեալք. զենելոց։—

Իսկ Լեալ՝ նախդրիւ հոլովները միայն ունի. լեալք, լեալս, զլեալս.

292. Այսանկ ածական դերբայն՝ շատ տեղ ալ ող կամ օղ վերջացած բայածականի պէս եղօղ, ընող կը նշանակէ, ու սովորաբար անոր տեղը կը բանի. ինչպէս,

Զար խորհուրդ՝ խորհեցելումն կամ խորհելոյն յոյժ չար է. փոխանակ ըսելու՝ խորհողին. չար խորհուրդը՝ մտածողին շատ գէշ է։

Առնն բարբառելոյ. փոխանակ՝ բարբառողի. խօսող մարդուն։

Ժամ երթելոյն 'ի պատերազմ. փոխանակ՝ երթողին. պատերազմ գացողին ժամը:

Աստուածք նմանեալք մարդկան. մարդու նմանող աստուածներ:

Ոչ խոստովանեալք այլ հայհոյիչք. ոչ թէ խոստովանողներ, հապա հայհոյիչներ:

Բերանց խոստովանելոց. փոխանակ՝ խոստովանողաց. խոստովանող բերաններուն:

Գազանաց գոչելոց. փոխանակ՝ գոչողաց. գոռացող գազաններուն:

Կանանց՝ զաստուածպաշտութիւն յանձն առելոց. փոխանակ՝ առողաց. աստուածպաշտութիւնը յանձն առնող կիներուն:

293. Ապառնի դերբայն սովորաբար էական եմ բային հետ կրքանի՝ ասանկ, համառօտ օրինակով.

| | |
|---|---|
| Սիրելոց եմ. | պիտի սիրեմ. պիտի սիրուիմ. |
| Սիրելոց եմք. | պիտի սիրենք. պիտի սիրուինք: |
| Սիրելոց էի. | պիտի սիրէի. պիտի սիրուէի. |
| Սիրելոց էաք. | պիտի սիրէինք. պիտի սիրուէինք: |
| Սիրելոց իցեմ. | պիտի սիրեմ. պիտի սիրուիմ. |
| Սիրելոց իցեմք. | պիտի սիրենք. պիտի սիրուինք: |

294. Ասոր ալ էական բայն առաջ ալ կդրուի. Եմ սիրելոց, էաք սիրելոց:

295. Ապառնի դերբայն ածական անուան պէս ալ կրքանի, բայց վերջահոլով չունի, հապա միայն նախդրիւ հոլով, ան ալ քանի մը բայինը միայն կ'երևնայ. Գալոց և լինելոց չարեացն. գալու կամ ըլլալու չարիքներուն:

Զլինելոց իրսն. ըլլալու բաները:

Զգալոցն և զգալոցսն պատմել. գալիքը կամ գալիքները պատմել:

Եղեալքն և լինելոցք, զլինելոցսն, — ընդ լինելոցսն. եղածները ու ըլլալիքները, — ըլլալիքներուն հետ:

296. Վերջահոլով պէտք ըլլայ նէ, Ի վերջացած բայածականը կըբանի, որ ըլլալու, ըլլալուելու կընշանակէ, և կըհոլովի ըստ 43. Լինելի, լինելւոյ կամ լինելոյ (45), լինելեաւ կամ լինելւով. լինելիք, լինելեաց կամ լինելւոց, լինելոց, լինելեօք կամ լինելւովք. ըլլալու:
Սիրելի, սիրելւոյ կամ սիրելոյ, սիրելեաւ կամ սիրելւով. սիրելիք, սիրելեաց կամ սիրելւոց, սիրելոց, սիրելեօք կամ սիրելւովք. սիրուելու և այլն:

297. Առանց ուրիշ հոլովի նէ (45), անորոշ և ապառնի դերբային կըմնանի. բայց պէտք չէ շփոթել. զոր օրինակ,
Մինչև բարձցին առակք լինելոցն. ըսել է՝ լինելւոյն, լինելեացն:
Իմով արեամբ վասն ձեր հեղլոյ կամ հեղլով. ըսել է՝ հեղլւոյ կամ հեղլւով, հեղլեաւ, այս ինքն թափուելու, ու նետին թափին:

298. Թէ որ է բային հետ դրուի, ներգործականի կամ չէզոքի պէս ընելու ալ կընշանակէ.
Իմանալի է. պահանջելի է, ըսել է՝ իմանալու է, պէտք է իմանալ, պահանջելու է, պէտք է պահանջել:
Գտանալի է, հրաժարելի է, ըսել է՝ գտնալու է, պէտք է գտնալ, հրաժարելու է, պէտք է հրաժարիլ:

299. Ասիկ Ի բայածականը շատ անգամ ող բայածականի տեղ ալ կըբանի, ու երբեմն ալ անցեալ դերբայի տեղ. Լինելի, ըսել է՝ եղող ու եղած. Սիրելի, սիրող ու սիրուած. Լսելի, լսող ու լսուած, Գալի, եկող ու եկած. Տալի, տուող ու տրուած. Խնդրելի, հայցելի, խնդրող ու խնդրուած:

Ասանկ կ'ըսուի, Առնելի գործոյն գործին ընող. Առնելիք բանին, խօսքին ընողներ. Լսելիք օրինացն, օրէնքը լսողները: Այս մաքով եզակին տեղ յոգնակի ալ ըսուած կայ հին նախնեաց մէջ: --

Զայն փողոյ լսելի եղիցի, այս ինքն՝ լսուեալ եղիցի:
Տալ զխնդրելին. Առնել զհայցելին. այս ինքն՝ զխնդրեալն, զհայցեալն:
Վաղամեռիկ լինելոյ որդւոյ խորոյ արար պատկեր. այս ինքն, վաղամեռիկ լինելւոյ, եղելոյ:
Արեամբն հեղլով. Յարենէն հեղլոյ, այս ինքն՝ հեղլւով, հեղելով, հեղլոյ, հեղելոյ:
Ի սկզբանցն լինելոյն հաստատեաց. այս ինքն՝ լինելւոյն, եղելոյն.
Իշխանութիւն ոչ ունէր իւր առնելոյն. այս ինքն՝ առնելւոյն, արարելոյն:

300. Ող կամ օղ վերջացած բայածականին վրայ մասնաւոր դիտելիք մը չկայ: Սովորաբար անցեալ կատարեալէն կըշինուի ամէն տեսակ բայի բաց 'ի կրաւորականէն, Ամացող, ձանող. գնացող, գացող, լուացող, իմացող, երբեմն լուանող, իմանող. հոգացող կամ հոգող, յուսացող կամ յուսող, պարծեցող կամ պարծենող: Սիրեցող կամ սիրող, սիրող. ասացող կամ ասող, ըսող. կարող կամ կարացող, կրցող: Տեսող կամ տեսանող, տեսնող. տարող կամ տանող, փախչող: Զենող, մորթող. առող, առնող. յեցող, կամ յենող, կռթընող: Տուող, եկող, եր-

թող, արարող կամ առնող, եդող կամ դնող, կերող, ունող: — Նականներէն ալ կայ միայն Լինող, գոյող, եղող: Ամէնն ալ ընող, ըլլող կընշանակեն:

301. Շատ տեղ ալ՝ չէ թէ հիմայ ընող կընշանակեն, հապա բնութեամբ անանկ եղողը. ինչպէս, Այր կերող և արբեցող: Ես չեմ խօսող ոք. Ամենայն որ կարող էր զօրութեամբ.

302. Զեղջք բայերուն երբեմն անցեալ դերբայն ու չի բայածականին պէս ալ կընշանակէ. Պատսպարիմ, պատսպարող. ապաւինած կամ ապաւինող: Վարժիմ, վարժող. վարժած կամ վարժուող: — Կարեմ, կարող. կարեր, կրցուեր. Հաւանիմ, հաւանող. հաւաներ, հաւանուեր:

303. Ողին տեղ իչ ալ կըվերջանայ, և նոյն է անոր հետ. Բացող, բացիչ. սիրող, սիրիչ. փրկող, փրկիչ. բնակող, բնակիչ. արարող, արարիչ, ըսեր ես, ամէնը մէկ է: Բայց ողը ամէն բայի և ամէն չեզոքի ալ կըփակչի. իսկ իչը աւելի ներգործականներու, և քիչ չեզոքներու:

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

## ՄԱԿԲԱՅ

304. Մակբայն բառ մըն է որ բային վրայ պէտք ե-ղած միտք մը կ՚աւելցընէ, իմացընելով ընելուն կամ ըլ-լալուն տեղն, ատենը, կերպը, և այլ։ Ածականի և ու-րիշ մակբայի վրայ ալ կ՚ըսուի։ Առջևինդ քանի մը օրի-նակով կըտեսնես՝ ինչ ըլլալը հասկընալու համ։

| | |
|---|---|
| 305. Աստ է. Անդ է. | Հոս է. Հոն է։ |
| Եկ այսր. Նստարուք այդր. | Հոս եկուր. Նստէք հոդ։ |
| Անդր մուծին. | Հոն խոթեցին։ |
| Երթիցուք աստի. Ել այտի. | Երթանք ասկից. Ելիր ատկից։ |
| Ելեալ անտի գնաց. | Անկից ելաւ գնաց։ |
| Ո՞ւր էիր, Ուր էրն, | Ո՞ւր էիր. Ուր որ էր նէ։ |
| Ուստի՞ գաս. | Ուսկի՞ց կուգաս։ |
| Իբրև լուան. Մինչ կենդանին էր. | Երբոր լսեցին. Երբոր ողջ էր նէ։ |
| Մինչդեռ խօսէր. | Երբոր դեռ կըխօսէր կոր։ |
| Մինչև կերայց. Մինչև եկին. | Ինչուկ որ ուտեմ. Ինչուկ որ եկան։ |
| Այժմ ասացի. Ե՞րբ եկիր. | Հիմայ ըսի. Ե՞րբ եկար։ |
| Մերթ երևի, մերթ ծածկի. | Մէյմը կ՚երևնայ, մէյմը կըգոցուի։ |
| Միշտ, հանապազ ուսանիմ. | Միշտ, ամէն իժիր կըսորվիմ։ |
| Արդ նա վախճանեցաւ, | Հիմաճուկ մեռաւ։ |
| Ապա ասէ. Ապա գիտասջիր. | Ետքը կ՚ըսէ. Ետքը պիտի գիտնաս։ |
| Ոչ կամիմ. չգիտեմ. չերկնչիմ. | Չեմ ուզեր. չեմ գիտեր. չեմ վախ-նար։ |
| Ոչ ուրեք, ոչ ուստեք, ոչ երբեք. | Հիչ մէկ տեղ, հիչ մէկ տեղէ, հիչ մէկ ատեն։ |
| Չև է հասեալ. | Դեռ հասած չէ։ |
| Ոչ ևս այլ շատ խօսեցայց։ | Ալ շատ պիտի չխօսիմ։ |
| Չև ևս էր եկեալ. | Դեռ չէր եկած։ |
| Չև ևս գիտաց որպէս արժան է. | Դեռ չգիտցաւ ինչպէս որ պէտք է։ |
| Մինչ չև լեալ էին. | Քանի որ դեռ եղած չէին։ |
| Մի՛ սիրէք. Մի՛ երթայցէք. | Մի սիրէք. Չերթաք։ |
| Ահա եղև. Այո տեսի. | Ահա եղաւ. Հա, հրամմերես տեսայ։ |
| Զիա՞րդ գիտէ. | Ի՞նչպէս գիտէ։ |
| Այսպէս ասէ. Այնպէս արարէք. | Ասանկ կ՚ըսէ. Անանկ ըրէք։ |

| | |
|---|---|
| *Եւս մեծ · Յոյժ իմաստուն ·* | *Աւելի մեծ · Խիստ իմաստուն :* |
| *Կարի բարւոք · Կարի յոյժ ·* | *Խիստ աղէկ, խիստ շատ :* |
| *Ամենեւին անշարժ ·* | *Ամենեւին չշարժող:* |
| *Ոչ բազում, – ոչ սակաւ ·* | *Քիչ, – շատ :* |
| *Գրեթէ հանապազ ·* | *Գրեթէ միշտ, (սանքի դայմա) :* |
| *Ապաքէն լուեն · Ապաքէն տեսցէք ·* | *Ի հարկէ կըլսեն · Ի հարկէ որ պի-տի ընէք :* |
| *Թերեւս արասցէ ·* | *Ըլլայ որ, կարելի է որ (դէօյէ) ընէ :* |
| *Գուցէ գայցեն · գուցէ ոչ իցէ բա-ւական ·* | *Ըլլայ թէ գան · չըլլայ թէ չօգտէ :* |
| *Գուցէ կարծէր · գուցէ զգաստասցի ·* | *Կարելի է որ (դէօյէ) կարծէր · կա-րելի է որ խելքը գլուխը գայ :* |
| *Մորմոքէին մանաւանդ 'ի վերայ բա-նին ·* | *Աւելի ան խօսքին վրայ կըցաւէին :* |
| *Յայտնապէս խօսել ·* | *Բաց խօսիլ:* |
| *Իշխանաբար դատել ·* | *Իշխանի պէս դատել:* |
| *Վայրապար կեալ ·* | *Փուճ տեղը ապրիլ:* |

306 · *Ածականներն ալ շատ անգամ եզակի, կամ յոգնակի սեռով, երբեմն ալ շատուորի վրայ՝ քեռվ, մակբայի տեղ կ'երթան, ու կերպ մը կըլսայանեն · ինչպէս,*

| | |
|---|---|
| *Նոր գալ,* | նոր գալ· |
| *Ուղիղ գնալ,* | շիտակ երթալ· |
| *Բարւոք ընթանալ,* | աղէկ երթալ· |
| *Սակաւ կամ շատ սիրել,* | քիչ կամ շատ սիրել· |
| *Արդար խօսել,* | շիտակ խօսել· |
| *Բազում ծառայել,* | շատ ծառայել· |
| *Մեծաձայն կարդալ,* | բարձր ձայնովկանչել· |
| *Մանր մանր կտորել,* | մանտրտիկ կտրել· |
| *Մերկ գալ, մերկանդամ դառնալ,* | մերկ գալ, մերկ դառնալ· |
| *Ողջանդամ ապրել,* | ողջ ապրիլ· |
| *Մազապուրծ չհաւատալի զերծանել,* | մազէ ազատիլ չհաւատալու կերպով· |
| *Գեղեցիկ իմն պատմել,* | աղուոր մը պատմել· |
| *Երագս ընթանալ,* | շուտ վազել· |
| *Թեթեւս դառնալ,* | թեթեւ դառնալ· |
| *Ճշմարտագոյնս գիտել,* | ստոյգ մը գիտնալ· |
| *Ծանուցս լսել,* | ծանր կամ ծանր կերպովլսել· |
| *Մեծամեծս վազել, փքալ, կոտորել,* | մեծ մեծ վազել, խորոխտալ, ջարդելը· |
| *Նորք և առժամայնք եկեալ,* | նոր և ան ատեն եկած · |
| *Բազումք՝ փախստեայք ապրեցան,* | շատը՝ փախչելով ազատեցան : |
| *Արջք օրհասականք հզօրագոյնք կռուին,* | մահուան դուռը հասած արջերը խիստ ուժովկըկռուին : |

307. Շատ տեղ ալ անուններուն հոլովները մակբայի մտքով կը բանին.

| | |
|---|---|
| Առաւօտու, առաւօտուց, | սապահըն, սապահտան. |
| Գիշերի, գիշերանց, գիշերաւ. | Գէճէլէր· Գէճէլէրտէն, Գէճէլէյին. |
| Կանխաւ, | սապաջըղ, չապուքլը. |
| Փութով, ստիպով, | չապուգ, աճէլէօք. |
| Ի պարզոյ, | Էրքէնտէ բօշ եէրէն. |
| Ի կարճոյ, | Կըսա կէսերէք. |
| Ջառաջինն, | ապաշ, ապաշը բէրկինը. |
| Ջնոյն, | նայնարէս. |
| Ցորժամ, յայնժամ, | Էրբօր, օն զէմէնը. |
| Ի զուր, 'ի նանիր, | բոշ եէրը. |
| Ընդ հուպ, ընդ փոյթ, | Յօք վակիթլէրտէ, չապուք։ |

# ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

## ՇԱՂԿԱՊ

**308.** Շաղկապը բառ մըն է, որ բառ բառի ու խօսք խօսքի հետ կը կապէ։ Մէկ քանի օրինակով հերիք կը հասկընաս։

| | |
|---|---|
| 309. Ես եւ դու եւ ամենայն բազմութիւնդ. | Ես ու դուն ու բոլոր ատ բազմութիւնը։ |
| Քարոզեցէք եւ ասացէք. | Քարոզեցէք և ըսէք։ |
| Ես եւս. Ես իսկ. Այլ եւս ոչխարք. | Ես ալ. — Ուրիշ ոչխարներ ալ։ |
| Ցուրտ կամ ջերմ. Առէք կամ տուք. | Պաղ կամ տաք. Առէք կամ տուէք։ |
| Գաւազանաւ եթէ սիրով. | Գաւազանո՞վ չէ նէ սիրով։ |
| Տացո՞ւք եթէ ոչ տացուք. | Տա՞նք մի չէ նէ չտանք։ |
| Եթէ կամիս կատարեալ լինել. | Թէ որ կ'ուզես կատարեալ ըլլալ։ |
| Թէ հնար ինչ իցէ. | Թէ որ ճար մը կայ նէ։ |
| Ոչ ունիմք աստ բայց հինգ նկանակ. | Չունինք հոս, բայց միայն հինգ հաց։ |
| Թէպէտ եւ կամէր, բայց ոչ կարաց. սակայն ոչ կարաց. | Կ'ուզէր ալ նէ, բայց չկրցաւ. Թէպէտ կ'ուզէր բայց չկրցաւ։ |
| Թէպէտ էին բազումք որ հարկանէին զփողսն. | Թէ և շատ ալ էին փող զարնողները։ |
| Սուղ, այլ զօրաւոր. | Կարճ, բայց ուժով։ |
| Մի լայք, զի չէ մեռեալ. | Մի լաք, վասն զի մեռած չէ։ |
| Լուարուք զի ասացաւ. | Լսեցիք որ ըսուեցաւ։ |
| Գիտաց եթէ ցածուցեալ են. | Իմացաւ որ ցածցեր են։ |
| Ետես եթէ հաճոյ է. | Տեսաւ որ ախորժելի է։ |
| Իսկ նա գնաց. | Բայց (կամ ու) ան գնաց։ |
| Իսկ զի՞ մկրտես, եթէ դու չես Քրիստոսն. | Հապա ինչո՞ւ կըմկրտես, թէ որ դուն չես Քրիստոսը։ |
| Ապա, ուրեմն, ապա ուրեմն ազատ են որդիքն. | Անանկ է նէ՝ տղաքն ազատ են։ |
| Եթէ ոչ զմեծն, գոնէ զփոքրն արասցուք. | Մեծն ալ չէ նէ, պզտիկն ըլլայ՝ ընենք։ |
| Արդ, եւ արդ, իսկ արդ զի՞նչ ասիցեմ. | Էյ անանկ է նէ հիմայ ի՞նչ ըսեմ։ |
| Արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է. | Հիմայ պիտի հոտած ըլլայ, ինչու որ չորս օրուան է։ |
| Քանզի բազումք յօժարեցին, կամ եղև և ինձ. | Որովհետև շատերը յօժարեցան, ես ալ ուզեցի։ |
| Քանզի ծնաւ, ապաքէն գութ ունի. | Ծնաւ նէ, 'ի հարկէ գութ ունի։ |
| Մեռանել քան ծառայել, քան եթէ ծառայել. | Մեռնիլ քան թէ ծառայել, քան թէ ծառայ ըլլալ, գերի ըլլալ։ |

# ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

## ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

**310.** Զայնարկութիւնը բան մը կամ ձայն մըն է, որ մարդուս կիրքը կը յայտնէ, բարկութիւն կամ վախ կամ ուրախութիւն կամ տրտմութիւն, ևն. ինչպէս,

| | |
|---|---|
| 311. Ա՛ Թշուառական. ո՜յ Թըշուառ. | Հա՜յ Թշուառական, հա՜յ խեղճ։ |
| Է՛ մարդ. | Հէ՜յ մարդ։ |
| Ո՛վ անմիտք, ո՜ անմիտք. | Հէ՜յ անխելքներ։ |
| Ո՛հ, կարի է տառապելս. | Ո՛ւհ, ամմա տառապել հա՜։ |
| Ո՛վ սքանչելեացս. | Ո՛ւհ զարմանալու բան։ |
| Ո՛հ, ես մեղայ. | Վա՜խ, ես մեղանչեցի։ |
| Վա՜հ, որ քակէիր զտաճարն. | Վա՜խ, որ տաճարը կը քակէիր կոր։ |
| Օ՛ն եկայք. օ՛ն արիք. | Հա՜յտէ եկէք. հա՜յտէ ելէք։ |
| Հա՛պա առաքինիք. | Հա՜յտէ կտրիճներ։ |
| Աղէ պատմեա. աղէ դու եկ. | Հէլէ պատմէ. հէլէ դուն եկուր։ |
| Վա՜շ քաջիդ. | Աֆէրիմ կամ մաշալլահ կտրիճիդ։ |
| Վա՜շ քաջքդ ինձ. | Մաշալլահ կտրիճներս։ |
| Վա՜շ վա՜շ, զի բեկաւ. | Օ՛խ օ՛խ, որ կոտրեցաւ։ |
| Բո՜բէ կուրութեան մտացն. | Փէհ կամ վա՜յ մտքին կուրութեանը։ |
| Օ՛շ թէ. | Երանի թէ, ա՜խ ո՛ւր էր։ |
| Է՛հ, զիա՞րդ. | Է՛հ, ինչպէս։ |
| Հէ՛ բարի է. | Էհ կամ է, աղէկ է։ |

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ ԼՄԸՆՑԱՒ

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՊԱՐԶ ՏԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ՀԱՄԱՐ

---

### ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

312. *Տարադրութիւնն է բառերը լեզուին օրինաւոր կարգովը շարելու կապել, որ խօսք ըլլայ։*

313. *Բան մը խօսինք նէ, առաջ պիտի նայինք՝ թէ ո՛րու կամ ինչի՛ վրայ ինչ պիտի ըսենք որ է կամ կ՚ըլլայ կամ կ՚ընէ։ Որու կամ ինչի վրայ որ պիտի ըսենք նէ, ան բուն բանին տէրն է, և անուն բայ կ՚ըսուի. ինչ որ պիտի ըսենք նէ, ան բայն է, որ ըլլալ մը կամ ընել մը կը նշանակէ. ինչպէս,*

*Ես եմ. — Դու լինիս. — Աստուած արար.*

*ես, դու, Աստուած անուն բային են. եմ, լինիս, արար բայերն են։*

314. *Բայց միայն ատչափով չըլմննար խօսքը։ Ես եմ, թէ որ հասկընաս՝ ես կամ, լըմնցած է. իսկ թէ որ հասկընաս՝ ես բան մըն եմ, լըմնցած չէ. ի՞նչ բան ես*[1]։ *Դու լինիս, դուն կ՚ըլլաս. Աստուած արար, Աստուած ըրաւ, լըմնցած չեն. ի՞նչ կըլլաս, ի՞նչ ըրաւ։ Լըման*

---

*1 Բայց երբոր ըսուի Ես եմ, մի երկնչիք, մտքով լըման է. վասն զի կըհասկըցուի լսողներէն, թէ ես ան եմ որ կըճանչնաք ձայնէս, գիտէք։*

ըսելու համար՝ քովը բան մը դնելու է, որ խնդիր բայի կ'ըսուի. ինչպէս,

Ես եմ մարդ. — Դու լինիս իմաստուն.

— Աստուած արար զաշխարհ.

Մարդ, իմաստուն, զաշխարհ, բայերուն խնդիրներն են, որ անոնց նշանակութիւնը կ'ըլմնցընեն, ու կ'ըլլայ լըման խօսք։

315. Բայց ամէն խօսք մինակ ատ իրեք կտոր բանով չըլլար. շատ անգամ իրեքն ալ կերպ կերպ յաւելուած մօքեր կամ պարագաներ կ'ունենան հետերնին. ինչպէս,

Աստուած՝ ամենակարող Ճարտարապետն տիեզերաց, որ յաւիտենից էր, իսկզբանէ իմաստութեամբ իւրում արար զայս մեծ աշխարհս և զամենայն զարդ սորա։

Հոս նմանապէս գլխաւոր խօսքն ան է. Աստուած արար զաշխարհ. մէկալ բառերը պարագաներ կը յայտնեն. այս ինքն թէ Աստուած ինչ է կամ ինչպիսի բան կըմտածուի կոր աս խօսքիս մէջ, — Ճարտարապետ. ինչի՞ն Ճարտարապետը, — տիեզերաց. ինչպիսի Ճարտարապետ, — ամենակարող. ինչո՞վ ըրաւ, — իմաստութեամբ իւրով. երբ, որ ատեն ըրաւ, — իսկզբանէ. ո՞ր և որպիսի աշխարհքը, — զայս մեծ աշխարհս. ու չէ թէ մինակ աշխարհքս, հապա՝ և զամենայն զարդ, ու ամէն զարդն ալ. որո՞ւն զարդը, սորա, ասոր, աս աշխարհքիս։

316. Ինչպէս ըսինք, Աստուած անուն բայի է կամ դէր՝ ներգործական բային արար. զաշխարհ ու զզարդ՝ որ ըլլուողն են, խնդիր սեռի են արար բային. այս ինքն անանկ խնդիր մը՝ որ ներգործական բայերուն ամենուն ալ կը յարմարի, որ է հայցական հոլովը։

317. Իսկ կրաւորական բայերուն սեռի խնդիր է բացառական հոլովը։ Վասն զի կրաւորական բայերուն ուղղական անուն բայի կ'ըլլայ ըլլուողը, ու բացառական խնդիր կ'ըլլայ ընողը։ Ինչպէս թէ որ ատ խօսքը՝

Աստուած արար զաշխարհ՝ կրաւորական բայով դարձընես ասանկ, Աշխարհ արարաւ յԱստուծոյ, — աշխարհ եղաւ ուղղական՝ անուան բային, յԱստուծոյ եղաւ բացառական՝ խնդիր սեռի։

318. Մէկալ հոլոված բառերէն՝ խոնջանէ, խնամատարութեամբ խորով, Նոյն արար բային ընդունելութեան խնդիր են. այս ինքն անանկ խնդիր՝ որ սեռի խնդիրէն՚ի զատ, կամ թէ առանց անոր ալ, կ՚առնէ բայ մը իր մասնաւոր նշանակութեանն ու տեղին յարմար զանազան հոլովով։

319. Սեռականները տէրշէրայ, սորա, որ կը յայտնեն թէ ո՛ր բանին Ճարտարապետը, որո՛ւն զարդը, կ՚ըսուին Ճարտարապետին ու զարդին յատկացուցիչ. Ճարտարապետն ու զարդն ալ կ՚ըսուին յատկացեալ, յատկացուցչին նայելով։

320. Ճարտարապետն՝ որ կը յայտնէ թէ Աստուած ո՛վ կամ ինչ է կամ ինչպիսի կըմտածուի աս խօսքիս մէջ, բացայայտիչ կ՚ըսուի Աստուծոյ. Աստուած ալ կ՚ըսուի բացայայտելի կամ բացայայտեալ, բացայայտչին նայելով։

321. Անդնաչարող, խորով, այս, մեծ, անձնային, ածականներ են ամէն մէկը իրեն գոյականին՝ որուն որ ըսուած է, այս ինքն Ճարտարապետին, իմաստութեան, աշխարհին, զարդին։

322 Ետք շաղկապ է, որ զայս մեծ աշխարհն ու զաննային զարդը կըկապէ իրարու հետ մէկ բային տակ։

323. Իսկ որ յաւէտենից էր, մէջ ընկած ու յարաբերականով կպած ինքիրեն լման խօսք մըն է ան ալ. որ՝ անուան բային, էր՝ բայ, յաւիտենից՝ խնդիր։

324. Բառերուն օրինաւոր կարգն ու մէկմէկու կապակցութիւնը՝ մէկ մը ինչ ըլլալնին լման ու խստակ յայտնի ընելու համար է, որ վերի ըսածներուս կըլլայ. մէկ մ՚ալ՝ մէկմէկու համեմատ ու նման ընելու համար է, որ համաձայնութեան ծառանց բանէ կ՚ըսուի. և ան ատենը կ՚ըլլայ, երբոր մէկմէկէ կախում ունեցող կամ մէկմէկու յարմարուելու բառերը՝ իրարու նման կամ համա-

ձայն են թուով ու հոլովով, կամ դէմքով, ժամանակով ու եղանակով. ինչպէս, անուն բայի՝ բայի հետ, Ես խօսիմ, դու լսես, Աստուած արար, Նոքա ընթանան, Բազումք զարմացին. բացայայտիչ՝ բացայայտեալի հետ, Աստուած ճարտարապետն. ածական՝ գոյականի հետ, ամենակարող ճարտարապետ, իմաստութեամբ իւրով. Բարձր լեառն, Բարձուլերին, Բարձու լերամբ, լերինք բարձունք, լերանց բարձանց:

325. Իսկ անհամաձայն կ'ըլլայ՝ թէ որ ըսենք, այլ եղև բանքն, տիրեցին ալքն.— Իւրոյն իմաստութեամբ, Բարձր լերին, 'ի Բարձր լեառնէ, Բարձր լերինք, Բարձր լերանց, Բարձուլերամբք:

326. Շարադրութիւնը երկու է. մէկ մը Պարզ, որ լեզուին հասարակ ու սովորական կանոններովը կ'ըլլայ. մէկ մ'ալ Ձեւաւոր, ան կանոններէն դուրս ու դերազանց:

Հիմա մենք վերի ցուցուած բնական խելքի կարգով, ինչպէս տեսանք որ մասունք բանին գլխաւոր լման խօսքն ու իր պարագաները յայտնելու կուգան, սկսինք առաջ աս մասիս մէջ մէկիկ մէկիկ անոնց պարզ շարադրութեան հարկաւոր կանոնները սորվելու նոյն կարգով։

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԱՆՈՒՆ ԲԱՅԻ ԵՒ ԲԱՅ

327. Դիմաւոր բային անուն բային՝ ուղղական կը-
դրուի, ու բայը՝ թուով ու դէմքով անոր համաձայն.
ինչպես,

Դուք մինչեր նորա աշակերտ. մեք Մովսիսի աշա-
կերտք եմք. մեք գիտեմք զի ընդ Մովսիսի խօսե-
ցաւ Աստուած։

Անուանս մեր մոռասցի ժամանակաւ։

Խորհուրդք խոտորք անջատեն յԱստուծոյ։

Մարդիկն Հայոց ոչ ինչ հաւատային։

Բարձր են երկինք, խոր են դժոխք, երկայն է չափ
երկրի, լայն է ծով։

Ես պառաւեալ եմ։ Տէր իմ ծերացեալ է։

Դուք յոյժ մոլորեալ էք։

328. Անորոշ և անցեալ դերբայներուն անուն բային
սովորաբար սեռական կը դրուի, թէ և դիմաւոր բայի
հետ ալ ըլլան. ինչպես,

Մինչ զի և հաց ևս ոչ ժամանել ուտել նոցա։

Մինչև բազմաց իսկ ասել՝ թէ մեռաւ։

Ցելանել և 'ի մտանել նորա։

Ի կալ նորա յաղօթս։ —

Նախ ծնանին, մինչչև մտեալ առ նոսա մանկաբարձացն։

Տեսի՝ անզգամաց արմատս ձգեալ։

Տեսեալ արդարոց՝ ծիծաղեցան։

Իմ զձեր արծաթն առեալ և հաճեալ եմ։

Մարմնոյ 'ի սուրբ օդս վայելեալ՝ առողջագոյն լինի։

Բոլոր Եւրոպացւոցն խուսափեալ փախչին։

329. Անորոշ դերբային, մանաւանդ ուղղականին,
անուն բային դերանուն կամ միջակ անուն ըլլայ նէ,
տրական կը դրուի. երբեմն անցեալ դերբային ալ.

Անցից ընդ երկիր քո, երթալ անցանել ինձ յաշխարհ իմ։

Գալ բողոքել ձեր առ իս, և ինձ ոչ լսել ձեզ։

Ընտրեաց զմեզ, լինել մեզ սուրբս և անարատս։

Ի գալն քեզ զհետ սրբոյն։ Ի կալ նմա յաղօթս։

Ծածկել 'ի քէն ինչ 'ի սոյանէ՝ չառնում յանձն։—

Թողեալ ձեր զԱստուած՝ քարանց պաշտօն մատուցանէիք։ Ակն արկեալ մեզ այսուհետև 'ի վախճան։ Ումեք 'ի ծառայիցն ոչ կարացեալ։

330. Տեղ տեղ ուղղական ալ[1] կըլլայ երկու դերբային ալ անուն բային, մանաւանդ անցեալին.

Զիարդ մարթիցի՝ լինել թողութիւն. այս ինքն թողութեան, թէ լինիցի թողութիւն։

Պատերազմել ումեք ընդ ընկերի իւրում։

Մի ես լինել 'ի սմա բնակիչ։

Մինչև տեղի ևս ոչ լինել։

Մինչև չմնալ կամ չմնալոյ 'ի նոցանէ ապրեալ և փախստական։

Մեղաւորք ելով մեք։

Մարդ 'ի մարդոյ առնլով զտէրութիւն.—

Մտեալ Յովսէփ 'ի տունն գործել զգործ ինչ իւր, բուռն եհար կինն զձորձոց նորա։

Եկեալ 'ի դէպ նոցա Ճշմարիտ առաջին զգօնութե։

Վաչէ, ջէն զուլամբ երթեալ, սատակէր։

Ծառայք համդերձ տերամբք տանջեալ, և առաջին թագաւորան զնոյն չարչարեալ։

Ինքեանք յարտասուս հարեալ տղայքն, ոչ ոք կարէր լռեցուցանել։

---

1 Ինչ բանի համար որ սեռական ալ կ'ըլլայ ուղղական ալ ըսենք նէ քերականութեանս մէջ, գիտնալու է որ հեղինակները շատ տեղ երկու կերպն ալ մէկէն կըբանեցընեն մէկ խօսքի մէջ։ Ինչպէս հոս սեռական և ուղղական անուն բային օրինակ ըլլայ աս. Եղև բանալ երկնից և իջանել հոգւոյն սրբոյ և գալ ձայն յերկնից. Իսկ նոքա ժողովեալ կուտեալ անթիւ մարդկանն. Զորս ելեալ իւր իսկ ինքնին Վրթանէս մատուցեալ հարցանէր։ — Ասբանս մէկ մը հոս իմացընելնիս հերիք ըլլայ։

331. Անցեալ դերբայն՝ էական բային է, էր, իցէ եզակի երրորդ դէմքերուն հետ, շատ անգամ սեռական կ՚առնէ ամէն դէմքի անուն բային եզակին ու յոգնակին. զոր օրինակ,

Եզակի

| | |
|---|---|
| փոխանակ ըսելու, | կ՚ըսուի |
| Ես տեսեալ եմ, | Իմ տեսեալ է. |
| Դու տեսեալ ես, | Քո տեսեալ է. |
| Նա տեսեալ է, | Նորա տեսեալ է. |
| Ես տեսեալ էի, | Իմ տեսեալ էր. |
| Դու տեսեալ էիր, | Քո տեսեալ էր. |
| Նա տեսեալ էր, | Նորա տեսեալ էր. |
| Ես տեսեալ իցեմ, | Իմ տեսեալ իցէ. |
| Դու տեսեալ իցես, | Քո տեսեալ իցէ. |
| Նա տեսեալ իցէ, | Նորա տեսեալ իցէ: |

Յոգնակի

| | |
|---|---|
| փոխանակ ըսելու, | կ՚ըսուի |
| Մեք տեսեալ եմք, | Մեր տեսեալ է. |
| Դուք տեսեալ էք, | Ձեր տեսեալ է. |
| Նոքա տեսեալ են, | Նոցա տեսեալ է. |
| Մեք տեսեալ էաք, | Մեր տեսեալ էր, |
| Դուք տեսեալ էիք, | Ձեր տեսեալ էր. |
| Նոքա տեսեալ էին, | Նոցա տեսեալ էր. |
| Մեք տեսեալ իցեմք, | Մեր տեսեալ իցէ. |
| Դուք տեսեալ իցէք, | Ձեր տեսեալ իցէ. |
| Նոքա տեսեալ իցեն, | Նոցա տեսեալ իցէ: |

332. Ասանկ ալ չէ՛ բային հետ

| | |
|---|---|
| փոխանակ ըսելու, | կ՚ըսուի |
| Ես չեմ տեսեալ, | Իմ չիք տեսեալ. |
| Դու չես տեսեալ, | Քո չիք տեսեալ. |
| Նա չէ տեսեալ, | Նորա չիք տեսեալ. |

| | |
|---|---|
| փոխանակ ըսելու, | կ'ըսուի |
| Մեք չեմք տեսեալ, | Մեր չիք տեսեալ. |
| Դուք չէք տեսեալ, | Ձեր չիք տեսեալ. |
| Նոքա չեն տեսեալ, | Նոցա չիք տեսեալ։ |

333. Սեռական անուն բային և անցեալ դերբայն կամ էականը՝ ետև առաջ ալ կըդրուին, Տեսեալ է իմ, իմ է տեսեալ, է մեր տեսեալ, ևն։ Տեսեալ չիք իմ, իմ տեսեալ չիք, չիք տեսեալ քո, չիք մեր տեսեալ, ևն։

Չ կամ ոչ մակբայով որ զրուցուի նէ, սովորաբար էականն առաջ կ'ըսուի. Իմ չէ տեսեալ, քո չէ տեսեալ, նորա չէր տեսեալ, չէ տեսեալ քո, չիցէ մեր տեսեալ, չիցէ նոցա տեսեալ. որոյ չէ կամ ոչ է տեսեալ, կամ որոյ ոչ տեսեալ է. տեսեալ չիք մեր։

334. Նոյն դէմքով շատ անուն բայիներ որ ըլլայ նէ, բայց սովորաբար յոգնակի կըդրուի, մանաւանդ ետքն որ դրուի նէ.

Փոքր և մեծ անդ էին. Ցորեանն և հաճար ոչ հարան։
Ատելի էին Աստուծոյ ամպարշտեալն և ամպարշտութիւն իւր. զի գործն և գործելին առ հասարակ տանջելոցին։
Մտին Մովսէս և Ահարոն առաջի Փարաւոնի և ասէին ցնա։
Եղեն իմ արջառ և ոչխար և էշք, ծառայք և աղախնայք։

335. Բայց շատ հեղ եզակի ալ կըդրուի, մանաւանդ առաջ որ դրուի և մօտ անուն բային եզական ըլլայ.

Ծնաւ Նոյ, Սեմ, Քամ, Յաբեթ՝ որդիք Նոյի, և կին Նոյի և երեք կանայք որդւոց նորա ընդ նմա 'ի տապան անդր։
Եղև նորա ոչխար և արջառ յոյժ և ծառայք և աղախնայք, ուղտք և էշք։

Եկն Ագրիպպաս և Բերենիկէ բազում երևելի
սպասուք, և մտին յատեանն։—
Կտաւն և գարին հարան։
Հանդերձ մարդոյ և ծաղր երեսաց և քայլ ոտից
պատմէ զնմանէ։

336. Եզակի անուն բայիներ կամ շաղկապով զատուած ըլլան նէ, սովորաբար եզակի կըդրուի բայը՝ մէկը կամ մէկալը հասկըցուելով.

Եթէ յառնիցէ 'ի միջի քում մարգարէ կամ երա-
զահան... և առնիցէ նշանն կամ արուեստն...
մարգարէն այն կամ երազահանն երազոց մեռցի։
Է՞ոք քո աստ փեսայ կամ որդիք կամ դստերք։

337. Իսկ ամենուն վրայ հասկըցուելով, յոգնակի ալ կըդրուի.

Եթէ եղբայր ոք կամ քո՞յր իցեն մերկք։
Ո՞ր հայր գթած կամ ո՞ր մայր ողորմած այնպիսի
առնիցեն։

338. Իսկ թէ որ այլևայլ դէմքով անուն բայիներ ըլլան նէ, որ դէմքն որ կարգով աւելի առաջ է նէ՝ բայն ան դէմքով կըդրուի. այս ինքն առջի կամ երկրորդ դէմքով, որն որ կայ նէ. ու սովորաբար յոգնակի կըդրուի.

Ես և դու հեծեալ էաք։ Դու և ես մի եմք.
Ես և հայր իմ մի եմք։
Ես և դու և ամենայն բազմութիւնդ աշակերտեսցուք։
Կեցցուք և մի մեռցուք և մեք և դուք և ստացուածք
մեր։
Պատիւս և շատ պարգևս գտանեմք յարքայից ար-
քայէ և դու և մեք։
Յորժամ դու և նա միայն իցէք։
Դու և որդիք քո ընդ քեզ պահեսջիք։

339. Շատ հեղ եզակի ալ կըդրուի, բայց միշտ կարգով առաջ եղող դէմքովը․

Ես և տուն իմ պաշտեմ զտէր։
Լինիցիմ ես և որդի իմ Սողոմոն վնասապարտք։
Մուտ դու և ամենայն տուն քո 'ի տապանդ։
Մեղար դու և երկոքին բարեկամք քո․ զի ոչ խօսեցարուք առաջի իմ ճշմարիտ։

340. Շատ տեղ բայը յայտնի չդրուիր, զօրութեամբ կ'իմացուի, մանաւանդ էական բայը․ ինչպէս թէ որ մէկն ըսէ․ Ես հայր, դու որդի․ դա դուստր և նոքա ծառայք․ կ'իմացուի ես հայր եմ, դու որդի ես, դա դուստր է և նոքա ծառայք են։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԲԱՑԵՐՈՒ ԵՒ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԽՆԴԻՐՆԵՐ

341. Էական բայերն ամէն հոլով և ամէն նախադիրներով խնդիր կ'առնեն, հայցականէն 'ի զատ. ինչպէս,

342. Ուղղական, որ նախդրիւ տրական ալ կ'ըլլայ, ու յոգնակիի տեղ՝ եզական ալ.

Ես եմ տէր. Եղէց նոցա Աստուած կամ յԱստուած։
Բաց է դուռն.— Բաց են աչքն։
Ի բաց է դուռն.— Ի բաց են աչքն։
Եղիցուք տեառն մերում ծառայք։
Եղիջիք դուք մեզ 'ի ծառայս։
Եղիցին դժուարինքն դիւրինք։
Եղիցին դժուարինքն 'ի դիւրինս։
Լերուք արք։ Քաջ լերուք (59)։
Լերուք որդիք զօրութեան։—
Երկոտասան եղբարք եմք ծառայք քո։
Բանք քո բարի են և դիւրինք։
Էր չափ երկայնութեան նորա երկոտասան հազար ասպարէզ։
Բարձրութիւն նորա 'ի տասն կանգուն.— այս ինքն՝ էր 'ի տասն կանգուն (340)։

343. Սեռական. Է իմ ամենայն ինչ։ Որդիք լինին քո 'ի նմանէն։ Գետինն չորեք հարիւր սատեր արծաթոյ է (58)։ Էր ամաց երկոտասանից։

344. Տրական. Ընդէր է ինձ այդ։ Քեզ լիցի քոյդ։ Լեր դու ինձ յորդի։

Ի լայնութեան՝ կանգուն վեց (էր)։ Թանձրութիւն
նորա շուրջ՝ առ չորս մատանս (էր)։

345. Գործիական. Ամենայն ինչ նովաւ եղեւ։
Գանձիւք եղիցի փրկութիւն մեր։
Թանձրութիւն ծովուն թզաւ (էր)։
Կանգնաւ 'ի լայնութիւն (էր)։

346. Բացառական. Ի մե՞նջ ես, թէ 'ի թշնամեաց մերոց.
Գոյր մեզ օգնութիւն յերկնից։
Ի քառասուն կանգնոյ էր տունն։
Ի տասն դահեկանէ ձոյլ նորա (էր)։

347. Ուրիշ խնդիր. Որ զիւրեանն էին։
Բանքս ճշմարտիս օծելոյն է։
Ի խորանին անդ է. Առ ձեզ են բանք իմ։
Առ նմա էի։ Ընդ նմա էին։

348. Այսանկ ուղղական խնդրով կ'ըսուի, Պարտ է լինել, վայել է նուլ, արժան էր առնել, դէպ եղև կամ հարկ եղև իջանել, և այլն. որ ըսել է, լինելն՝ է պարտ, նուլն՝ է վայել, առնելն՝ էր արժան, իջանելն՝ եղև դէպ կամ հարկ։ — Որ շատ անգամ տրական խնդիր ալ կ'ունենան. Պարտ է ինձ, վայել է մեզ, արժան էր քեզ՝ ինձ անկ է իշխանութիւնդ. քեզ անկ է առնուլ. չէ մարթ այդմ լինել. ոչինչ պիտոյ է դոցա երթալ.

349. Անորոշ դերբային յոգնակի ուղղական խնդիրը սովորաբար սեռով կըդրուի (59).
Կամիմ զձեզ իմաստունս լինել։
Ընտրեաց զմեզ լինել մեզ սուրբս և անարատս։
Պարտ էր ձեզ լինել վարդապետս։
Ցանկայք փափաքելով՝ բազմորդս լինել և հարուստս.

350. Երբեմն քէով, մանաւանդ ուղղական անուն բային վրայ որ ըսուի.
Կամին լինել վարդապետք օրինաց։
Պարտին այսպիսի պատմութեանց լինել դատիչք։

351. Նական բայերը Հայցական խնդիր ալ կ'առնեն

միայն ժամանակի բառերն, ան ալ՝ նախդրիւ տրականի տեղ, մանաւանդ ընդ նախդրով եղածին տեղը.

Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս. — այս ինքն ընդ ամենայն աւուրս:
Գործս ոչ լմէ զմի օր է կամ զերկուս: Անդ էր զմեծ օր:
Ո՞րպէս ընդ ձեզ զամենայն ժամանակսն եղէ:
Եղև ջրհեղեղ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր:
Զամենայն ժամանակս՝ զորս եղև անապատ. — այս ինքն յորս:
Զամառն և զգարունն նոյնպէս եղիցի. — այս ինքն ընդ բոլոր ամառն և գարունն:
Եղիցուք անդ տարի մի. — որ է ըսել զտարի մի (354):

352. Ներգործական բայերն, ինչպէս ըսինք (316), սեռի խնդիր կ'առնեն հայցական: — Կրաւորական բայերը սեռի խնդիր կ'առնեն բացառական (317), կամ նոյն մօքով գործիական.

Ճանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն:
Որ սիրեն զնա՝ սիրեսցին 'ի նմանէ:
Պատուեմք զհայրն մեր և պատուիմք 'ի նմանէ:
Կատարեսցին ամենայն գրեալքն 'ի մարգարէից — կամ մարգարէիւք:

353. Կրաւորականներն երբեմն սեռական կամ տրական ալ կ'առնեն, մանաւանդ անցեալ դերբայ որ ըլլան.

Հարեալք սատանայի իմոյ էք:
Թէ պարտեալ գտցի ինչ:
Կապեալքն խաւարի և կաշկանդեալք երկայն գիշերոյ:
Թէ և նոյն իսկ սրբոյն Մովսիսի էին ասացեալ ամենայնքն.
Իմաստութիւն դիւրաւ գտանի խնդրողաց իւրոց:
Աստուած ձեռին չզննի. մտաց իմանի, այլ ոչ աչաց տեսանի:

354. Հայցական խնդիրը, թէ որ մասնաւոր կերպով մը որոշեալ բան է, ինչպէս դիմորոշ յօդով կամ ուրիշ

բանով մը, զայն նախդրով կըդրուի. չէ նէ՝ առանց զայի, որ կ'ըսուի անորոշ կամ աննախդիր հայցական.

Առնու զհացն և տայ նոցա. Առեալ հաց՝ գոհացաւ եբեկ և ետ նոցա։

Յուցէք ինձ զդահեկան հարկին. և նոքա մատուցին նմա դահեկան մի։

Ած զձեռն քո. Ած ձեռն ընդ մէջ քո։

Արկ զաթոռ նորա. Աթոռս արկին։

Շինեաց զտուն իւր. Շինեաց իւր տուն։

355. Միջակ անունները մինակ ինքիրեննուն որ ըլլան, դերանուններն ու յատուկ անունները՝ միշտ յայտնի և որոշ ըլլալնուն, միշտ ալ զայով կ'ըլլան հայցական. Տեսանել զոմն, զոք, զամենայն, զիս, զքեզ, զմեզ, զձեզ, զինքն, զինքեանս, զնա, զնոսա, զայն զայնոսիկ, զՄովսէս, զարեգակն։

356. Մին երբեմն աննախդիր ալ կ'ըսուի. Տեսանէր մի 'ի գաւառաց անտի։ Արձակեաց նա Դ յիշխանաց իւրոց։

357. Անունէ ու բայէ մէկ եղած բայերն ալ ներգործականի պէս հայցական խնդիր կ'առնեն.

Թող՛ տալ զայն կամ զնոսա. Թող՛ արա զաշխարհս 'ի նա. — այս ինքն Թողուլ, Թող։

Թողութիւն առնել զօրէնսն իւրեանց. — այս ինքն Թողուլ, Թող՛ տալ։

Աւար հարկանել զկապուտ նորա կամ զինչս նոցա. — այս ինքն աւարել։

Հրաման տաց զչարիս։ Գան հարին զնա։

Ակն ունել զնոյն։ Ջնա չառնէր փոյթ։

Վրէժ խնդրել զանկանելն իւրեանց 'ի տէրութենէն։

Բուռն հարկանել զմի 'ի յոստոց ծառոյն. — այս ինքն ըմբռնել։

Բուռն հարկանել զգործս. — այս ինքն 'ի բուռն առնուլ, սկսանել։

Հարցփորձ առնել զնոսա։
Զցածութիւն իբրև գող ական հատամնես։
Խրամակարկատ արարին զայն.— այս ինքն կար-
կատեցին զխրամ նորա։
Զայն լուռ իսկ եղէց։
Զոր յառաջագոյն տեղեակ եմք։
Զոր իրազեկ եղեալ արքային։ Զամենայն ինչ
նպաստ լիցուք յընկերացն օգուտ։

358. Լինիմ, եմ էական բայով խոնարհած անցեալ դերբայն ալ (287, 288), ներգործական մտքով, հայցական խնդիր կ՚առնէ.

Զփրկութիւն գտեալ լինէին։
Զոր ինքն իսկ իւրովք աչօք տեսեալ լինէր։
Զանօգուտն թէ թողեալ լինիք։
Պահեալ լինէին պահս (354)։
Ընկալեալ լինին պատուհաս։
Լուսին զլուրն բոլոր՝ յամնեամն լինի կատարեալ։
Ական չէր տեսեալ զխ։
Զբարեբ՛ոն իմ չիք տեսեալ։

359. Իական բային հետ չէ բայածականն ալ (288), ներգործական մտքով, հայցական խնդիր կ՚առնէ.

Զհամառօտն յինէն պահանջելի է։
Զոր յաջորդաւդ է իմանալի։
Ընտրելի է քեզ այժմ զմի յայսցանէ։
Զայս է մեզ ասելի և յաւէտ գործելի։

360. Ներգործական ու կրաւորական բայերն՝ իրենց սեռի խնդիրէն 'ի զատ, կամ առանց անոր ալ, իրենց կերպ կերպ նշանակութեանն ու խօսքին մտքին յարմար ուրիշ տեսակ տեսակ խնդիրներ ալ կ՚առնեն այլ և այլ հոլովով ու զանազան նախդիրներով (142) կամ հոլովառու բառերով (152), որ Բն—Բեան խնդիր կ՚ըսուի ըսինք (318)։

361. Ասանկ ալ չէզոք բայերը, հասարակ ամենուն

մէկէն մէկ սեռի խնդիր չունենալնուն, միայն բնութեան խնդիր կ՚առնեն այլևայլ հոլով ու նախդիր-ներով կամ հոլովառու բառերով, տեղին ու իրենց մասնաւոր նշանակութեանը նայելով:

362. Բային նշանակութիւնը գիտնալէդ ետքը, հոլովներուն ու նախդիրներուն ու հոլովառու բառերուն ուժն աղէկ միտք առեր ես նէ, կրնաս ատ բնութեան խնդիրներն անսխալ դնել. կանոն տալ հարկ չէ:

363. Ուղղական բնութեան խնդիրը՝ շատ տեղ նախդրիւ տրական ալ կդրուի, ու յոգնակիի տեղ եզական ալ, ինչպէս էական բայերուն տեսանք (342).

Արար զիս հայր. Արարից զքեզ յազգ մեծ:

Օծանել զոք Թագաւոր:

Ոչինչ համարել. Յոչինչ համարել. Առ ոչինչ համարել:

Զկուռս ոչ կալայ երբեք առ Աստուածն Ճշմարիտ:

Թշնամի դառնալ. Դառնալ՚ի թշնամի:

Արիւծ ձևանալ. Յառիւծ ձևանալ: —

Զեօթն աղջիկն, զորս տուեալ էր նորա նածինչ:

Զանձնեան պատերազմօղ և թշնամի ունել բարի իցէ, եթէ սիրելիս և բարեկամս:

Զօտարնագոյն և պայծառք երևէին:

364. Ներգործական բայի յոգնակի ուղղական խընդիրը սովորաբար սեռով կդրուի.

Կացո զնոսա իշխանս: Կենդանիս արար զմեզ:

Եդ զձեզ տեսուչս: Առնել զամենեսեան ուխտաւորս:

365. Կրաւորական ու չէզոք բայերունը սովորաբար քէով. Դատաւորք ոչ եղէն չարք անուանին, այլ յոյժ բարիք: Մայրք չինեցան քեզ պահապանք: Մեկնեցան՚ի միմեանց ողջք անարատք: Կային դատարկք: Գնային անարատք:

366. Բայց շատ բայեր՝ բնութեան խնդիրի տեղ

ալ հայցական կ'առնեն, որ համառօտ մը գիտնալու է։

367. ա. Ուղղականի տեղ հայցական.

Դու զո՞վ առնես զքեզ. — այս ինքն ո՞վ առնես։

Թագաւոր զոմն՝ ասեն զՅիսուս. — այս ինքն Թագաւոր ոմն ասեն։

Զնախանձն որ առ մարդն եղև՝ իմասցին զպատճառն. — այս ինքն զնախանձն իմասցին պատճառ։

368. բ. Տրականի կամ գործիականի տեղ հայցական.

Հարցից զձեզ բան մի. — այս ինքն ձեզ բան մի, կամ զձեզ բանիւ միով։

Հարցից ինչ զձեզ. — այս ինքն ինչ ձեզ, կամ զձեզ իւիք։

Ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ. — այս ինքն նոցա, կամ 'ի բազում ինչ։

Արբոյց զպարտէզն երկերիւր սափոր ջուր. — այս ինքն պարտիզին, կամ ջրով կամ սափորով ջրոյ։

Զամուր ամուր տեղիսն Հայոց՝ բերդս շինել. — այս ինքն յամուր ամուր տեղիսն, կամ բերդիւք։

Զայս միայն աղաչեսցուք զԱստուած. — այս ինքն առ այս կամ այսու։

Զկշիռ մարմնոց նոցա ոսկի առնուին. — այս ինքն 'ի կշիռ կամ կշռով։

369. գ. Նախդրիւ տրականի կամ գործիականի տեղ հայցական կ'առնեն սովորաբար ժամանակի, չափի, ձևի, ճամբայի և ասոնց նման անունները. ինչպէս,

370. Ժամանակի անունները.

Հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց. — այս ինքն յամենայն աւուրս։

Զվեց օր արար տէր Աստուած զերկինս և զերկիր. — այս ինքն 'ի վեց աւուրս։

Տեսին զգործս իմ քառասուն ամ. — այս ինքն ընդ քառասուն ամ:

Ծառայեաց ամս եօթն: Թագաւորեաց ամս տասն:

Նստան յեօթն գեղջէր:

Լուռ եկաց աւուրս երկոտասան (354):

371. Չափի անունները.

Բարձրանալ հնգետասան կանգուն. — այս ինքն 'ի հնգետասան կանգուն կամ հնգետասան կանգնաւ:

Արբուցանել ումեք բաժակ մի ջուր. — այս ինքն բաժակաւ:

Բարձին զնշխարսն երկոտասան սակառի. — այս ինքն սակառեօք:

372. Ձևի անունները.

Զբացական տեսիլն զնոյն օրինակ քանդակեցին. — այս ինքն նոյն օրինակաւ կամ 'ի նոյն օրինակ:

Զտարսն զձև և զօրինակ Բաբիլոնի շինէր. — այս ինքն ձևով և օրինակաւ կամ 'ի ձև յօրինակ:

Զի՞նչ օրինակ վկայեցին: Աստուածակերպ օրինակ բարձրանալ. — այս ինքն օրինակաւ:

373. Ճամբայի անունները.

Երթիջիք զճանապարհն ձեր:

Գնալ զճանապարհս թիւրս:

Գնաց ճանապարհ ժամանակս բազում (354):

Մի երթար ճանապարհ ընդ նոսա:

Եկին իբրև աւուր միոյ ճանապարհ:

Տրտմութեամբ երթային զերկայնութիւն ճանապարհին:

Պնդեցան արքն զկնի նոցա զճանապարհն Յորդանանու. այս ինքն 'ի կամ ընդ ճանապարհն:

Հեռացաւ թագաւորն զերկուց աւուրց ճանապարհ:

Ի ճանապարհին՝ զոր երթայցես:

Երթան զերկայնաձիգ հրապարակսն:

Երթիցուք զուղորդն. Զլեռնլեռնայն գնասջիք։
Երթայր զայս կողմն լերինն։
Մեծ վայրս խաղացեալ յառաջ երթիցեն։
Մեծաւ հոգաբարձութեամբ ընթացուք զառապար կենցաղոյս։
Զարացուցանէ զնա և առաքէ զերկայն Ճանապարհն։
Նա իբրև տեղեակ՝ զուղորդն տանի։
Առաջնորդէր նմա զերկայնութիւն Ճանապարհին։

374. Դ. Գործիականի տեղ հայցական կ'առնեն իրենց գոյական անունները կամ ուրիշ նոյն և նման նշանակութիւն ունեցող բառերն, ու յարաբերական "ը"՝ որ զանոնք կը յարաբերէ. ինչպէս,

375. Իրենց գոյական անունները.

Մեղոյց զնոսա մեղս մեծամեծս (354). — այս ինքն մեծամեծ մեղօք։
Սէր յաւիտենական սիրեցի զքեզ։
Զմի սէր սիրեցին զՅիսուս. — այս ինքն յաւիտենական սիրով, — միով սիրով։
Անէծ զնա անէծս ցաւագինս. — այս ինքն ցաւագին անիծիւք։
Զհարուածս թշնամւոյ հարի զքեզ։
Զթաղումն իշոյ թաղեսցի։
Զայսպիսի պատիժս պատժեցաւ։
Պսակեցար 'ի Թագաւորէն զանթառամ փառաց զպսակն։
Տաճարն Աստուծոյ շինեսցի շինուածս փառաւորս։
Ամաչեցէք զամօթ մեծ։ Երկեան երկիւղ մեծ։
Զանդիւտ կորուստն կորնչի։
Ընթացս յանդգնութեան ընթանային։
Լացին մեծ յոյժ։ Մեծացաւ մեծութիւն յոյժ։

376. Ուրիշ նման բառերը.

Զմահ աղուեսու սպանից զքեզ. — այս ինքն մահուամբ։

Զկես յանցանաց քոց ոչ յանցեաւ. — այսինքն կի-սով. (յանցանքին կէսն ալ նոյնպէս յանցանք է)։

Վառեցաւ ամենայն այր զզէն իւր — այս ինքն զինեցաւ զինու իւրով։

Եւ նոքա զնոյն քուն ննջեցին։

Թմբրեցին զմեղացն քուն։

Խնդացին յոյժ ուրախութիւն մեծ։

Առողջացան զանախտաւորութիւն երկնաւոր։

Պատերազմել զառաքինութեան զհանդէս։

Կորնչել զյաւիտենական սատակումն կամ զյաւի-տենական մահն։

377. Յարաբերական որը.

Տեսի ես զնեղութիւնն՝ զոր նեղէն զնոսա եգիպ-տացիքն. — այս ինքն որով։

Հարուածք՝ զոր հարցէ տէր զազգս ամենայն. — այս ինքն որովք։

Գիտես զծառայութիւնն զոր ծառայեցի քեզ։

Ի մեղս իւր զոր մեղաւ՝ ՚ի նմին մեռցի։

Բժշկել ՚ի վիրացն կամ ՚ի նետիցն զոր խոցեցին զնա Ասորիքն։

Ոչ թողից քեզ զանարգանս դիցն՝ զոր թշնամա-նեցեր զնոսա։

Ի զարհուրանաց սրտի քո՝ զոր երկնչիցիս։

Յամենայն անօրէնութեանց դոցա՝ զոր մեղան։

378. Շատ չէզոք բայեր ալ, նշանակութիւննին փոխուելով, ներգործականի մտքով հայցական կ'առ-նեն ուրիշ հոլովներու տեղ.

Ամենայն որ բնակեալ իցէ զլեռնակողմն. — այս ինքն ՚ի լեռնակողմն։

Որ զտեղին բնակեալ նստէին. — այս ինքն ՚ի տե-ղին, ՚ի տեղւոջն։

Եսթեր՝ զոր ամուսնացաւ թագաւորն. — այս ինքն ընդ որում։

Խնդացին զմեր 'ի նոսա հասանել. — այս ինքն ընդ մեր հասանել:

Ի բամբասանաց խնայել զլեզու. Խնայել զձեռն յարենէ. — այս ինքն արգելուլ:

Երկչոտն միշտ կանխէ զանհնարինս. — այս ինքն կանխաւ կասկածէ:

Կաց և խրատեաց զզօրութիւն տեառն. — այս ինքն ուսիր, 'ի միտ առ:

Զի՞նչ ես պակաս իցեմ. — այսինքն ի՞ւ կամ յի՞մ:

379. Շատ ներգործականներ ալ, չէզոքական մօքէ փոխուելով, հայցականի տեղ ուրիշ հոլովներ կ'առնեն. ինչպէս,

Լսել ձայնի, — լսել կ'ըլլայ մտիկ ընել, հաւանիլ:

Տարայք մեզ, — համբերեցէք:

Կամել յօրէնս տեառն կամ ընդ պատերազմ, — հաճիլ, հաւանիլ:

Տեսանել 'ի նա, 'ի լոյս, — նայիլ:

Ուրանալ 'ի հայելոյ, յԱստուծոյ, յօրինաց, — խորշիլ, հրաժարիլ:

Անիծանել այլոց, — անէծք կարդալ:

Հովուել հօտի, — հովուութիւն ընել:

Զգալ ցաւոց, յաղթութեանց, անձին, մտաց կամ խելաց իւրոց, — զգայուն ըլլալ:

Ցանձն առնուլ կամ յանձին ունել ումեք, իմիք, — հաւանիլ, խօսք տալ:

Զմտաւ ածել զնմանէ, — մտածել անոր վրայ:

380. Առնելու՝ տալու բայերն ինչպէս Գնել, ստանալ, առնուլ, վարձել, վաճառել, տալ, մատնել, սակարկանել, գնոց անունները կ'առնեն սեռական, գործիական, բացառական, ընդ կամ 'ի նախդրով. Ստանալ կամ վաճառել արծաթոյ, արծաթով, 'ի գնոց արծաթոյ, ընդ արծաթոյ, 'ի Տասս յիսուն:

381. Չափի, կշիռքի անուններն ալ խնդիր կ'ըլլան ուղղական կամ աննախդիր հայցական, գործիական, բացառական.

Ունել զբարձրութիւնն տասն կանգուն կամ ՚ի տասն կանգուն (363), տասն կանգնաւ, ՚ի տասն կանգնոյ։

Շինել զպարիսպն յիսուն կանգուն յերկայնութիւն, կանգունս հարիւր յերկայնութիւն, կանգնաւ յերկայնութիւն, ՚ի քսան կանգնոյ զերկայնութիւն։

Հատանել փայտ մի յիսուն կանգուն։

Էր աշտարակ մի յիսուն կանգուն շինեալ։

Կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի։

Տային տասն հազար քոռ ցորենոյ. և գարի՝ տասն հազար քոռ։

Պատրաստեցի ոսկի՝ տաղանտս հարիւր հազար, և արծաթ՝ տաղանտս հազար հազար։

---

382. Բայի զօրութիւն ունեցող անունները բայանուն կ'ըսուին, ու ներգործական՝ կրաւորական ու չէզոք բայի մտքով գտնուելով, ան բայերուն պէս ալ խնդիր կ'առնեն՝ սեռի կամ բնութեան. աս յայտնի է։

383. Բայց ան այլևայլ խնդիրներուն տեղ՝ սեռական ալ կ'առնեն յատկացուցչի պէս, որը շատ ու սովորաբար, որը երբեմն. որ ասանկ գիտնալու է։

384. Ներգործական մտքովները՝ խիստ շատ անգամ հայցականի տեղ ան սեռականը կ'առնեն.

Ծննդեամբ զԿային. Ծննդեամբ Կայենի. — Կայենը ծնանելովը։

Արարչութիւն զաշխարհս. Արարչութիւն աշխարհիս. — աշխարհիս ստեղծելը։

Գործելեաց զգործս. Գործօնաց գործոյն. — գործերը գործողներուն։

Սրարիչ զընաւս. Սրարիչ ընաւից, ամենեցուն.
— ամէնը ստեղծող։

Դատապարտողք՝ զՔրիստոս ոչ խոստովանողաց.
— Քրիստոս չխոստովանողները դատապարտողներ. մէկ խօսքի մէջ երկու կերպն ալ։

385. Կրաւորական մասնիկները՝ երբեմն բացառականի տեղ ան սեռականը կ'առնեն.

Ծննդեամբ 'ի կուսէն. Ծննդեամբ կուսին. — կոյսէն ծնելով։

Վիրաւորք 'ի սրոյ. Վիրաւորք սրոյ. — Սրէ վէրաւորածներ։

Կոխան յազգաց. Կոխան ազգաց, ոտից. — ազգերէ կոխուած, ոտքերէ կոխկռտուած։

386. Ջեզոք մասնիկները՝ երբեմն իրենց բնութեան խնդիրին տեղ ան սեռականը կ'առնեն.

Յօժարեցութիւն գործոյ և հրաժեշտ վատացն. — այս ինքն 'ի գործ, 'ի վատացն։

Գալ՝ զգխմեցումն չարչարանացն ասէ. — այս ինքն զգխմելն 'ի չարչարանսն։

Առ ելս ծառոյն. Ի յելմն Եգիպտոսի. — այս ինքն 'ի ծառն, յԵգիպտոսէ։

Անտես առնիցէ զփախուստ միեղջերուին. — այս ինքն զփախչելն 'ի միեղջերուէն։

Հաստողին փախչող. Երկիւղածք Աստուծոյ. — այս ինքն 'ի հաստողէն, յԱստուծոյ։

387. Ան, տ, մասնիկներով ածականներն, ու պակսութիւն մը ցուցընողներուն շատը, անխտիր կ'առնեն բացառական ու տրական, երբեմն ալ գործիական։

Տգէտ գրոց, 'ի գրոց.
Անտես աչաց, յաչաց.
Անփորձ մեղաց, 'ի մեղաց.
Անյայտ տեսողաց, 'ի մարդկանէ.

Անպտուղ սերմանն, 'ի հաւատոց.
Հեռի 'ի տանէ, արդարութեան.
Օտար 'ի մօրէ, հաւատոց.

| | |
|---|---|
| Կարօտ հացի 'ի հացէ, հացիւ. | Անպարտ 'ի յանցանաց, այլովքն. |
| Աղքատ 'ի գիտութենէ, բարեաց, մտօք. | Կրտսեր իմաստութեամբ, դատաստանի և օրինաց։ |

388. Նոյնպէս և բայածականը կ'առնէ տրական ու բացառական խնդիր.

| | |
|---|---|
| Մերձենալի մարդկան, 'ի մարդկանէ. | Գովելիք աշխարհի, 'ի մէնջ. |
| Ընդունելի ամենեցուն, յամենեցունց. | Աչաց տեսանելի. |
| | Ճանապարհ գնալի ոտից և սմբակաց. |
| Երանելի ամենեցուն, յամենեցունց. | Ձեռաց շօշափելի, զննելի։ |

389. Շատ տեղ ալ՝ որ և իցէ գոյական անունները խնդիր կունենան քովերնին՝ չէ թէ իրենց, հապա զօրութեամբ էական բայ կ'իմացուի որ յարաբերականով.

Աղս տեսակաւ, այլ ոչ համեղութեամբ. — ըսել է, ես որ աղ եմ տեսակաւ, [illegible]։

Չափով կեանք. Ծուլութեամբ կեանք. — ըսել է, կեանք որ չափով է, որ ծուլութեամբ է։

Խօսիւք պատարագ. — ըսել է, պատարագ որ խօսիւք լինի, բանաւոր։

Առ 'ի քէն իմաստութիւնդ. Առ 'ի քէն փառօքն. —ըսել է, իմաստութիւնդ որ է առ 'ի քէն, փառօքն որ են առ 'ի քէն։

Անցաւորք են և թագաւորքն և 'ի նոցանէ սպառնալիք. — ըսել է, և սպառնալիքն որ լինին կամ եղեալք 'ի նոցանէ։

Եղբայր առ 'ի հօրէ կամ առ 'ի մօրէ. — ըսել է, որ է առ 'ի հօրէ կամ եղեալ առ 'ի հօրէ։

Կոյր 'ի ծնէ. Կաղ յորովայնէ մօր իւրոյ. — ըսել է, կոյր եղեալ, կաղ եղեալ։

Արուեստիւ կամ յարուեստէ բժիշկ։
Ազգաւ կամ յազգէ Հրեայ։
Տուր բերել զարծաթն հարիւր քանքար.— այս ինքն որ է հարիւր քանքար։
Որդի ամաց ութից. Այրի ամաց իբրև ութսուն և չորից.— այս ինքն որ էր։
Առնուլսուր երկսայրի՝ թզաւ յերկայնութիւն.— Այս ինքն որ իցէ թզաւ։

390. Ածական անուններն ուրիշի բաղդատութեամբ որ բանին նէ [1] սովորաբար քան բառով խնդիր կառնեն.
Հատ մանանխոյ փոքր կամ փոքրագոյն է քան զամենայն սերմանիս. բուսանի և լինի մեծ քան զամենայն բանջար։
Թեթև քան զօդ։ Թեթևագոյն քան զարծուիս։
Գերազանց քան զմիտս։
Քան զամենայն վեհագոյն։
391. Երբեմն ալ սեռական կամ տրական կ՚առնեն.
Ամենայն նախարարացն աւագ։
Ամենեցուն վեհագոյն։
Օրինակաց գերագոյն։ Բարձրագոյն նմին։
Եւս վատթար ամենեցուն։ Աստոյ սուտ։
Գերազանց մտաց։ Յոյժ գերազանց առ հասումն իմացմանց։

---

1 Ըստ ինքեան հարկաւ բաղդատական ածական չկայ մեր լեզուին մէջ, հապա յայտնի կամ զօրութեամբ՝ քան բառով կամ ուրիշ խնդրով կ՚ըլլան հաւասարապէս թէ պարզերը՝ թէ գոյն բառով բարդածներն, ինչպէս կըտեսնես օրինակներուդ մէջ։ Ու գոյնով բարդերը՝ տիրապէս բաղդատութիւն չեն բերեր, հապա կըստակացընեն միայն. ինչպէս, Վարժապետ վեհագոյն, լեառն բարձրագոյն, ծայրագոյն գահ. որ խիստ վեր, խիստ բարձր կընշանակեն։ Հանգամանք լինելութեան արարածոյս և այլոց հնագունից իրաց.— չէ թէ քան զանոնք աւելի հին ըսել է, հապա խիստ հին։ Երբեմն ալ բնաւ չեն փոխեր բառն. ինչպէս, Ծնն անեղ յանեղագունէն իջեալ Հօրէ։ Յարուցանել ամբարտակս սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ։ Ոչ գտան համեմատ դստերացն Յոբայ ազնուագոյնք 'ի ներքոյ երկնից — ըսել է՝ անեղ հօրմէն, քիչ մը բարձր, անոնց պէս աղուոր։

Ոչինչ նուազ էր կոյսն արքային հասակի. — այս ինքն քան զհասակ։

392. Քիչ տեղ ալ բացառական.

Յայլոցն վերագոյն. Յըղձիցն վերագոյն։

Ի յօդապատ մարմնոյ ’ի վեր։

Զօրեղագոյնք ’ի սոցունց. — այս ինքն. քան զսոսին։

Հին էր ժամանակաւ ’ի նմանէ. — այս ինքն հին քան զնա։

393. Իսկ երբոր առանց բաղդատութեան՝ նմաննե-րու մէջ աւելին կամ պակասն ըսել պէտք ըլլայ նէ, կ’առնեն սեռական, բացառական, նախդրիւ տրական, ’ի մէջ բառով.

Յընտիր չիրմաց մերոց Թաղէա։

Մեծդ դիւցազանց։

Մեծն ’ի ձէնջ. անմեղն ’ի ձէնջ. կրտսերն ’ի նո-ցանէ. ծերագոյնքն ’ի նոցանէ։

Մեծն ’ի մարգարէս. կրտսերագոյն յորդիս նորա. նախդ ’ի վկայս. տկարագոյն յանասունս։

Ի մէջ իմաստնոց իմաստնագոյն։

394. Միջակ անուններն, Թէ մինակ՝ Թէ գոյականի հետ, սովորաբար բացառական խնդիր կ’առնեն.

Անկցի ’ի մի ’ի քաղաքացն այնոցիկ։

Ի միում յաւուրց։

Եղիցի բան քո իբրև զմիոյ ’ի նոցանէն։

Երկու ’ի նոցանէ։ Հինգն ’ի նոցանէ։

Զի՞նչ գտեր յամենայն ընչից քոց։

Պիղծ ինչ ’ի կերակրոցն։

Ո՞վ ’ի ձէնջ. ոք ’ի մէնջ. մի ոմն ’ի դպրացն. ո-մանք յայնցանէ։ Իբրև զայլս ’ի մարդկանէ։

Իւրաքանչիւր ոք ’ի ձէնջ։ Ոմանք ’ի ժողովրդենէն։

Ամենայնք ժամանակագրաց։ —

Վասն որո՞յ գործոյ ’ի նոցանէ։

Ի մասն ինչ միայն ’ի նմանէ։

Միոյ ուրուք կուսակալի 'ի ծառայից տեառն իմոյ։
Ո՞վ ոք իցէ 'ի ձէնջ մարդ։ Ցո՞ ոք 'ի ձէնջ ՝հայր։

395. Շատ անգամ ալ յոգնակի սեռական ու նախ-
դրիւ տրական կ'առնեն.

Հասանել 'ի մի քաղաքացն։ Ի միում աւուրց։
Եղիցին և քո բանք իբրև զմիոյ նոցա։
Մի ումն քաղաքացւոց։
Մի կարծեր ինչ նիւթոց։
Իբր 'ի պղծոյ իմեքէ արարածոց։
Ի տան ուրումն իշխանացն։
Թէ ոք պիտանիք իցեն ձեր։
Իւրաքանչիւր ոք սրբոցն։ —
Ո՞վ յորդիս. Ոչ ոք 'ի նոսա։
Ոչ ոք 'ի թագաւորս։
Ոչ ինչ է յամենայն ախտս չար քան զլրբութիւն։

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ ԵՒ ԲԱՑԱՑԱՅՏԻՉ

396. Գոյական անուն մը կամ դերանուն մը ուրիշ անուան քով, բաց 'ի խնդիր ըլլալէն՝ որ տեսանք խրնդիրներուն գլուխը, կամ յատկացուցիչ է կամ բացայայտիչ։ Անոր համար երկուքն ալ մէյտեղ տեսնենք։

397. Երբոր մէկ բանին որուն ըլլալը կ'ուզենք յայտնել նէ, քովը սեռական անուն մը կամ դերանուն մը կը դնենք, որ յարակցութիւն կ'ըսուի, մէկալն ալ յարակցեալ (319)։ Աշխարհաբառ լեզուի մէջ յատկացուցիչը միշտ առաջ կը դրուի յատկացեալէն. գրաբառին մէջ՝ շատ անգամ ետքը, բայց առաջ ալ կը դրուի.

Բան քո. քո բան։ Ծոց իւր. իւր ծոց. — քու խօսքդ, իր ծոցը։

Արքայութիւն երկնից. երկնից արքայութիւն. — երկնքի թագաւորութիւնը։

Պտուղք ծառոց. ծառոց պտուղք. — ծառերու պտուղներ։

Պտղովք ծառոց. ծառոց պտղովք. — ծառերու պտուղներով։

Գլուխ և ձեռք և ոտք նորա։ Ջեր ոգի և շունչ և մարմին։ Ջհայր քո և զմայր։

Սէրն Աստուծոյ և ընկերին. Մթերք ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց։

Աւուրք չորեքտասան՝ հարսանեացս։

Ամենայն զօրքն պատերազմիկք Հայոց։

Աւեր զհանդերձն գեղեցիկ քո։

Զզօրսն ամենայն՝ Պարսից։

Ի վերայ լերանց բարձանց՝ իւրեանց։

Ի լերինն բարձու՝ Իսրայէլ՚ի։

Աւուրք ամաց կենաց իմոց կամ աւուրք կենաց ա-մաց իմոց ոչ հասին յաւուրս ամաց կենաց հարց իմոց։

Կրտսեր որդւոյն Յազկերտի դայեակն. —այս ինքն դայեակն կրտսեր որդւոյն։

Առանց բարեգործիդ հրամանաց ակնարկութե՛. —այս ինքն առանց ակնարկութեան հրամանաց բարեգործիդ։

398. Բայց միջակ անուն ու յարաբերականն ո, որ, միշտ առաջ կըդրուին. Ո՞յր որդի, որոյ որդին, որոյ ձայնն, որոյ որդիքն, որոց իմաստութիւնն, որոց ոգիքն։

399. Յատկացեալը շատ անգամ չկրկնուիր նոյն խօս-քի մէջ, ինքիրեն կ'իմացուի. ինչպէս,

Ժանիք նորա՝ կորեան առիւծու. —այս ինքն՝ են կամ էին ժանիք կորեան։

Ոչ օգտի և խաղաղութեան բանս խօսի, այլ չա-րի. —այս ինքն չարի բանս։

Զի էին գործք իւրեանց՝ չարութեան. — այս ինքն գործք չարութեան։

Աստուծոյ բարբառ է, և ոչ մարդոյ. —այս ինքն ոչ մարդոյ բարբառ։

Հրեշտակի կարծեցին զաստուածային բարբառն. —այս ինքն հրեշտակի բարբառ։

---

400. Երբոր մէկ անուան կամ դերանուան ինչ կամ ով ըլլալը կամ ինչ մտքով առնուած ըլլալը յայտնել կ'ուզենք նէ, քովը նոյն հոլովով ու թուով համաձայն ուրիշ անուն մը կամ դերանուն մը կըդնենք, որ բա-ցայայտիչ կ'ըսուի մեկալն ալ բացայայտելի կամ բացայայ-տեալ (320). ինչպէս, Վահան զօրավար, ըսել է ան Վա-հանն որ մարդ է ու զօրավար. Զօրավարն Վահան,

ըսել է՝ ան զօրավարն որ անունը Վահան է. Յաթոռն Աստուծոյ՝ յերկինս, ըսել է, Աստուծոյ աթոռն՝ այս ինքն կ'ուզեմ ըսել երկինքը. իսկ Յերկինս՝ յաթոռն Աստուծոյ, ըսել է, երկինքն՝ որ Աստուծոյ աթոռն է. ու թէպէտ ինքիրեն յայտնի է, բայց հոս աթոռ կըմոռածուի կոր, աթոռի պէս առնուած է, ուստի այսինքնով չմեկնուիր, հապա որ է ըսելու է: — Ասանկ կ'ըսուի,

Ասանէթ՝ դուստր Պետափրեայ քրմի:

Արքայի Դաւթի. Դաւթի արքայի:

Կղէոպատրաւ դստերըն համդերձ:

Համդերձ կնաւ իւրով Սափիրաւ:

Մեւք քարոզեցաւ, ինև և Սիղուանոսիւ և Տիմոթեիւ:

Ի Դարեհէ արքայէ:

Յինէն՝ 'ի կնոջէ սամարացւոյ:

Ետ զԿղէոպատրա զդուստր իւր: Զմեղմն ձեր, զոր արարէք, զորթն՝ առի և այրեցի: Թողեալ'ի բաց զփառսն հայրենի՝ զքահանայութիւն:

Հողմոյ մահուն, որ ընկենու զծառս՝ զմեզ:

Շրջել զեղբարբք իւրովք զորդւովքն Իսրայել'ի:

401. Շատ անգամ բացայայտիչն՝ այս ինքն, այս ինքն է, այս է, այսինքն, մեկնելու բառերով ալ կըդրուի.

Նուագումք, այս ինքն ոգիք իբրև ութ:

Ի նա հաւատացեն, այս ինքն 'ի Յիսուս Քրիստոս:

Ի ձեռն վարագուրին. այս ինքն է մարմնոյ իւրոյ:

Ջուրն, այս ինքն զբանն Աստուծոյ:

Սաղարթօք վարսից, այս է արտաքինն դիմօք բարեշուք կերպից:

Հրաշալի պատուով յարգեալ, բանիւ ասեմ և մտօք:

402. Ասանկ՝ բայ բայի ալ կ'ըլլայ բացայայտիչ:

Ցամաքեցաւ խոտն. այս է մեռաւ:

403. Տեղի և ուրիշ բանի յատուկ անուններըʼ շատ անգամ ածականի պէս առաջ կըդրուին, ուստի և սովորաբար անհամաձայն կըդրուին ուղղական.

Եփրատ գետոյ.
Ապար աշխարհին.
Արեգ քաղաքի.
Ովկիանոս ծովուն.
Քաղոց ամսոյ. 'ի Քաղոց ամսեանն.
Մերկելիլ մրգոյ, բարտի ծառոյն.
Ջօնէր լերամբ.

Առ Եփրատ գետով.
Ի Սիոն լեռնէ, 'ի Հռովմ քաղաքէ, յԱյրարատ գաւառէ, 'ի բարտի ծառոյն.
Զմռլախինդ արմատն.
Եղևին ծառոց. մայր փայտիւք. բիւրեղ և դահանակ և սարդիոն ակամբք.
Գովեցար ովսաննա երգով։

404. Բայց համաձայն ալ կ'ըլլան.

Սեփարուիմայ քաղաքի.
Ահեկանի ամսեան.
Առ Հիւդասպաւ գետովն։

Ի Սիոնէ լեռնէ։
Յարածանոյ գետոյ.
Սարոյց ծառոց։

405. Երբեմն մարդու անուններն ալ անհամաձայնʼ ածականի պէս առաջ կըդրուին.

Սանատրուկ արքայի.
Յուլիոս կայսեր.
Բակուր բդեշխի.
Աշխէն տիկնաւ.

Յաւգոստոս կայսերէ.
Յաղեքսանդրոս դարբնէ.
Զքանան մանկանէն.
Արտեմիս դից։

406. Տեղի և իրաց անուններն երբեմն ետև ալ կըդրուին անհամաձայն. Քաղաքին Սեփարուիմ, լերինն Կաւկաս, գետոյն Ախուրեան, ամսոյն Ադար, 'ի քաղաքին Երուսաղէմ, 'ի լերինն Սիոն, 'ի լերինն Թաբովր, յամսեանն Նիսան։

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ ԳՈՅԱԿԱՆԻ ՀԵՏ

407. Ածական անունն (9) աշխարհաբար լեզուի մէջ միայն առաջ կը դրուի, գրաբարին մէջ առաջ ալ ետև ալ. Մեծ ծառ, ծառ մեծ. արդար այր, այր արդար։

408. Հասարակ անուն ածականներն անմիջապէս գոյականէ առաջ որ դրուին նէ, սովորաբար չեն համաձայնիր անոնց հետ, ոչ հոլովով ոչ թուով. այս ինքն չեն հոլովիր անոնց պէս. հապա ուղղական կըմնան. ինչպէս,

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Մեծ ծառ. | Մեծ ծառք. |
| Մեծ ծառոյ. | Մեծ ծառոց. |
| Մեծ ծառով. | Մեծ ծառովք. |
| 'ի Մեծ ծառոյ. | 'ի Մեծ ծառոց. |
| զՄեծ ծառ. | զՄեծ ծառս։ |

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Արդար այր. | Արդար արք. |
| Արդար առն. | Արդար արանց. |
| Արդար արամբ. | Արդար արամբք. |
| յԱրդար առնէ. | յԱրդար արանց. |
| զԱրդար այր. | զԱրդար արս։ |

409. Ասանկ անհամաձայն կ'երթան շատ տեղ՝ թէ և միջանկեալ բառով հեռացած ըլլան գոյականէն, որ շատ հեղ կ'ըլլայ.

Երանական պատահեալ վիճակի:
Հոսանուտ վիճակեալ ընութեան:
Անաչառն եմք մատնեալ ատենի:
Զանդարձն 'ի չարեաց զմեղաւորէն:
Երկայն կարօտանամք բանից:
Պղծալիցն խուրեանց շրթամք:
Բազում ծնանիցին նմա որդիք:
Բազում ունէր ուստերս:

410. Բայց շատ հեղ ալ կրհամաձայնին վերջահոլովներուն, մանաւանդ հեռու ընկածներին, որ աշխարհաբառին մէջ ընաւ չըլլար. ինչպէս,

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Մեծ ծառ. | Մեծ ծառք. |
| Մեծի ծառոյ. | Մեծաց ծառոց. |
| Մեծաւ ծառով. | Մեծօք ծառովք. |
| 'ի Մեծէ ծառոյ. | 'ի Մեծաց ծառոց. |
| զՄեծ ծառ. | զՄեծ ծառս: |

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Արդար այր. | Արդար արք. |
| Արդարոյ առն. | Արդարոց արանց. |
| Արդարով արամբ. | Արդարովք արամբք. |
| յԱրդարոյ առնէ. | յԱրդարոց արանց. |
| զԱրդար այր. | զԱրդար արս: |

Անահիտ՝ ծնունդ է մեծին արին Արամազդայ:
Քաջի և փառաւոր Թագաւորի:
Մեծաւն և կատարելոյն և անձեռագործ խորանաւն:
Մեծամեծայն և անբաւ խնամոցն:
Ի պղծոց և 'ի նորաձայն բանից:
Փախուցելոյ 'ի բարկութենէ եղբօրն առաջնորդեաց արքայոյն:

Երկնաւորին վերակոչեաց հրաման արքային։
Հրաշափառագունին պարտ էր անցանել բանին։
Ի քառասնաչարաց աստի բերմանց։
Ի դառնաղայն թափէ զլինքն Նոյնոյ.

411. Ինչպէս տեսար, անմիջապէս մօտիկները համաձայնին ալ նէ՝ վերջահոլովներուն միայն կըհամաձայնին, և ոչ յոգնակի նախդրիւ հոլովներուն, այսինքն յոգնակի ուղղականի, հայցականին և նախդրիւ տրականին. զի անմիջապէս մօտ որ ըլլան՝ չըսուիր սովորաբար Մեծք ծառք, արդարք արք, զմեծս ծառս, յարդարս արս։

412. Բայց հեռու էյնօղներուն՝ ատ ալ կ'ըլլայ խիստ վայելչաբար. ինչպէս,

Երկու ահեղ զօրաւորքեալք աներևոյթ Հրեշտակք։
Մեծամեծքն և պատուական առաքեալք։
Եւ այլ եւս բազումք որ 'ի սոյն յարկին բանք։
Արձակել 'ի վերայ նոցա նորագործս լի բարկութեամբ գազանս անծանօթս։
Զընտիր ընտիրսն և զգեղեցիկ անօթսն տարայք։
Ընտրեցէք վկայեալս 'ի ձէնջ արս եօթն։
Բազումս բազմաբերս և գեղեցիկս 'ի նմա տնկեաց հովիտս։
Ի բազումս և 'ի զանազանս բաժանեին անուանս և կերս։

413. Գոյական դերանուններուն ածականը միշտ համաձայն դնելու է հոլովով ու թուով. Վրիպեցելոյս ինձ. փրկելոցս մեզ. զտկարս զմեզ. զկորուսեալս զմեզ, զօտարացեալքս զմեզ (355)։

414. Բայց չորս թուական անունները, մի, երկու, երեք, չորք, և միջակ անուններն երկոքեան, ամենեքեան, իմն կամ ինչ, որ, ոմն, ոք, և ածական դերանուններն և դերանուանական ածականներն անմիջապէս առաջ ալ որ դրուին նէ, սովորաբար կը համաձայնին հոլովով ալ թուով ալ, շատը նախդրիւ հոլովներուն ալ. ինչպէս, Միոյ առն, 'ի միում աւուր, 'ի միջի մարդոյ, երկուց

աւուրց, երկուս արս, երկուք և երիւք վկայիւք, 'ի չորից ծագաց. զերկոսին որդիս. ամենեքեան ծերքն, ամենեցուն բնակչաց, առանց երից միջնորդի, մի՛ իւիք սաստիւք. որով հրով, յորմէ արարչէ, որոց անասնոց. 'ի չարէ ումեքէ արարչէ, ոմանք արք, զոմանս եղբարս։

Այսր աւուր, այդմ շնորհի, այնու օրինակաւ, այնց ժամանակաց. 'ի սմին աւուր, նովին կամ նովիմբ անուամբ, նոքիմբք պարծանօք։

Իմոյ իմաստութեան, քում հրամանի, քով կամ քոյով ձեռամբդ, 'ի քումմէ ձեռանէ. իմոց բանից, 'ի ձերոց ազգականաց, նորայոյն ախտից։

Բայց քանի մը հարկաւոր գիտելիք կան.

415. Երկոքին ուղղական, եզակի կ՚ըսուի Երկու որդիք, երկու արք, երկու պարտապանք. չէ թէ երկոքեան որդիք։

416. Միջակ անունը որ՝ նախդրիւ հոլովէ մօտ չհամաձայնիր, հապա միայն հեռու, ինչպէս ամէնքը. Որ մատեանքն, զոր օրէնս. ո՞ր մեծատունք, զո՞ր չարիս։— Զո՞րս հիւսեցից չարս և տողս բանից։— Եւ ամենևին գոյականէ ետև չդրուիր։

417. Այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն դերանուններուն կարճ նախդրիւ հոլովները չեն բանիր մօտ. չըսուիր Այնք բանք, զայնս բանս. նոյնք բանք, զնոյնս բանս. հապա կ՚ըսուի Այնոքիկ բանք, զայնոսիկ բանս, նոքին բանք, զնոսին բանս։ Հեռու ըլլան նէ, կ՚ըսուի, Այնոք էին լեալ յաջողուածք. զայնս ես ասացի. զնոյնս նկատելով հերոդոտոս։

Իսկ վերջահոլովներուն, ինչպէս ըսեր ենք 'ի 128, սովորաբար կարճերն առաջ կըբանին, երկաններն ետքը. թէպէտ երբեմն ընդ հակառակն ալ կ՚ըլլայ. ինչպէս,

Ցայսմանէ տեղւոջէ, այսոցիկ տարակուսանաց, այնոցիկ մարդկան, յայսցանէ 'ի գործոց։—

Առնդ այդր, ուխտիս այսմ, 'ի տանս յայսմ, տեղւոյն այնմ, 'ի տեղւոջն յայնմ, տեղեացն այնց մարդկին, զարսն զայնս, յաւուրսն յայնս։

Իսկ սոյն, դոյն, նոյն, ինչպէս նաև սորա, դորա, նորա վերջահոլով՝ միշտ առաջ կը դրուին, ամենևին գոյականէ ետև չեն դրուիր։

418. Իմ, քո, քոյ, մեր, ձեր, իւր, սորա, և այլն, դերանուանական ածականները նախդրիւ հոլովներուն՝ միայն թէ որ առաջ դրուած ու հեռու ըլլան նէ, և դիմորոշ յօդ ունենան նէ կը համաձայնին. Ոչ զիւրմն խրատելով որդիս. զքոյն խոհերս։ Քոյինքն գալոց են ազգք։ Իսկ մօտ՝ չեն համաձայնիր ամենևին, ոչ առաջ ոչ ետքը, հապա էական դերանունի սեռականի պէս կը կենան. Նոյնպէս երբեմն վերջահոլովի հետ ալ. Բանք իմ. քո կամ քոյ բանք, բանք մեր, ձեր բանք, զբանս իմ, զբանս իւր։ — Ընդ իմ ձեռամբ, քո ձեռամբդ, մեր թագաւորի, մեր կենացն, նախնոյն ձեր հօր, իւր մարմնոյն, իւր գործոյն։ — Յետ երթալոյն իմ, զօրութեամբ քո մեծաւ, հօր իւր, ցաւոց իմ, հաւատովք ձեր, 'ի չարեացդ քո։

419. Իմն ինչ յոգնակի չունենալուն, թուով չեն կրնար համաձայնիլ, միշտ յոգնակիի քով ալ եզակի կը դրուին։ Բայց շատ հեղ հոլովով ալ անհամաձայն կը դրուին, առաջ ալ ետև ալ. Ազնուականի իմն ցանկալ, բարկութեամբ իմն, ընդ պատենիւք իմն, ոչ առիմաստութեան ինչ, յետ աւուրց ինչ, իրօք ինչ։

Բայց առաջ որ դրուին նէ, խօսքի սկիզբը մինակ չեն դրուիր, իրենցմէ առաջ բառ մը կ'ուզեն.

Մեծ իմն անուն.
Այսպիսեաւ իմն յարմարութեամբ.
Օտարոտի իմն դից.
Նա՝ իմն ազնուականի են ցանկացեալ.
Փոքր ինչ դատաստան.
Սակաւ ինչ ժամանակի.

Իմով ինչ շնորհօք.
Բազում ինչ աւուրց.
Է ինչ և այլ խորհուրդ.
Ունիք ինչ կերակուր.
Մի ինչ վնաս առնել։
Յորժամ ինչ մեղաց պատահէ.
Զի թէ ինչ պատճառ վը-

նասու կարծէին.
Եւ ինչ համեմատութիւն ոչ գոյ 'ի նոսա.

Ի վերայ ինչ բանի.
Վասն ինչ պիտոյից.
Աստ ինչ ուտել ոչ ունին:

420. Մի, երկու, ո՞ր հարցականը, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, ընդհանուր կանոնին պէս (408) անհամաձայն ալ կըդրուին երբեմն առաջ.

Մի բանին, մի ուսով, 'ի մի բանէն.
Երկու ամաց, երկու ընկերօք, երկու խրօք.
Ո՞ր ձևով, ո՞ր աչօք, յո՞ր ազգէ, ո՞ր մեղաց.
Այս նշանի, յայս լերին, այս օրինակաւ.
Այն ժամու, յայն տանն, այն երեսուն արամբ, յայն կողմանէ.

Այս բանք, այս բանիւք.
Այն արք, այն արանց, առ այն արամբք.
Զայդ նշանսդ, յայդ տեղիսդ, յայն գործս.
Սոյն և այսր իրի, 'ի սոյն աւուր.
Ի նոյն ժամանակի, նոյն շաւղօք, 'ի նոյն հօրէ, սոյն խորհուրդք, նոյն բանքն, 'ի նոյն գործս:

421. Նոյն ինքն մէկտեղ մէկ ածականի պէս որ բանի նէ, կրնայ համաձայնիլ ալ՝ չհամաձայնիլ ալ.

Նորին ինքեան հիւանդին, նմին ինքեան Քրիստոսի.
Նոյն ինքն տեառն, նոյն ինքն փրկչին անուամբ.
Ի նոյն ինքն 'ի վերայ այրին. — այս ինքն 'ի վերայ նոյն ինքն այրին.
Նոյն ինքն յինէն իսկ առե-

լով մասամբն. — այս ինքն նովին ինքեամբ մասամբն.
Ի նոյն ինքն յԱստուծոյ.
Ի նոյն ինքն 'ի Թշնամեաց.
զնոյն ինքն զքահանայից.
Զնոյն ինքն կեանս. զնոյն ինքն զօրէնս.
Զնոսին ինքն զկառսն:

422. Ամէն ածական՝ գոյականէն ետքն որ դրուի նէ, սովորաբար միշտ կը համաձայնի հոլովով ու թուով, նախդրիւ հոլովներուն ալ. ինչպէս,

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ծառ մեծ. | Ծառք մեծք, մեծամեծք. |
| Ծառոյ մեծի. | Ծառոց մեծաց. |
| Ծառով մեծաւ. | Ծառովք մեծօք. |
| 'ի Ծառոյ մեծէ. | 'ի Ծառոց մեծաց. |
| զԾառ մեծ. | զԾառս մեծս, մեծամեծս: |

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Այր արդար. | Արք արդարք. |
| Առն արդարոյ. | Արանց արդարոց. |
| Արամբ արդարով. | Արամբք արդարովք. |
| յԱռնէ արդարոյ. | յԱրանց արդարոց: |
| զԱյր արդար. | զԱրս արդարս: |

423. Երբեմն անհամաձայն ալ կ'ըլլայ որ և իցէ հասարակ ածականը, մանաւանդ անցեալ դերբայն. Սիրոյն հոգևոր, արեան քոյ սուրբ, տանն արքունի, սկայի ումեմն վայրագ և անձոռնոյ, հրամանաւ արքունի, պսակաւն փշեայ. 'ի տանէ Թորգոմական կամ Թորգոմեան, 'ի վերին իմաստութենէն 'ի սուրբ և 'ի խաղաղարար. 'ի մէջ այդչափ վկայից բազում. Երկու մասամբք՝ տըկար և զօրաւոր. 'ի զօրացն արքունի, 'ի բանից անտի Յուդայ 'ի զօրեղ և 'ի գեղեցիկ. 'ի տեղւոջ մի սուրբ, 'ի դրախտին եդեմական, գազանք ինչ անհնարին, ժամք հարուստ, բանք սուրբ. բազում ճնաւք գնացին յաշխարհն՝ հոգևոր և մարմնաւոր. զանգակս ոսկի, փայտս եղևնեայ, 'ի վիշտս մեծ, զօրս կուտէր բազում յոյժ, սրիկայս բազում, զամենայն բլուրս բարձր, չարիս մեծամեծ, ձկունս սակաւ ունէին, գրաստս պատրաստական, արգիւնս բաւական, զայսմ պիղծ, զպարգևս արքունի, բազում կազմուածս ոսկեղէն և արծաթեղէն,

Ի վերայ աշխարհիս Վասպուրական կոչեցեալ։
Ըստ առակաւոր բանին՝ ասացեալ 'ի դէմս հօր։
Մարդոյ որսացելոյ և ախտիւ գերեալ։
Ի տեղւոջ միոջ ուժգին ամրացեալ։
Բազում ազգք ընդ քեզ հեծեալ յերիվարս։
Ոսկեհուռն հանդերձից ընդելուզեալ մարգարտով։
Հարջիք զամենայն քաղաքս ամրացեալ։
Ետես երկուս եղբարս արկեալ ուռկան 'ի ծով։

424. Ասանկ ալ Թուական անունները, Մի հը՝ միջակը, և ածական դերանուններն ալ կ'ըլլան երբեմն. Յետ տարւոյ մի, աւուրց հինգ, արանց եօթն, ամաց յիսուն և ութ, լտերց հարիւր, ասպարիսօք հինգ, օթիւք հնգետասան, դրամբք հարիւր և քսան, յաւուրց քառասուն։—Միայնաւորի մի, կնոջ մի այրւոյ, զծառով մի։ — Բանիս այս, ծերոյն այն, 'ի ժամանակին յայն, դեղովս այս հոգևորաւ, 'ի բանէդ յայդ, յընչիցն յայն։

425. Յետադաս գոյականէն ետքը շաղկապով կապած ածակ մ'ալ որ դրուի, նախադասին պէս ան ալ շատ անգամ անհամաձայն կըդրուի.

Ըստ հոգևոր մասին և ըստ մարմնաւոր։
Ոչ սակաւ պատուոյ նշանակ է, այլ մեծ և բարձրագոյն։
Եւ անտի տասն բանի տեղեկացեալ, կամ ևս աւելի՝ քսան։
Հանդերձ անմոռաց անուամբ և հռչակելի։
Զինն ժամուն կամ զտասն։
Յամենակալ Տեառնէն և յամենակարող։
Ի զինուորական կարգէ և յաշխարհական.
Դաւիթ 'ի կրօնաւորական կարգէ և Սարգիս յաշխարհական։
Բազում են մեզ բանք և դժուարապատում։
Դժնդակ վարուց և աղտեղի։
Անխարդախ մարդկան և պարզամիտ։
Ա՞յնչափ գնոց զգեօղն վաճառեցէք. — այո այնչափ։

Հեշտալուր թանիւք և քաղցրալից։
Մարդկեղէն իրօք, և ոչ աստուածայնս։
Իմանալիքս հոգեկան կրիւք միայն, և մարդիկ՝ հոգեկան և մարմնական։
Հանդերձ չորիւք բիւրուք և աւելի։

426. Շատ գոյականներու, հասարակ անուն են նէ, ամէնը մէկտեղ մտածելով՝ եզակի կըդրուի շատ անգամ ածականը, թէ և ետև դրուի. եւս առաւել թէ որ նշանակութիւննին ալ մօտ է իրարու։
Բուզանդ ցնծութեամբ և ուրախութեամբ։
Սահակ հացիւ և ջրով։
Բարկութեամբ և սրտմտութեամբ և զայրացմամբ Ղեւոնդ։
Երկիւղիւ և խռովութեամբ Բուզանդ։
Ընդ որթով և ընդ թզենեաւ Խորեն։
Զմարմին և զարիւն իւր տուրբէ կամ ղանատաղաչան։
Բայց ամենուն վրայ զատ զատ որոշ հասկըցընել պէտք ըլլայ նէ, յոգնակի ալ կըդրուի.
Փոխատուի և փոխառուի 'ի մի վայր հասեալք։
Ա՛ռ զարծաթ և զոսկի պահեալս 'ի գանձ տան տեառն։
427. Իսկ թէ շատ գոյականները յատուկ անուն են նէ, սովորաբար յոգնակի կըդրուի յետադաս ածականը.
Սաւուղ և Յովնաթան սիրելիք։
Գաբրիէլ և Միքայէլ Ղեւ.։
Եզրայ և Նեեմեայ արձակեալք 'ի Բաբելոնէ։
Դեկոսի և Վաղեսի ամբարշտացն։
Նախադաս եզակի ալ կըդրուի. Սրբոյն Պետրոսի և Պաւղոսի. Զփառաւորսն Աբրահամ և զՂովտ։
Իսկ յոգնակի առաջ դրուի նէ, բացայայտելին հետ կըխառնուի (400). Արդարոյն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ։ Երկամբք սրբոյն Պետրոսի և Պաւղոսի։ Վեհափառիցն Արտեմեայ և Աթենայ։

428. Անեզական գոյականներուն կամ եզակի ձայնով յոգնակիներուն շատ անգամ եզակի կը դրուի ածականը, թէ և հոլովով համաձայն.

Առ հարսն եղելոյ աւետեացն.
Անցաւորիս կենաց.
Նորոյ շնորհաց.
Այնպիսում չարեաց.
Մեծաւ փառօք.
Մեծաւ տանջանօք.
Բացաւ երեսօք.
Բացաւ աչօք.
Յայնպիսում կապանաց, այսինքն յայնպիսւոյ (33).
Յայլմէ մարդկանէ։—
Փառք բազում.
Արհաւիրք մեծ. օրէնք աստուածային.
Զփառսն յաւիտենական.
Վարս անարատ ունել.
Փառացս անցաւորի.
Փառօք մեծաւ.
Մանկտի մանրիկ.
Մարդիկ փափուկ.
Մարդկան եղականի։

Ասանկ ալ ոչ միջական, ու ածական դերանուններ, ու դերանուանական ածականները.

Վասն որոյ պատճառանաց, որով կամօք, յորմէ պատճառանաց և իցէ, որո՞ւմ տանջանաց։
Այոր շնորհաց, այնմ կենաց, յայսմ կենացս, այսու կենօքս։
Իմոյ յանցանաց, քումդ շնորհաց. մերոյ մեղաց, իւրով կամօք, ՚ի քումդ խնամոց, այսինքն ՚ի քոյդ. մեռաւ յիւրում ՚ի մեղսն։—
Գրոցս այսմիկ, սանդղոցն այնմիկ, ՚ի գիրս յայսմիկ, մեղօքն այնու, մարդկանն այնորիկ։
Ի կապանս իմում, ՚ի կեանսն քում, ՚ի կառս իւրում, ՚ի մեղս իւրում, մանկտւոյ իմում։

429. Երբեմն ուրիշ որ և է գոյականներուն ածականն ալ ատանկ թուով անհամաձայն կ՚ըլլայ, մանաւանդ առաջ դրուածը։

Ըստ առաջնոյ բանիցն․
Մեծի դրանց․
Ոսկւոյ աշտանակաց․
Ծանրագունի բեռանց․
Հանդերձելոյ և յաւէժա-կայ բարութեանցն․
Այնպիսւոյ բազմագունդ միայնացելոց․
Այնպիսում խոնարհացն․

Այնպիսում ձգնութեանց․
Որպիսում պսակաց․
Ի փոքունց կողմանց։ —
Ընդ մէջ անդամոցն յօշելոյ․
Ի քարանցն հանելոյ՚ի ջրոյ․
Ցաշտացն հարաւայնոյ․
Վասն այնպիսի իրաց փոքու․
Զօրօք բազմաւ։

Այսանկ ալ օր միջակն, ու ածական դերանուններն ու դերանուանական ածականները․

Վասն որոյ իրաց, որով կամիս պատուհասիւք, վասն որո՞յ արդար վաստակոց։

Այնր պսակաց, այնմ դատաստանաց, զայսու աւուրբք․ առ այնու ժամանակօք, յայսմ պատերազմաց, յայնմ ժամանակաց հետէ, յայսմանէ իրակութեանց, յարտաքնոյն յայնմանէ հրոսակաց, յայնմ աւուրսն։

Սովին բանիւք, ըստ նմին բանից, ՚ի սմին կողմանց, ՚ի նմին աւուրս։

Մերոյս բանից, քում կամ իւրում ծառայից, ձերով պատուհասիւքդ, ՚յիմմէ ջանից, յիւրում ձեռացն, այս ինքն յիւրոյ (33), ՚ի մերում ամս, ՚ի քում շարագրածուես, յիւրում ժամանակս։ —

Բանքս այս, իրքդ այդ, աւուրքն այն յիշատակօքս այսուիկ, երկոքումբք այսու, թշնամեացս այսմ, զարոդ զայդ, զբանսն զայն, յիրս յայս, ընդ ժամանակս ընդ այն։

Եղբարբք իմով, յոսկերաց իւրմէ, յերկոսին ՚ի ձեռս իմում, յարարածսն քում, ընդ հարս իւրում։

430. Այսանկ եզակի կ՚երթայ սովորաբար Ամենայն, երբոր մօտ ըլլալով համաձայնի (410).

Ամենայնի եղելոցն, ըստ ամենայնի իրաւանցս, այսր ամենայնի առաքինութեանց, ամենայնիւ

այսքանեօք, այլովք ամենայնիւ վարին արուես-
տիւք, յամենայնէ յայնպիսեաց անտի, յայնմ
ամենայնէ վնասակար գազանաց։—
Դրունք ամենայն. գործքն ամենայն, պատգամքս
այս ամենայն. զօրացն ամենայնի, այլոց իրաց ա-
մենայնի. լեռնականօքն ամենայնիւ. զգանձսն
ամենայն, 'ի գաւառս ամենայն, ընդ սուրբսն
ամենայն։

431. Ընդ հակառակն, գոյական անունները թուա-
կան ածականէ ետքն որ դրուին նէ շատ անգամ եզա-
կի ալ կըդրուին.

| | |
|---|---|
| Զերկուս բուռնն. | Հարիւր ոչխարի. |
| Երիւք հարցմամբ. | Չորեք հարիւր և երեսուն ամի. |
| Չորք կանգուն։ | Հազար առն. |
| Յետ հինգ աւուր. | Երկուք հազարօք հեծեալ սպառազինաւ. |
| Վեց առն. | Երեք հազարք այր. |
| Ի վեց կանգնոյ. | Երից հազարաց առն. |
| Եօթն ամ. | Ութ հազար հեծեալ սպառազինաւ. |
| Զեօթն աղջիկն. | Երիւք բիւրուք վահանաւոր զօրու և չորիւք հազարօք հեծելազօր գնդաւ. |
| Յետ ութ աւուր. | Զերկոսին եղջիւր նորա. |
| Ինն այր. | Յերեսին աշխարհն. |
| Տասն աւուր. | Ի չորեցունց կողմանէ։ |
| Տասն բանի. | |
| Ի տասն դահեկանէ. | |
| Զերկոտասան ազգն. | |
| Յիսուն արդար. | |
| Յիսուն արդարոյն. | |
| Քառասուն և միոյ ամի. | |

432. Իսկ առաջ որ դրուին գոյականները, յոգնա-
կի կըդրուին, ու թիւերը հինգէն անդին՝ մանաւանդ
ինչուկ տասը՝ նախդրիւ հոլովներուն սովորաբար եզա-
կի կըդրուին.

Արք երկու.
Ամք երեք.
Կանգնոց երից.
Ամք չորք.
Արք հինգ.
Արս հինգ.
Ոչխարք վեց ընտիրք.
Աւուրս վեց.
Ամք եօթն.
Ամս կամ աւուրս եօթն.
Աւուրք ութ.
Աւուրց տասանց.
Ամս տասն.
Տուփք երկոտասան.
Աւուրս քառասուն.
Հեծեալս եօթանասուն.
Խոյք հարիւր.
Լտերս հարիւր.
Ամք չորեք հարիւր և երեսուն.
Ամաց քսան և միոյ կամ քառասուն և միոյ.
Արք իբրև երկու հազար.
Երդս հինգ հազար։

433. Թիւերը վերջահոլով եղակի չեն դրուիր՝ ոչ առաջ ոչ ետև. չըսուիր Տասին աւուր, տասին աւուրց, աւուր տասին, աւուրց տասին, հապա Տասն աւուր, տասն աւուրց, տասանց աւուրց, աւուրց տասանց։

Մեծ թիւերուն՝ կըգտուի ըսուած գործիականը.

Տասն հազարաւ ընտիր ընտիր արամբք.
Տասն հազարաւ զինու ընտիր զօրու.
Երկոտասան հազարաւ մարտիկ պատերազմող արամբ.
Մետասան բիւրու վահանաւոր զօրօք։—
Ամօք երեք հարիւրով.
Արամբք իբրև վեց հազարաւ.
Հանդերձ զօրօք վաթսուն կամ իննսուն բիւրուն։

434. Նախդրիւ հոլովներուն ալ համաձայն կըդրուին մեծ թիւերը միայն.

Զօրք հազարք դռնապանք.
Զօրք բիւրք մատակ ձիք.
Երկուս հազարս մարս.
Երիս հազարս տաղանտս ոսկւոյ
Զօրս հազարս արս սիկարեանս։—
Տուփք ոսկիք երկոտասանք.
Քաղաքք երեքտասանք.
Ազգք չորեքտասանք.

Արք կեց հարիւրք.
Իշխանք հազարք.
Արք հազարք երեք հարիւրք.
Ոչխարք երեք հազարք.
Զականս երկոտասանս.
Եզինս երկոտասանս.
Աւուրս քառասուն.

Ծարմանդս յիսունս.
Էշս երկուս հազարս.
Արս երիս հազարս.
Զուարակս քսան և երկու հազարս.
Հետևակս հազարս հարիւր քսան.
Դահեկանս երկուս բիւրս:

435. Շատ անգամ ածականի տեղ գոյական մը կըդրուի սեռական՝ յատկացուցչի պէս.

Սպասք ոսկւոյ և արծաթոյ. — ըսել է ոսկեղէն և արծաթեղէն:

Արք զօրութեան. Նահատակք քաջութեան. — ըսել է զօրաւորք, քաջք:

Երկիր բարութեան. Հարուածք անբժշկութեան. — ըսել է բարի, անբժշկելիք:

Պարիսպք բարձրութեան. Աթոռ բարձրութեան. — ըսել է բարձր:

Իրք գարշութեան. Խունկ անուշութեան. — ըսել է գարշելի, անոյշ:

Քուն թանձրութեան. Տկարութեան միտք. — ըսել է թանձր, տկար:

Լսող մոռացութեան. Մեծվայելչութեան փառք. — ըսել է մոռացկոտ, մեծավայելուչ:

Վէմ անշարժութեան. Աման ինչ մորթոյ. Փոփոխմանն անուն. — ըսել է անշարժ, մորթային, փոփոխեալ անունն:

Հօտք բազմութեան այծեաց սևութեան՝ յօդիս դարձեալ սպիտակութեան. — ըսել է՝ բազում հօտք սեաւ այծից յօդիս սպիտակս:

Գործք բարեաց. Գործք յոռութեանց. — ըսել է բարի, յոռի:

Զի՞նչ իրաւանց իցեն այսպիսի իրք. — այս ինքն իրաւացի:

Ետ քեզ 'ի պէտս արկանել զչափով հանդերձման և զօգտիցն. — այս ինքն որ չափով է (389), զչափաւոր և զօգտակար։

Ունայնութե̃ հայրենատուր գնացք. — այս ինքն ունայն։

Ոչ յապականութեան սերմանէն, այլ յանապականացուէն. — այս ինքն ոչ յապականացու։

Նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն, և մեք զանեղծութեանն. — այս ինքն զանեղծն։

Իբրև զարհամարհ մի և զքամահանաց և զերեքդանդեան 'ի մէջ արկեալ կոտէին. — այս ինքն զքամահելի։

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ — ՈՐ

436. Այս դերանունը շատ տեղ եղակի յոգնակի մտքովալ կըբանի, մանաւանդ ուղղական ու հայցական.

Դոքա որ կանդ. բազումք որ ունէին. ամենայն մարդիկ որ ըմպեն։

Որդիքն քո զոր դու սիրեցեր. զգործսն զոր ես գործեմ։

Յամենայն ծառոյ՝ որ է 'ի դրախտիդ։

Զաղբերս ջուրցն՝ որ ելանէ 'ի լեռնոտանէ անտի։

Պղինձ և երկաթ՝ որոյ ոչ գոյ թիւ։

Այնք յորոյ վերայ վկայէ։

Անկողնովքն՝ որով դատապարտեցանն։

Առաքինութեանցն՝ որով փայլեցին։

Զաւելորդացն կերակրոյ՝ յորմէ ամենեքին հրաժարեալ էր։

Յամենայն գործս՝ յորում են մարդիկ։

Եկեսցեն աւուրք յորում թողցեն։

437. Այս դերանուան յարաբերած կամ ցուցըցած բանը Յարաբերեալ կ'ըսուի։ Որովհետև ըսուած ու գիտցուած բանը պիտի յարաբերէ, սովորաբար յարաբերեալէն ետև կըդրուի, ու իրմով կապուած խօսքին սկիզբը, ինչպէս տեսար հիմայ օրինակներուդ մէջ։

438. Բայց շատ տեղ ալ առաջ ինքը կըդրուի, ետքը յարաբերեալն ետևէն կուգայ. ինչպէս,

Վասն զի սուրբ է որ եմուտ անդր տապանակն տեառն.— այսինքն տապանակն որ եմուտ անդր։

Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից. — այս ինքն արքայն որ ծնաւ։

Որ ՚ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաստատուն եղև. — այս ինքն բանն որ։

Վասն որ ՚ի Քրիստոս Յիսուս հաւատոյն. — այս ինքն վասն հաւատոյն որ է (340)։

Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին. — այսինքն երիցունք որ։

Դեմետրիոս և որ ընդ նմա ճարտարք. — այս ինքն և ճարտարք որ ընդ նմա էին։

Իբրև լուան որ յԵրուսաղէմ Առաքեալքն էին. — այս ինքն Առաքեալքն որ էին։

Դու որ գործէին զամբարտաւանութիւն զսոդոմացւոցն խայտառակեցեր. — յն զսոդոմացին որ գործէին։

Զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ գտեալ էր՝ դա ՚ի միում ամի կորոյս զերկիրն ամենայն. — այս ինքն զերկիրն ամենայն զոր։

439. Յարաբերեալը դերանուն որ ըլլայ նէ, շատ անգամ յայտնի չգրուիր՝ զօրութեամբ կ՚իմացուի. որ ըսել է թէ յարաբերելի դերանուն մը և յարաբերական դնելուն տեղը՝ միջակ անուն ո և որ կըդրուի, որ ինքիրեն մինակ ան կընշանակէ (125)։

Որ այժմ կեամ, ըսել է ես որ։

Որ մեռաք մեղացն, — մեք որ։

Ո հովուեսդ. Որ ուսուցանես զընկերն, — դու որ։

Ո՛վ որ պատուհասեսդ, ո՛ որ զպսակս զայս հիւսեցեր, — ո՛վ դու որ։

Որ ՚ի Գէթդ էք, — դուք որ։

Որ ձեզ լսէ. Ո ընակեալ է, — նա որ։

Որ կամին մեծանալ, — նոքա որք։

Ասանկ ալ հոլովները.

Որով դատիս զընկերն՝ զանձն քո դատապարտես. այս ինքն այնու որով դատիս. որուն որ կըդատես նէ։

Ոչ յանդիման առնել կարեն քեզ՝ վասն որոյ այժմս չարախօսեն զինէն. — այս ինքն զայն վասն որոյ. որ բանի համար որ հըշտըրախօսըն հար նէ։

Ոչ որում ցանկացեալդ էք՝ վաղվաղակի տամ գըտանել ձեզ. — այս ինքն զայն որում ցանկացեալդ էք. որտան որ հարբօտըշեր էդ նէ։

Որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց չիցէ լուեալ՝ ՚ի միտ առցեն. — այս ինքն նոքա որոց. որոնց որ չըպատմօւըշտա, և այլն։

Երանի որոց ոչ իցէ տեսեալ և հաւատասցեն. — այս ինքն այնոցիկ որոց ոչ իցէ տեսեալ. որոնք որ դէօւմը ըշլըշան ու հաւատան։

Վնաս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ, զորոց դուք չարախօսէքդ զդմանէ. — այս ինքն յայնց զորոց չարախօսէք. որ բաներըան համար որ հը չարախօսէք հօր։

440. Երբոր ատանկ դերանուն յարաբերեալը զօրութեամբ կ'իմացուի նէ, յարաբերականը կամ միջակ անունը., ու՝ կ'ըլլայ որ ան ծածուկ յարաբերեալ դերանունին հոլովն ինք կ'առնէ, կ'ըլլայ ալ որ չառներ ու ինք իր պէտք եղած հոլովը կըդրուի. ինչպէս երկու կերպին օրինակն ալ քովէ քով դրած կըտեսնես.

Որում խնդրէ 'ի քէն՝ տուր, և որ կամի փոխ առնուլ 'ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս. — այս ինքն այնմ որ խնդրէ, յայնմանէ որ կամի. (երկու կերպը մէկտեղ)։

Խօսել չհամարձակէին զոր ինչ եղեն. — այս ինքն զայն որ ինչ եղեն։

Առանց նորա եղև և ոչինչ որ ինչ եղեն. — այս ինքն ոչինչ յայնմանէ որ ինչ եղեն։

Դու ոչ մտանես, և զորս մտանեն՝ ընդդէմ կացեալ արգելուս. — այս ինքն զայնոսիկ որք մըտանեն՝ արգելուս։

Դուք ոչ մտանէք, և որ մտանելոցն են՝ արգելուք. — այս ինքն զայնոսիկ որ մտանելոցն են։

Դուք ոչ մտանէք, և որոց մտանեն՝ չտայք թոյլ մտանել.— այս ինքն այնոցիկ որ մտանեն։
Զի երևելի կացցեն՝ որ անցանեն ընդ ծովնաւօք.— այս ինքն այնոցիկ որ անցանեն։

Դողացեալ վասն որոյ գաղտն արար.— այս ինքն վասն այնր զոր։
Վասն որ ասեմ թէ, և այլն.— այս ինքն վասն այնր որ ասեմ (634)։

Վասն որոց առաքեցանն 'ի Յովհաննէ.— այս ինքն վասն նոցա որք առաքեցան։
Վասն որք ոչ կարևոր համարին.— այս ինքն վասն նոցա որք ոչ համարին։

Ոմանք յորոց անդ կային.— այս ինքն յայնցանէ որք անդր կային։
Մատեայ առ մի ոմն որ անդ կային.— այս ինքն յայնցանէ որ անդ կային։

Եւ ա՛ռ յորոց ածէրն ձեռամբ իւրով պատարագս.— այս ինքն յայնցանէ զորս ածէր։
Որոշումն արտաքոյ բնութեան՝ շունս գործէ յորմէ բաժանեցաւ և առ որում բնակեաց.— այս ինքն զայն յորմէ, և զայն առ որում։

Ոչ գարշիս յումեքէ, յորոց արարեր.— այս ինքն յումեքէ յայնցանէ զորս արարեր (394)։
Կողոպտեցին հանին և ոչինչ թողին զոր ընդ իւրն ունէր.— այս ինքն ոչինչ յայնցանէ զոր ընդ իւր ունէր։

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

## ԴԻՄՈՐՈՇ ՑՕԴԵՐ — Ս, Դ, Ն.

441. Ասյօդերս, ինչպէս ըսինք ու ցուցըցինք (140), դերանուններու ուժ ունենալով՝ կ՛որոշեն յայտնի կ՛ընեն անորոշ և անյայտ անունը. ս ու դ, ես, դոս, չմս, ժողդ, այս, ոյդ նշանակելովը կ՛որոշեն. իսկ ն, նա, այն նշանակելէն 'ի զատ, յատուկ որոշող ու յայտնի ընող յօդ ալ է, և կըդրուի ան անուան՝ որ առաջուց յայտնի է կամ խօսուեր է վրան. կամ թէ և առաջ չէ խօսուեր ալ նէ վրան, բայց մէկ կերպով մը որոշուած ու մասնաւորուած է: Ինչպէս, անյայտ և անորոշ ծովլի կամ հացի ու ձկներու վրայ խօսուի նէ, կ՛ըսուի,

Ամենայն ուխք 'ի ծով գնան և ծով ոչ լնու:
Ոչ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ և զերկուս ձկունս:

Բայց երբոր մէկ մ՛առաջուց խօսուած կամ գիտցուած ծովլին ու հացին ու ձկներուն վրայ նորէն խօսուի նէ, կ՛ըսուի,

Զի՞նչ արասցուք քեզ և դադարեսցէ ծովս 'ի մէնջ. — առէք ընկեցէք զիս 'ի ծովդ, և դադարեսցէ 'ի ձէնջ ծովդ. և առին զՅովնան և ընկեցին 'ի ծովն, և դադարեաց ծովն 'ի խռովութենէ իւրմէ:
Աւեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն օրհնեաց:

Ասանկ ալ անորոշ ու չմասնաւորած մտքով կ՛ըսուի,

Հոգի սուրբ Աստուծոյ գոյ 'ի քեզ:
Որդի Աստուծոյ զանձն իւր անուանէ.

Իսկ որոշեալ ու մասնաւորած մտքով, թէ և առաջ չէ խօսուեր վրան, կ'ըսուի․

Սուրբ Հոգին իմաստութեան փախիցէ 'ի նենգութենէ։

Որդին Աստուծոյ եկն և ետ մեզ միտս։

Եւ օձն էր իմաստնագոյն քան զամենայն գազանս․ — այս ինքն օձը, օձ գազանը։

Յառաջնում ամին Կիւրոսի արքայի Պարսից, 'ի կատարել բանին տեառն 'ի բերանոյ Երեմիայի մարգարէի, զարթոյց տէր զոգին Կիւրոսի թագաւորին Պարսից։

Իսկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր բանն․ — առջի բանն որոշուելու և մասնաւորուելու համար ունի ն․ իսկ ետևի երկուքը կընշանակեն այն բանն։

442․ Ինչպէս 140 թիւն ըսուածէն յայտնի կ'ըլլայ յօդը շատ անգամ բառի մը վրայ դրուելով՝ զօրութեամբ մէջ կըբերէ դերանուն մը, անուն մը, ինչուկ նաև բայ մը․ ինչպէս,

443․ Դերանուան ցուցնող յօդ․

Ընկալ զփոքրս 'ի տկարէս, և շնորհեա զմեծդ առ 'ի հզօրէդ․ — այս ինքն զայս իմ փոքր յինէն 'ի տկարէ, զայդ քո մեծ 'ի քէն 'ի հզօրէ։

Տեսանեմ զմարդիկս զի շրջին․ — այս ինքն զայս մարդիկ որ աստ մօտ են։

Արքայդ Իսրայէլի․ — այս ինքն դու արքայ կամ դա արքայ։

Զայն կերակուրդ․ — այս ինքն զայն կերակուր քո։

Ի բոլորեսին յայսոսիկ թուղթսն․ — այս ինքն յայսոսիկ թուղթս նորա, իւր։

Աստուծոյն, աստուծոյքն․ — այս ինքն աստուծունը, ան որ աստուծոյ է, անոնք որ աստուծոյ են։

Մաքսաւորն և ձկնորսն և առանց դպրութեանն — այս ինքն այն որ առանց դպրութեան է նաւէր։

Մարմնովն, հոգւովն. — այս ինքն այն որ մարմնով է, այն որ հոգւով է։

Առ ՚ի մէնջս կամ ՚ի մէնջն, առ ՚ի ձէնջն. — այս ինքն այս որ, այն որ ՚ի մէնջ է, ՚ի ձէնջ է։

Զոր արար Դաւիթ յորժամ քաղցեաւն և որ ընդ նմայն էին. — այս ինքն քաղցեաւ ինքն և որ ընդ նմայն էին։

Ոչ այսպէսն՝ յողն և ընդ պատճառաւ է. — այս ինքն այն որ ոչ այսպէս է։

### 444. Անուան ցուցնող յօդ.

Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զինչ լինիցի. — այս ինքն ընդ չոր փայտն։

Աշակերտքն Յովհաննու պահեն ստէպ, և քոյքդ կամ քոյդ ուտեն և ըմպեն. — այս ինքն քո աշակերտքդ։

Այս առակ և դատաւորին. — այս ինքն դատաւորի առակն։

Է բարկութիւն որ գովելի է ՚ի գրոց, որպէս Մովսէսին. — այս ինքն որպէս Մովսէսի բարկութիւնն։

Նա է քաւութիւն մեղաց մերոց, և ոչ եթէ մերոցն միայն. — այս ինքն մերոց մեղաց միայն։

Ընդէ՞ր ոչ բովանդակեցէք զսակ աղիւսոյ ձերոյ որպէս յերէկն և յեռանդ՝ և զայսր աւուրդ. — այս ինքն և զսակդ այսր աւուր։

Բարեաց գործողքն պսակին, չարեացն՝ ՚ի հուրն անշէջ մատնին. — այս ինքն չարեաց գործողքն։

Ոչ էր հաւասար պարզաբար գնալն և այնպիսի պատճառաւն. — այս ինքն այնպիսի պատճառաւ գնալն, երթն։

### 445. Բայ ցուցանող յօդ.

Պաշարեցին զքեզ որպէս և Դաւիթն. — այս ինքն որպէս և Դաւիթ պաշարեաց:
Զգործ տեառն գործէ որպէս և եսս. — այս ինքն որպէս և ես գործեմ:
Եկից և արարից որպէս միշտն. — այս ինքն որպէս միշտ առնէի, արարի:
Զառնելն և զոչն. 'ի բանալն և յոչն. — այս ինքն զոչ առնել, յոչ բանալ:

446. Շատ անգամ մէկ անուանի յօդն՝ իրմէ առաջ գրուած ածականին, յատկացուցչին, բացայայտչին, խնդրին ու մակբային վրան կդրուի. ինչպէս,

### 447. Ածականին վրայ յօդ.

Կորուսելոյս հոգւոյ. Աներկեանն ցնծութեամբ.
Կարօտս անձին. Ճշմարիտքն երկրպագուք.
Ահաւորև մեծս արարածոց. Երկուցն եղբարց.
Ամենակալ մեծանունդ տէր. Ի չորիցն հիւթոց.
Ո՛վ քաջդ խոհեմք. Ցիմուսն անձին.
Արարչականդ քո հրամանաց Իմոցս բանից. քոյովդ բանիւ.
Միածինն որդի. Քումդ կուսութեան.
Զհինգն ևս փեղկ. Ի քումդ լրութեան.
Ի ծայրածաւալն ծովէ. Իւրումն որդւոյ:

### 448. Յատկացուցչին վրայ յօդ.

Զսրբութեանն օրէնս.
Զի՞նչ օգտեցուցանէ ումանցն լուսաւորութիւն զհասարակացն անտեսութիւն.
Զինքեանն սպանանէ զփեսայ.
Զնորունն հաւատութիւն:

449. Բացայայտչին վրայ յօդ.

Եպիսկոպոսն անուն' ’ի
Հե՛լ՛լենացի լեզուէ է.
Դիկլաթն գետոյ.
Ի Սինն անապատէ.
Զկուաշն աւան.
Հայրդ անուն' մի է։

450. Խնդրին վրայ յօդ.

Նմանութիւն Աստուծոյ է սուրբն և արդարն գոլ հանդերձ խոհեմութեամբ. — այս ինքն սուրբ գոլն և արդար գոլն։

Զինչ իցէ ’ի մեռելոցն յառնել. — այս ինքն յառնելն ’ի մեռելոց։

Յընկեցիկն առնել զնա. — այս ինքն յառնելն ընկեցիկ։

Զարն ’ի չարն գործելոյ առնու զանուն. — այս ինքն ’ի չար գործելոյն։

Ի բարին խօսել և ’ի չարն. — այս ինքն ’ի բարի խօսելն և ’ի չար խօսելն։

Յետ այնչափ ուղղութիւնսն գործելոյ. — այս ինքն յետ գործելոյն այնչափ ուղղութիւնս։

Վասն Անտիոքայ Երևեալն անուանելոյ. — այս ինքն անուանելոյն Երևեալ, Երևելի։

Զանձնէ անփոյթ առնես ’ի մարդոյ առիւծդ եղելոյ. — այս ինքն եղելոյդ առիւծ։

Յինէնս գործեցելոց. — այս ինքն գործեցելոցս յինէն։

Յորժամ յիսս խորհրդոց լինիք վերահասու. — այս ինքն խորհրդոցս որ յիս (389)։

Յաղագս առ մեզն գթութեան. — այս ինքն գթութեանն որ առ մեզ։

451. Մակբային վրայ յօդ.

Վաղն առնելով. ցանգն հայելով. — այս ինքն վաղ առնելովն, ցանգ հայելովն.

Զկարին իսկ զոք շնայլեալ. — այս ինքն զոք զկա-րի իսկ շնայլեալն։

Միւսանգամն գալստեան դատաստան. — այս ինքն միւսանգամ գալստեանն։

Զանդն աւուրս. անդն իրաց. — այս ինքն զաւուրսն որ անդ, իրացն որ անդ։

Զայն ես կամիմ՝ զմին կարծել գոլ թշնամիս. — այս ինքն զմի կարծեն։

Այսպէս ալ (ըստ 447) յատուկ անուններուն սովորաբար նախադաս ածականին կըդրուի յօդը.

Մեծն Պաւղոս.
Արին Վաղարշակ.
Երուանդեանս Տիգրան.
Քաջին Հայկայ.
Բարերարին Յիսուսի.
Զմեծէն Սահակայ.
Նորն Երուսաղէմ.
Իմն Գրիգոր.
Մերոյն Հայկայ.
Անսուտն Աստուած.
Մեծին Աստուծոյ.
Ի մարդասիրէն Աստուծոյ։

452. Երբեմն ալ որ և իցէ անուան յօդը՝ ետևի ածականին կըդրուի, երբոր զատելով մը կ՚առնուի.

Որ տեառն մեծն և երևելին։

Տէր ամենակալն խնդրեսցէ վրէժ։

Օրհնեցէք զԱստուած բարերարն։

Դառնացուցին զԱստուած բարձրեալն։

Այր լի գիտութեամբ հայովս, և առաւելեալ յունին։

Դարձան արք Իսրայէլի ասպատակեալքն զհետ այլազգեացն։

Արանց խստասրտացդ այդոցիկ։

Ցամենայն ազգաց եկելոցն՚ի վերայ Երուսաղէմի։

Զայս յայտ առնէ Դաւիթ մեծն։

Անկաւ Բաբելոն մեծն։ Ուր էր՚Ղազար մեռեալն։

Բայց ետև դրուած թըւի ու դերանուանական ածականներու չըլլար ըսել՝ Եղբարց երկուցն կամ երկո-

ցունցն, մանկանց եօթանեցունցն, որդի քոյդ, որդւոյ իւրումն, բանից իմոցս կամ քոյդ. — Հապա ընելու է Եղբարցն երկուց կամ երկոցունց, մանկանցն եօթանեցունց, որդւոյդ քո, որդւոյն իւրում, բանիցս իմոց, բանիցդ քոց:

453. Շատ անուններ քով կապուած մէկտեղ որ գտուին, շատ անգամ առջինին միայն դրուելով երբեմն ալ ետքինին միայն, ամէնն ալ որոշուած կըսեպուին.

Կարկուտն և անձրև.
Աղքատն և տնանկ.
Մանրեցան խեցին և երկաթ.
Ազգն քո և քահանայապետք.
Դպիրքն և փարիսեցիք.
Քահանայապետքն և դպիրք և փարիսեցիք.
Պիղծդ և անուանարկ.
Զպտուղ ցորենոյն և գինւոյ և ձիթոյ և մեղու.
Հօրն կամ մօր.
Ի բերան կործանելոցս և չարչարելոց.
Եկացն և պանդխտաց.
Զխուլն և զհամր, զականին և զկոյր.
Մանրեաց զխեցին և զերկաթ.
Զպղինձն և զարծաթ և զոսկի.
Զմեծամեծսն և զփոքունս. —
Զբոլն ուստի ոսկին և արծաթն հատանի, — կամ
Զբոլն ուստի ոսկի և արծաթն հատանի.
Քստմնեալ լինէին ոսկերք և մարմինքն.
Զքաղցրութիւն և զսաստկութիւնն Աստուծոյ.
Ո՜վ պիղծ և ամենապիղծդ.
Ո՜վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեանն Աստուծոյ.
Հեզութեամբ և հանդարտութեամբն Քրիստոսի.
Վասն հարց և մարցն.
Հրաման ետ մոգաց և մոգպետացն:
Ապականացու արծաթեղէնօք և ոսկեղէնօքն:

454. Երբեմն ալ աւելի կըդրուի, դոյականին ալ

ածականին և յատկացեալին և յատկացուցչին և.

Յարանցս յայսցանէ եկեղոյս ընդ մեզ.

Հան զարդ մտեալդ առ քեզ.

Մատուցանել զայն Թագաւորին երկնաւորին.

Ազգացն առաջնոցն.

Ի չարէն որդւոյն սատակեցաւ.

Պատմէր զիրսն եղեալսն.

Զաւազանսն մեծամեծսն.

Զմիջինն այսոցիկ տեսութեանց ընտրեսցուք ըղ-
բանն: —

Տեսիլս Աւաքելոյս. Ամենայն ժողովուրդն երկրին.

Ի վերայ աշտարակացն քաղաքին.

Զբանակն եգիպտացւոցն:

Ուր բաւական էր ըսել միայն՝ Յարանցս եկեղոյ, զարդ մտեալս, Թագաւորին երկնաւորի, ազգացն առաջնոց, 'ի չարէ որդւոյն, — տեսիլ Աւաքելոյս, ամենայն ժողովուրդ երկրին, 'ի վերայ աշտարակաց քաղաքին, ըղբանակն եգիպտացւոց կամ զբանակ եգիպտացւոցն:

455. Երբոր գոյական մը այս, այդ, այն դերանուններէն ետև դրուի, հարկաւոր չէ վրան յօդ դնել. Այս այր, զայն այր, այդր բանի, յայնմ աւուր, այսու օրինակաւ, այդց պարծանաց, յայնց ժամանակաց, այս բանք, այսոքիկ բանք, յայդոսիկ տեղիս, յայնոսիկ գործս:

Բայց կրնայ ալ դրուիլ. Այս երանելոյս, այս կարգաւորութեամբս, այս կրիւքս, յայսմ կենացս, յայսցանէ 'ի գործոցս. յայդմ ահաւոր անուանէդ, զայդ նշանսդ, այն ընութեանն, յայն տեղին, յայն տանն, զայն ջուրսն, զայն տեղեօքն, այնմ աւետեացն, յայնմ աւուրսն, այնց բանիցն, զայնոսիկ արհաւիրսն:

456. Իսկ երբոր գոյականն առաջ դրուի, սովորաբար միշտ յօդ դնելու է իրեն, մանաւանդ ուղղականին ու հայցականին.

Օրս այս.
Որդիս մեր այս.
Ժողովուրդս քո այս.
Վիմիս այսորիկ.
Ըստ բանիս մեծի այսորիկ.
Անուամբս այսուիկ.
Արքս այսոքիկ.
Արանցս այսոցիկ.
Թռչունդ այդ.
Թղթովդ այդուիկ.
Յերդմանէդ քումմէ յայդմանէ.

Մատենիդ գտելոյ այդորիկ.
Ոսկերքդ այդոքիկ.
Իրքդ այդ.
Այրն այն.
Մարդոյն այնմիկ.
Ըստ բանին այնմիկ չարի.
Ազգաւն այնուիկ.
Արքն այնոքիկ.
Արքն այն.
Յետ աւուրցն բազմաց այնոցիկ.
Յաւուրմն յայնմիկ:

457. Երբեմն առանց յօդ դնելու ալ կ'ըսուի, մանաւանդ վերջահոլովներուն, կամ թէ որ դերանուանական ածական կամ յատկացուցիչ ունենայ քովը.

Յաւուր յայսմիկ.
Յազգէ յայսմանէ.
Ի տեղւոջ յայդմիկ.
Ի ջրոյ յայդմանէ.
Ի ժամանակի յայնմիկ.
Յօրէ յայնմանէ: —

Ի գաւակէ իմմէ յայսմանէ.
Եղբայր քո այս.
Ժողովրդեան քում այսմ.
Ծառայից քոց այսոցիկ.
Զմարմին մեր զայս.
Զխորհուրդ քո զայդ:

458. Դերանուանական ածականներն իմ, քոյ, և այլն (134) մինակ որ ըսուին՝ միշտ յօդով կըբանին. Իմս, իմդ, իմն, զիմն, զիմսն, յիմոցն, քոյդ, քոյումդ, քոյովս, քոյովդ, քոյովն, 'ի քումմէդ, 'ի քումմէն, 'ի քոյոցդ, մերովս, 'ի մերմէն, ձերդ, զձերն, ձերոյդ, ձերովքդ, զիւրն, իւրոցս, յիւրոցն, զիւրմն, նորայն, զնորայն, 'ի նորայոյն, նորայովքն, զնոցայն, և այլն: Ու ինչպէս տեսար, ամէնքն իրեք յօդն ալ կառնեն տեղին նայելով և այն զանազանութեանն որ ցուցըցեր ենք 'ի 140:

459. Շատ անգամ դիմորոշ յօդերուն տեղը կը-

բանին այսր, այդր, անդր մակբայները՝ պարզ Նախդրիւ-
տրականի հետ, աստ, այդր, անդ՝ Նախդրիւ վերջահոլով
տրականի հետ, աստի, այտի, անտի՝ բացառականի հետ.
որ երբեմն այս, այդ, այն դերանուններուն տեղն ալ կը-
բռնեն ատոնք ամէնը, ինչպէս որ յօդերն ալ. այսպէս,

Ի տեղի այսր գալ. երթեալ էին 'ի քաղաք անդր, վաղիւ անդր, յիւրս անդր կամ առ իւրսն անդր եկն.
Ի դրախտի աստ.
Ի ժամանակի աստ յայսմիկ.
Ի Թղթի այդր.
Ի պարտիզի անդ.
Յագգի անդ իւրում.
Ի պարտիզի անդ.
Իմարքայութիւն չէ յայսմ Տէ. եթէ յաշխարհէ աստի էր, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք.
Յերդմանէ աստի իմմէ.
Ի Նզովից աստի իմոց.
Ի ժամէ աստի յայսմանէ.

Յագգէ աստի խոտորելոյ 'ի յայսմանէ.
Ի հիւանդութենէ աստի իմմէ յայսմանէ.
Ի մերոց, 'ի քոյոց աստի.
Ի տեղւոջէ այտի.
Ի մասանց այտի.
Ի քոյոց այտի.
Յառնէ այտի յայդմանէ.
Ի լեռնէ անտի.
Ի սրտէ անտի.
Ի քնոյ անտի.
Յիւրոց 'ի Նորայոց անտի.
Ի սիրոյ անտի Աստուծոյ.
Ի Նոցա անտի յուսոյն.
Ի ծմակին կողմանց անտի.
Ի մեծամեծաց աւագաց քահանայցուոց անտի։

460. Յոգնակի հայցականներն ու Նախդրիւ տրականները « յօդ որ առնելու ըլլան նէ, անուշութեան համար շատ տեղ իրենց սէն քէ կը փոխեն ըստ 60. ու կ'ըսուի Զքանըս, զէքս, զանարժան ծառայքս, 'ի ծառայքս, առ փրկեալքս, ընդ հողեղէնքս. — փոխանակ ըսելու զքանսս, զէսս, զանարժան ծառայսս, և այլն. ինչպէս որ կ'ըսուի ալ երբեմն. Զմեղսս զայսոսիկ, զերիս Թագաւորսս, յիրսս յայս, 'ի հարսանիսս։

461. Միջակ անունները ընդ, ով կամ ո, որ, ու

յարաբերական դերանուններ, ընաւ ամենեւին յօդ չեն առներ. ընաւ չըսուիր որս եմ, որոյդ, որումդ, որովքս, որոցն, յորոյն; զորն, զորսն, եւն. անոնց տեղը՝ եւեւի բային վրայ կըդրուին յօդերը, ինչպէս հիմայ կարգաւ կըտեսնենք:

462. Թէ որ որ յարաբերականէն եւս կամ ով, ո, որ, զի՞նչ միջակ անուններէն եւս, կամ անոնց միտքը ունեցող՝ որպէս, որպիսի, որքան, որչափ, ուր, ուստի, յորժամ, իբրեւ, մինչ, զի, զիարդ բառերէն եւս՝ դիմաւոր բայ մը ըլլայ նէ, ան բայը դիմորոշ յօդ կ'առնէ շատ անգամ, ու ես, դու, նա, այս, այդ, այն դերանուններուն, կամ աստ, անդ, այսր, այդր, անդր, առաստիկ, առադիկ, առանիկ, այժմ մակբայներուն մէկուն ուժը կ'ունենայ ան յօդը. ինչպէս,

Որ խօսիմս ընդ քեզ.
Զոր խորհեցայս առնել.
Գիտէք զինչ ասեմս.
Ես այր տառապեալ զխորդ կամս հիացեալ.
Քան զոր ասեմդ.
Զոր գրեցիդ.
Գիտեմք զինչ արարիդ ձեզ.
Զոր կամիմն.
Զոր ատեամն.
Որում չեմն արժանի.
Զոր քակեցին.
Ողորմեցայց որում ողորմեցայցն և գթացայց յոր գթացայցն.
Զոր ինչ շնորհեցեմն.
Որպէս երդուայն.
Ոչ որպիսիս կամիցիմն.
Եւ ուստի եմն գիտէք և ուր երթամն գիտիցէք.
Ուստի եկին.
Մինչ երթայինն.
Զոր պարտէաքն առնել.
Ուր էաքն ժողովեալ.
Մինչ էաքն մարմնով.
Հաստատուն կաց յոր ուսարդ.
Զգիտեմ զինչ խօսիդ.
Զի՞նչ է այդ զի խորդասդ.
Զի՞ կայ մեր և քո՛ զի եկիրդ այսր.
Զոր ընթեռնուցուքդ.
Որպէս էքդ անխմոր.
Քան որչափ էքդ.
Այլ զի յղեցէքդ առ իս.
Զսա զոր տեսանէքս.
Զոր ասեմն՝ նա ոչ գիտէ.
Ուր և կոչիմն գնասցես.
Որովք համարիքն ունել.
Որոյ եղերուքն դուք որդիք.

Զոր ուսարուքն և ընկալարուք և լուայք և տեսէք յիս.
Զոր տեսանիցէքն.
Որ էջն յերկնից, որդին մարդոյ՝ որ էն յերկինս.
Որում չէին մարթ լինել.
Ուր չիքն փոփոխումն.
Որ գթայն.
Որ տայն ամենայնի.
Այնր որ սրբէն և որ սրբին.
Զոր ուտէն.
Լուր զխարդ ասէն.
Որ ընթեռնուն՝ 'ի միտ առցէ.
Մինչդեռ կայրն կախեալ.
Որ եկնն. յորժամ եկնն.
Զոր ինչ խնդրիցէն.
Այլ ումեք որ նստիցին.
Զոր արար Դաւիթ՝ յորժամ քաղցեաւն և որ ընդ նմայն էին.
Ոչ զի մեռաւն՝ այլ զի խաչեցաւն.

Քան փութացաւն և առաքեաց. — այս ինքն քան թէ զի փութացաւն.
Որ առեանն զիս.
Որք կամինն մեծանալ.
Որ կամն. որ ննջենն.
Զոր ասէս կամ ասէդ՝ այսպիսի ինչ է.
Զի՞նչ է այս զոր ասէս ցմեզ.
Առաւել քան զոր երևին մեզ և գիտին.
Որ եկնս 'ի վերայ.
Որպէս ասացաւս.
Որ ենս. որ կանս.
Սոքա որ խօսինս.
Ո՛վ է որ ասէդ ցքեզ.
Որ խօսիդ ընդ քեզ՝ նա է.
Այդ որ ասիդ.
Ի մէջ դոցա որ կանդ աւադիկ.
Ուր էրդ յառաջն.
Զոր ընտրեացդ իւր տէր.
Որպէս և ասացաւդ։

463. Թէ որ նոյն բառերէն ետև բայէն առաջ՝ անուն բայի կամ խնդրի դերանուն մ՚ըլլայ նէ, յօդն ան դերանունը կ՚առնէ, թէ և բայն յայտնի դրուած չըլլայ՝ բայց զօրութեամբ իմացուի (340, 445).

Զոր ինչ եսս գործեմ.
Զգործ տեառն գործէ՝ որպէս և եսս. — այս ինքն որպէս և ես գործեմ.

Որ ինևս ընդ ձեզ խօսի.
Որ ինչ յինէնս խնդրեցեր.
Որպէս մէքս լուաք.
Զոր եսդ սիրեմ.

Յոր եսդ իջանեմ.
Զոր եսդ բժշկեցի.
Որ շուրջ զմեւքդ բնակեալ են.
Զոր եսն պատուիրեմ.
Ուր եսն եմ.
Ուր եսն երթամ.
Որ զիսն սիրեն.
Որ յիսն մեղանչեն.
Զոր մեքն քարոզեմք.
Զոր դուդ առնես.
Ոչ գիտեմ զինչ դուդ ասես.
Որ վասն քոյն մատնեցաւ.
Որ շուրջ զքեւդ են.
Որ իբրեւ զքեզդ իցեն.
Ընդ որս դուքդ զարմանայք.
Զայրն զորմէ դուքդ ասէք.
Մինչ առ ձեզս եմ.
Յորում և դուքս էք բնակեալ.
Որում դուն վկայեցեր.
Զոր դուքն ոչ գիտէք.
Յորս դուքն պանծացէք.
Մինչ առ ձեզն իսկ էաք.

Որոյ իւրն է համդերձենքն.
Որ զիւրեան էին.
Որոց իւրն հրաման տուեալ էր.
Զոր սայս առնէ.
Զոր դայդ մարգարէանայ.
Ո՞չ տեսանես զինչ դոքայդ գործեն.
Ուր նայն փախձանեսցի.
Որպէս նայն Քրիստոսի է.
Որոց նմայն զայն շնորհեալ էր.
Որ 'ի նմայն ծնեալ է.
Ոչ վասն այլ իրիք՝ այլ՝ զի նմայն չլուան.
Որ զնովաւն էին.
Յորժամ նոքայն նախատէին.
Որ նոքօքն խրատիցին.
Որ 'ի վերայ նոցայն մեռաւ.
Որք զայսս խորհիցին.
Որք զայսն կամին.
Որ զայնն առնեն.
Որք զայսոսիկն պահանջեն։

464. Ուրիշ տեղ և ուրիշ կերպով, առանց ան բառերն ետև ըլլալու, սովոր չեն ատ դերանունները յօդ առնելու. քիչ տեղ կ'ըսուի,

Դուն գիտա.
Իբրեւ զձեզդ եմ կած էի.
Ընդէ՞ր ոչ նայն հարկանէր.

Թէ զայսն ասեն.
Եւ այնքն ոչ դադարէին.
Յայնցն որ ողջոյն տացեն։

465. Նմանապէս նոյն բառերէն ետև՝ ուրիշ որ և իցէ անուն բայի կամ խնդիր մ'որ ըլլայ բայէն առաջ՝

մօտ կամ քիչ մը հեռու, յօդն անոնք կ'առնեն կամ անոնց ածականները. ինչպէս,

### 466. Անուն բայէն՝ յօդը առած.

Զոր Աստուածն առաքեաց.
Որով բազումքն իսկ զեղխանան.
Ուր Քրիստոսն նստի.
Որոց երեսունն և ութն ամ էր.
Որ 'ի Բաբելոնն ընտրելակիցն եկեղեցի է կամ ընտրելակից եկեղեցին է. — այս ինքն ընտրելակից եկեղեցին որ 'ի Բաբելոնն է։

### 467. Խնդիրը յօդը առած.

Ինձ որ տրուպս եմ.
Որ կարօղքս եմք.
Աստ ուր հրամանս առաք.
Ակն քո չա՞ր է զի ես առատս եմ.
Որ ձիթենիդ վայրենի էիր.
Դուք որ չարքդ էք.
Որ ամենեցունցդ ես Թագաւոր.
Ուստի արժանդ իցէ ինձ ուրախ լինել.
Որ հուր ծախիչ է.
Որ կարի վայելուչն իսկ է.
Մի ընդ այն նայիցիս՝ զի ներդն և անձուկ և խիստ է.
Որպէս պարտն է գիտել.
Որ բունքն իսկ են.
Ինքն որ Աստուածն էր.
Որոց պարտն և պատշաճ էր խնդալ.
Մինչդեռ ալէկոծն ծովածուփ իցէ.
Որ աւարն հարկանէր.
Մինչդեռ այգն կամէր լինել.
Զոր ոստանիկսն անուանեն.
Որում բարձրանձնն ասէին.
Որ խրատն տայ նա ետ.
Որ ոչինչն ունէին.
Որպէս մինչ յարդն տային։
Ընդ որում անհաշտ Թշնամութիւն պարտ էր ունել՝ և ոչ բարեկամութ̃ի.
Որ զՆրկէօզն կործանեաց.
Որ 'ի վերն քան զՉրրուանն էր.
Որ յՆրապօլիսն իցեն.
Որ 'ի բանտն տայի.
Որ օրինօքն էին.

Որ Քրիստոսին խօսէր.
Որ յաւիտենից եմ.
Որ ընդ աջմէն իցեն.
Որ 'ի վերուստն գայ։

468. Աստանկ ալ անորոշ, անցեալ և ապառնի դերբայները՝ գիմաւոր բայէ առաջ որ ըլլան, իրենք կ'առնեն յօդը կամ իրենցմէ ալ առաջ բառ մը (466, 467)։

Որք ուսուցանելու պարտէաք.
Այնու զի չնալն ետ.
Մինչ առնելն կամեցար.
Ես որ կապեալս եմ.
Վն որոյ և կապեալս կամ.
Զոր յօդեալ և ուսեալդ ես.
Ընդ որում և համարձակեալդ խօսիմ.
Որ արբեալդ էք.
Որ հզօրացեալն է.
Զոր խօսեալն էր.
Եւ զի կապեալն ես էր զնա.
Որ մեռեալն էիք.
Զի սպնդեալն եկեալն էին յօժարութեամբ.
Որ ծնեալն իցէ.
Շատ ևս այն են՝ որ և ննջեցեալքն իսկ իցեն.
Որ բարձեալն տանէին.
Որովք մոլորեալն պաշտէին.
Զոր յայտ արարեալն ասէ.
Զոր Յօբն գրեալ է.
Որ ըստ Աստուծոյն հաստատեալ է.
Որ ամուլն կոչեցեալ էր.
Որ ընդ նմա 'ի խաչն ելեալ էին.
Որ բունքն հաստատուն կացեալ էին.
Որ կալոցս և մնալոցս է.
Որ նզովելոցն է.
Որ զնուամբ ածելոցն իսկ է զմեծ վիշապն.
Որ հարկանելոցն էին զնա.
Որ նոքօքն շահելոցն էին.
Որ գալոցն իցէ։

469. Թէ որ նոյն վերի ըսած (462) բառերէն ետև՝ բայէն առաջ մակբայ մը ըլլայ նէ, յօդն այն մակբայն կ'առնէ, թէ և բայն զօրութեամբ ըլլայ.

Որ աստս կամ.
Որ այժմն կեամ.
Ոչ լինէր որպէս արդս.— այս ինքն որպէս արդս լինի.
Որ արտաքոյս եմք.
Այսու զոր ոչս արար.
Բարձցի որ այժմդ ունի.
Որ զկնիդ գայ.

Որ վաղդ եղեր մեկնեցար.
Բայց զկարդ այժմդ տեսանեմ՝ ոչ գիտեմք.
Որ չեւդ էք սրբեալ.
Որ ոչդ հաւատաս.
Որ ոչդ երկնէիր.
Զոր ոչդ վայելէ քեզ խօսել.
Զոր աստն ետ.
Զոր անդն խոստացաւ.
Որ անդն կային.
Զոր միշտն ասէի.
Ելից և արարից որպէս միշտըն. — այս ինքն որպէս միշտն առնէի կամ արարի.
Զոր հանապազն ըմպեմք.
Որ այնպէսն գնայցեն.
Որ զհետն երթային.
Զոր յանդիմանն տեսի.
Որ մտադիւր ծառայեաց.
Որ ստոյգն փախչիցին.
Զոր ինչ մեծամեծ և ողջն ողջն կլանիցեն.
Որ ստահակմն գնայցեն.
Որ հազիւն ապրեցան.
Որպէս կանխաւն ասէի.
Որ ոչն է ընդ մեզ.
Որ ոչն ունիցի.
Զոր ոչն կամիմ.
Զոր ոչն արդեօք յարոյց.
Որ ոչն անկեալ երկիր պագանիցէ.
Մինչ ոչն գիտէին.
Զի ոչն եւ. Ուր ոչն գոյ.
Որ ընտիրն է սրբի և պատուականանայ, իսկ որ ոչն՝ այրի և հրդեհի. — այս ինքն՝ իսկ որ ոչն է ընտիր։

470. Յօդ առնել կրցօղ դերանունէ, անմիջապէս մօտ անուն բայէ կամ խնդիրէ, դերբայէ ու մակբայէ ետև գրուած դիմաւոր բայի վրայ սովորութիւն չէ յօդ դնել և ըսել՝ օրինակ իմն, Զոր ես գործեմս չամ գործեմն, ընդ որս դուք զարմանայքդ, ուր Քրիստոս նըստին, ինքն որ Աստուած էրն, որ խրատ ետն, որ յաւիտենից եմն, որ հզօրացեալ էն, որ ամուլ կոչեցեալ էրն, որ հարկանելոց էինն զնա, որ այժմ ունիդ, զոր ոչ արդեօք յարոյցն, և այլն։

Բայէն առաջ յօդ առնելու յարմար բառ չըլլալէն՝ կամ ուրիշ նկատմամբ մը կ'ըսուի երբեմն անսովոր,

Զի՞նչ խօսիդ.
Զի՞նչ ասէքդ.
Տեսէք զինչ ասէրն Քրիստոս.

Յորժամ թշնամի զոք ու-
նիցիմ (527).
Ընկեր, վասն որո՞յ երկիրդ.
Որո՞ւմ կրից համբերեմ.
Որոց խունկսդ արկանէքդ.
— այս ինքն զխունկսդ,
զխունկս ձեր (527).
Որոց հանդիտապատիւ մեզ
հասէքդ հաւատոց.— այս
ինքն որոց հասէքդ՝ հանդի-
տապատիւ մեզ հաւատոց.
Որզաստուածս անարգէնն·
— այս ինքն որ անարգէնն
զաստուածս, անորոշ մըտ-
քով (441).
Որ վասն քո սպանան.
Յորում տեղւոջ էքդ.
Զայն՝ վասն որոյ այս եղեն.
Յոր ես մտանեմ.
Զորոց դուք չարախօսէքդ.

# ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

## ՆԱԽԴԻՐՆԵՐ

471. Երբոր նոյն անունը կրկնուի նէ (65), սովորաբար առջինէն միայն կըդրուի նախդիրը.

Զայր այր իւրաքանչիւր.
Զազգս ազգս բուսոց.
Զբարի բարին.
Զծանր ծանր օրինացն.
Զմի մի. զոմանս ոմանս.
Ի քաղաքս քաղաքս առ զօրավար զօրավար.
Ի շաբաթու շաբաթու.
Ի տեղեաց տեղեաց.
Ընդ ժամն ժամն.
Ըստ ազգս ազգս.

Ի կեղծս կեղծս կամ կեղծս 'ի կեղծս.
Ի կերպս կերպս լինել կամ կերպ 'ի կերպս լինել.
Ետ մեզ զերկիրս զայս, երկիր որ բղխէ զկաթն և զմեղր.
Տանել յերկիրն բարի զոր երդուայ հարց նոցա, երկիր կամ յերկիր որ բղխէ զկաթն և զմեղր։

472. Երբոր նոյն անունը մէկ մը բացառական մէկ մը նախդրիւ տրական քովէ քով դրուի նէ, սովորաբար երկրորդէն միայն կըդրուի նախդիր՝ որն որ ըլլայ. Թէպէտ առաջ դրուած բացառականին ալ կրնայ դրուիլ.

Տանէ 'ի տուն կամ 'ի տանէ 'ի տուն։
Քաղաքէ 'ի քաղաք կամ 'ի քաղաքէ 'ի քաղաք։
Դրանէ 'ի դուռն կամ 'ի դրանէ 'ի դուռն։
Կրօնից 'ի կրօնս կամ 'ի կրօնից 'ի կրօնս։
Կենաց 'ի կեանս կամ 'ի կենաց 'ի կեանս։

կենդանութենէ 'ի կեանս ։ Ազգէ մինչև յազգ ։

Տուն'ի տանէ, քաղաք'ի քաղաքէ, տեղւ'ի տեղւոջէ, կողմն'ի կողմանէ, ամն յամէ, օր յօրէ, ամիս յամսոյ ։

Երբեմն ալ առջինին միայն՝ բացառականին. Ցամնոյ ամն. ՛ինուն թոյնութ. 'ի ժամանակէ ժամանակ ։

473. Երբոր նոյն նախդիրն առնելու շատ բառեր մէկտեղ գտուին նէ, սովորաբար ամենուն ալ կրկնելու է նախդիրը.

Տասանորդէք զանանուխ և զսամիթ և զչաման ։
Մատնէր 'ի բանտ և 'ի կապանս և 'ի պատիժս ։
Ցարջառոյ և յիշոյ և յոչխարէ և 'ի հանդերձէ ։
Առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս ։
Ընդ ծով և ընդ ցամաք ։ Ըստ փոքուն և ըստ մեծին ։

474. Բայց շատ տեղ ալ առջինին միայն հերիք է, մանաւանդ եւ կապուած որ ըլլան.

Զարջառ և ոչխար ։ Զմտաւորս և բանաւորս.
Ճանաչել զլայնութիւն և երկայնութիւն, խորութիւն և բարձրութիւն սիրոյն ։
Նոյն խաւար մածեալ է զոգւով և մարմնովն որա ։
Ցոգի և մարմին էաք տրտմեալք ։
Ի պակասել հանել թափել զոգիս իւրեանց ։
Ի ժողովել Պաւղոսի խուիւ ինչ բազում և դնել 'ի վերայ խարուկին ։
Սպառեսցին նոքա'ի սովոյ և ծարաւոյ ։
Ի մեռելոց և կենդանեաց ։
Առ հօրն և տեսուչ հոգւոց ձերոց ։
Առ Պետրոս և Յովհաննէս ։
Ելանեմ ես առ հայրն իմ և առ հայր ձեր և Աստուածն իմ և Աստուած ձեր ։

Առ Աբրահամու և Յոբաւ և ամենայն արդա-
րովքն։ Ըստ փոքու և մեծի։
Զարմացեալ ընդ ժուժկալութիւն համբերու-
թեանն կարի անհնարին և տոկալ նորա։

475. Կամ, այլ, և ոչ շաղկապներով կապուած բառերուն կրկնելու է.

Զծառայ կամ զաղախին. զԱստուած.
Ի հօրէ կամ 'ի մօրէ. Ոչ յերկրի, այլ յերկինս.
Յերկինս կամ յերկրի. Ի հաւատոյն Քրիստոսի,
Ոչ զմարդ անարգէ, այլ և ոչ 'ի գործոց օրինաց։

476. Երբոր անուն մը իրմէ առաջ յատկացուցիչ կամ ածական ունենայ նէ, նախդիրն ան յատկացուցչին և ածականին վրայ կդրուի. ինչպէս,

477. Յատկացուցչին վրայ նախդիր.

Ա՛ռ զնորին սուսեր.
Զգեցիր զիմ հանդերձս.
Գիտել զտարեաց բոլորմունս և զաստեղաց դիրս.
Վրիպեցան յԱստուծոյ գիտութենէն և 'ի նորին օրհնութենէն.
Ի հօր մերոյ ընչից.
Փրկեցաւ յառիւծուցն բերանոյ.
Քաղել հասկ յայլոց անդի.
Զիմ ինչ, զքո ինչ, զտեառն ինչ.
Զայլ ինչ ուրուք և առեալ իցէ.
Զորոց կերպարանս.
Յորոյ շիջանելն.
Յորոց ձեռաց։

478. Ածականին վրայ նախդիր.

Զմեծ թագաւորն.
Զամենայն ծառ.

Ընդունիջիք զանթառամ փառաց պսակն. — այս ինքն զանթառամ պսակն փառաց.
Զտէրունականն ասել առ նոսա բան.
Ի մեծ թագաւորէն.
Ցուցիչ հաւատոց և 'ի սուրբ վարուց.
Ի հարազատէն իւրմէ մեռանել եղբօրէ.
Յաստուածայինսն գտանեմք ասացեալ պատմութիւնս:—
Զբազում տկարաց տունս խորտակեաց.
Ի տղայ մանկանցն բերանոյ զստինս 'ի բաց կորզէին. — ուր յատկացուցչին ածականին վրայ դրուած է նախդիրը, ու կ'իմացուի Զտունս բազում տկարաց, 'ի բերանոյ տղայ մանկանցն:

479. Թէ որ շատ յատկացուցիչ կամ ածական ըլլայ առաջնէ, առջինին միայն հերիք է նախդիր.
ՅԱստուծոյ և սրբոց զօրութենէ.
ՅԱստուծոյ շնորհացն ազդեցութենէ. — այս ինքն յազդեցութենէ շնորհացն Աստուծոյ:—
Զաստուածային սուրբ հոգին.
Զմեծն և հռչակաւոր Հոմերոս.
Յայնմ մեծ տագնապի.
Ի զրահաւոր պատենազէն պղնձապատ վահանացն.
Ի ձերոց ստայօդ և չարաթոյն բանից:

480. Երբոր յատկացեալը չդրուիր յայտնի, կամ երբոր չկրկնուիր նէ, անոր նախդիրը յատկացուցչին վրայ դնելու կամ կրկնելու է՝ ան հասկցընելու համար, թէ որ երկու յատկացեալն ալ զատ զատ են նէ. ինչպէս,
Մի ոք զանձին և եթ խնդրիցէ, այլ և զընկերին. — այս ինքն զանձին իրս, զընկերին իրս.
Ապիրատ է 'ի յայլոցն ձեռնարկել. — այս ինքն 'ի յայլոց իրս:—
Զվարագոյր դրան խորանին և զդրան սրահին. —

այս ինքն և զվարագոյր դրան սրահին. երկուքին մէկ վարագոյր չկրնար ըլլալ, հարկաւ զատ են:

Խոստովան լինիցին զմեղս իւրեանց և զհարց իւրեանց. — այս ինքն և զմեղս հարց:

Մի լիցի ապրեալ 'ի ներքոյ երկնից տուն նորա, այլ 'ի նորայն կացցեն օտարք. — այս ինքն 'ի նորա տունն կամ տանն:

Զուկն թէպէտ և գայ յառակ, 'ի գերեզմանի առակ գայ, և ոչ 'ի կենդանութեան. — այս ինքն և ոչ յառակ կենդանութեան:

481. Ըսինք որ (400) բացայայտիչը հոլովով համաձայն կ'ըլլայ բացայայտելի անունին. բայց նախդրով հոլովներուն հարկ չկայ ամէն անգամ իրեն ալ նախդիր դնելու. մանաւանդ երբոր մօտ է. ուստի կ'ըսուի,

Առին զՅակոբ հայրն իւրեանց.
Զհայրն մեր Աբրահամ.
Զհայր քո Խոսրով.
ԶԽոսրով հայր նորա.
ԶՏրդատաւ արքայիւ.
Զամրոցաւն Երնջակաւ.
Ի Սիոն լեառն.
ՅԵրուսաղէմ քաղաք.
Յերկրին Գեսեմ.
Յակնն տիեզերաց Հռովմ.
Ի Դարեհէ արքայէ.
Ի հօրէ նորա մեծէն Թէոդոսէ.
Յանմահ արքայէն Քրիստոսէ.
Ի Քաղաքէն Հռովմայ.
ԶՍահակայ հայրապետէն.
Մինչև ցգետն մեծ Եփրատ.
Առ Յակոբ հայրն իւրեանց.
Առ 'Լաբան որդի Բաթուէլ'ի ասորւոյ՝ եղբայր Ռեբեկայ.
Առ բանաւոր աշխարհս՝ մարդս.
Կատարեաց առ մեզ որդիս նոցա.
Առ Թէոդոսիւ կայսերբ.
Արս ընտրեալս 'ի նոցանէ առաքել, զՅուդա և ըզՇիղա՝ արս գլխաւորս:

482. Նմանապէս ըսինք որ ետև դրուած ածականը կըհամաձայնի գոյականին (422). բայց նախդրով հոլովներուն հարկ չկայ ամէն անգամ իրեն ալ նախդիր դնելու, մանաւանդ երբոր մօտ է։ Ուստի կ'ըսուի,

Զայր հաւատարիմ.
Յառնէ անխրաւէ.
Յայրի անդ կրկնում.
Զպատմուճան նորա ծաղ-
կեայ.
Զզօրութիւնս քո զոր ա-
րարեր մեծամեծս.
Ի սրտմտութենէ բարկու-
թեան իւրոյ մեծէ.
Զթագաւոր ծեր և ան-
միտ.

Զայր շոյտ և զգոյշ.
Յերկիր բարի և պարարտ.
Ընդ անապատն մեծ և ա-
հագին.
Զազգս մեծամեծս և հը-
զօրագոյնս.
Առ արս արդարս և ուղիղս.
Ի ցուպն եղեգնեայ ջախ-
ջախեալ.
Ի մարդոյ մեղաւորէ նեն-
գաւորէ։

Իսկ թէ որ ետևի ածականը՝ մանաւանդ հեռուն՝ դիմորոշ յօդ ունենայ նէ (452), գոյականին նախդիրը սովորաբար անոր ալ դնելու է, թէ հայցականի զայ ըլլայ (354) և թէ ուրիշ նախդիր.

Զլեզու մարդկան ոչ ոք կարէ հնազանդել զչա-
րըն և զանկարգն։
Զձեռագործս իւրեանց զամենայն (355)։
Յընկերաց սրբոց հռիփսիմեանցն 'ի ցրուելոցն։

483. Բայց երբոր այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն ածական դերանունները՝ գոյականէ կամ ուրիշ ածականէ մը ետև դրուին նէ, սովորաբար միշտ անոնց վրայ ալ դնելու է գոյականին նախդիրը, մանաւանդ զ, 'ի, յ, ց նախդիրները.

Զօրս զայս.
Զգեղեցիկ պատմուճանս
զայս.

Զժողովուրդս քո զայս.
Զմեծ զայս մարմինս.
Զերկրաւոր ստորինս զայս

չարութիւն.
Զհուրդ զայդ.
Զտեսիլն զայն մեծ.
Զտեսիլն մեծ զայն.
Զգերաշխարհիկն զայն տօ-նախմբութիւն.
Զտեղեաւն զայնուիկ.
Զառնէն զայնմանէ.
Զտասն նկանակս զայսո-սիկ.
Զամենայն չարիսդ զայ-դոսիկ.
Զաւուրսն՝ զայնոսիկ:
Զնշանս մեծամեծս զայ-նոսիկ.
Յաշխարհս յայս.
Յաւուրս նեղութեան յայսմիկ.
Յերկրէս բարութեան յայսմանէ.
Յերկրիդ յայդմիկ.
Յերդմանէդ յայդմանէ.
Յերդմանէդ քումմէ յայդ-մանէ.
Ի տարւոջն յայնմիկ.
Ի չար հիւանդութեանն յայնմիկ.

Ի պատուիրանացս յայսցա-նէ.
Ի կարևորացս յայսոցիկ կամ այսոցիկ (127).
Ի չարեացդ քոց յայդցանէ.
Ի քաղաքացն յայնցանէ կամ յայնոցիկ կամ այնորիկ.
Ցտեղին ցայն.
Ցժողովուրդն ցայն.
Ցոսկերսդ ցայդոսիկ.
Ընդ վէմս ընդ այս.
Ընդ առնս ընդ այսմիկ կամ ընդ վիմիս այսմիկ.
Ընդ յարկաւս ընդ այսուիկ. կամ ընդ յարկաւս այսուիկ
Ընդ այրդ ընդ այդ.
Ընդ ամենայն երկիրն ընդ այն.
Ընդ աւուրս ընդ այնոսիկ.
Ըստ արձանս ըստ այս.
Ըստ ժամանակին ըստ այն-միկ կամ ըստ ժամանակին այնմիկ.
Զտէր զնոյն.
Յորոգայթ 'ի նոյն.
Ի չարիսն 'ի նոյն.
Ընդ ճանապարհ ընդ նոյն:

484. Ոչ մակբայը՝ հասարակ անուն ածականի հետ ալ գոյականի հետ ալ որ ըլլայ, ինք կ՚առնէ նախդիրը մէկ բառ եղածի պէս.

Զկոյս զոչ խօսեալ.
Իբր զոչ ինչ պիտանի. — այս ինքն իբր զոչ պիտանի ինչ, զանպիտան ինչ:

Յոչ խուր պատշաճագոյնն. Յոչ ընդունելն.
Յոչ երևելեացս. Ի յոչ լսելն։
Յոչ կամաց երթալ. Ասացից ցոչ ժողովուրդ իմ։
Յոչ գոյէ կամ յոչ գոյից. Ընդ ոչ գոյսն.
Յոչ պէտս երևեալ. Ըստ ոչ սովորութեան.
Զոչ այնպիսի երևելն. Իբրև զոչ՚ի բնութենէս։

Ըսեր ենք որ ամենևին զոչինչ, յոչինչ, զոչ ոք, յոչ ոք չըսուիր (86, 100)։ Բայց կայ ըսուած Յոչ ումեքէ յոչ և մի ինչ իրս, որ է ըսել՝ ոչ յումեքէ կամ յումեքէ, ոչ, և ոչ՚ի մի ինչ իրս։

# ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

485. Ուղղագրութիւնը՝ խօսքը շիտակ գրելն է։ Բառերը շիտակ կարդալ ու գրել գիտնալէն ետքը, խօսքն ալ շիտակ կարդալու և գրելու քանի մը նշաններ կան։

486. Առոգանութեան՝ այս ինքն յարմար ձայն հանելու նշաններն են բութ (՝), շեշտ (՛), երկար (´), պարոյկ (°), որ ոլորակ կ'ըսուին։

487. Բութը՝ դուր ձայն կընշանակէ, և ամենևին չգրուիր, ինչու որ՝ մեր գրեթէ ամէն բառը մինակ որ զրուցուի՝ դուր է, ետքի վանկին վրայ կ'ելնայ ու կ'իջնայ ձայնը։ Ուստի հիմայ բութը կետերուն կարգն է։

488. Շեշտը՝ զարնելու և ձայնը բարձր հանելու նշանն է։ Խիստ քիչ բառ ունինք որ ինքիրենը շեշտ ունենայ, ինչպէս, Հա՛պա, մա՛նաւանդ, ա՛ւասիկ, ա՛յսպէս։ Բայց բայերուն հրամայականներն ու ոչ, մի մակբայները կըշեշտուին. Սիրեա՛, լուարո՛ւք, աղէ՝ հա՛ր. ո՛չ կամիմ, ո՛չ ոք, ո՛չ այդպէս. մի՛ տայք, մի՛ սիրէք, մի՛ մեղանչէք։

489. Նմանապէս ամէն բութ բառերնիս՝ ետևէն իրեն փակչելու և մէկտեղ զրուցուելու բառ մ'որ ունենայ, շեշտ կ'առնէ ետևի ծայրը. ինչպէս, Վեցերո՛րդ ամիս, մե՛ծ պատուհաս, ե՛ս առաւել, առաւե՛լ ես, չե՛ ես, ե՛ս իսկ տեսի, դէ՛մ յանդիման, օրինա՛կ առէք, զգուշացա՛յ ոչ, կերիցէ՛ մի. — գիտէ որ ան ատենը հրա-

մայականն ատէք, տար, ողը, մն, իրենց շեշտը կորսըն-ցուցին. Նոյնպէս վերը այդպէսը:

490. Ասանկ ալ անուն մ'որ կանչուի նէ, վերջը կը-շեշտուի կամ կ'երկըննայ. ու երկուք որ ըլլան, առջինի-նը միայն.

Լո՛ւր դու ինձ, իշխա՛նդ.
Ծառա՛յք հնազա՛նդ լերուք.
Հաշտեալ եմ ընդ քեզ, տառապեա՛լդ և խախ-տեալդ.
Բայց դո՛ւ, արքայ, տուր իշխանութիւն.
Ազարիա՛ եղբայր. եղբա՛յր Ազարիա.
Բարերա՛ր տէր, տէ՛ր բարերար.
Տէ՛ր տէր.
Յակո՛բ Յակոբ.
Աստուա՛ծ՝ Աստուած իմ (489):

491. Շեշտն ալ կարդացմունքի մէջ'ի գործ կը-դրուի, բայց չգրուիր հիմայ: Հիմկու սովորութիւնը կես հարցականներուն վրայ կըդրէ շեշտը, մէկ մ'ալ շատ չերկըննալու ձայնարկութիւններու վրայ. ինչպէս,

| | |
|---|---|
| Հարցանել թէ դու ո՞վ ես. | Ա՜յ անօրէն. |
| Հարցանէր թէ ո՞ւր ծնա-նիցի: — | Ասա, ո՜վ մարգարէ. |
| | Օ՜ն արիք. |
| Երանի թէ. | Հա՜պա առաքինիք: |

492. Երկարը կըդրուի ան ձայնարկութիւններուն և անուններուն, ուր որ կիրքին յարմար երկըննալու է ձայնը.

| | |
|---|---|
| Բա՜բէ՝ | Ո՜վ, քանի ահագին են. |
| Վա՜շ. | Տէ՜ր տէ՜ր մեր, զի՜ սքան-չելի է անուն քո. |
| Ո՜հ, կարի է առասպելս. | |
| Ա՜ւաղ բախտին. | Զարմա՜նք մեծ: |

Երբեմն շեշտն ալ կ՚օգտէ. Վա՛շ վա՛շ, ո՛վ անմտութեանն։

493. Պարոյկը հարցնելու բառերուն վրայ կդրուի. Ձի՞, քանի՞, ընդէ՞ր, ուստի՞, ո՞րպէս, ո՞րչափ, ա՞յդչափ, վասն ա՞յնորիկ եկիր, որպիսի՞, որպիսո՞ւմ, հասեա՞լ իցես, իցե՞ս հասեալ, կերա՞ր արդեօք, արդեօք կերա՞ր, ո՞չ տեսանես, միթէ մա՞րթ ինչ իցէ, միթէ իցէ՞ ինչ մարթ, միթէ դու մե՞ծ ինչ ոք իցես։

494. Տրոհաբանութիւն՝ այս ինքն բառերն ու խօսքը բաժնելու նշանները են ենթամնայ (֊), ապաթարց և մակակէտ (՚), բութ (՝), ստորակէտ (,), միջակէտ (.), վերջակէտ (։)։ Ետքի իրեքը մէկէն կ՚ըսուին կէտք եւ տրոհմունք։

495. Ենթամնայն՝ բառերը տողին ծայրը բաժնելու պէտք կ՚ըլլայ, որ գծագրիչ կ՚ըսուի։ Ու դրադարձին կանոնն աս է համառօտ.

496. Երկու զատ զատ վանկ ընող ձայնաւորներուն մէկն անդին անցընելու է. ինչպէս, Մի֊այն, առնու֊ին։

497. Բաղաձայնը մէկ որ ըլլայ, միշտ անդին գրելու է. շատ որ ըլլայ, մէկը միայն անդին տանելու է. Բա֊րի, եր֊կիր, պակ֊նում, ման֊րեմ, հանգ֊չիմ, վարձ֊կան։

498. Բայց բարդած կամ ածանցած բառ որ ըլլայ շատ բաղաձայնով սկսող, բոլորն ալ հետը մէկտեղ անդին դարձընելու է. Նորա֊նշան, ան֊բնական։

499. Մէկ տողին վերջն ու մէկալին ծայրը մնացած բաղաձայններն ալ մինակ կըմնան, կամ բնական չեն կտրած բառին, հետը կամ մէջը՝ ուր որ ըթով կ՚ըսուի՝ ը դնելու է. Գը֊րոյ, ըղ֊գեստ, ըղ֊բան, երկըր֊պագու, մշտըն֊ջենաւոր, մըշ֊տընջենաւոր, ան֊դըր, տըր֊տում, ան֊տըրտում, անըս֊կիզբն, ան֊սկիզբն։

500. Ապաթարցն աւելի բանաստեղծները կըբանեցընեն՝ ուր որ գիր մը կըձգեն նէ. ինչպէս, Ա՛պ եթէ,

նա՛ւանիկ, վէմ մ՚՚ի գուռն, ազնուականի՛ մն ցանկացեալ, առաքեալ՚ի մեզ՚հօգիդ. փոխանակ ըսելու՝ ապա, աւանիկ, մի, իմն, զհօգիդ:

501. Մակակէտը նախդիր իին ետին դրուած է, և պէտք ալ կ՚ըլլայ բառ բառէ որոշելու. ինչպէս, ՚ի Սահակ, ՚ի գլխ, ՚ի ջեր, ՚ի սկզբն, ՚ի շանց, առ ՚ի յԱստուծոյ:

502. Մակակէտ կամ ձչէկ (՚) կըդրուի ղ կամ լ գրերուն վրայ ալ, բարակ ըլլուն կարդալու համար. ինչպէս, այղ կամ այլ՛, Թոյղ կամ Թոյլ՛, ջիղ կամ ջիլ՛, գղալ կամ գլ՛ալ, գահղիճ կամ գահլ՛իճ, յեղուզակ կամ յել՛ուզակ. ղամբար կամ լ՛ամբար, պաղատ կամ պալ՛ատ, փիղիսոփայ կամ փիլ՛իսոփայ, Խորայեղ կամ Խորայել՛, ՚Ղեւոնդիոս կամ ՚Լեւոնդիոս, Պօղղիոս կամ Պօլլ՛իոս, Գաղղիա կամ Գալլ՛իա. և այլն և այլն, որ երկու կերպն ալ կայ ՚ի հին գրչագիրս [1]:

1 Ոսկի դարու մատենագիրներն և այլ մերազգի, մանաւանդ օտարազգի, զատել չկրցող բառերն ու անուններն առանց փչակի զատ գրել կամ զատել կարդալը՝ մեծ սխալ է, ինչպէս որ ընդարձակ քերականութեան մէջ (1852ին) զատ ճառով ալ ցուցըցեր ենք՝ բուն քան զմեզ հմուտ լեզուագէտ Նախնեաց բանաւոր փաստերովն և վկայութիւններովը: Հիմայ հոս կըհարկաւորէ ըսել ճշմարտութեան հարստահարութիւնը, թէ եղան ոմանք ետքէն՝ որ կարծել և կարծեցնել ուզեցին, թէ մեր այբուբենքը ՚ի սկզբան՝ Յունաց աշփաբետայ նիւթական կարգին վերէն ՚ի վար համեմատելով գրուած է գիր գրի դէմ իբրև նոյնաձայն. և անանկով՝ ուզածնուն պէս՝ Յունաց լամպային գիմացը ղ կըհանգիպցնեն. ուստի Յունաց լամպատ, Հրէից լամէթը, լատինացւոց էլը, և հետևաբար ամէն ազգաց լէնն ալ՝ զատ է պիտի ըսեն: Բայց ատ բանդ մինչև ՚ի 1852 մէկու մըն ալ մտքէն անցած չէր. և չէր կրնար ալ անցնիլ առանց մտքէ մը, թէ երկու ազգի տառերը մէկմէկու համեմատել ուզողը՝ մէկէն ՚ի մէկալը դարձնելու համար, եթէ նիւթական կարգով մէկմէկու դէմ վերէն ՚ի վար շարէ զանոնք, և որը որուն դիմացը իյնայ նէ ըստ իւր կարծեացը յարմարութեան, զայն համարի այն նշանագրին համեմատ. տեսնելով միայն որ մէկ քանին յարմար կըհանդիպի, բայց չուզելով տեսնել որ մէկ քանին ալ անյարմար կուգայ, և մէկ ազգին կարգին յարմար ինկածը՝ մէկալին չիյնար: Հապա ատ բանիդ մէջ ինչ կըբըռնըռնուի. անշուշտ տառ տառի կամ որ նոյն է՝ ձայն ձայնի յարմարիլը, որչափ որ կրնայ ըլլալ լեզուէ ՚ի լեզու՝ երկու ազգին ժամանակին հնչած ձայներուն նայելով, թէ և նիւթական կարգէն դուրս ըլլան նշանագիրները. և առով՝ միւս ազգաց նոյն կամ

**503.** *Կէտերէն՝ բութը կը դրուի բառի մը վրայ՝ ուր որ ձայնը խիստ քիչ կանգ առնելու մը պէս պիտի ընէ, որ բառ բառի չխառնուի։*

**504.** *Ստորակէտը կը դրուի՝ երբոր խօսքի մը կտորը խիստ անկատար է, ու ետեւէն բան մը կ'ուզէ։*

**505.** *Միջակէտը կը դրուի լման խօսքէ մը ետքը, որ ետեւէն ուրիշ կտոր մ'ալ ունի։*

**506.** *Իսկ վերջակէտը կը դրուի՝ ուր որ խօսքն ամբողջ լմնցած է, ու տուն մը կըսուի։*

Չորսին ալ օրինակ։

*Բոլոր մարմնոյս՝ հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ և հոգւոյ՝ միտք են կառավար. և որպէս առ մի մարդ, այսպէս առ բոլոր աշխարհս։*

---

նման տառերուն ալ հարկաւ կը յարմարի, և ան լեզուաց ալ համարձակ կրնայ գործածուիլ։ Կարծենք թէ խելքին ցուցուցած և աշխարհիս ուրիշ լեզուաց բռնած ճամբան աս է. և աս ըսեր ենք յիշեալ ճառին մէջ թէ մեր Նախնիքն ալ ըրեր են անտարակոյս իմաստութեամբ։

Գիւտի գրոյն՝ և յունին հետ համեմատութեան պատմութիւններս ալ որ անպղտոր մտօք կարդանք, չենք գտներ բնաւ հակառակ կարծիքին և ոչ հետքը։ — Բայց Խորենացին ըսեր է եղեր. «Մեսրոպայ փոխադրելով զհայերէն աթութայն ըստ անսայթաքութեան սիղ'ոբայից հելլ'ենացւոց», Փարպեցին ալ թէ «Մաշտոց հանդիպեցուցանէր զհայերէն աթութայն ըստ կարգման սաղ'ոլբայից յունաց»։ — Ի՞նչպէս պարզ և յստակ միտք մը չէ կարող տեսնել, որ եթէ խնդիրը կարդաւ գիմացէ գիմաց գրել ու հանդիպցնել էր նշանագրաց համեմատութիւնը, ի՞նչ դժուարութիւն կար հոն, որ և տղայ մը կրնար ընել մէկ ժամու մէջ։ Հապա ի՞նչ էր մեծ՝ և յիրաւի մեծ դժուարութիւնը որով տագնապեցան բանիբուն Նախնիքն։ Վանկերը, հեգերը, լեզուին կապերը անսայթաք կարգի մը դնել, Յունաց պէս՝ ձայնաւորներով բաղաձայնները հեգ կապել։ Այն տագնապս էր որ առաջ ալ քաշեցին հին մեր դանիէլեան նշանագրաց վրայ՝ որ քսանուինն էին առանց ձայնաւորաց. վասն զի «Ոչ ածել զկարգս հայերէն լեզուոյն» չէր ըլլար կ'ըսէ յայտնապէս Կորիւն (էջ 9)։ Նոյն բանը կ'ըսեն նաև քիչ մը վերը Խորենացին ալ Փարպեցին ալ։ Յայտնի է այս նաև գործած բառերնուն. կ'ըսեն՝ փոխադրել (այսինքն դարձնել) կամ հանդիպեցուցանել (որ է հանդէպ՝ համադէպ նման յարմարցնել), ինչը ինչու հետ. զՀայերէն աթութայն ըստ անսայթաքութեան կամ ըստ կարգման սաղ'ոլբայից յունաց, և ոչ թէ զհայ նշանագիրսն ընդ յոյն ալ'փաբետս՝ գիմացէ գիմաց հանդիպցնել։ Վասն զի աթութայք չեն նշանակեր նշանագիրք կամ այբուբենք, այլ սիլ'լ'աբայ, որուն հետ նոյ-

Որ երբեւ զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստո-
նէութիւնն, արդ երբեւ զգոյն 'ի մարմնոյ՝ չկարէ շրջել.
թերեւս և ոչ այլ կարասցէ մինչեւ 'ի կատարած:

507. Սորակետով կըզատուին կոչական անուննե-
րըն, ու միջակետով՝ ուրիշին խօսքն որ բերենք, որ գըլ-
խագրով ալ կըսկսի. Այո, արքայ քաջ, այդ այդպէս
է: — Ստիպէր զնոսա և ասէր. Թող գրեմ և ցուցա-
նեմ մեծ թագաւորին:

508. Պարզ յատուկ անուններն ու պատուոյ անուն-
ներն ալ գլխագրով գրելու է. Հայկ, Աթէնք, Երասխ.
Քո Ճոխութիւնդ, Ձեր Երանութիւնդ:

509. Փակագիծ կ'ըսուի աս նշանս ալ ( ), երկան մի-

---

նանիշ առած են մի և նոյն բանը՝ աթուլթայս և սիւղ՛աբայս կ'ըսեն, և
Կորիւն հայերէն կապ կըկոչէ, որ է հեգ, վանկ: Բանանք հայկազեան
բառգիրքը, ինչ կ'ըսէ. «Աթուլթայք. երբ աթ և աթ, աթերք, այսինքն
յօդք և զօդք տառից և վանկից. կապք և տարերք փաղառութեանց
ըստ կանոնաց առոգանութեան»: Եւ օրինակ բերած է նոյն Խորենա-
ցւոյն և Փարպեցւոյն խօսքերը: Նոյնպէս կը նշանակէ սիլ՛լաբայն 'ի
յոյնն և անկէց յամենայն եւրոպական լեզուս. որ ազգին բառգիրքը
կ'ուզես նէ՝ բա՛ց նայէ: Եւ Կորիւն՝ բուն առաջին պատմիչը՝ անմիջա-
պէս յետ գիւտի գրոյն ամենևին յունի խօսք մը չըրած, կըսէ. «Նշա-
նակեալ՝ անուանեալ և կարգեալ յօրինէր սիլ՛լաբայիւքն և կապօք» (էջ 10).
վասն զի զաս եօթը հայ ձայնաւորները յունին նման հեգ կապելու
որ սորվեր էին, և հայուն համար ալ բնածնին ան էր:

Գանք նիւթական կարգին անտեղութեանցը: Առաջինն ու մեծն այն
է յայտնապէս, որ մեր լեզուին դիմացը բան մը չկայ հանդիպած. և
փոխանակ գիր մը միայն վար՝ աս դնելու ՝ամլտային աւջին և ղատը
դուրս հանելու երբեւ կոկորդային և յատուկ հայկական, լեզուը դուրս
ձգուեր է՝ երբեւ անհամեմատ յոյն տառի մը. որ անբաւ տեղ ՝ամվ-
տային դիմացը գրուած է տառադարձութեամբ և ազգն ալանանկ կ'ար-
տաբերէ, և հին քերականքն ալ անանկ կ'աւանդեն, և թէ ղատ գը-
րուածը կամ ղատի գլխուն նմանածը՝ ղատ չէ, հապա բարակ լ'իւն,
ինչպէս՝ կ'ըսեն՝ 'ի լ'ակոնացի, լ'ատինացի, Էլ՛իէլ՛ի լ'ամա սաբաքթանի,
ալ'էլ'ուիա, Իսրայէլ՝ և այլն, և այլն. որ ըստ միւս կարծեաց բոլոր
ղատ ըլլալու էր: Երկրորդ, յոյն ֆ-ին՝ որ միշտ 'ի մեզ ֆ- կըդառնայ,
ըստ հակառակ կարծեաց բռնական կարգին՝ կը հանդիպի շ. և ըստ այնմ
Ալ'եքսանդր, Քսերքսէս, Քսենոփոն, Մաքսիմոս, Օքսենտիոս, Կիաք-
սար, Հռաքս, Եւպրաքսէ, Փէլ'իքս, մետաքս, սոփքս, դուքս, և այլն,
գառնալու էին Աղեշանդր, Շերշէս, Շենոփոն, Մաշիմոս. Օշենտիոս,

ջանկեալ բան մը մէջն առնելու զատելու համար։ Բայց կարծերը ստորակետով զատել հերիք է. ինչպէս, ընդհանել ոգւոյն, քանզի մեռաւ, կոչեաց զանուն նորա որդի վշտաց իմոց։ — Գուցէ ամաչեսցուք մեք, զի մի ասասցուք թէ դուք, 'ի մասինդ յայդմիկ պարծանաց. — Ոմանք հիմայ խօսքին կարգը առոր տեղն աս շիտակ գծիկը կըդնեն —, որ բան բանէ զատելու կամ քիչ մը հանգիստ տալու ալ կըբանի, և յայլ և այլ բերնէ խօսքերն որոշելու։ Իսկ մէկուն խօսքը պակաս կամ կտրած և կցկտուր ըլլալը հասկցնելու՝ կըդրուի քանի մը կէտ, այսպէս.....։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ ԼՄԸՆՑԱՒ

---

Կիսաշար, Հաւշ, Եւպրաշէ, Փեղիշ, մեռաշ, սախշ, դուշ, և այլն. որ մէկ տեղ մ'ալ չկայ, բայց մէկ երկու արևելեան անուանց մէջ, ուր մեր շան՝ Յոյնը չունենալով՝ ձգեր է և չէ թէ մենք յունէն դարձուցեր ենք, հապա բուն մերը հնչեր ենք, Արտաշատ. Արտաշէս։ Երրորդ, յոյն ռօին դիմացը նոյն կարգով կըհանդիպի ռ, որ տեղ տեղ, մանաւանդ սկիզբը կամ երկու ռօն կամ նուէն առաջ (49), անանկ դարձած կայ ալ նէ, անհամար տեղ սովորաբար ր դարձուցած են Նախնիք և ր կըհնչէ ազգը. սակայն ըստ այն կարգին՝ ռէն մնացած է տկլոր առանց քովը յոյն գրի մը, և ըսել պէտք կ'ըլլար բառբառոս, մառտիռոս, Գեռմանոս, Գռիգոռ, Դեմետռ, Դիոդոռոս, Թռակիա, Հեռակղէս, Եւռոպա, Ափռիկէ, Կիռակոս, Եբռա, Աբռամ, Նեբռովթ, Եփռեմ, Աշհառն, Մառիամ, Փախառոս, Պետռոս, Մառկոս, Մառթա, և այլն, և այլն։

Այս ամէն բանը չըսուեր է մեծաւ ուրախութեամբ՝ որ յոյն լ'ամվտային ղատ լսնայ ուէ, ինչ ըլլայ նէ ըլլայ. — եղեր է այնպէս լ'իւնը ղատ՝ ինչպէս ֆոր՝ շա, բէն՝ ռա։ Հիմայ տեղն է ըսելու, որ ֆոխաարէնը և հանդիպեցուցանելը՝ նշանագրաց վրայ ալ ղըուցուած ըլլար նէ, հարկաւ կըհասկցուէր՝ նման յարմարցնել կամ դարձնել ըստ տառից, ըստ ձայնից երկուց ազգաց, և ոչ թէ անյարմար՝ լ'ամվտային ղատ ըսել ֆոր՝ շ, երբոր քովը կեցեր է յայտնի նմանը լ'իւն և.քս։

# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

## ՁԵՒԱՒՈՐ ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

### ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ ՀԱՄԱՐ

---

### ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

510. Ինչուկ հիմայ սորվածնիս՝ լեզուին անսխալ և պարզ շարադրութեան հասարակ ու սովորական կանոններն էր։ Բայց երբեմն, այևայլ պատճառով ու մտքով, կարգէ դուրս գերազանց բաներ ալ կ'ըլլան շարադրութեան մէջ, որ ձև կ'ըսուին, և անանկ շարադրութիւնը կ'ըսուի ձևաւոր շարադրութիւն։

511. Աս քերականական ձևերը հինգ են. Զեղչումն, Աւելադրութիւն, Բակառութիւն, Փոխադրութիւն, Արտուղութիւն։ Ասոնց շատ կերպ կերպ վարպետ գործածութիւնը կայ գրոց ընտրելագոյն և բարձրագոյն շարադրութեանց մէջ, բայց մենք ամեն մէկին խիստ շատ բանուկներն և երբեմն երբեմն գործածուածները միայն՝ գէթ գիտնալու և հասկընալու չափ տեսնենք՝ բաւական է։ Իսկ բանեցընելը՝ խելքով ու չափով բանեցընելու է, որ բանը մութ չըլնայ և համով գայ։ Մանաւանդ՝ երբեմն կամ քիչ տեղ կ'ըլլայ ըսուածները՝ զգուշութեամբ գործածելու է. իսկ շատ անգամ կամ շատ տեղ կ'ըլլայ ըսուածները՝ քիչ մը աւելի համարձակ կրնայ բանեցուիլ։

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԶԵՂՉՈՒՄՆ

512. Զեղչումն է՝ բան մը պակաս դնել որ ինքիրեն դիւրաւ կ՚իմացուի, կարճ ու կտրուկ ըսելու համար խօսքը։

513. Ասանկ, անուն բային կամ խնդիրը՝ միջակ անուններէն որ ըլլայ նէ, շատ տեղ չդրուիր ու ինքիրեն կ՚իմացուի. ինչպէս,

Ոչ իցէ 'ի նոցանէ որ ապրեսցի. — այս ինքն ոչ ոք իցէ։

Եկն առ իս յեղբարց իմոց. — այս ինքն ոմն յեղբարց իմոց։

Եկին ընդ մեզ և յաշակերտաց անտի. — այս ինքն ոմանք յաշակերտաց։ —

Ա՛ռ ընդ քեզ 'ի ծերոց ժողովրդեանդ. — այս ինքն ա՛ռ զոմանս 'ի ծերոց։

Յղեցին և կոչեցին զնոսա. — այս ինքն յղեցին զոք կամ զոմանս։

Յերևելի նիւթոյ և յազգի ազգի գունոց 'ի միասին խառնել. — այս ինքն ինչ ինչ։

Մի դատիք և ոչ դատիցիք. տուք և տացի ձեզ. — այս ինքն մի զոք դատիք և ոչ դատիցիք յումեքէ. տուք ինչ ումեք և տացի ձեզ ինչ յումեքէ։

514. Անորոշ և անցեալ դերբային անուն բային շատ անգամ տեղէն ինքիրեն կը հասկըցուի.

Զալիսն 'ի նաւն զեղոյր, մինչ գրեթէ լի իսկ լինել. — այս ինքն նմա, նաւին լի լինել։

Զի մի ըստ քո փարախդ արտաքս եղեալ, չար գազան դարձեալ բեկանիցէ զիս. — այս ինքն եղեալ իմ(286)։

Եւ բախեալ զդուրս տանն, մատեաւ աղախին մի ունկն դնել. — այս ինքն նորա բախեալ։

Սպանին զՅովաս յԵրուսաղէմ, Թագաւորեալ ամս քառասուն. — այս ինքն Թագաւորեալ նորա։

Զի մի յատենի անդ կացեալք, չարաչար առ մեզ վարեսցի ատեանն. — այս ինքն մեք կացեալք։

515. Անցեալ դերբային էական բային երրորդ դէմքերովն որ դրուինէ (331, 332), սեռական անուն բային շատ տեղ զօրութեամբ կըհասկըցուի.

Զառ 'ի յետոյն մոռացեալ է և 'ի յառաջադէմսն նկրտեալ եմ. — այս ինքն իմ մոռացեալ է։

Մինչ չև զամենայն մարմինդ անդամ անդամ լուծեալ է. — այս ինքն մեր լուծեալ է։

Զինչ եդեալ է 'ի մտի ձերում վասն մեր՝ կատարեցէք. — այս ինքն եդեալ է ձեր։

Զիա՞րդ զգիրս գիտէ սա, զի ուսեալ բնաւ չիք. — այս ինքն սորա չիք ուսեալ։

Մինչ չև ստեղծեալ էր զքեզ յորովայնի՝ գիտեմ զքեզ. — այս ինքն իմ ստեղծեալ էր։

Որպէս զամենայն ազգ նուաճեալ էր և 'ի հնազանդութեան ունէաք. — նուաճեալ էր մեր։

Եդ 'ի գերեզմանի՝ զոր էր փորեալ 'ի վիմէ. — այս ինքն նորա, կամ որ և փորեալն էր.

Նորք էին ժողովեալ 'ի հրէաստան, և զտունն 'ի պղծութենէ անտի դեռ ևս էր սրբեալ. — այս ինքն էր սրբեալ նոցա։

Իբր ոչ եթէ արդէն առեալ իցէ կամ արդէն կատարեալ իցեմ. — այս ինքն առեալ իցէ իմ։

Իբրու թէ անձին զօրութեամբ ինչ կամ քաջութեամբ արարեալ իցէ զգնալդ դմա. — այս ինքն արարեալ իցէ մեր։

Զի՞նչ ունիս զոր ոչ իցէ առեալ. — այս ինքն ոչ իցէ քո առեալ։

Ի տասանորդէ զմաքս ձեզ թողեալ լիցի, և զիշխանութիւն զամրիդ՝ի ներքս տուեալ լիցի ցքահանայապետդ. — այս ինքն մեր կամ իմ թողեալ լիցի, տուեալ լիցի (586)։

Եղիցի վասն քո տուեալ զտէրութիւն Կամսարականին. — այս ինքն մեր կամ իմ եղիցի տուեալ։

516. Շատ տեղ ալ բայն չդրուիր ու կ'իմացուի ինքիրեն, ըսեր ենք առաջ (340). Հիմայ տեսնենք այլ և այլ կերպը։

517. Անցեալ դերբային էական բայը շատ տեղ չըդրուիր հետը, ու տեղէն կ'իմացուի բանին ու դէմքին համեմատ.

Մինչ չև լերինք հաստատեալ էին, մինչ չև ստեղծեալ զերկիր և զամենայն տիեզերս. — այս ինքն ստեղծեալ էր քո, Աստուծոյ։

Զայրն Մարեմայ՝ որում խօսեցեալ զՄարիամ կոյս, յորմէ ծնաւ Յիսուս. — այս ինքն խօսեցեալ էր կամ էին։

Տուեալ քեզ ընդ այնր վրիժուց զամենեսեան որ կամիցին հաւատալ քեզ. — այս ինքն տուեալ է կամ տուեալ լիցի (586)։

Ասացի ձեզ մինչ չև եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք. — այս ինքն մինչ չև եղեալ է, այս կամ եղեալ է այսօրիկ։

Ամենեքեան որ անցանիցեն զօրինօքն՝ տուեալ քեզ իշխանութիւն պատուհասել. — այս ինքն տուեալ է կամ լիցի։

Եւ իմ հրամայեալ՝ մի ոք արգելցէ, — այս ինքն իմ հրամայեալ է։

Տուր իշխանութիւն. և ամէնթագաւորն. Տուեալ քեզ. — այս ինքն տուեալ է կամ լիցի։

Ահաւասիկ Հողոփեռն յերկիր կործանեալ, և գլուխ իւր չէ առ նմա. — այսինքն կործանեալ է։

Ոչ կերեալ դորա երբեք և ոչ արբեալ. — այս ինքն ոչ կերեալ է։

Գնացին արք անօրէնք պատմել Թագաւորին, եթէ Յովնաթան մենքենայս կազմեալ, շուրջ զբերդաւն պատեալ, յառնուլ պատրաստեալ. — այս ինքն պատրաստեալ է կամ էր։

Զիա՞րդ կարասցուք մարտնչել ընդ այնչափ պընդակազմ գնդի, մանաւանդ զի լքեալք և լուծեալք. — այս ինքն լուծեալք եմք։

Զայն արար կաքաւ, ժողովեաց զոր ոչ իւր ծնեալ. — այս ինքն ոչ ծնեալ էր։

Նա այրն ծերացեալ՚ի տեսանելոյ, և վատեալ աչք իւր՚ի ծերութենէ իւրմէ. — այս ինքն ծերացեալ էր, վատեալ էին։

Եւ ոչ միով իւիք հանգիստ գտաւ մարմնոյ մերում, այլ յամենայնի նեղեալք. — այս ինքն նեղեալք էաք կամ եղաք։

Ի գիրս հարցափորձից՝ որ առ ամօքն Նեէմեայ եղեալ. — այս ինքն եղեալ էին։

Զարմանային զի ոչ նման արդարոցն ծարաւեալք. — այս ինքն ծարաւեալք էին։

Զև այգ եղեալ, իւրաքանչիւր զընկեր կոչեմք. — այս ինքն մինչ չև իցէ այգ եղեալ։

518. Շատ տեղ ալ մէկ մը միայն կըդրուի դիմաւոր բայը կամ անցեալ դերբայն, ու պէտք եղածին պէս ինքիրեն կ՚իմացուի ետքը կամ առաջ։

Զոր օրհնես դու՝ օրհնեալ է. և զոր անիծանես՝ անիծեալ. — այս ինքն անիծեալ է։

Եղիցի երկիրն ձեր աւերակ, և քաղաքքն ձեր Թափուրք։ — այս ինքն Թափուր եղիցին։

Որոց մեղքն յայտնի են և յառաջագոյն հասեալ ՚ի դատաստան. — այս ինքն հասեալ են։

Որ այնչափ պատժոց պատժապարտ իցես, և ահագին ատենին յանդիման լինելոց և ընդ ամենայնի ճշդիւ համար տալոց.— այս ինքն լինելոց իցես, տալոց իցես։

Ես 'ի հայր, և հայր յիս է.— այս ինքն ես 'ի հայր եմ։

Չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ. — այս ինքն զայրացեալ էր։

Եթէ հրամայէ սպանանել՝ սպանանեն, և եթէ կեցուցանել՝ կեցուցանեն.— այս ինքն և եթէ հրամայէ կեցուցանել։

Ոչ եթէ դուք առաքեցէք զիս այսր, այլ՝ Աստուած.— այս ինքն Աստուած առաքեաց։

Մեկնեաց յինէն. եթէ դու յահեակ, ես յաջ. եթէ դու յաջ, ես յահեակ.— այս ինքն եթէ դու յահեակ մեկնիցիս, ես յաջ մեկնեցայց ևն։

Որ արբեալդ ես, և ոչ 'ի գինւոյ.— այս ինքն և ոչ 'ի գինւոյ ես արբեալ։

Թէ կամիս և թէ ոչ.— այս ինքն և թէ ոչ կամիս։

Թէպէտ և ամենեքեան գայթագղեսցեն, այլ՝ ես ոչ.— այս ինքն ես ոչ գայթագղեցից։

Կշտամբեսցէ զքեզ քո բերան, և ոչ ես.— այս ինքն և ոչ ես կշտամբեցից։

Առաւել քան զնոսա ամենեսին վաստակեցի. և ոչ եթէ ես, այլ՝ շնորհքն Աստուծոյ.— այս ինքն և ոչ եթէ ես վաստակեցի, այլ՝ շնորհքն Աստուծոյ վաստակեցին։

Դու 'ի նմանէ, և ոչ թէ նա 'ի քէն հատաւ.—
Դու զնա, և ոչ թէ նա զքեզ անգոսնեաց.— այս ինքն դու 'ի նմանէ հատար, դու զնա անգոսնեցեր։

Գովեսցէ զքեզ ընկերն, և մի քո բերան. օտարն, և մի քո շրթունք.— այս ինքն մի գովեսցէ, մի գովեսցեն։

Պատառեցէք զսիրտս ձեր, և մի զհանդերձս.—
այս ինքն մի պատառէք։
Երթայք գործեցէք, մի զկորստական կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ.— այս ինքն մի գործէք, այլ գործեցէք։
Տեսեալ՝ արդարոց ծիծաղեցան, անարատին՝ և արհամարհեաց.— այս ինքն և անարատին տեսեալ։

519. Ասանկ ալ երկու երեք անցեալ կամ ապառնի դերբայի մէկ էական բայ մը միայն կը դրուի շատ անգամ։

Պատրաստեալ և խորհեալ եմ։
Զսուր իւր սրեալ է և զաղեղն իւր լարեալ։
Ոչ երբեք հեղգացեալ եմք յարքունի վաստակս, և ոչ խառնեալ վատութիւն ընդ արութիւն քաջութեան։
Զոր ստացեալ և ապրեցուցեալ սնուցեալ էր։
Խռովեալ և աղմկեալ և զարհուրեալ միտքն էին։
Ընկեցեալ լինէր և քարկոծեալ և թափչաւ ըղգլուխն հարեալ, և այնու վկայ Ճշմարտութեանն Յիսուսի եղեալ, և զՃշմարիտ մահն նորա մեռեալ։
Արդ իմ զքեզ սպանեալ էր և զդա ապրեցուցեալ։
Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա։
Եթէ չէր մեր աճապարեալ և՚ի փախուստ դարձեալ։
Ձև էր զենումն զենեալ և մատուցեալ պատարագ. և ոչ հոգին սուրբ իջեալ, ոչ մեղքն լուծեալ, ոչ թշնամութիւն բարձեալ և ոչ անիծիցն եղծեալ։
Զոր տալոց և հատուցանելոց ես։
Գալոց իջանելոց էր։
Մեռանելոց է և յերիր աւուր յառնելոց։
Մարդ լինելոց է և վէմ անուանելոց և՚ի հիմունս Սիոնի դնելոց.
Լոյս զգենլոց են և արքայութեանն խոստացելոյ արժանաւոր լինելոց։

Հնազանդելոյն էին զամենայն ազգս, և ինքեանք անուանիք և հոյակապք լինելոյ քան զաշխարհս ամենայն։

Որ լսելոյն է՝ լուիցէ, և որ արհամարհելոյն՝ արհամարհեսցէ։

520. Շատ անգամ՛ ալ բայն, մանաւանդ էականն, ամենևին չգրուիր ու տեղէն կ'իմացուի. յիշէր ենք 'ի 340.§ հոս ուրիշ օրինակներ ալ տեսնենք.

Մեք կաւ և դու ստեղծիչ մեր. — այս ինքն մեք կաւ եմք, դու ստեղծիչ ես։

Ըստ Հիպոկրատեայ՝ կեանք սուղ և արուեստ երկայն. — այս ինքն սուղ է, երկայն է։

Եւ ամենայն որ ինչ նոցա, եկին. — այս ինքն որ ինչ նոցա է կամ էր։

Այսօր մաքուր հոգեկիր, վաղիւ մոլի խելագար. — այս ինքն այսօր եմ, վաղիւ լինիմ։

Գոհութիւն երեքսրբենին։ Անէծք այնպիսի կրծծի բանից. — այս ինքն գոհութիւն լիցի, մատուսցի. անէծք լիցին, եղցեն։

Սուր 'ի վերայ քաղդէացւոցն։ Ահաւասիկ ես 'ի վերայ քո. — այս ինքն սուր լիցի, հասցէ. ես եմ, ես գամ'ի վերայ քո։

Վա՜յ զիս. եղուկ զիս. երանի զազատեալսն. — այս ինքն վայ ասելի է, համարելի է։

521. Շատ տեղ անորիշ դերբայն ալ մէկ մը դրուելով, կամ ամենևին չգրուելով, զօրութեամբ կըհասկըցուի ինչ հոլով որ պէտք է.

Խօսել բան՝ զոր ոչ է արժան. — այս ինքն ոչ է արժան խօսել։

Ի հրոյ էութենէ ասեն զընութիւն աշխարհիս. — այս ինքն ասեն լինել։

Զպատրաստութիւն սպառազինութեանն հրամայեաց յարքունուստ. — այս ինքն յարքունուստ լինել։

Մեռաւ ամաց քսանից. — այս ինքն գոլով ամաց քսանից կամ եղեալ ամաց։

Ցայս ապաստան՝ կամէի նախ առ ձեզ գալ. — այս ինքն ապաստան գոլով կամ եղեալ։

Ինքն երթայր բոկ և ամենայն ժողովուրդն ընդ նմա՝ ձորձ զգլխով. — այս ինքն ունելով ձորձ զգլխով, գոլով ձորձ զգլխովն։

Անկանէր 'ի ներքս սուսեր 'ի ձեռին. — այս ինքն ունելով սուսեր։

Արմուկն 'ի ծունգ և ձեռն 'ի ծնօտի՝ նստաւ այնպէս. — այս ինքն 'ի ծունգ 'ի ծնօտի ունելով կամ գոլով։

Կոյս վճարեցաւ յաշխարհէ. — այս ինքն կոյս գոլով, կոյս մնալով։

Այր մի Մատթէոս անուն։ Կին մի անուն Դամարիս. — այս ինքն անուն ունելով, անունն գոլով։

522. Ասանկ կ'ըսուի Բերան 'ի բերան խօսել, Թագ 'ի գլուխ զարդարել, Հիմն 'ի վեր տապալել, գայլ՝ 'ի բերան ածել զոք, ձեռս 'ի գլուխ ելանել, բերան 'ի վայր անկանել, կապել զնոսա ձեռս յետս կամ ընդ միմեանս ձեռ ընդ ձեռ։

523. Գոյական անունը շատ տեղ ածականին տակը զօրութեամբ կը հասկըցուի, մանաւանդ դիմորոշ յօդ դնելով ածականին (444).

Ծերութիւն պատուական՝ ոչ բազմաժամանակեայն է. — այս ինքն ոչ բազմաժամանակեայ ծերութիւնն է։

Անկիրթն դիւրաւ մոլորի. — այս ինքն անկիրթ մարդն։

Բարկասիրտ գործէ առանց խորհելոյ. — այս ինքն բարկասիրտ մարդ։

Հանցես զպատուականն յանարգէն. — այս ինքն զպատուական իրն կամ մարդն յանարգ իրէն։

Աստուած առաւել ատեայ զկիրըն քան զյանցաւորն. — այս ինքն զկիրըն։

Որչափ տգեղս առնես զմեզ երկրաւորաւս, գեղեցկագոյնս առնես զմեզ երկնաւորաւն. — այս ինքն երկրաւոր մասամբս կամ կերպիւս։

Մեծքն շփման և փոքունքն նախանձին. — այս ինքն մեծ մարդիկ, փոքր մարդիկ։

Ոչ բազմաժամանակեայք են իմաստունք. — այս ինքն ոչ բազմաժամանակեայ մարդիկ։

Աստուծոյ յայտնի են անգործք մարդոյն. — այս ինքն անգործ իրք։

Որ հասանէ անքննականաց, փառաւորաց և հրաշակերտաց. — այս ինքն իրաց։

Որ առնէ զմեծամեծս և զանքննինս և զփառաւորս և զհրաշակերտս. — այս ինքն զիրս։

524. Գոյական և ածական դերանունները շատ տեղ զանց կ՚ըլլուին, ու բանէն կըհասկըցուին.

Մի կարասցէ ունել զդէմ. — այս ինքն զդէմ իմ, քո, նորա, մեր, ձեր, նոցա, տեղին նայելով։

Ամենայն բարիք որ յԱստուծոյ առ մեզ ժամանեն և լուսաւորեն զհոգիս. — այս ինքն զհոգիս մեր։

Պնդեա զմէջ, զօրացիր զօրութեամբ յոյժ. — այս ինքն զմէջ քո։

Յոտն եկաց Պաւղոս, շարժեաց զձեռն և ասէ. — այս ինքն զձեռն իւր։

Որ անարգէ զհայր։ Հայր սիրէ զորդի։ Կոչէ ըդբարեկամս և զդրացիս. — այս ինքն զհայր իւր, զորդի իւր, զդրացիս իւր։

Եթէ հրամայէ պատերազմել, ոչ իշխեն անցանել զբանիւ. — այս ինքն զբանիւ նորա։

Ոչ լուանան զձեռս յորժամ հաց ուտեն. — այս ինքն զձեռս իւրեանց։

Դէպ եղեւ եղբարս եօթն մարբն հանդերձ կալեալս ածել. — այս ինքն մարբ նոցա:

Ընդէ՞ր բարկանաս եղբօրն. — այս ինքն եղբօրն քում:

Թող որդւոյն զբարերարութեանդ քո հանդէս. — այս ինքն որդւոյն քում:

Զոր հանդերձեալն ես թողուլ որդւոցն. — այս ինքն որդւոցն քոց:

Զոր'ի ձեռին ունէր. — այս ինքն'ի ձեռին իւրում:

Թողու լքանէ յօգնականութենէ. — այս ինքն յօգնականութենէ իւրմէ:

Սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն. — այս ինքն աշակերտաց իւրոց:

Առցեն զպսակն՝ զոր խոստացաւ սիրելեացն. — այս ինքն սիրելեաց իւրոց:

525. Նախդիրներն ալ շատ կերպով զանց կ'ըլլուին: Ինչպէս. Թէ որ բառը զայով, սէով, յիով կամ հոյով սկսած ըլլայ նէ երբեմն նորէն չգրուիր զ, 'ի. Առին զէնս իւրեանց. — այս ինքն զզէնս: Սեղանն եւ սրբել. — այս ինքն զսեղանն: Սուրբ սեպուհն զհմայեակ. — այս ինքն զսուրբ սեպուհն: Երթիցես յարկս քո. յաւիտեանս. յաւիտենից. յարդէ'ի ցորեան փոխել. — այս ինքն'ի յարկս, 'ի յաւիտեանս, 'ի յաւիտենից, 'ի յարդէ: Համառօտ Ճանապարհն եկն. հարաւոյ կողմանէ. — այս ինքն 'ի համառօտ Ճանապարհն'ի հարաւոյ կողմանէ:

526. Երբեմն ալ առջի բառը զ, ո, ի ըլլայ նէ, անոր ետեւինին ալ նախդրի տեղ կը բռնէ. Ծաղկեցո'ի մեղ հատն. — այս ինքն զհատն: Մաքրագոյնք որպէս մարգարէն. — այս ինքն զմարգարէն: Յայնմ ժամանակի խնդիր եղանէր արքայն. — այս ինքն'ի խնդիր եղանէր:

527. Երբեմն յ, ց գրերն ալ զայի տեղ կը բռնեն ատ երկու կերպովդ ալ.

528. Երբոր առջի բառն ետքինին խնդիր ըլլայ և երկուքին ալ նոյն նախդիրն որ պէտք ըլլայ նէ, ետքինին հարկ չըլլար դնելու, առջինինը երկուքին ալ կ'օգտէ.

Զձեռամբ անկեալսն իւրեանց՝ բռնութեամբ ժողովեն. – փոխանակ ըսելու զանկեալսն զձեռամբ իւրեանց:

Ասելով զկնի յոլովից առեալն. — փոխանակ ըսելու՝ զառեալն զկնի յոլովից:

Յարի և այս 'ի Բաբելոնէ դարձեալսն. — փոխանակ ըսելու 'ի դարձեալսն 'ի Բաբելոնէ:

Ի Քրիստոսէ պարգևեալ փառսն վայելեսցուք. — փոխանակ ըսելու 'ի փառսն պարգևեալ'ի Քրիստոսէ:

Ի քուն լինել մարդկան՝ եկն թշնամին. — փոխանակ ըսելու 'ի լինել'ի քուն:

Ի Ճանապարհ անկանել նոցա և մօտ 'ի քաղաքն լինել. — փոխանակ ըսելու՝ յանկանել նոցա 'ի Ճանապարհ և 'ի լինել մօտ 'ի քաղաքն:

Յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի. — փոխանակ ըսելու 'ի ձգտիլ յանչափն:

529. Նախդրի պէս հոլովառու բառերն ալ (152) շատ անգամ ինքիրենց կը հասկցուին առանց կրկնելու, նախդիր ունին նէ՝ ան միայն կրկնելով.

Յառաջ քան զլիս և զքեզ. — յ̃ և քան զքեզ.

Երկինք և երկիր վասն մարդոյն, և մարդն՝ պատուիրանին. — այս ինքն վասն պատուիրանին:

Փառաց վասն, ընչից աղագաւ, կամաց կատարելոյ, երկայնակեաց լինելոյ. — այս ինքն կատարելոյ վասն [illegible] աղագաւ, լինելոյ աղագաւ:

Վայ 'ի վայի վերայ, և գոյժ 'ի գուժի. — այս ինքն 'ի գուժի վերայ:

Վէրս 'ի վերայ վիրաց և ցաւս 'ի ցաւոց յաւելուն. — այս ինքն 'ի վերայ ցաւոց:

Ի վերայ խաչանց իմոց մեռանիմ․ յորոց խաչանց
արդեօք․ ՚ի հարթուցելոցն, ՚ի փախուցելոցն, ՚ի
գազանակուր եղելոցն․ — այս ինքն ՚ի վերայ որոց
խաչանց․ ՚ի վերայ հարթուցելոցն, և այլն։

Գթայր ՚ի վերայ նորա իբրև հայր յորդւոյ․ —
այս ինքն ՚ի վերայ որդւոյ։

Նստաւ յերկինս ՚ի վերայ քերովբէիցն, և յերկ-
րի՝ անասուն կենդանեաց․ — այս ինքն ՚ի վերայ
անասուն կենդանեաց։

Երթ զհետ արդարութեան, զաստուածպաշտու-
թեան, զհաւատոց, զսիրոյ․ — այս ինքն զհետ
աստուածպաշտութեան, զհետ հաւատոց, եւն։

530. Շատ տեղ ալ նախդիրներուն կամ հոլովա-
ւու բառերուն խնդիրը յայտնի չդրուիր ու կը հասկը-
ցուի․ ինչպէս շատ անգամ երբոր յատկացեալը չդրուիր
կամ չկրկնուիր ու իր նախդիրը յատկացուցչին վրայ
կըդրուի (480).

Կերպարանիմ զԴաւթին․ Զքերովբէիցն խոր-
հըրդաբար կերպարանիմք․ — այս ինքն զիրս կամ
զկերպարանս Դաւթի, քերովբէից։

Տգէտ են Աստուծոյ արդարութեանն, և զիւ-
րեանցն խնդրեն կացուցանել․ — այս ինքն զիւ-
րեանց արդարութիւնն։

Հայեաց ՚ի տառապանս մեր և ՚ի նեղութիւնս, և
՚ի թագաւորացն մերոց և իշխանացն մերոց և
քահանայից և մարգարէիցն մերոց․ — այս ինքն
և ՚ի նեղութիւնս թագաւորացն մերոց և այլն։

Ակնածեսցուք ՚ի Քրիստոսի պատուիրանէն՝ որ ՚ի
բերանս նոցա խօսէր․ զի եթէ ՚ի Պաւղոսին խօ-
սէր, ապա և ՚ի Պետրոսին, ապա և յայլոց Առա-
քելոցն․ — այս ինքն ՚ի բերան Սաւղոսի, ՚ի բե-
րան Պետրոսի․ ՚ի բերան այլոց Առաքելոցն։

Զարմանային յոյժ ընդ գեղեցկութիւն նորա և

ընդ ամենայն որդւոյն Իսրայէլի. — այս ինքն և ընդ գեղեցկութիւն ամենայն որդւոցն։

Աչք քո իբրև զառն։ Թևք նորա իբրև արծուոյ.— այս ինքն իբրև զաչս առն, իբրև թևք արծուոյ։

Դարձոյց զսիրտ ամենայն Յուդայ իբրև զառն միոյ. — այս ինքն իբրև զսիրտ առն միոյ։

Ոչ էին իբրև զԻսրայէլի գործք նորա. — այս ինքն իբրև զգործս Իսրայէլի։

Մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոյ. — այս ինքն քան զտեսաւորութիւն մարմնոյ։

Հայեաց ’ի վերայ աբրահամեան զաւակիս, ’ի սրբոյ Սահակայ. — այս ինքն ’ի զաւակի սրբոյ Սահակայ, որ ըսել է ’ի վերայ զաւակի (529)։

Զոմանս վասն պիղծս դատելոյ, և զայլս՝ վասն բարիս. — այս ինքն վասն բարիս դատելոյ։

Համդերձ որք բոլորովին են անշունչք. — այս ինքն համդերձ այնոքիւք (440)։

531. Մակբայներէն ոչ, մի, շատ տեղ չեն կրկնուիր ետևի բային, ու կըհասկըցուին.

Բանի զուրուք մեք ոչ կերաք և արբաք. — այս ինքն և ոչ արբաք։

Ոչ թողեր և ցուցեր զնոսա. — այս ինքն և ոչ ցուցեր։

Խստացուցին զպարանոցս իւրեանց առ ’ի չլսելոյ ինձ և ընդունելոյ զխրատ. — այս ինքն և չընդունելոյ։

Որպէս զի չէք յանիրաւութենէ արդարութիւն այսպէս ’ի ստութենէ ճշմարտութիւն. — այս ինքն այսպէս ոչ կամ չէք։

Մի աղաչեր վասն դոցա խնդրուածովք և պաղատիր. — այս ինքն և մի պաղատիր։

Մի ներէք նոցա և թողացուցանէք. — այս ինքն և մի թողացուցանէք։

532. Ուրիշ մակբայներն ալ երբեմն զանց կ'ըլլուին, կամ մէկ կտորը կը ձգուի.

Որպէս դու, և ես. և որպէս զօրք քո՝ զօրք իմ. — այս ինքն այնպէս կամ նոյնպէս և ես, նոյնպէս զօրք իմ։

Որչափ մեծ է իշխանութիւնն, դժուարին է մարտըն. — այս ինքն այնչափ դժուարին է։

Եւ արար՝ մինչև Ձեղքեաց խզեաց զմիաբանութիւնն Հայոց. — այս ինքն այնչափ արար։

Որպէս խորհեալ եմ, այն կացցէ. — այս ինքն այնպէս կացցէ։

Այսչափ կամ այն։ Եթէ այսպէս և եթէ այն։

Երբեմն այնպէս և երբեմն այս. — այս ինքն այնչափ, այնպէս, այսպէս։

Որպէս այժմ, նոյն և յայնժամ. — այս ինքն նոյնպէս։

Մեծին այլազգ ծառայանալ, և փոքուն այլ. — այս ինքն և փոքուն այլազգ։

Հայեաց յայսկոյս և յայն. — այս ինքն և յայնկոյս կամ յայն կոյս։

533. Շաղկապներէն ալ ոմանք զանց կ'ըլլուին, ու յայտնի կ'իմացուին շատ տեղ.

Չի թէ թշնամւոյն նախատեալ էր՝ համբերէի արդեօք, կամ ատելոյն մեծաբանեալ էր 'ի վերայ իմ՝ թաքչէի արդեօք 'ի նմանէ. — այս ինքն կամ թէ ատելոյն մեծաբանեալ էր։

Այսուհետև չես ծառայ, այլ որդի. եթէ որդի, և ժառանգ Աստուծոյ. — այս ինքն ապա ուրեմն և ժառանգ։

Թէպէտ և զհետ եղև նոցա, չկարաց հասանել. — այս ինքն այլ՛, սակայն չկարաց։

Թող տուք անցից ընդ երկիր քո. — այս ինքն թող տուք զի անցից։

Ժողովեցան վաղվաղակի զի խորհեսցին՝ գործ գործեսցեն.— այս ինքն, թէ զինչ գործ գործեսցեն։

Էր խռովութիւն մեծ՚ի մէջ զինուորացն, զի՞ արդեօք Պետրոսն եղև.— այս ինքն, թէ զի՞ արդեօք եղև։

Եւ ոչ անխտիր ինչ իրք են՝ անտի իսկ յայտ է.— այս ինքն և զի չամ և թէ ոչ անխտիր ինչ իրք են։

Որպէս վերստին քննեալ՝ մարթացից ինչ գրել.— այս ինքն որպէս զի։

Այնպէս ծածկեցաւ՚ի մէնջ, որպէս ամենևին ոչ գիտացաք.— այս ինքն որպէս զի, որ ըսել է մինչ զի ոչ գիտացաք։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԱԻԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

534. *Աւելադրութիւն է բան մ' աւելի դնել զօրաւոր կամ բացայայտ և կամ զարդարուն ընելու համար խօսքը։*

535. *Աստնկ անորոշ դերբայն, ուղղական ու հայցական, կրկնուի երբեմն իր բային քովը, հաստատութիւն ցուցընելու համար, որպէս թէ ըլլար տղայէն, արդարն կամ Յիսուսէ ն.*

*Տալ ետու կնիք և տանն Ստեփանեայ. — այս ինքն ապաքէն ետու։*

*Ունել ունէր պարծանս, այլ ոչ առ Աստուած. — այս ինքն արդարև ունէր, թէպէտ և ունէր, այլ, և այլն։*

*Սիրել սիրեն հաց զսիրելն սիրեն, այլ ոչ սերտիւ հաց այլ ոչ սրտացաւութեամբ. — այս ինքն ապաքէն սիրեն, թէպէտ և սիրեն, այլ։*

*Ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու. — այս ինքն թէպէտ և ամենեքին։*

536. *Անորոշ դերբային գործիականը և անցեալ դերբայն իրենց բային քով կրկնուին երբեմն հաստատութեան ու սաստկութեան համար, կամ բանին ետևէ ետև անձիլը ցուցընելու.*

*Ջամենայն ինչ զոր խօսիցի, լինելով լինի.*

*Ցամենայն ծառոց որ է 'ի դրախտիդ՝ ուտելով կերիցես։*

*Աճելով աճէին և բազմանալով բազմանային։*

Երթալով երթայր և զօրանայր։
Գալով գայր և մերձենայր։
Շինեալ շինէին (զաշտարակն) 'ի պաշտօն դիւաց։
Գողացեալ գողանայ· պահեալ պահէն· հանեալ եհան։
Յափշտակեալ յափշտակէին յառաջագոյն։
Յերուսաղէմ երթեալ երթիցէ։

537. Իմն, ինչ, ոք միջակ անուններն առանց հարկի աւելորդ կրկրուին երբեմն·

Ոչ ոք այն ոք գոյր յորմէ խնթայէն։
Յորմէ ոչ ոք երբեք այլ ոք մասն կալաւ։
Եւ որ ինչ այլ ինչ գեղեցիկ յօրինուածք պատմին·
— այս ինքն այլ գեղեցիկ յօրինուածք որ պատմին։
Որ ինչ անդ դիպեալ էին քաղաքացիքն· — այս ինքն քաղաքացիքն որ անդ դիպեալ էին։
Եւ ոչ ինչ էր յաշխարհի՝ որ ինչ ընդդէմ դառնայր հրամանաց նորա· — այս ինքն ոչ ինչ որ ընդդէմ դառնայր։
Եւ որ ինչ այլ ինչ պատիւ ունէր· — այս ինքն և այլ ինչ պատիւ զոր ունէր։
Ոչ ինչ ունիմ իրս ինչ· — այս ինքն ոչ ունիմ իրս ինչ։
Իսկ այլոց իշխանացն թուի ինձ և ոչ մի ինչ մնացեալ· — այս ինքն և ոչ մի մնացեալ։
Եւ ոչ մի ինչ յայսցանէ ամենևին ինչ ոչ յիշեաց· — այս ինքն ամենևին ոչ յիշեաց։
Ամենայն ինչ այնպիսի պարծանք՝ չարութիւն են· — այս ինքն ամենայն այնպիսի պարծանք։
Որ զամենայն ինչ չարիսդ խորամանգեցեր· — այս ինքն զամենայն չարիսդ։
Ոչ եթէ առ քեզ ինչ առաքեաց զիս տէր։
Ջեմ ինչ լսելոց։
Ոչ առ բազում ժամանակս ինչ։
Ոչ այժմ ինչ կոչեցի զքեզ։

Եթէ ինչ զգոստ խորամանգել յօժարեսցուք։
Իբրև կամէին ինձ թէ փոխեսցուք զնա։
Յայտ ինձ այսպէս առնէր։ Պարգև մեծ ինձ թուի։
Յանկարծակի ինձ եղաք։ Մտադիւր ինձ անսայիք։

538. Գոյական և ածական դերանուններն երբեմն կրկրկնուին.

Եւ իրաց և գործոց առնն իմանալ ինչ ես ոչ կարեմ։
Մեք անպակաս յամենայն ժամանակի... յիշեմք մեք զձեզ։
Դու որ զամենայն ինչ չարիսդ խորամանգեցեր... դու ոչ ապրեսցիս։ —
Եւ թուի այս տխմարայ, թէ չիցէ այս հանգոյն առաջնոյն։
Այն որ ամենաբարին է բնութեամբ, այլ ումեք չարի պատճառ նա ոչ լինի։
Զայնոսիկ որ այնպէս մատն եղեն օրինացն՝ ածին սատակեցին զնոսա։

539. Շատ տեղ ալ անուան մը կամ բանի մը հետ աւելի կըդրուին նոյն հոլով, ետև կամ առաջ.

Կինս զոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ՚ի ծառոյ անտի և կերայ։
Ծանեաւ Մանասէ եթէ տէր՝ նա է Աստուած։
Զայն Մովսէս զոր ուրացանն՝ զնա Աստուած իշխան և փրկիչ առաքեաց։
Ազգքն այնոքիկ զորս դու ժառանգելոց ես՝ նոքա հմայից և դիւթութեանց անսան։
Ամուրքդ զոր շինէք՝ այդ ձեզ խոկ լիցին (129)։
Առն իմաստասիրի ուրախ առնի հայր իւր։
Եւ երկիւղածաց քոց քաւիչ լինիս դու նոցա։
Եթէ ինչ յարարածոց՝ որ գեղեցիկ է, այն ՚ի բարւոյ արարչէ կարծիցի ոմանց։
Զճշդեն և զճշմարտեն՝ զայն առաջնոյն թողաք։

Ճիրաժիր մանկունս ընտրանաւ՝ զայն յուսումն արուեստականացն տային։
Տեղի բնակութեանն Աստուծոյ լինիցին, այնմ որ աստ բնակեցայց 'ի նոսա։
Ի հպարտութիւն ամբարտաւանութեան յեցեալ, յայն որ 'ի հնոց ժամանակաց հետէ ունէին։
Եթէ ընդ դուռն ընդ որ թագաւոր ելանէ, հան֊ցես ընդ նա աղբ։
Իբրեւ լուան նախարարքն Հայոց, այնք որք ունէին զիշխանութիւն։
Իսկ սուրբ քահանայքն որ անդ դիպեցան յամուր֊սըն,.. մատուցին և նոքա զպարանոցս իւրեանց։
Այս ոչ հրամանաւ արքունի է՝ այսչափ երկայնա֊բան լինել ընդ ձեզ պայքարաւ։
Մեծ է քեզ այդ՝ կոչել զքեզ ծառայ իմ։
Նա և այն իմաստութիւն է՝ ճանաչել թէ յումմէ է շնորհն։

540. Ասանկ ալ շատ տեղ յարաբերականին ետեւէն աւելի կըդրուին, որ շատ անգամ դիմորոշ յօդի տեղ է անոր՝ որ չառներ (461), կամ յարաբերեալին.

Որ դու միայն կարող ես։ Որ ինքն իւր չար է։
Որ էր և նա 'ի նոյն ազգէ։
Պտուղ՝ որոյ սերմն իւր 'ի նմին։
Որոց յօժարէին միտք իւրեանց։
Տէր զօրութեանց՝ որոյ կացի առաջի նորա։
Որոյ որդի նորա հիւանդ կայր։
Տեղիդ՝ յորում կաս դու 'ի դմա։
Դու հաւատս ունիս՝ որով պարծիս դովաւ։
Զարք որոց ոչ էր նոցա թիւ։
Աստուածք՝ յորս յուսացեալ էիք 'ի նոսա, զորոց զճարպ զոհից նոցա ուտէիք։
Որոյ բան հրամանի իւրոյ այսչափ զօրացեալ իշխէ։
Որոյ կերակուր կամաց իւրոյ էր 'ի մանկութենէ անարատ մարմին սրբոց։

541. Ցարաբերական դերանունին ետևէն շատ հեղ յարաբերեալն ալ կրկրկնուի, կամ ինչ որ է նէ իրօք, կամ ինչպէս որ կ'երևնայ նէ հոն գրողին մտքին, բացայայտչի պէս.

Զոր ստացաւ Աբրաամ զայրն յԵփրոնէ քետացւոյ։
Իբրև զՀռաքէլ՝ և զԼիա, որ շինեցին երկոքին ըզ-
տունն Իսրայէլի։
Բերէին զհիւանդս և զնեղեալս յայսոց պղծոց,
որք և բժշկէին ամենեքեան։
Որում ոչ կամեցեալ Հայկայ հնազանդ լինել
Բելայ, չու արարեալ գնայ։
Ցորմէ յամենեցունց յայսցանէ ազատ են իմանալիքն։
Ի ձեռն տասն աղքատ և անգիր արանց, որք ոչ'ի
ձեռն ընչից կամ իմաստիւք կամ զօրութեամբ
ձկնորսացն իմաստնոցն և հզօրացն յաղթեցին։
Այսն արարի զտկարութիւն ձեր, որք այդքան
բազմութեան զմի թև հաւու ոչ բարձէք։
Հոգւոյն սրբոյ՝ որով Առաքեալքն արբեցան անմա-
հական բաժակաւն։
Ցորմէ զարհուրին յայսմ իրէ ծովուէ։
Որոց անուանք են այս՝ գործակցաց նորա։
Առ որ մատուցեալ էք 'ի Սիոն լեառն։
Զոր ոչ բաւեմ ասել զայնպիսի աղէտս տանջանացն։
Որ Աստուծոյ միայն է, ըմբռնել ճանաչել։

542. Ցարաբերական դերանունն ալ կերպ կերպ ուելորդ դրուիններ ունի. անսովոր ըլլալուն՝ հոս զանց կ'ընենք։ Ամենևին հարկաւոր չեղած տեղը՝ մտացի ուսանողը կ'իմանայ 'ի գիրս։

543. Ցատկացեալին, բացայայտելլին ու գոյականին նախդիրը (476, 481, 482) շատ անգամ կրկըրկնուի ետև դրուած յատկացուցչին, յատկացեալին, բացայայտչին, հասարակ ածականին կամ գոյականին վը-

րայ, մանաւանդ հեռու որ լինան ու դիմորոշ յօդ ունե-
նան, կամ գոյականն ևով կապած երկու ածականի
մէջ որ դրուի. ինչպէս,

544. Յատկացուցչին վրայ.

Մի խոտորեցես զիրաւունս զեկին և զորբոյ և զայրւոյ։

Զմիտս կամեցաւ հաճել զամբոխին։

Մի մերձեսցի 'ի պղծութիւնս մարդոյ կամ յանասնոց պղծոց։

Խաղաղութիւն արասցուք ընդ արս ընդ ազգիդ այդմիկ։

Յոգի վախճանեալ մի մնացէ 'ի հօր և 'ի մօր, յեղբօր և 'ի քեռ։

545. Յատկացեալին վրայ (477).

Կախեաց զՆիկանովրայ զգլուխն։

Զքո զբարեկամն։ Զիմ զաչս եբաց։

Սատակել զձեր զայր և զկին։

Կապեցէք զդորա զոտս և զձեռս։

Զքո բարերարութեանդ զչափ առեալ։

Զամենայն երկրի զիշխանութիւնս։

Ոչ զուրուք բռնացայ ունել զանդաստանս և կամ զայգիս։

Ցիւր 'ի փառսն և 'ի վայելչութիւն։

Ապրեցան 'ի հրոյն 'ի հնոցէ։

Ի փորձութեան 'ի հանդիսի դատաւ հաւատարիմ։

Ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն։

Ըստ իւրաքանչիւր ըստ վրանս ձեր։

Զորոյ զվաստակն 'ի բժշկութիւն մատուցանեն։

Զորոյ մեք գիտեմք զհայրն և զմայր։

Զորոյ իբրև անցանիցէ՝ ոչ գոյ զհետոն գտանել։

Յորոյ այսօր 'ի գիրկսն գգուեցայր։

Յորոց դուռն 'ի խնդիր երթեալ էիր։

Ընդ որոց թէ ընդ գեղն զուարճացեալք, և այլն։

546. Բացայայտչին վրայ.
Կոչեաց զԵսաւ զորդի իւր երէց։
Կոչեաց զորդի իւր զկրտսեր զՅակոբ։
Յերկրին 'ի Գեսեմ։ Ի լեառն 'ի Նաբաւ։
Մօտ 'ի լեառնն 'ի Նպատ։
Ի Մովսիսէ յառնէն Աստուծոյ։
Ի Հերմոնէ 'ի լեռնէ փոքուէ։
Յերկրէ հեռաստանէ եկին առ իս՝ 'ի Բաբելոնէ։
Անց նա ըստ գետն մեծ ըստ Եփրատ։
Նայեցարուք ընդ առաքեալն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ՝ ընդ Յիսուս Քրիստոս։
547. Ածականին վրայ.
Զհպարտութիւն զամենայն։
Զարմն զամպարիշտս։
Զտունս զայս զբարձր։ Զժողովուրդդ զայդ զչար։
Զզօրն զայն զմեծ։ Կոչեա զՍիմոն զոմն։
Գումարէին յերկիրն 'ի հեռաւոր։
Ընդ քաղաքն ընդ ամենայն։
Ասէ ցարմն ցյարուցեալս 'ի վերայ նորա։
Ի տնկոյ խմեքէ 'ի մահաբերէ։
Ի պատուիրանացն յայսցանէ 'ի փոքունց։
Յայրի անդ 'ի կրկնում։
Յաւուր միում յերևելւոջ։
Գտի զոչխարս իմ զկորուսեալ։ Զճանապարհս ձեր չարս և զգնացս ձեր զանբարիս։
Շինեաց զդուռն տանն տեառն զբարձր։
Յերկիր Թշնամւոյ 'ի հեռաւոր կամ 'ի մօտաւոր։
Ի ծառայից տեառն իմոյ 'ի յետնոց։
Բուռն եհար զհանդերձէն իւրմէ զնորոյ։
Ի ցուպն եղեգնեայ 'ի ջախջախ։
Յազգ օտար և 'ի չար։
Յազգ անյոյս և 'ի կորնեալ։
Զազգ մի զանգէտ և զարդար։

Զտասանորդս երկրիս մերոյ ձևտացիքն շրջեսցին և տացեն զամենայն բովանդակ։ —
Զհովիւն հօտից զմեծն։
Զքորսն քո զերիցունսն։
Զջուր գետոյն զհզօրն և զյորդ։
Առի զմուրհակ ստացուածոյն զկնքեալն ըստ հրամանի և ըստ իրաւանց և զարձակն։
Զամենայն սպաս տանն տեառն զմեծ և զփոքր։
Յամենայն քաղաքսն Յուդայ յամուրս։
Ընդ ամենայն քաղաքս ընդ յոյժ հեռաւորս։
Զեօթանասուն արամբքն զծերովք։ —
Զահագին տեսիլն զայն և զերկիւղալից։
Զանհնարին հարուածսն և զմեծամեծս յոյժ։
Իբրև զխիստ ինչ զանծամ և զանկոտոր։
Զեօթն երինջսն զառաջինս զգեղեցիկսն և զընտիրս։
Ընդ ամենայն անապատն ընդ մեծ և ընդ ահագին։

548. Գոյականին վրայ (478).

Զամենայն զերկիրս զայս. զամենայն զինչս իւր. զամենայն զկահ և զկարասի նոցա։
Ածեր 'ի վերայ դոցա զանհնարին զմեղսդ։
Ա՛ռ նա զաճիւնախառն զկրակն։
Զարքունի զհրամանն։ Զերկոսին զորդիսն իմ։
Զայդ ևս զքո բան։
Իբրև զհաւատարապատիւ զոք։ Զանչափ զանքնին զերկիրս չա՛ զերկինս ամենայն։
Զահաւոր և զսարսափելի զփրկական զխորհուրդն։
Յամենայն 'ի կեանս քո. յամենայն 'ի թագաւորութեան նորա։
Յամենայն իսկ 'ի թուղթսն. յամենայն 'ի բազում մեծութեան իւրում։
Յերկոսեան 'ի սրահս տանն։ Յանցաւոր 'ի կեանս։
Յամենայն յիսրայել՛է։

Յամենայն 'ի զուր բանէ։

Հրաժարեալք յաշխարհական 'ի զբաղմանց։

Յայնչափ 'ի բազում 'ի նախնեաց փիլիսոփայից աստուածոց։

Յանապատէ եկեալ յերկրէ։

Ի բարձրաւանդակումն կուռ կալով 'ի տեղւոջ։

Զկարի խոնարհագունիցն բուռն հարկանէ զօրինակաց։

549. Թէ որ ետև կամ առաջ գրուած ածականները շատ ալ ըլլան նէ, անոնց վրայ ալ կըկրկնուի երբեմն նախդիրը, մանաւանդ հեռու ինկածներուն, թէ և ետև գրուած գոյականին վրայ չկրկնուի ալ, ինչպէս օրինակներուդ մէկ քանիին վրան կըտեսնես։

550. Պարզ նախդիրները կամ հոլովառու բառերուն՝ աւելորդ կըկրկնուի երբեմն բառին կտորներուն վրայ կամ խնդրոյն կամ անոր ածականին, յատկացուցչին.

Զո՞ այլ զոք առաւել քան զհրեայսդ. — այս ինքն զո՞ այլ ոք կամ զո՞ ոք այլ։

Ի քսան և 'ի հինգամենից և 'ի վեր. — այս ինքն 'ի քսան և հինգամենից։

Յինն և 'ի տասներորդ ամի. Յեօթն 'ի տասներորդի ամի. — այս ինքն յիննևտասներորդ, յեօթնևտասներորդի։

Զքսան և զինն ազգաց զոգիս. — այս ինքն ըզքսանևինն ազգաց։

Զփառս զառ 'ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք. — այս ինքն զփառս առ 'ի միոյն Աստուծոյ, որ է առ 'ի միոյն Աստուծոյ (389)։

Զզուարակն զվասն մեղաց՝ արասցես — այս ինքն զզուարակն որ է վասն մեղաց։

Գաղանաբար յարձակի 'ի վերայ ոչ միայն 'ի մերն յԱրտաւազդայ, այլև յայլոց ևս ազգաց. —

այս ինքն ոչ միայն ’ի վերայ մերն Արտաւազդայ, այլ և ’ի վերայ այլոց ևս ազգաց։

Զխաչեալն ’ի մէջ ’ի յանօրինաց. — այս ինքն ’ի մէջ անօրինաց։

Զհետ երթային բազումք զՊաւղոսի և զԲառնաբայ։

Ոչ չոգար զհետ երիտասարդաց զաղքատաց կամ զմեծամեծաց։

Զխմոց բարուց զկնի հայեցեալ. զօտարի զհետ ոչ երթիցեն. զբարեաց զհետ երթայք։

Ընդ խթանի ընդդէմ աքացել։ Ընդ այսր ընդդէմ թերևս ոք յամառէ։

Ունիցի՞ կալ ընդդէմ տասն հազարաւ ընդ այնմ որ գայցէ ’ի վերայ նորա քսան հազարաւ։

Տես և 656։

551. Երբեմն ալ նոյն կամ մօտ նշանակութիւն ունեցող ու նոյն հոլով առնող նախդիրներն և հոլովառու բառերը մէկտեղ կըդրուին նոյն անուան վրայ. կամ մէկն անոր, մէկն ածականին, և այլն.

Բանակեցան մերձ առ յԵրուսաղէմ. — փոխանակ ըսելու՝ մերձ առ Երուսաղէմ կամ մերձ յԵրուսաղէմ։

Նստի յերկինս երկնից ընդ յարևելս. — փոխանակ՝ ընդ արևելս կամ յարևելս։

Ի չար ընդ այն հայելով. — փոխանակ՝ ’ի չարն յայն կամ ընդ չարն այն։

Առ հզօրս նորա ոմանս հաստուցանելով յազգայինս. — փոխանակ՝ առ հզօրս նորա ազգայինս կամ ’ի հզօրս նորա ազգայինս։

Առ փոքր մի նիզակակցացն յանզգաստութենէ. — փոխանակ՝ առ փոքր մի անզգաստութենէ կամ ’ի փոքր մի անզգաստութենէ։

Ընդ դերաշխարհիկսդ վարուք և քաղաքավարու-

Թեամբ խօսեսցուք առ կրօնաւորսդ.— ուր ածա-
կանին վրայ ընդ է, գոյականին առ:

Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ.— փոխանակ բարւոյ, կամ միայն՝ չար ընդ բարւոյ ըսել հերիք էր:

Յիրաւի պատժեցաւ վասն ընդ անադորոն թշնամութեան ընդ մարդոյն ունելոյ.— վասն ունելոյ կամ ընդ ունելոյ միայն հերիք էր:

Զգալի այն ասի, որ ընդ զգայարանաւս ՚ի ներքոյ անկանի.— միայն՝ ընդ զգայարանաւս անկանի (149) կամ զգայարանաւս ՚ի ներքոյ ըսել հերիք էր:

Առ զսոսին հաստատուն պահելոյն պատճառաւ.— առ պահելոյն կամ պահելոյն պատճառաւ հերիք էր:

Զարմացաւ զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշն: Զկնի յետ բազում ժամանակաց:

Վասն կամ Սակս այնր աղագաւ. Սակս էր աղագաւ.— միայն վասն կամ սակս այնր, սակս էր, կամ այնր աղագաւ՝ էր աղագաւ հերիք էր:

Մերձ առ երկրաւն. Հուպ առ դարձիւն:

552. Քան, իբրեւ, որպէս, հայցականէն զատ՝ ուրիշ խնդիրներուն վրայ ալ երբեմն զ կ'առնեն.

Քան զընկերացն՝ մեզ ինքեանց մերձաւորք եմք.— այս ինքն քան ընկերացն:

Խուժադուժ եւս էր տեսանելով քան զմօրքն թանձրութեան.— այս ինքն քան մօրքն:—

Իբրեւ զգժնդակ բռնաւորի ումեք կան ՚ի հարկի:

Զեռնուլ խորհրդովքն եւ իբրեւ զհրով տոչորել:

Պարգեւէ մարդկան ազգին որպէս զմտերմաց:

Նախդրի եւ հոլովառու բառի ուրիշ վարպետ աւելադրութիւններ ալ կան անուան կամ դերբայից հետ. հիմկու հիմայ այսչափս հերիք է:

553. Մակբայներն ալ շատ անգամ աւելորդ կը-
դրուին, նոյնը կամ նմանը.

Մի՛ մնասցէ անդ և մի՛ մի քար։ Եւ որք ընդդէմ մի՛ դարձցի մի՛ ինչք սաստիւք արքունի։
Մի՛ դու, արքայ, և մի՛ զայդ այլ առ մեզ ասեր։
Յետոյ ապա հեղձոյց։ Յորժամ մինչդեռ նա կամիցի։ Ահա յայտ եղև աւաղիկ։
Դարձեալ միւսանգամ զքոյին հրաման անդրէն եղծանես։
Ի գերութեան մերում՝ ուր ցրուեցեր զմեզ այսր։
Ուր էին անդ ծառք։
Ի տեղիդ՝ ուստի գերեցի զձեզ այտի։
Յամենայն տեղւոջ՝ ուր և երթայցես անդր։
Իբրև զկաւդ 'ի ձեռս բրտիդ, այդպէս էք 'ի ձեռս իմ։
Օրն տեառն իբրև զգող գիշերի՝ այնպէս հասանէ։
Ըստ բազմութեան իւրեանց նոյնպէս և մեղան ինձ։

554. Ոչ մակբայը շատ անգամ կրկրկնուի։ Մէկը բայէն առաջ մէկը ետքը՝ սովորական է ու շատ տեղ պէտք. իսկ երկուքն ալ բայէն առաջ՝ ան ալ շատ տեղ կ'ըլլայ.

Ոչ էր նոցա ոչ ել և ոչ մուտ և ոչ գին և ոչ վաճառ։
Ոչ ումեք պատմեցին և ոչինչ յորոց տեսին։
Ոչ ետ նմա պատասխանի և ոչ բան մի։
Չնախանձի և ոչ ընդ ումեք երբեք։ —
Եւ ոչ մի 'ի նոցանէն ոչ եղծանէին։
Եւ ոչ 'ի միում ոչ վայելեցեր։
Ոչ ումեք ոչ երևէին, բայց միայն Հրէիցն։
Ես և ոչ զմի ոք ոչ գիտեմ։
Այնպիսին հպարտացեալ է և ոչինչ ոչ գիտէ։
Ոչինչ ոչ կարասցէ քեզ մեղանչել։
Թուի ինձ թէ և ոչ նոցա չգոյր։
Որում և ոչ Հրեշտակք չէին բաւական։
Ոչ պոռնիկք, ոչ կռապարիշտք... և ոչ յափշտակողք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն։

555. Միանգամ, գամ մի մակբայները՝ որ, որ ինչ բառերէն ետև աւելորդ կըդրուին երբեմն՝ սաստկութիւն կամ ընդարձակութիւն մը նշանակելու.

Որ միանգամ յայսպիսի մանկտւոյ ընկալցի։
Զորս միանգամ գտանիցէք։
Որ ինչ միանգամ օրէնքն ասեն։
Որ գամ մի յիմում իշխանութեանս է։
Որ ինչ գամ մի անցք անցին ընդ մեզ։

556. Շաղկապներէն ևն առանց հարկի կըդրուի շատ տեղ՝ բան բանի ետևէ կիպ կամ շուտ հասկըցընելու համար։

Ի միջոյն և 'ի խոնարհ. 'ի միջոյն և 'ի վեր. 'ի քսանամենից և 'ի վեր. յերկեմենից և 'ի խոնարհ. 'ի քէն և այսր. 'ի քէն և անդր։
Եղիցի քեզ որպէս և կամիս։
Զոր ինչ ուրուք և առեալ իցէ։
Որով իւիք և յաղթիցի ոք, նորին և ծառայ է։
Ի յընթանալս իմում և կասիմ։
Ընդ ձմնաչեղն և անծանօթացաք։
Ընդ հրամանին և առնէին։
Թուուցեալ և մերձեցաւ յիս։

557. Ուրիշ շաղկապներէն ալ, մէկ քանին, ինչպէս Թէ, եթէ, զի, սակայն, և այլն, զանազան կերպով աւելորդ կըդրուին երբեմն, որ վերցընես ալ նէ՝ բանն ինչ է նէ ան կընշանակէ.

Յորժամ եթէ տանիցի զքեզ։
Անձն որ եթէ վրիպեսցի և մեղիցէ։
Ոչ թէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր, և ոչ բազուկ նոցա թէ փրկեաց զնոսա։
Զէ ինչ 'ի ծածուկ որ թէ ոչ յայտնեսցի։
Վասն արդարոյ հազիւ ոք թէ մեռանիցի։
Որ 'ի հանգստեան են՝ դուն ուրեք թէ յիշեն զԱստուած։
Աղաչէր թէ զմեկնեալն 'ի նոցանէ միաւոնուլ ընդ ինքեանս։

Բայց ես ասեմ ձեզ թէ մի կալ հակառակ չարին։

Ասացէք. Ոչ այդպէս, այլ զի կացուսցես 'ի վերայ մեր թագաւոր։

Յանդիմանեաց զԱսա, թէ զի ոչ յԱստուած՝ այլ 'ի մարդ յուսացար։

Խորհէին ընդ միմեանս և ասէին, թէ զի հացս ոչ ունիմք։

Ոչ միայն զի աստուած չէ, այլ և կենդանի չէ։

Թէ չէ ակնառու Աստուած, որպէս զի և չէ իսկ։

Արձակեաց... բազում պատուիրանաւ, զի զՅուդա ինքնին 'ի գլխովին զբուամբ արկանել և ըղդունդն ամենայն յայսկոյս յայնկոյս ցրել. անդ կացուցանել զԱղկիմոս քահանայապետ։

Հրաման տուաք զի... յիւրաքանչիւր տեղի դարձուցանել։

Անդ էր ողորմ տեսիլ տեսանել, զի առ հասարակ անկեալ մարդկանն զաղօթս թաւալելով յերկինս մատուցանել։

Մինչ զի ոչ լինել. մինչ զի ոչ ժամանել։

Որպէս զի 'ի լռութեան նստեալ լալ։

Թէ ասացից ձեզ, սակայն ոչ հաւատայք. և եթէ հարցից ինչ զձեզ, չտայք ինձ պատասխանի։

Զոր թէ կամէր, թէ չկամէր, սակայն կրեաց։

Գիտացի ես՝ զի սակայն և այս յօժարութիւն ոգւոյ է։

Չիք հնար, թէ կամիք և թէ ոչ կամիք, բայց թէ մտանեմ։

558. Գրոց մէջ՝ մակբայի ու շաղկապի ուրիշ վարպետ աւելադրութիւններ ալ կան անորիշ և անցեալ դերբայից հետ. հիմկու հիմայ այսչափս բաւական ըլլայ։ Եւ բոլոր այս ձեւ՝ զգուշալի պէտք է ըլլայ համբակաց. որչափ քիչով ճշդիւ մտքերնին բացատրել սորվին, այնչափ աւելի լաւ է։

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ԲԱԿԱՌՈՒԹԻՒՆ

559. *Բակառութիւն է՝ բան մը օրէնքէ դուրս գրողին մտքին կամ ուրիշ կանոնի մը յարմար դնել։*

560. *Ասանկ, ձայնով եզակի՝ բայց նշանակութիւնով շատուոր ցուցընող անունները յոգնակի բայ կ՚առնեն շատ անգամ, որ կերպ կերպ կ՚ըլլայ, ինչպէս առջևի օրինակներէդ կըտեսնես.*

*Տիրեցին ազգն Սասանայ։*

*Ցարեաւ այլ ազգ որ ոչ ճանաչէին զտէր։*

*Հարկանէին գունդն մակաբեան։*

*Ո՞վ են ժողովուրդս այս։*

*Ժողովուրդն ակն ունէր Զաքարիայ և զարմանային։*

*Բանակն Մադիամու էին ՚ի ներքոյ նորա։*

*Ամենայն մարդ աջօք բացօք տեսանէին։*

*Ժողովեցան առ նոսա այր ամենայն որ ապստամբ լեալ էր յօրինաց անտի։*

*Այր զարամբ ելանէին տիրել աշխարհիս. — որ կըհասկըցուի՝ այր իւրաքանչիւր, ամէն մէկը, ամէն մարդ։*

*Եհաս իմաստութիւն և հանճար և աստուածպաշտութիւն. այս են գանձք արդարութեան. — ուր այս եզակի է, բայց առջի բառերը կըցուցընէ* (129)։

*Քեզ լիցին այդ. Այդ և ՚ի մարդիկ երևին. — այս ինքն այդ նախասացեալ բաներդ։*

Բերան անզգամաց պատմէն զչարիս. — շատ անզգամաց բերանը հարկաւ շատ է։

Խորհուրդ մանկանցուաց զանգիտօղք են. — շատի խորհուրդը մէկ մը չէ։

Ի բերանոյ նոցա ելանեն հրաման մահու և կենաց. — երկու տեսակ հրաման ու շատի բերնէն։

Ջուր աղի և անոյշ վամանս ջրաւորացն ընուն. — երկու տեսակ ջուրը երկու է։

561. Երբոր եզակի անունի մը հետ՝ հոլովով մը կամ հոլովառու բառով կապուած անուն գտուի նէ, բայն սովորաբար եզակի դրուելուն՝ յոգնակի ալ կըդրուի.

Մակաբէ զօրօքն եկն։ Մոգպետն ինքնին մոգօքն հանդերձ հասանէր։

Երևեցաւ նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, և խօսէին ընդ Յիսուսի։ —

Յուդա Մակաբէ այնպէս գնդաւն, որ ընդ նմա էին, անցուցանէին զժամանակն։

Ուր էին հասեալ բանակեալ Անտիոքոս ամենայն զօրօք իւրովք։

Ստամբակեալն 'ի վերին իշխանացն բանակաւն իւրով 'ի վայր անկեալ՝ մեզ պատերազմողք եղեն և սատանայ անուանեցան։

562. Նական բային ուղղական խնդիրը յոգնակի որ ըլլայ նէ, բայն ալ յոգնակի կըդրուի շատ անգամ՝ թէ և անուն բային եզակի է.

Բարկութիւն հօր՝ որդի անմիտ, և ցաւք են ծնանելեաց նորա. — այս ինքն անմիտ որդին ցաւ է իր ծնողին։

Ալիք՝ իմաստութիւն մարդոյ են. — այս ինքն իմաստութիւնն է ալիք։

Մտաց բարբաջանք են աղանդն։

Երկիրս երկինք եղեն։

Փառք են առն խոտորել 'ի հայհոյութեանց։

Ոչ վայրապար ինչ իրք էին զփարէս յիշել։

563. Այլ և այլ խնդիր առնող բայերն և անուն-ները՝ շատ անգամ մէկ խօսքի մէջ մէկ խնդիրն ասանկ, մէկալն անանկ, ինչուկ գոյականն ասանկ՝ ածականն անանկ կ՚առնեն նոյն մտքով.

Նախ չարչարանացն Քրիստոսի վկայեր, և յետ
այնորիկ զփառացն։

Ոչ որչափ երկրաւորացս՝ ունիմք փոյթ յանձին
զառաքինութենէն։

Միամտեալ և հաւանեալ և նուաճեալ էին 'ի
տէրութիւն Արտաշրի քան ընդ տէրութիւն
իւրեանց ազգատոհմին։

Զանարժանիցն և զշաղախեալսն հեղգութեամբ
կենացս զեկուցանէ։

Նորին ինքեամբ Քրիստոսի Աստուծոյ մերոյ զար-
կուցեալ Հրեայքն (352, 353)։

Մտաց աչաց իմաստնոց, և ոչ թէ զգալեաւ տե-
սանելին։

Եւ արդարքն՝ որոց ժամանեն առ նոսա գործք ամ-
պարշտաց (540)։

Զօրմէ և մեռեալ ասեն զնա ընդ Տամիրամայ։

Որում և Կոն անուանէին զնա։

Հաւաստի պատմիչք լինին առաջին սքանչելեացն
և արդարութեան նորա և զանիրաւ յանդգնու-
թիւնս Հրէիցն (384)։

Աշխատութեան կարօտ են և բազում ժամանա-
կօք (387)։

Թէ և յայսոցիկ անհանձարաբար շաղակրատա-
նաց անպարտ են, սակայն ոչ և այլովք։

Ի միում աւուրցն յայնցանէ (394, 395)։

564. Բացայայտիչն երբեմն անհամաձայն կըդրուի ուղղական, հայցական զայ նախդրով բացառական, յատկացուցչի պէս սեռական, կամ ուրիշ հոլով՝ որ բա-

նին յարմարի. Թէ ըլլան թէ չըլլան հետը մեկնական բառերը այս ինքն, այս է, ասեմ, ևմն. ինչպէս,

565. Ուղղական.

Ժողով լինէր առ նոսա բազում զօրաց ախտացւոց, ազգ հզօր և պատերազմօղ. — կ'իմացուի որ է ազգ հզօր։

Աւեալ ածէին զհարսն, դուստր միոյ ուրուքն ՚ի մեծամեծաց. — կ'իմացուի որ էր դուստր միոյ ուրուքն։

Ի չորից տարերցս յայսցանէ ոչ զմինն ՚ի միւսոյն ստեղծ արարիչն, այս ինքն երկիր և ջուր, հուր և օդ։

566. Հայցական.

Երկու մասամբք՝ տկար և զօրաւոր, զմարմին և զհոգին. — զօրութեամբ կըհասկըցուի, զմարմին ասեմ կամ իմա՝ և զհոգին։

Զերից ժամանակաց ունի զնախագիտութիւն, զանցեալն՝ զներկայս և զապառնին։

Ամենայն տնօրէնութեանցն Քրիստոսի, զմահն ասեմ և զթաղումն և զյարութիւնն։

Իբրև զքարինս էր ոսկի և արծաթ յերկրի մերում, զմաքրութիւնն իմա և զսրբութիւնն։

567. Զայ նախդրով բացառական.

Զբարւոյն կողմն յՈրմզդէ դնէն, զարջառաց և զոչխարէ և զայլոց պիտանացուաց, — կ'իմացուի զարջառաց ասեմ և զոչխարէ, և այլն։

Միաբան լինէր ամբաստանութիւնն երկոցունց կողմանցն, զառաքինեաց և զյետս կացելոց. — կ'իմացուի զառաքինեացն ասեմ և զյետս կացելոց։

Զայնպիսի օձ ՚ի փորի ունիմք՝ որ ուտէ ՚ի ներքոյ, զպասմանէն ասեմ։

Լերինքն յորս տապանն դադարեաց՝ վկայեն, ըզՀայոց լերանցն ասեմ։

Անմիաբանեցան այլքն 'ի պատմագրաց, զԲիւռոս
ասեմ, զԲազմավիպէն և զԱբիւդենայ. — ուր
մէկը հայցական, մէկալ երկուքը զայով բացա-
ռական։

568. Սեռական, յատկացուցչի պէս.

Ի ժողովրդենէ քումմէ Իսրայէլ՚ի. — յԻսրայէլ՚է
ընելու տեղը։

Ի լեռնէ Սիոնի։

Զգետոյն Եփրատայ և զԴկլ՚աթաւ։

Ամբաստան լինէին զզօրավարէն Մուշեղի. — ըզ-
Մուշեղէ ընելու տեղը։

Ի ժամանայ որ հաստատեալ կացեալս է 'ի վերայ
իրացս այսոցիկ, և երկրորդի հօր մերոյ. — փո-
խանակ ընելու՝ և յերկրորդէ հօրէ մերմէ, որ
ըսել կ՚ըլլայ՝ որ կացեալս 'ի վերայ իրացս, որ
և երկրորդ հայր մեր է։

569. Ուրիշ բանին յարմար հոլով.

Այսց երկուց շնորհաց առ միմեանս եկեալ՝ կա-
րելն ընդ կամելն. — վասն զի անցեալ դերբայն
սեռական ալ կ՚առնէ անուն բայի՝ ուղղական ալ։

Արձակեաց զաչս իւր զհետ հոմանեաց իւրոց, յա-
սորեստանեայսն՝ յիշխանս և 'ի զօրագլուխս. —
արձակեմ կ՚առնէ խնդիր զհետ ալ՝ 'ի ալ։

Զոր ինչ արարէք ընդ երկուս թագաւորսն ա-
մովրհացւոց՝ ընդ Սեհոնի և ընդ Ովգայ. — ընդ
նախդրիւ ու ընդ վերջահոլով տրականը նոյն են։

Յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր՝ ընդ Բառնաբայ
և ընդ Պաւղոսի։

Գլխոյն ամենայն բարութեանց՝ զհաւատոյն բու-
ռըն հարկանել. — վասն զի բուռն հարկանելն տրա-
կան ալ կ՚առնէ, զայով բացառական ալ։

Կոչի ևս յաւէտ ընտանի կոչմամբք, այս ինքն հայր,
վարդապետ, փեսայ, և այլ բազում. — վասն զի կո-
չին գործիական ալ կ՚առնէ խնդիր՝ ուղղական ալ։

Կերակրիլ՝ի բարութեանց երկրին այնմիկ՝ կաթամբ և մեղու, այս ինքն զտեսութիւնն աստուածային. — ներգործէ բացառական ա՛ւ գործիական ա՛ւ հայցական աւ կառնէ խնդիր։

Զօրս և տեսողս ասէ մեծի լուսոյն. այս ինքն մարմնոյ աչօք զՔրիստոս. — վասն զի տեսող սեռական աւ կ՚առնէ խնդիր՝ հայցական աւ (384)։

570. Եզակի ձայնով շատութնշանակօղ գոյական անուններն, ինչպէս բայ (560), անանկ ալ յոգնակի ածական կ՚առնեն, իսկ ածականները՝ գոյական կ՚առնեն.

Զօրն նորա անցեալք ՚ի հանդիսի։
Մեծամեծք ժողովրդեան։
Երկոտասան այր ազգէտք և տառապեալք, որք ՚ի նա էին յարեալ։
Սատակեսցի ամենայն մարդ դիմակացք Թագաւորի։
Ցարս զօրուն եկելոց։
Ժողովրդեան մնացելոց, գումարելոց։
Ամենայն ժողովրդեանն ելելոց։
Կրկին առակաւն այլովք։
Ամենայն ումեք մատուցելոց առ նա։
Ար ընդ իւր եօթն հարիւր այր սուսերամերձս։
Զսպասն արծաթեղէնս։
Զամենայն սպաս ցանկալիս նոցա։ —
Հօտք և անդեայք բազում յոյժ։
Բոլորումն Հայոց։ Յամենայնէ կարեաց սուրբ ես։
Ի բոլորումն վայելչականս (523, 585)։

571. Անանկ ալ յոգնակի դերանուն կ՚առնեն շատ անգամ.

Եւ մա ժողովուրդն զհայսն իւրեանց մինչ չև խմորեալ էր, և զզանգուածս իւրեանց ծրարեալ ՚ի կտաւս իւրեանց ՚ի վերայ ուսոց իւրեանց։
Արձակեաց զժողովուրդն ՚ի խորանս իւրեանց։

Զիս օծ տունս Յուդայ՝ իւրեանց 'ի թագաւոր։
Փախեաւ զօրն 'ի բնակութիւնս իւրեանց։
Որոշեաց զգունդն երթալ 'ի տեղի իւրեանց։
Ժողովուրդ քո այդ որ բնակեալ է 'ի լեռնակող-մանդ, եթէ ոչ էր ապստամբեալ դոցա յինէն, ոչ էր իմ առեալ զնիզակ իմ 'ի վերայ դոցա. այլ դոքա ինքեանք արարին անձանց իւրեանց զայս։
Եթէ ոք 'ի կարի մերձաւորաց իցէ, զնոյն անցս և ընդ նոսա անցուցից. — ուր ներէ ոք մէկ մը մի-այն չնշանակեր, հապա որչափ որ ըլլայ նէ։
Արդ երանեցի՜ց ժողովրդեան որոց այս այսպէս է։
Սա ազգ այնպիսի՝ որք դատաւորաց եկեղեցւոյ նստին դատաւորք։
Ըստ նմանութեան դարուն՝ որ ելեալ էին յերկրէն եգիպտացւոց (436)։
Զգաստուն զայնորիկ որք անկան։
Ամենայնի որք ընտրեն հնազանդել։
Յամենայն եղբօրէ որ ստահակմն գնայցեն։

572. Իւրաքանչիւր բառէն ետև սովորաբար բային դէմքին համեմատ դրուելու են դոյական ու ածական դերանունները քու, մեր, ձեր, իւր եզակի և յոգնակի. ինչպես,

Զուէա այր իւրաքանչիւր 'ի բնակութիւն քու, իս-րայէլ։
Իւրաքանչիւր ոք երթամք 'ի տեղիս մեր։
Նստարուք իւրաքանչիւր 'ի տունս ձեր։
Առէ կամաւէն իւրաքանչիւր ցեղեայր իւր.
Դարձան իւրաքանչիւր 'ի Ճանապարհաց իւրեանց։
Բարձէք անտի իւրաքանչիւր ոք քար մի 'ի վերայ ուսոց ձերոց։
Ի դառնալ ձեր իւրաքանչիւր 'ի չարեաց ձերոց։

Բայց շատ անգամ առջի ու երկրորդ դէմքի բայերուն՝ եզակի երրորդ դէմք կըդրուին աս դերանունները.

*Իւրաքանչիւր ըստ երազոյ* խորհուրդ տեսանէր։
Գնասցուք *իւրաքանչիւր յերկիր* իւր։
Դարձցուք *առ իւրաքանչիւր ժողովուրդ մեր և յիւրաքանչիւր աշխարհ* իւր։
Ասիցէ *իւրաքանչիւր ցընկեր* իւր *և իւրաքանչիւր ցեղբայր* իւր։
Գնաց ձեռնեալ է *յիւրաքանչիւր տուն* իւր։
Դիք *իւրաքանչիւր զսուր* իւր *յազդեր* իւրում *և* կոտորեսցէ *իւրաքանչիւր զընկեր* իւր։
Ապրեցուսցէ *իւրաքանչիւր* զանձն իւր։
*Իւրաքանչիւր յընկերէ* իւրմէ զգոյշ լերուք, *և յեղբարս ձեր մի յուսայք։*
*Զիւրաքանչիւր որք ըստ ճանապարհաց* իւրոց (կամ *ձերոց) դատեցայց* զձեզ։
*Տամ* ձեզ *իւրաքանչիւր ըստ գործոց* իւրեանց։

573. *Ասոր պատճառն ան է որ* իւրաքանչիւրն *եզակի ալ է յոգնակի ալ* (108, 109), *ու զատ առնուելով ամէն դէմք կընշանակէ։ Աս պատճառաւ յոգնակի բայի հետ եզակի ալ կըդրուի շատ տեղ երրորդ դէմքի գոյական կամ ածական դերանունը* իւր. Ասէին *իւրաքանչիւր ցեղբայր* իւր. Ածին *ընդ մէջ այր իւրաքանչիւր զսուր* իւր. Գնացին *այր իւրաքանչիւր 'ի տեղի* իւր. *Իւրաքանչիւր ըստ բաւականի* իւրում ժողովեցին. Խնդրեսցեն *իւրաքանչիւր որք յընկերէ* իւրմէ։

574. *Բարդ և ածանցեալ անուններուն մէջի եղած գոյականին՝ յատկացուցիչ, ածական ու դերանուն կըտրուի երբեմն.*

*Աղէկերք մարդկեղէն մարմնոց. — որ ըսել է՝ կերողք զաղիս մարմնոց։*
*Սրտագէտ ամենայնի կամ ամենեցուն. — գիտող զսիրտ ամենայնի։*
*Կամակատար հօր, կամարար հօր. — կատարող, արարող զկամս հօր։*

Զամենայն չարեացապարտ Մենեղաւոս արձա-
կել. — այս ինքն զպարտ, զպարտական ամենայն
չարեաց։ —

Առ հրեշտակականն Թափուր տեղի ստորանկելոց.
— որ ըսել է՝ առ Թափուր տեղի հրեշտակաց
ստորանկելոց։

Պսակ աստեղեայ յերկոտասանից. — այս ինքն
յաստեղաց երկոտասանից։

Յաստուածային սիրոյն յաղթելով, այն որ հրա-
մայէն սիրել. — որ գրողին մտքին նայելով՝ ըսել
է՝ 'ի սիրոյն Աստուծոյ, այն որ հրամայէ։

575. Ու յարաբերականին յարաբերեալը շատ ան-
գամ ինչ հոլով որ պիտի դրուի նէ՝ ան չդրուիր, հապա
կամ ուղղական կըմնայ, կամ յարաբերականին համա-
ձայն կըդրուի. ու շատ տեղ իրեն բուն դրուելու հո-
լովին ան դէմքին դերանունը կ'աւելցուի։ Աս ոճս աշ-
խարհաբառերնուս մէջ ալ կըգտուի. ինչպէս,

576. Յարաբերեալ ուղղական կեցած.

Եւ բորոտ՝ յորում իցէ արած, հանդերձ նորա քա-
կեալ լիցի. — փոխանակ ըսելու՝ բորոտի հան-
դերձն. ու սեռականին տեղը աւելցած է նորա։

Եւ տուն՝ զոր յանդիմանեցէ տէր, մատուսջիք
ըստ արանց. — փոխանակ՝ զտուն։

Իսկ տկարք՝ որոց պէտք ինչ էինն, ոչ արդեօք երբեք
վճարեցի. — փոխանակ՝ տկարաց ոչ վճարեցի։

Բանն՝ զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ
ինչ խօսիմ. — փոխանակ՝ զբանն։

Ամենայն այր՝ որոյ էր դատ գալ առ արքայ 'ի դա-
տաստան, բարբառէր առ նա Աբեսաղոմ և ասէր.
— փոխանակ՝ առ ամենայն այր։

Պսակ ոսկի և զորհնութիւնդ զոր ետուք բերել
մեզ, ընկալաք. — փոխանակ՝ զպսակդ ոսկի։

Գուբն զոր փորեաց և պեղեաց, 'ի նոյն անկցի 'ի

խորհուրդ զոր և գործեաց. — փոխանակ՝ 'ի գուբն, որուն տեղ անկեալ է 'ի նոյն խորհուրդ։

Նոյն ինքն տէր Քրիստոս միածին որդին Աստուծոյ, վասն որոյ նա խոնարհեցաւ է 'ի մարմին, սատակեսցի 'ի նշանքն. — փոխանակ՝ 'ի նոյն ինքն 'ի տեառնէ Քրիստոսէ միածին որդւոյն Աստուծոյ սատակեսցի։

Քրիստոսի, այն որոյ տէրութիւնն յաւիտենից է. — փոխանակ՝ այնր։

Զարարչէն ամենայնի, այն որոյ բանիւ երկինք հաստատեցան. — փոխանակ՝ զայնմանէ։

577. Յարաբերեալ յարաբերականին համաձայնած.

Ամենայն այր կամ կին որ մտանիցէ առ արքայ, չիք փրկութիւն. — փոխանակ՝ ամենայն առն կամ կնոջ չիք փրկութիւն։

Այրն այն Մողոքէս որ եհան զմեզ յԵգիպտոսէ՝ ոչ գիտեմք զի եղև նմա. — փոխանակ՝ առն այնմիկ Մոլոքի. և առ տրականին տեղը անկեալ է նմա։

Դու որ մարզպանդ ես աշխարհիս, պարտ է քեզ հոգ յանձին ունել. — փոխանակ՝ քեզ որ մարզպանդ ես։

Թագաւոր որ ունկնդիր է բանից անիրաւութեան, ամենեքեան որ ընդ նովաւ են՝ անօրէնք են. — փոխանակ՝ ամենեքեան որ են ընդ թագաւորաւ որ, և այլն։

Ամենայն մարդիկ որ ըմպեն զնա՝ յիմարեցուցանէ զմիտսն. — փոխանակ՝ զմիտս մարդկան։

Վկայեալ յամենայն բնակչաց որ 'ի Դամասկոս Հրէայքն էին. — փոխանակ՝ յամենայն բնակչաց Հրէից որ 'ի Դամասկոս էին։

Դուք որ թողէք զիս, ես մատնեցից զձեզ 'ի սուր. — փոխանակ՝ զձեզ որ։

Ընդոծինք և արծաթագինք որ էին յազգաց օտարաց,

Թլփատեաց զնոսա. — փոխանակ՝ զընտածինս և զարծաթագինս։

Որ շուրջ զնովաւ քաղաքքն էին՝ առնոյր յաւարի. փոխանակ զքաղաքսն որ։

Ամենայնի որոյ սպանեալ իցէ և մերձեալ՚ի վիրաւոր՝ սրբեսցի. — փոխանակ՝ ամենայն։

Ամենայնի որոց ոչ իցեն Թևք և Թեփ, պիղծ իցէ ձեզ այն. — փոխանակ՝ ամենայն։

Զորոյ ես զգլուխն հատի Յովհաննու՝ սա է. — փոխանակ՝ սա է Յովհաննէս զորոյ։

Ամենայնի որում շատ տուաւ, շատ խնդրեսցի՚ի նմանէ. — փոխանակ՝ յամենայնէ։

Ամենայն ուրուք՝ որոյ իցէ՚ի տուն իւր կին այլազգի, երԹեալ պահանջեսցեն՚ի նմանէ ժամանակս. — փոխանակ՝ յամենայն ումեքէ։

Ամենայնի որոյ իցեն Թևք և Թեփ՝ ուտիցէք համ զայնս ուտիցէք. — փոխանակ՝ զամենայն որոյ իցեն։

Զամենայնէ զորմէ ասացից Թէ դա մի երԹիցէ ընդ քեզ, նա մի երԹիցէ. — փոխանակ՝ ամենայն զորմէ ասացից։

Զամենայն ինչ զոր խօսիցի՝ լինելով լինի. — փոխանակ՝ ամենայն ինչ։

Զբանն զոր խօսեցար՝ հաւատարիմ լիցի. — փոխանակ՝ բանն։

Յերկիրն յոր հասեր՝ քեզ լիցի՚ի ժառանգուԹիւն. — փոխանակ՝ երկիրն։

Ընդ երկիրն ընդ որ մեք անցաք լրտեսել զնա՝ երկիր մարդածախ է բնակչաց իւրոց, և զամենայն զաշխն զոր տեսաք՚ի նմա՝ արք յաղԹահասակք են. — փոխանակ՝ երկիրն, ամենայն ազգն։

Զամենայն զոր ետ ցիս հայր՝ ոչ կորուսից՚ի նմանէ. — փոխանակ՝ յամենայնէ։

Եւ եղեն որդիք Յովսեփայ զորս ծնաւ նմա Ասա-

նէԹ զՄանասէ և զԵփրեմ. — փոխանակ՝ Մանասէ և Եփրեմ զորս ծնաւ։

Ի մահճէդ յոր ելեր՝ ոչ իջցես անտի. — փոխանակ՝ 'ի մահճացդ։

Յամենայն տեղիս յոր հասանիցեն կամ ուր հասանիցեն գնացք ոտից ձերոց, ձեզ տաց զնա կամ զնոսա. — փոխանակ՝ զամենայն տեղիս։

Դատաստանացն Աստուծոյ, այն որ չափով և կշռով բաժանէ. — փոխանակ՝ այնր որ։

Ամբաստան լինի զքաղցր տեառնէն, այն որ ոչ ունի արդարացուցանել զնա. — փոխանակ՝ զայնմանէ որ ոչ ունի։

Ոչ Թողաւ նոցա բնակել 'ի վերայ երկրի, այնոցիկ որք անարգեցին զբնակիչս բարձանց. — փոխանակ՝ այնոցիկ որք անարգեցին։

578. Շատ հեղ ալ յարաբերականն ինչ հոլով որ պիտի դրուի նէ՝ ան չդրուիր, յարաբերեալին հոլովը կ'առնէ. ու շատ տեղ իր դրուելու հոլովով ան դեմքին դերանունը կ'աւելցուի, որ աշխարհաբառերնուս մէջ ալ կայ։ Նոյն ատեն՝ երբեմն յարաբերեալն ալ եւս դրուելով՝ յարաբերականին հոլովը կ'առնէ, որ իրարու հոլովին առած կ'ըլլան. ինչպէս,

579. Յարաբերական յարաբերեալին հոլովին առած.

Զի՞ք ազգ որ ոչ իցեն իրաւունք 'ի դատաւորաց. — փոխանակ՝ որոյ, որում։

Որդի Աստուծոյ կենդանւոյ, որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ. — փոխանակ՝ յորմէ.

Ի վերայ սեղանոյ ողջակիզացն՝ որոյ նոր արարին. — փոխանակ՝ զոր։

Ջնջեա 'ի դպրութենէն յորմէ գրեցերն. — փոխանակ՝ յորում գրեցերն։

Յօրէ յայնմանէ յորմէ գերեաց. Յօրէ յորմէ եհան. Յօրէ յորմէ լուաք. — փոխանակ՝ յորում։

Հատուսցէ զաւանդն զոր աւանդեցաւ նմա. — փոխանակ՝ որ աւանդեցաւ։

Ի սմա են սողունք որ ոչ գոյ թիւ. — փոխանակ՝ որոց ոչ գոյ։

Ամենեցուն որոց էք 'ի Հռովմ սիրելեաց Աստուծոյ. — փոխանակ՝ որք էք։

Նուագարանօքն որովք արարին՝ օրհնել զտէր. — փոխանակ՝ զորս արարին։

Զի՞նչ հրամայեցաւ առնել յայնցանէ յորոց հաստատեցին զսա. — փոխանակ՝ յայնցանէ որք հաստատեցին։

Ցաւուրցն յորոց կարգեցի դատաւորս. — փոխանակ՝ յորս կարգեցի։

Պատմեաց զամենայն պատգամսն զոր առաքեաց զնա տէր. — փոխանակ՝ որովք, յորս առաքեաց։

Գթացաւ 'ի նոսա այն որ ոչ երբեք պակասեցաւ գութ նորա. — փոխանակ՝ որոյ գութն։

Այն որ Մովսէս և Եղիա իբրև զծառայս եկեալ կային առ նմա. — փոխանակ՝ առ որում կային։

Ե՞րբ ուսանիցիք զբազմաթիւ անուանս աստուածոցն նոցա, այն որ չիք ուրեք 'ի միջի և ոչ մի. — փոխանակ՝ այնոցիկ, այն աստուածոցն որոց կամ յորոց չիք և ոչ մի։

580. Յարաբերական ու յարաբերեալ մէկմէկու հոլովն առած.

Մարգարէանայ զոր առ յապա անցս ընդ Սաւուղ անցանելոց էին. — փոխանակ՝ զանցս որք առ յապա անցանելոց էին (436)։

Որոց առ գերութեամբն մարգարէք՝ առաջին է սա. — փոխանակ՝ մարգարէից որք առ գերութ̃ն։

Աստուածութիւն ուսուցանես 'ի Մովսիսէ որոց 'ի հեթանոսս ամենայն Հրէայք են. — փոխանակ՝ ամենայն Հրէից որք 'ի հեթանոսս են։

Մարգարէքն, որք զայն որոյ 'ի ձեզ լինելոց էին

շնորհօք՝ մարգարէանային.— փոխանակ՝ վասն շը-
նորհաց որք 'ի ձեզ լինելոց էին։

Ոչ ելի յԵրուսաղէմ առ որ յառաջագոյն քան զիս Առաքեալքն էին.— փոխանակ՝ առ Առաքեալսն որ էին։

Ցուցանելով զոր 'ի խոնարհութենէն օգուտն.— փոխանակ՝ զօգուտն որ։

Զորս վասն Կռոնոսի և Արամազդայ պատմութիւնս իցեն՝ ամաչեմ ասել.— փոխանակ՝ զպատմութիւնսն որք վասն Կռոնոսի, և այլն։

Ցոր նախ բանիւք՝ յարմարի յաջորդս.— փոխանակ՝ 'ի բանսդ որ նախ։

581. Երբեմն ալ յարաբերականն ետևի բային հայցական խնդրին կը համաձայնի կամ ուրիշ խնդրին ալ.

Ըստ ամենայն բանի զոր առաքեսցէ զքեզ տէր Աստուած քո առ մեզ, այնպէս արասցուք.— փոխանակ՝ ըստ որում կամ որով առաքեսցէ զքեզ։

Բազմադիմի շնորհս բաշխեաց ամենեցուն, զոր և մեծ իսկ քան զամենայն՝ սէր սուրբ յաննենգմտաց գիտեմք.— փոխանակ՝ յորս կամ յորոց մեծ գիտեմք զսէր սուրբ (525)։

Հանին զնա 'ի խաչ յայն տեղին, զոր ետես Աբրահամ զնոյն կախեալ զծառոյն սաբեկայ զեղջերայն.— փոխանակ՝ յոր կամ յորում ետես զխոյն։

Տեսեալ զՅովհաննէս յայնպիսի վարս, զոր ոչ բնաւ զայլոց տեսին 'ի մարդկանէ.— փոխանակ՝ յոր կամ յորում ոչ տեսին զայլ ոք։

Զոր սերովբէքն ծածկէին զդէմս յահէ փառաց աստուածութեանդ.— փոխանակ՝ յորմէ ծածկէին կամ յորոյ ահէ փառաց ծածկէին զդէմս։

Բայց 'ի քաղաքաց ազգացն այնոցիկ՝ զոր տէր Աստուած քո տացէ քեզ զերկիր նոցա.— փոխանակ՝ զորոց զերկիրն։

Վասն որոյ Կարապետին, ուր ոչ ոք 'ի մարդկա-նէ եղև նման նմա և կամ կրեաց աշխարհ նորա.— փոխանակ՝ որում ոչ ոք եղև նման և զորոյ վարս ոչ կրեաց։

Մի երկնչիք յերեսաց արքային Բաբելացւոց, յորժամ զարհուրեալ էիք յերեսաց նորա.— փոխա-նակ՝ որոյ յերեսացն զարհուրեալ էիք։

Յոր վեցթևեան սրովբէքն ոչ իշխէին հայել'ի ձեռս քո.— փոխանակ՝ որոյ 'ի փառսդ։

Տես և 619։

582. Ինչպէս բային և անունին համար ըսինք (563), անանկ ալ զանազան հոլով առնող նախդիրներն ու հոլովառու բառերն երբեմն այլևայլ հոլովը մէկտեղ կ'առնեն մէկ խօսքի մէջ, ինչուկ բացայայտելին կամ դիականը մէկ հոլով, ու բացայայտիչը կամ ածականը մէկալ հոլով.

Ամբաստան լինէին քսութեամբ առ մեծ թագա-ւորն Պապայ.— փոխանակ ըսելու՝ առ մեծ թա-գաւորին կամ առ Պապ։

Որ և առ իս ինքեան եցոյց յայտնապէս։

Առ ծովեզերբ միում։

Առ բարձրաւանդակի միոջ բլրով քարադագաթ-նիւ։

Չի բանս արկցէ ընդ թագաւորին Պարսից ընդ Շապուհ, և ընդ Արշակ։

Օրհնեցէք զտէր ընդ երկնայինսն նմանեալ դա-սուց.— փոխանակ ըսելու՝ ընդ երկնայնոցն դա-սուց կամ ընդ երկնայինսն դասս։

Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ՝ արեամբ ներկելոցն։

Ընդ ո՞ր առաւել ոք սքանչասցի. ընդ հօ՞րն, եթէ ընդ որդւոյն։

Ընդ գողութեան անուան և բամբասանօք արկա-նէ զմարդ (149)։

Հանդերձ երանելեաւն Թաթլաւ տեառն Վա-նանդայ (155)։

583. Իբրև, որպէս հոլովառու բառերն ալ, միտքը նման նշանակելով, հայցականի տեղ տրական հոլով կ՚առնեն երբեմն.

Ճանաչել զՃանապարհս իմ ցանկան իբրև ժողո-վրդեան՝ որոյ զարդարութիւն գործեալ իցէ. — այս ինքն նման ժողովրդեան, իբրև զժողո-վուրդ։

Տեսի զարմացման տեսիլ, իջանել անօթ ինչ իբ-րև կտաւոյ մեծի. — այս ինքն նման կտաւոյ, իբրև զկտաւ մեծ։

Ոչ որպէս հրաման տալոյ ասեմ։

Ոչ որպէս հրաման ինչ առելոյ։

Առաքեալք երկնաւոր Թագաւորին և Աստուծոյն՝ պատկառելիք և պաշտելիք գոն մարդկան, իբրու 'ի նմանէ ընտրելոց և առաքելոց. — այս ինքն՝ իբրու 'ի նմանէ ընտրեալք և առաքեալք, նման ընտրելոց, և այլն։

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ

584. Փոխադրութիւն կամ փոխանակութիւն է՝ ուրիշ բանի մը տեղ ուրիշ բան մը դնել: Այս ձեւիս մէջ՝ տեղ տեղ բակառութիւն ալ կըխառնուի, որովհետեւ փոխադրութիւնն ալ ծածուկ մտքով մը կ՚ըլլայ:

585. Այսանկ, գոյական անունը շատ հեղ ածականի տեղ, ածականն ալ գոյականի տեղ կըդրուի. ինչպէս, Գաղտն ցանկութիւն, խաւար խորհուրդ, աղերս բանք, պատշաճ պատասխան, մանուկ տղայ, գոգ տեղի, հուր կառք, չուան գօտի, չափ հանդերձ, չափ ժամանակ, չափ հասակ, տօթ ժամանակ.

Աստուածականն, աստուածայինն, ըսել է երբեմն Աստուած. ջերմ, ցուրտ կամ ջերմք, ցուրտք, ջերմութեան, ցրտութեան. բազմամբոխ, բազում ամբոխ. միաբարբառ, մի բարբառ. խառնաձայն, խառն կամ խառնակ ձայն: Վասն հեշտի ընթերցողաց. Ունել յընդարձակի. Ի բազում ապահովլի առնել զոք. Յապահովս կամ յանհոգս լինել. Դաւաճանս կրել. Կենդանեաւ կամ կենդանեօք, առ կենդանեաւ, առ կենդանեօք, ըսել են՝ վասն հեշտութեան, ունել յընդարձակութեան, յապահովութեան, յանհոգութեան, դաւաճանութիւն կրել, կենդանութեամբ, առ կենդանութեամբ:

586. Ինչպէս եմ բային (331), անանկ ալ ընեմ,

ըղձական բայերուն երրորդ դէմքերուն հետ անցեալ դեր-բայն (288) սեռական անուն բայի կ'առնէ երբեմն.

Թէ ուրուք յանկարծօրէն քար ձգեալ լինի 'ի ծառ, և պատահիցէ մարդոյ. — այս ինքն թէ որ քար ձգեալ լինի, քար ձգէ 'ի ծառ (287)։

Անդ սպանեալ լինէր նոցա զՏիմոթէոս. — այս ինքն սպանեալ լինէին նոքա։

Չև լինէր արեգական ճառագայթիցն յաշխարհ սփռեալ. — այս ինքն չև սփռեալ լինէին ճառա-գայթքն։

Թերեհաւատից ես բնակեալ եղիցի 'ի նմա. — այս ինքն թերեհաւատք ես բնակեալ եղիցին, բնակեսցեն։

Իմ առ բարերարութեան իմոյ արձակեալ լիցի զքեզ. — այս ինքն ես արձակեալ լիցիմ, արձա-կեցից զքեզ։

587. Անցեալ դերբային անուն բային սեռական կը-դրուի քիչ տեղ՝ նաև երբոր էական բայն առջի կամ երկրորդ դէմքերուն հետ կամ յոգնակի դէմքի հետ ալ որ ըլլայ նէ։

Իմ 'ի մանկութենէ իմմէ համակ 'ի ճակատու և 'ի կռիւ մտեալ եմ։ Եթէ լուեալ է իր քո։

Մինչ չև քո խօսեալ իցես։

Աշխարհն այն՝ ուստի դոցա եկեալ են։

Եթէ ձեր կարացեալ էիք։

Զոր էին նոցա սրբեալ։

Ձեր արարեալ և կատարեալ իցէք զամենայն։

Որոց որդւոց իւրեանց բարուք վերակացու լեալ իցեն։

Եւ գտեալ լինին Առաքելոցն 'ի նմանէն զպատիւ փառաց։

588. Ասանկ պարզ դիմաւոր բայի ալ կրգտուի սե-ռական անուն բայի գրոց մէջ. բայց զգուշանալու է։

589. Անորոշ և անցեալ դերբայքն երբեմն հայցական ալ կը դրուի անուն բային.

Վասն որոյ Փրկիչն խնդալ ասաց՝ զԱռաքեալսն. — այս ինքն ասաց խնդալ Առաքելոցն, զի խընդասցեն:

Որով յայտ է ՚ի կարի կարևորացն զսա գոլ. — փոխանակ սմա գոլ, թէ սա է:

Զամենայն տեսակս բարեաց վերջին լինել աստուածային սիրոյն՝ և ՚ի Տեառնէ աւետարանեցաւ. — այս ինքն՝ թէ ամենայն տեսակք վերջին են:

Յաղագս ՚ի չարն դիւրափոփոխ գոլոյ զբնութիւնս. փոխանակ՝ բնութեանս: —

Հայեր նա ուղիղ, ննջեցելոցն գեղեցիկ պահեալ զշնորհս պարգևաց. — այս ինքն շնորհաց պահեալ, թէ շնորհք պահեալ են, պահին:

Որ թերին էր՝ խօսէր, զամենայն ինչ ընդունայն լեալ զառաջինսն. — այս ինքն ամենայն առաջնոցն, թէ ամենայն ինչ առաջինքն ընդունայն լեալ իցեն:

590. Երբեմն ալ անորոշ և անցեալ դերբայքն անուն բային՝ խնդրի պէս հայցական կամ բացառական կրդրուի, որոնց մէկուն մէկը հարկաւ անուն բայի պիտի ըլլայ.

Դէպ եղև բառնալ բերել զնա ՚ի զօրականացն. — այս ինքն բերիլ նմա ՚ի զօրականացն կամ բերել զնա զօրականացն:

Յետ դարձին ՚ի Բաբելոնէ և շինելոյ զտաճարն ՚ի Զօրոբաբէլէ. — այս ինքն յետ շինելոյ տաճարին ՚ի Զօրոբաբէլէ կամ շինելոյ Զօրոբաբէլի զտաճարն:

Յետ սպանանելոյն զնա ՚ի նոցունց. — այս ինքն նորա ՚ի նուցունց կամ զնա նոցա:

Գուցէ կարծիս ինչ տացէ թագաւորին, իբրու

դաւով ինչ 'ի Նմանէ կամ 'ի Հրեից անտի զայրն վնասեալ. — այս ինքն առնն վնասեալ 'ի Նմանէ, չա՜ Նորա կամ Հրեից զայրն վնասեալ։

Ահա շնորհեալ է քեզ յԱստուծոյ զամենեսեան. — այս ինքն շնորհեալ է Աստուծոյ զամենեսեան չա՜ շնորհեալ են յԱստուծոյ ամենեքեան։

Եթէ ոչ յԱստուծոյ էր տուեալ զիրաւունս յաղթութեանն. — այս ինքն Աստուծոյ էր տուեալ զիրաւունս չա՜ իրաւունքն էր տուեալ յԱստուծոյ։

Ուր նախ էր զեկեղեցին շինեալ 'ի Գրիգորէ և զվկայարանսն. — այս ինքն եկեղեցինվկ և այարանքն 'ի Գրիգորէ, չա՜ Գրիգորի զեկեղեցին և զվկայարանսն։

Աս բացառականիս պատճառն ան կ'երևնայ՝ որ գործքին ընողը՝ կրաւորական բայի խնդիր կ'ըլլայ (317), և աս խնդիրը բացառական ալ կ'ըլլայ սեռական ալ (352, 353), ուստի՝ գործքն ընողը սեռական դրուելուն տեղ անուն բայիի պէս (331), բացառական ալ կըդրուի երբեմն խնդրի պէս։

591. Բայց շատ տեղ անուն բային՝ անորիշ և անցեալ դերբային քովի մէկ ուրիշ բային խնդիր ըլլալով հայցական կըդրուի.

Ասա զիմաստութիւն՝ քոյր քեզ լինել. — այս ինքն ասա զիմաստութիւնն չա՜ զիմաստութենէ՝ թէ քոյր իցէ քեզ։

Կամեցաւ զիս՝ լինել թագաւոր. — այս ինքն զիս կամեցաւ զի եղէց։

Ոչ կամեցաւ Սեհոն զիսրայէլ՝ անցանել ընդ սահմանս իւր։

Կարծեցեալ զդիսն՝ հասանել Նմա յօգնականութիւն։

Հաստատեաց 'ի լինել զամենայն. — այս ինքն հաստատեաց զամենայն 'ի լինել, զի լիցին։

Ուսուցանէ՝ նեռն լինել զասացօղսն ոչ եկեալ մարմնով զՔրիստոս.— այս ինքն նեռն լինել ծանուցանէ զայնոսիկ որք ասեն զՔրիստոս մարմնով ոչ եկեալ։

Տեսանիցէք զերկինս բացեալ, և զհրեշտակս Աստուծոյ՝ զի ելանիցեն և իջանիցեն.— այս ինքն Երկինքը՝ բացուած պիտի տեսնէք։

Նոտես բացեալ զդուրս բանտին, կարծէր փախուցեալ զկապեալսն։

Գտանէ Թադաւորեալ զԱրտաշէս և ընդդիմացեալ նմա զեղբարս իւր.— ուր զԱրտաշէս, զեղբարս, գտանէ բային խնդիր են։

592. Երբեմն դիմաւոր բային անուն բային ալ ուրիշ բայի խնդիր կըդրուի։

Տեսեալ զիս զոր ինչ արարի 'ի վերայ անօրէնութեան նոցա.— փոխանակ ըսելու՝ տեսեալ զոր ինչ արարի ես։

Որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն.— փոխանակ՝ կամի զի ամենայն մարդիկ կեցցեն։

Եւ զերկիրս երկրաւորօքս և զերկինս երկնաւորօք ծանոյց նմա զի գործք ձեռաց նորա են.— փոխանակ՝ ծանոյց զի երկիր և երկինք գործք ձեռաց նորա են։

593. Ցոգնակի անուն բային, մանաւանդ անեզականին, երրորդ դէմքի բայն շատ անգամ եզակի կըդրուի.

Ազդ եղև նմա բանք խորհրդին։

Այս բանք՝ հաւատարիմ է և ճշմարիտ։

Ճանապարհք նորա առ մեւք է։ Ցորում էր ամենայն չորքոտանիք և սողունք երկրի և Թռչունք երկնից։ Ոչ էր գրեալ անուանք նոցա։

Շահք որ 'ի քէն՝ ոչ ևս իցէ։

Ոչ գոյր կամ ոչ էր ընդ նոսա աստուածս օտարս

կամ օտարոտիս.— այս ինքն ոչ գոյին աստուածք օտարք, ոչ էին աստուածք օտարոտիք (59)։

Բազում սասանութիւնս և փլուզմունս տանց լի֊
նէր, այլ և մահուանս յոլովից մարդկան ՚ի վերայ
հասանէր։

Հաճոյ թուեցաւ բանքն կամ իրքն։

Ել իրքն ՚ի վեր։

Իջցէ իբրև զցօղ պատգամք իմ։

Ամենայն զարդք նորա զերծաւ ՚ի նմանէ։

Անկաւ ՚ի նոցանէ յաւուր յայնմիկ վիրաւորք բա֊
զումք։

Սկսաւ մարդիկն բազմանալ։—

Կեանք իմ՚ի դժոխս մերձեցաւ։

Ընդէ՞ր տուեալ իցէ կեանս ցաւագնելոց ոգւովք.
— այս ինքն կեանք (59)։

Ոչ եկեսցէ ՚ի վերայ մեր չարիք։

Վասն է՞ր եղև ընդ քեզ այդ անցք։

Երևեցան նմա սանդուղք լուսեղէնք, որ կանգ֊
նեալ էր։

594. Այլևայլ դէմքով անուն բայներուն բայն՝ կարգով առաջ եղող դէմքին դրուելու տեղն (338), երբեմն մօտ եղող դէմքին միայն համաձայն կըդրուի։

Դու և մեծամեծք քո, հարճք քո և կանայքըմ֊
պէիք կամ ըմպէին նոքօք գինի։

Վաղիւ դու և որդիք քո ընդ քեզ անկցին։

Զի մի մեռանիցին և նոքա և դուք։

Արա զկամս դորա և կեաց դու և մեք։

Ոչ դու և ոչ դա և ոչ որ զկնի ձեր գալոցն է՝ զայն
՚ի մեզ ոչ կարէ տեսանել։

Այլ թէ մեք կամ հրեշտակ յերկնից աւետարա֊
նեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն
ձեզ, նզովեալ լիցի.— որ կըհասկըցուի՝ թէ ոք
աւետարանեսցէ, մեք կամ հրեշտակ։

595. Անորոշ դերբայն՝ ապառնի կամ ստորադասական բայի տեղ ուղղական կամ նախդրիւ տրական դըրուելուն տեղը (278, 281, 282), շատ անգամ սեռական կամ վերջահոլով տրական ալ կըդրուի. երբեմն սահմանական եղանակին ուրիշ ժամանակներուն տեղ ալ (279).

Ի գումարել ամենայն խորայել՝ի յանդիման լինելոյ առաջի տեառն. — փոխանակ՝ յանդիման լինել, առ 'ի յանդիման լինել, այս ինքն զի յանդիման լիցի կամ լիցին:

Ի դարձուցանել զթիկունս իւր գնալոյ 'ի Սամուելէ. — փոխանակ՝ գնալ, առ 'ի գնալ, զի գնասցէ:

Մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի. — փոխանակ՝ տալ, առ 'ի տալ:

Մինչ 'ի մահ մարտնչէր՝ նախ զանձն ապրեցուցանելոյ:

Գունդս առ գունդս կազմեսցեն՝ հանելոյ զՀէնն յաշխարհէ: —

Օտարոտի ինն դից թուի պատմիչ լինելոյ. — փոխանակ՝ թուի պատմիչ լինել, թուի թէ է, թէ իցէ:

Զի մի 'ի վհատութիւն ինչ կնոջն կարծիցի զայնպիսի իրս յուշ առնելոյ. — փոխանակ՝ յուշ առնել, զի մի կարծիցի թէ յուշ առնէ կամ արար:

596. Երբեմն ալ գործիական կըդրուի նոյն երկումոքով:

Սկիզբն արասցուք ձեզ պատմելով վասն արարչութեանցն. — փոխանակ՝ պատմելոյ, պատմել:

Ի վեր հայեցուցանելով զմիտս նորա ուտելով՝ի պտղոյ ծառոյն. — փոխանակ՝ ուտելոյ, ուտել, զի կերիցէ:

Բիբք աչաց թէպէտ և սրագոյն լինին զայլս տեսանելով, բայց զինքն անկարանայ նկատել. — փոխանակ՝ զայլս տեսանելոյ, 'ի տեսանել զայլս:

Նեռն պատրողական նշանօքն խաբէ զմարդիկ՝ զինքն գոլով Քրիստոս. — փոխանակ՝ զինքն գոլ, թէ ինքն է կամ իցէ Քրիստոս:

597. Անորիշ և անցեալ դերբայն երբեմն իրենց անուն բայիին պէս (328, 329) իրենք ալ սեռական կամ տրական կըդրուին.

Ցապստամբելն նորա 'ի Նաբուքոդոնոսորայ արքայէ և անցանելոյ զերդմամբքն. — փոխանակ՝ և յանցանել:

Մինչդեռ պշուցեալ հայէին ընդ երկինս երթալոյ նորա. — փոխանակ՝ յերթալ նորա:

Իբրև ազդ եղև ինձ՝ նենգութեան յայրդ լինելոյ 'ի նոցանէ. — փոխանակ՝ լինել նենգութեան 'ի նոցանէ յայրդ:

Նոքա ակն ունէին՝ նմա այտնլոյ կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ. — փոխանակ՝ այտնուլ նմա կամ անկանել և մեռանել:

Սրբոյ քաղաքին ամենայն խաղաղութեամբ բնակելոյ և օրինացն Ճշմարտութեան իբրև զի գեղեցիկ իմն պահելոյ, Սիմոն ոմն անուն առաջնորդէր տոհմին իւրոյ, — փոխանակ՝ սրբոյ քաղաքին բնակեալ՝ բնակելով, և օրինացն պահեալ՝ պահելով, որ ըսել է 'ի բնակիլն, 'ի պահիլն (283, 286):

Զնա ինքն յերկիր հողեալ՝ շալակաւ շրջեցուցանէին, յայտնապէս Աստուծոյ զօրութեանցն երևելոյ. — փոխանակ՝ զօրութեանցն երևեալ, երևելով:

Ի ժողովել բազում ժողովրդոց և ըստ քաղաքաց քաղաքաց եկելոյն առ նա՝ ասէ առակաւ. — փոխանակ՝ և եկեալ նոցա, և 'ի գալն նոցա առ նա:

Դարձելոյ մեղաւորի՝ ամենայն հրեշտակաց ուրախութիւն բերէ. — փոխանակ՝ դարձեալ մեղաւորի, 'ի դառնալ մեղաւորի:

Իսկ նոցա խլացելոյ և կուրացելոյ 'ի Ճշմարտութե-

նէն՝ նախանձէին. — փոխանակ՝ իսկ նոցա խլացեալ և կուրացեալ։

Այգուն եղելոյ՝ զապանեալսն թաղել հրամայեաց։

Հզօր մարտի եղելոյ՝ բազումք անկան. — փոխանակ՝ այգուն եղեալ, հզօր մարտի եղեալ։

Լուսոյ երևեցելոյ՝ ոչ կայ մնայ խաւար. — փոխանակ՝ լուսոյ երևեալ, յերևել լուսոյ։

598. Անորոշ դերբայն շատ անգամ սեռականի տեղ ուղղական կրդրուի հոլովառու բառերուն քով.

Վասն ոչ կարել հայել. — այս ինքն վասն ոչ կարելոյն, վասն զի ոչ կարէին։

Վասն զուրբ քաղաքն հարթ յատակ և անմարդի կացուցանել. — այս ինքն վասն կացուցանելոյն։

Յաղագս արդարութեամբ կեալ. — այս ինքն յաղագս կելոյ։

Յետ զերկիւղն Աստուծոյ հայել. — այս ինքն յետ հայելոյ։

Զկնի մտանել արևու. — ի զկնի մտանելոյ։

Առանց արանց յազգէն բագրատունեաց լինել թագադիր. — այս ինքն առանց լինելոյ թագադիր։

Փոխանակ համառօտիւ ասել. — այս ինքն փոխանակ ասելոյ։

599. Երկու անորոշ դերբայեն ետքինը՝ շատ անգամ ուղղական կրդրուի և առաջինն ինչ հոլով է նէ՝ ան կրհասկրցուի.

Մի իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին. — այս ինքն է՝ լինելով օրինակ։

Զօր ամենայն տեսանելով զայսպիսի պղծագործութիւն և լսել. — այս ինքն լսելով։

Հրճիգ առնելով զգաւառս նոցա, քանդել զքաղաքս, 'ի ծառայութիւն վարել զազգն և համաջինջ 'ի միջոյ զօրինացն բառնալ զամբարիշտ սովորութիւն. — այս ինքն քանդելով, վարելով, բառնալով։

Եւ լինի այս 'ի բառնալոյ զմեղաց խաւարն և շնորհել ոգւոց լուսաւորութիւն. — այս ինքն և 'ի շնորհելոյ։

Ի ձեռն յարութեան, վերանալոյ ընդ երկինս և նստել ընդ աջմէ աստուածութեանդ. — այս ինքն վերանալոյ և նստելոյ։

Եւ ծիծառն (ազդմունք բնականք են) 'ի ձմերոց երթալոյ, և խորդոյն՝ իմանալ յառաջագոյն ըզձմերունս կարեւորս և վաղվաղ 'ի մարմանդ տեղիս փութալոյ։

600. Անորոշ դերբայն շատ անգամ ուղղական կըդրուի գործիականի տեղ կամ անցեալ դերբայի տեղ.

Սոքա յանձն առին՝ իբր ոչինչ կասկած կամ կարծիս 'ի մտի ունել. — այս ինքն 'ի մտի ունելով, 'ի մտի կալեալ։

Մոգէր և ապշեցուցանէր զազգն սամարացւոց՝ ասել զանձնէ թէ իցէ մեծ ոմն. — այս ինքն ասելով, ասացեալ։

Հրաժարեալ յեղբարց՝ նաւէր յԱսորիս, փոքրել զգլուխ 'ի Կենքրեայ. — այս ինքն փոքրեալ, փոքրելով։

Ի բաց թօթափել այսուհետեւ զամենայն չարութիւն, անխարդախ կաթինն փափաքիցէք. — այս ինքն թօթափեալ, թօթափելով։

Միշտ կարօտիմք Աստուծոյ՝ հաստատուն գոլ բնութիւն և դիւրաշարժ. — այս ինքն գոլով։

601. Դադրիլ, ետ կենալ նշանակօղ բայերուն քով՝ ուղղականը բացառականի տեղ կըդրուի շատ հեղ.

Ոչ դադարէ խօսել։

Ոչ խոստորեցաւ առնել ուղղութիւն։

Խորշէր զօրն մտանել 'ի քաղաքն։

Զգոյշ լեր պատմել ինչ նմա։

Արգելուին զմեզ խօսել։ Հոռոմք 'ի բաց կացին ձեռնտու լինել քրիստոնէութեան։

602. Իսկ հայցական խնդիր առնօղ բայերուն քով որ դրուի նէ, հայցականի տեղ ալ կըհասկըցուի.

Իբրև կատարեցին մատուցանել. — ըսել է կատարեցին զմատուցանելն։

Ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց վարկանէին. — ըսել է՝ զծառայելն ազատութիւն վարկանէին։

Թողլին նոքա գալ կալ յաղօթս. — այս ինքն թողլին զգալ կալ յաղօթս։

Ուսո ինձ առնել. Կամեցաւ ելանել. Մոռացան առնուլ. և այլն։

603. Եւ իրօք ալ կատարեալ հայցական կըդրուի երբեմն անուան պէս (280).

Տէր իմ յամէ զգալ. — նոյն է թէ ըսուի յամէ գալ։

Լուաք զդորա խօսել բանս հայհոյութեան. — ըսել է՝ լուաք խօսել դմա։

Կամիմ զմանկամարդացդ ամուսնանալ, որդիս ծնանել, տնարարս լինել։

Զերագելն միայն խոկայի։

Դիքն անդէն կամին զընակիլն։

Զհարկելն լիով փութացիս։ Փութա զգալն։

Զառնոյր յանձն զերթալն։

Լաւագոյն զմեռանելն կամին քան զմեռուցանելն։

Թէպէտ և կամի զտալն։

604. Շատ տեղ ալ ուղղական, և մանաւանդ գործիական կըդրուի անորիշ դերբայն՝ ող բայածականի կամ անցեալ դերբայի մօքով. կամ թէ գործիական՝ ուղղականի տեղ, ըստ 278, 279.

Եթէ սուղ իցէ բանն, իբրու ոչ պարունակող զիմաստս և ոչ բաւականապէս տալ զցոյցս՝ պարսաւեալ լինի. — այս ինքն տուօղ չափ տուեալ զցոյցս։

Կուսան համեստ որպէս զօրինաւոր ոք, և ոչ ամե-

նեւին ունել անդուռն բերան նման այլոց կանանց. — այս ինքն ոչ ունող անդուռն բերան։

Չ՚ի քէն պատիւն անգիտողին և հաւասար գոլ անմտին. — այս ինքն գոյողին, եղելոյն։ —

Մեռանել քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենիս. — այս ինքն կոխողս, կոխեալս կամ կոխել զսահմանս։

Ասեն զՆրուանդայ ըստ հմայից դժնեայ գոլով ական հայեցուածով. – այս ինքն դժնեայ եղեալ կամ դժնեայ գոլ։

Յիշեցէք և զուխս արեանցն ՚ի դորա հոսելով ձեռաց. — այս ինքն հոսող, հոսեալ։

Տեսեր շուրջ զաստուածային սեղանովն պարելով զողջայն. — այս ինքն պարողս, պարեալս կամ տեսեր պարել։

Մի լիցի փշովք հեղձեալ, այլ պտղաբերելով ըզպտուղ սիրոյ. — այս ինքն պտղաբերող, պտղաբերեալ։

Մանկունք բժշկաց զորս ճանաչէն ունելով զցաւս անբոյժս՝ ոչ ձեռնարկեն առ այնպիսին. — այս ինքն զորս ճանաչէն ունողս կամ ունել զցաւս։

Ոմանց աներկիւղից՚՚ի մէնջ առ ձեզ հատուածելոց և զմերս աղարտելով կարգաւորութիւն. — այս ինքն և աղարտողաց զմեր կարգաւորութիս։

Չարախօսեն զձէնջ խաղմարարս կարդալով և խռովարարս և խանգարիչս օրինաց թագաւորաց և նորոգ աստուածպաշտութիւն քարոզելով. — այս ինքն քարոզողս։

605. Անորիշ դերբայն ուղղական, երբեմն ալ գործիական, առանց ուրիշ բայի տակ ըլլալու ալ (278, 279), դիմաւոր բայի տեղ կը դրուի երբեմն, մանաւանդ ապառնիի ու հրամայականի.

Ալ փոյթ յանձին կալեալ պահանջել զամենայն հարկս և զհասս, զի մի երբեք բաղմասցին. —

այս ինքն պահանջեսջիք, կամ փոյթ յանձին կալջիք պահանջել (606)։

Չի մի լիցուք ցանկացօղք չարեաց՝ որպէս նոքայն ցանկացան, և մի կռապաշտք լինել՝ որպէս ոմանք 'ի նոցանէ. — յդ և մի կռապաշտք լիցուք։

Ծառայք՝ հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ տերանց. — այս ինքն լերուք։

Մի բազում վարդապետս լինել, եղբարք իմ. — այս ինքն մի լինիջիք։

Այնքան առատանալ արտասուացն, մինչ զի լուանալ զոտս Տեառն. — այս ինքն այնքան առատացան, մինչ զի լուանային կամ լուացին։

Բայց քանզի զհրաման կամ զհրամանաւ ինչ ոչ անցանել ըստ Թագաւորին, սպաս արար մարթանօք զհրամանն կատարել. — այս ինքն ոչ անցանէր։

Որ Ճշմարիտ Աստուածն է, զամենայն ինչ զիւր մշտնջենաւորութեամբ ունի, և զորդին իւր միշտ ընդ իւր ունել. — այս ինքն միշտ ընդ իւր ունի։

Եթէ կարծիչք յանցանաց էին դեք, ոչ երբեք զմարդիկ 'ի կռապաշտութիւն յօժարեցուցանէին.. ոչ ընդ աստեղս պշուցանել. — այս ինքն պշուցանէին։

Սակայն և 'ի նոցանէ՝ զոր ինչ հաւաստին կարծեմք՝ առնուլ. — այս ինքն առնումք կամ առցուք։

Եւ զիա՞րդ զսակաւամեղն՝ ամենայնիւ ամպարշտելոցն մատնել 'ի սատակումն. — այս ինքն մատնէք կամ մատնիցեմք։

Որքան յայտնիկ ըստ բազմադիմի գործոցն՝ և անուանսն գոլ զանազանութիւնք. — այս ինքն գոն, են զանազանութիւնք։

Եւ այսպէս ուսուցանելով, մինչև մոռանալ լուղացն զամենայն իրս աշխարհականս. — այս ինքն ուսուցանեն։

Զայս ասելով, զի զայն վերադոյն քան զամենայն յարդարիցէ. — այս ինքն զայս ասէ կամ ասէր։

Տեսեալ զինքն մերկացեալ՚ի լուսեղէն զգեստից, սաղարթապատ լինելով ընդ տնկով դրախտին. — այս ինքն սաղարթապատ լինէր։

606. Նմանապէս անցեալ դերբայն, առանց ուրիշ բայի տակ ըլլալու ալ (284, 286), դիմաւոր բայի տեղ կըդրուի երբեմն.

Իբրև գիտացին թէ այրն հրեայ է, միաբարբառ եղեալ յամենեցունց իբրև ժամս երկու աղաղակել. — այս ինքն մի բարբառ եղև՝ աղաղակել, կամ մի բարբառ եղեալ աղաղակէին (605)։

Ցայնժամանակի տագնապափոյթ ստիպաւ դեսպանս արձակեալ, պատուիրակս հանեալ ընդ աշխարհ՝ զի ամենեքեան օժտաբեր ընծայատար լիցին. — այս ինքն արձակէին, հանէին, կամ արձակեցին, հանին։

Եւ այնչափ յանդգնեալ, մինչև կանանց հրամայէ մկրտութիւն տալ. — այս ինքն այնչափ յանդգնի կամ յանդգնեցաւ։

Հաւանեալ ամենեցուն մեծամեծաց և փոքունց ազդ առնել ամենայն երկրին՝ զի հաճոյ թուեսցի. — այս ինքն հաւանէին, հաւանեցան ազդ առնել, կամ հաւանեալ ազդ առնէին, ազդ արարին։

Ցայսցանէ ընկալեալ համարձակութիւն ամենայն որ՝ հայր իւր կոչել զԱստուած. — այս ինքն ընկալաւ համարձակութիւն կոչել. կամ ընկալեալ կոչէ։

Եւ արդ եղեալ որոտումն յերկնից սաստիկ անհնարին, զի ահաբեկեալ զամենայն ամբոխն. — այս ինքն եղև որոտումն, ահաբեկեաց։

Ասացեալ ՚ի Հօրէ լինել լոյս, և անդէն եղեալ լոյսն համափիւռ. — այս ինքն և անդէն եղև։

Ապա Թադէոսն Պարսից, քանզի զայս լուեալ

'ի քաւղէից, տաճիկ ուղտուք արձակէ'ի Հայս
տրս. — այս ինքն քանզի լուաւ:
Եւ սորա այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ,
Թագաւորեալ ամս քառասուն և մի. — այս ինքն
սա սիրելի եղև չափ Թագաւորեաց:
Եւ կիսոյն 'ի նոցանէ զմեծն Սահակ խնդրեալ.
— այս ինքն խնդրեն, խնդրեցին:
Ային ինչ դադարեալ անձրևին, տօԹ եղև. —
այս ինքն այն ինչ, իբրև դադարեաց:
Եւ 'ի լինել աշնան՝ կոխան եղեալ մորենի. — այս
ինքն կոխան եղև:
Եւ զպատճէն հրովարտակիս այսորիկ յառաջ հա-
նեալ եդեալ և տարածեալ ամենայն զգուշու-
Թեամբ, եԹէ հրէից վարել զլուրեանց օրէնսն.
— այս ինքն հանեալ դիջիք և տարածեսջիք, վա-
րել հրէից զլուրեանց օրէնսն (557):
Հրամայեր նոցա լուանալ և սրբել, զի արժանա-
ւորք լեալ աստուածատես փառացն տեսանելոյ.
— այս ինքն զի արժանաւորք լինիցին:
Յօրինականն՝ որ եհարց ցնա, Թէ զինչ արա-
րեալ՝ զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից.
— այս ինքն զինչ ինչ արարից չափ առնիցեմ:

607. Հայերէնի յատուկ եղած ոճ մըն է որ երրորդ
դէմք մէկու մը վրայ բան մը պատմելուատեն՝ բային
և ուրիշ բառերուն դէմքը շատ տեղ առջի դէմք կըփո-
խուի իբրև անոր բերնէն. ինչպէս,
Իբրև ետես՝ Թէ մեռանիմ, կոչեաց նա զծառայսն.
— փոխանակ ըսելու՝ Թէ մեռանի:
Իբրև գիտաց՝ Թէ ոչ կարեմ ժոյժ ունել նմա, դար-
ձաւ անդրէն. — փոխանակ՝ Թէ ոչ կարէ:
Շինեցին յաշտարակս ամրացեալս, զուցէ գայ-
ցեն հեԹանոսք և կոխան առնիցեն զնոսա. —
փոխանակ ըսելու՝ զնոսա:

Իբրև ետես Նիկանովր՝ եթէ յայտնեցաւ խորհուրդ նմա, խաղաց պատահել նմա պատերազմաւ. — փոխանակ՝ խորհուրդն, խորհուրդ իւր։

Զտէր աղաչէին, մի՛ 'ի ձեռս հայհոյիչ խուժադուժ հեթանոսաց մատնել զմեզ. — փոխանակ՝ զինքեանս, զնոսա։

Իսկ տիկինն Փառանձեմ իբրև ետես՝ եթէ միայն մնայ, եբաց զդուռն բերդին. — փոխանակ՝ մնաց։

Յանձն իւր տարաբերէր՝ թէ յո՛ թափեցէ զդառնութիւն թունից. — փոխանակ՝ թափեսցէ։

Գրէր և ցուցանէր՝ որպէս դիցնօգնականութեամբ զգործ քաջութեան նորա յառաջ մատուցեալ. — փոխանակ՝ քաջութեան իւրոյ։

Եթէ կիսոյ կէս 'ի մէնջ մեռանիցիմք, ոչ դիցեն 'ի վերայ մեր զսիրտ. — փոխանակ՝ մեռանիցի կամ մեռանիցին։

608. Բայի մը դէմքի տեղ՝ շատ անգամ էական բայը կը դրուի և ան բային անորոշ դերբայն։ Էական բայն կամ եզակի երրորդ դէմք կըլլայ տրական խնդրով, կամ ամէն դէմք եզակի ու յոգնակի. ինչպէս,

609. Եզակի երրորդ դէմք՝ տրական խնդրով.

Էր ինձ լինել այսօր յերկրի անծանօթում. — այս ինքն լինէի, գտանէի։

Էր երբեմն (նոցա) զհետ երամակաց ցռուց արշաւել. — այս ինքն արշաւէին։

Այն ինչ լինէր նոցա հասանել. — այս ինքն այն ինչ, իբրև հասանէին։

Ինձ լիցի պաշտել զԱստուած արարիչ. — այս ինքն ես պաշտեցից։

Կալ լիցի քեզ յուխտի մերում. — դու կացցես դու։

610. Ամէն դէմք եզակի ու յոգնակի.

Քահանայքն էին մատուցանել զՃարպսն. — այս ինքն մատուցանէին։

Իցես լինել 'ի հաղարաւորս. — այս ինքն լիցիս, եղիցիս:

Լինին նոքա ասել. Այլ ոչ լինէին տեսանել զնա. այս ինքն ասեն, ոչ տեսանէին:

Զի թողուլ զչարն և ընտրել զբարին լիցին. — այս ինքն զի թողցեն, ընտրեսցեն:

Յորժամ մտանելն լինիցիմք. — այս ինքն յորժամ մտանիցեմքն:

Եղէն խորհել զվաստակս. Եղիցուք շինել զանձինս. — այս ինքն խորհեցան, շինեսցուք:

Եղիցին ականջք քո լսել կամ 'ի լսել. Յայս լեր թեակոխել. — այս ինքն լուիցեն, թեակոխեա:

611. Կրաւորական բայերն երբեմն հասարակ բայի պէս հայցական խնդիր կ'առնեն ան անունն՝ որ անուն բայի պիտի ըլլար, ու բնութեան խնդիրնին անուն բայի կ'առնեն.

Զոր ինչ հրամայեցարն՝ զայն զմտաւ ածջիր. — այս ինքն որ ինչ քեզն հրամայեցաւ:

Յիրաւի պահանջի ընդ որոց յանդգնեցաւն՝ պատիժս. — այս ինքն պատիժք պահանջին 'ի նըմանէ:

Զարիւն՝ որդւոցն զորս ծնաւ ոք՝ պահանջի, թէ երկիւղիւն Աստուծոյ ոչ սնուցանէ. — այս ինքն արիւնն պահանջի 'ի նմանէ:

Զօր եօն յԱստուծոյ և ոչ յայլմէ ումեքէ հարցանի (Ադամ). — այս ինքն օր եօն հարցանի Ադամայ:

Ոչ հրեշտակք հաւատացան զկարգ քահանայութեանն. — այս ինքն ոչ հրեշտակաց հաւատացաւ կարգ քահանայութեանն:

Վիճակեցաւ երևակն զառաջին և զվերագոյն գօտի. — այս ինքն առաջին և վերագոյն գօտին վիճակեցաւ երևակին:

Զսոյն 'ի Պաւղոսէ աղաչեմք. — այս ինքն սոյնս աղաչէ՝ խնդրել 'ի մէնջ առ 'ի Պաւղոսէ։

Զմեծս յանձնեցար շահավաճառութիւն. — այս ինքն մեծ շահավաճառութիւնն յանձնեցաւ քեզ։

Զինուորք աշխարհիս մերոյ զհայրենի տէրութիւնն 'ի բաց կողոպտեցան. — այս ինքն հայրենի տէրութիւնն կողոպտեցաւ 'ի զինուորաց մերոց։

612. Անորիշ դերբայն, մանաւանդ սեռականն, հայցական խնդիրը շատ անգամ սեռական կընդունի յատկացուցչի պէս (383, 384).

Վասն կնոջ առնելոյ քահանայի. — այս ինքն վասն կին առնելոյ։

Ետուն 'ի գործ արքունի՝ վարձ նաւաց գործելոյ. — այս ինքն նաւս գործելոյ։

Արար աւազանս մկրտութեան՝ կնքոյ տալոյ. — այս ինքն կնիք կամ կնունք տալոյ։

Վասն թողութեան տալոյ մարդկան. — այս ինքն թողութիւն տալոյ։

Յետ աղօթիցն և այլոց ուղղութեանց յիշեցուցանելոյ. — այս ինքն յետ յիշեցուցանելոյ զաղօթսն և զայլ ուղղութիւնսն։

Ի ժամու մատուցանելոյ պատարագին. — այս ինքն մատուցանելոյ զպատարագն։

Որ դատելոյն և արդարացուցանելոյն ամենեցուն. — այս ինքն զամենեսեան։

Փորձելն՝ քննելն է անձին. — այս ինքն՝ է քննելն զանձն։

Աբրահամու պատարագելն Իսահակայ. — այս ինքն պատարագելն զԻսահակ։

Ինձ ոչ փոքր է հիանալ, վասն այսր՝ խնդրոյ ունել ձեզ. — այս ինքն խնդիր ունել ձեզ վասն այսր։

613. Էական, կրաւորական ու չէզոք անցեալ դեր-բային, մանաւանդ հոլովածին, ուղղական խնդիրն ալ կըդրուի երբեմն համաձայն դերբային կամ ան անուանին որու որ կ'ըսուի նէ.

Աժդահակայ, Մարաց եղելոյ թագաւորի.— այս ինքն եղելոյ թագաւոր Մարաց։

Այնպիսեաց չարաց եղելոցն դատաստանն 'ի բնէ ոչ դատարկանայ.— այս ինքն այնպիսի չար եղելոցն։

Վասն որդւոյ իւրոյ, սահմանելոյ որդւոյն Աստուծոյ.— այս ինքն սահմանելոյն որդի Աստուծոյ։

Զոլըր ես յաձախեալ տողէք զկնի ձեր զմերձաւորացն անուանելոց.— այս ինքն զանուանելոցն մերձաւորք, զայնոցիկ որ մերձաւորքն անուանին։

Ասասցուք փոքր ինչ և վասն առաջաւորացն 'ի մէնջ անուանեալ պահոց.— այս ինքն վասն 'ի մէնջ առաջաւորք անուանեալ պահոց։

ՅԱրմենէն յայնմանէ կոչեցելոյ մինչև ցկողմանս պոնտացւոց.— այս ինքն յայնմանէ կոչեցելոյն Արմէն, յայնմանէ որ կոչէր Արմէն։

Զի և 'ի փոքունցն թուեցելոց մի ինչ արասցեն անտես.— այս ինքն 'ի թուեցելոցն փոքր, յայնցանէ որ փոքունք թուին։

Վասն իշոցն՝ երեքօրէից կորուսելոց.— այս ինքն երեքօրեայ կորուսելոց, որ ըսել է՝ յերից աւուրց հետէ։

614. Ուղղական ու նախդրիւ տրական խնդիրները (342, 363), շատ հեղ եզակի տեղ յոգնակի կըդը-րուին.

Միթէ ա՛յրս աւազակաց եղև տունդ իմ։
Անոյց զնա իւր յորդեգիրս։
Զքեզ յորդեգիրս առնէր։
Արձակեսցես զնա ազատս 'ի քէն։

Խոր տախտակամածս արասցես զնա։

Ոչ միայն երանելիս չառնէ, այլ և եղկելիս՝ զայն որ զչար բանսն լսիցէ։

Զտուն գիշերս գործէ արբեցութիւնն։

Զայրն՝ որում զդուռնն յանձն արարին, զնոյն դեսպանս արձակեցին։

Տգեղս ցուցեալ զիս ամենևին։

Զնա եդ գլուխս եկեղեցւոյ։

Զքեզ միածնին իւրոյ հաղորդս և մարմնակիցս և ժառանգաւորս արար։

Զպարզն առաջի դնեն իբրև դիւրահասս, վասն այնորիկ և օգտակարս։—

Ընդ արշալուրջսն. ընդ առաւօտս. ընդ այգս այգուն. ընդ երեկս աւուրն։

615. Գործիական ու բացառական բառերուն յատկացուցիչը՝ շատ տեղ անոնց պէս գործիական ու բացառական կըդրուի. ինչպէս,

616. Գործիական յատկացուցիչ.

Հաստատեա զսիրտ քո պատառով միով հացիւ. — այս ինքն պատառով միով հացի։

Գնալ սրբութեամբ սրտիւ. Միամտութեամբ սրտիւ խնդրել. — այս ինքն սրտի։

Սատակեցի զնոսա բանիւ բերանով իմով. — այս ինքն բերանոյ իմոյ։

Ընդ հովանեաւ աջովդ քով սրբով. — այս ինքն աջոյդ քոյ սրբոյ։

Խօսել բանիւք խաղաղութեամբ, բանիւք ողոքանօք, բանիւք սպառնալեօք. — այս ինքն խաղաղութեան, ողոքանաց, սպառնալեաց։

Արժանաւոր իւրովք մարգարէիւքն ձայնիւք. — այս ինքն իւրոց մարգարէիցն։

Զանսրբութիւն մաքրեալ ինքեամբ մահուն. — այս ինքն ինքեան մահուամբն։

617. Բացառական յատկացուցիչ.

Ոչ էր արբեալ նորա այնչափ յորէ ծննդենէ իւրմէ. — այս ինքն ծննդեան իւրոյ:

Բառնալ յերեսաց երկրէ. Գալ'ի ծագաց երկրէ. — այս ինքն երկրի:

Յորդւոց մարդկանէ կամ 'ի մարդկանէ. կորուսեալ 'ի միջոյ մարդկանէ կամ 'ի միջոյ համարուէն. — այս ինքն մարդկան, համարոյն:

Ի խորոց անդնդոց երկրէ. Ի պտղոյ որովայնէ քումմէ. — այս ինքն երկրի, որովայնի քոյ:

Ի չարախօսութենէ օտար լեզուէ. — այս ինքն օտար լեզուի:

Ի բերանոյ զաւակէ զաւակի քոյ. — այս ինքն զաւակի զաւակի քոյ:

Ի գլխոյ լեռնէն առեալ. Ունէին 'ի կնոջէ Թագաւորէն. — այս ինքն լերինն, Թագաւորին:

Ի տանէ կողմանէ. Յինէն կողմանէ. Ի մէնջ կուսէ. — այս ինքն 'ի տան կողմանէ, յիմ կողմանէ, 'ի մեր կուսէ:

Յամբոխէն բազմութենէ. Ի Հօրէ յայտնութենէ. — այս ինքն ամբոխին, հօր:

Ի տէրունական խաչէն զօրութենէ. — ա͞յ խաչին:

Ի մարգարէէս գեղեցկապէս զերծանել կամաց. — այս ինքն 'ի կամաց մարգարէիս:

Զկնոջէն քանանացւոյ մեծ զհաւատոյն ասէ. — այս ինքն զհաւատոյ կնոջն քանանացւոյ:

618. Բայց յատկացուցիչն ածական որ ունենայ՝ ան չհամաձայնիր երբեմն, երբեմն ալ ան միայն կըհամաձայնի և ոչ յատկացուցիչը.

Ընդ հովանեաւ աջովդ քո սրբոյ. Հեղմամբ արեամբդ քո սրբոյ. Յաջոյ փրկչէն մերոյ և տեառն. — այս ինքն աջոյդ սրբոյ, արեանդ սրբոյ, փրկչին մերոյ:

Հեղմամբ արեան ձերոյ կամ իւրոյ. — այս ինքն արեան ձերոյ, իւրոյ:

Ի փոշէ մարդոյն արդարութենէ. – այս ինքն՝ յար-
դարութենէ միոյ մարդոյն (477)։

619. Երբեմն ուրիշ հոլովներու ալ կ՚ըլլայ որ կը-
համաձայնի յատկացուցիչը, կամ նախդրիւ հոլովի
քով ուղղական կըդրուի, ու եաքը սեռական դերա-
նուն մը կ՚աւելցուի.

Թէպ քերովբէիցն երկայնութիւն քսան կան-
գուն. — այս ինքն երկայնութիւն թեւոց։

Պատրաստեալ հուրն, մինչ չեւ ուրուք ՚ի նա փը-
չեալ, փառումն Նորա յայտնի իմացաւ. — այս ինքն
փառումն հրոյն, որուն տեղը աւելցած է Նորա։

Սուգ և մխիթարութիւն՝ անուանք Խորենացւոյ ըն-
թանան յաշխարհի. — այս ինքն սգոյ և մխի-
թարութեան անուանք։

Զերկիրն Հայոց այնուհետև եկեալ արքային
Պարսից յիւր անուն զտեղւոյն անուանէր. — այս
ինքն զտեղւոյ երկրին Հայոց։

Եւ ոչ գյորովայնի զկեանսն կարէ ոք ասել զյօ-
րինուածսն. — այս ինքն զյօրինուածս կենացն
որ յորովայնի (389)։

Ընդ հրեշտակսն դասակցելով պարս. — այս ինքն
ընդ հրեշտակացն պարս։

Սուրբ ուխտաւոր մանուկն՝ զինչ պիղծ մերձենայր
՚ի ձեռս Նորա՝ սրբեալ լինէր. — այս ինքն՝ ՚ի ձեռս
սուրբ ուխտաւոր մանկանն։

Ցարաբերական յատկացուցչին վրայ ալ շատ անգամ
կ՚երևնայ աս բանս, որով կ՚ըլլայ ըսածնիս ՚ի 581։

620. Իսկ երբոր կ՚ըսենք Պատառ մի հաց կամ մա-
գաղաթ, բլիթ մի հաց, բաժակ մի ջուր, կաթ մի ջուր,
բեռն մի փայտ, և այլն, չորս կերպ կրնայ իմացուիլ.
մէկ մը յատկացուցիչ ըստ 619, մէկ մը ուղղական խըն-
դիր ըստ 342, 381, 389, մէկ մը գործիական խնդիր
ըստ 371, մէկ մ՚ալածական ըստ 585։

621. Երբեմն ալ յատկացուցիչն ու յատկացեալը կըփոխեն հոլովնին, մէկը միւսին հոլովը կ'առնէ.

Ի շփոթ բարբառոյ տալ նմա պատգամս. — փոխանակ ըսելու 'ի բարբառ շփոթի։

Զփուշն խլել՝ զցանկութիւն բուսոցն հրամայէ. — փոխանակ՝ զբոյսս ցանկութեանն։

Հանապազորդ արտասուօք աւազանին լուանալ. — փոխանակ՝ աւազանաւ արտասուացն։

Հատաւ օգնականութիւն յուսոյ նոցա. — փոխանակ՝ յոյս օգնականութեան։

Ի ժամանակի փախստենէն Շապհոյ. — փոխանակ՝ 'ի ժամանակէ փախստեանն։

Ի գրանէ մարդկանն նենգեալ. — փոխանակ՝ 'ի մարդկանէ գրանն։

Համարակախառն ինչ բնութեամբ օրինաց. — փոխանակ՝ օրինօք բնութեան։

Ողջ լեր յարքունական տէրութեանդ պարագայց ամօք. (57) — փոխանակ՝ պարագայիւք ամաց։

622. Գոյականին ածականն երբեմն սեռական կըդրուի յատկացուցչի պէս.

Օծցին իւղով 'ի մրրոյ պարզելոյ. — այս ինքն իւղով պարզելով 'ի մրրոյ։

Իմով արեամբ վասն ձեր հեղլոյ. — այս ինքն արեամբ հեղլով (297)։

Ուռկանաւն արկելոյ 'ի ծով։ Զննելի բնութեամբ մարդկայնոյ։ Մկրտեցար արեամբդ քո սրբոյ։

Ծնողք սրբոյ աւազանաւն։

Հերձուածականին չարափառութեամբ. — այս ինքն հերձուածական չարափառութեամբն։

Հայցեա յորդւոյ քո միածնի. — ո͞ր միածնէ։

Յանուանեալ Թլփատութենէ անտի մարմնաւոր ձեռագործին. — այս ինքն յանուանեալ 'ի մարմնաւոր ձեռագործ Թլփատութենէ անտի։

Արդ զայս տուաք բան սակաւոց՝ ձեզ մխիթար տրտմեցելոց. — այս ինքն զայս բան սակաւ։

Ի մեղադրութենէ աստուածայնոցն և մարդկայնոցս արտաքս զինքն որցեալ. — այս ինքն յաստուածային և մարդկային մեղադրութենէ կամ մեղադրութեանց։

Զլեզու մարդկան.. զլի թունոց մահաբերին. — այս ինքն թունոց մահաբերոց։

Իւրայովքն զօրօք բազմի վառելովք. — այս ինքն զօրօք բազմօք։

Փառաբանչօքն անմահից. — այս ինքն անմահ փառաբանչօքն։

Տարեորականաց լցեալ զանազան պտղովք. — այս ինքն տարեորական զանազան պտղովք։

Մեծաբանս մնոտեաց բարբառել. — այս ինքն մնոտի մեծաբանութիւնս, կամ ըստ 435։

Ծինեցին 'ի պարիսպս ամուր՝ յաշտարակս հզօրաց. — այս ինքն յաշտարակս հզօրս։

Ընդ արդարս երջանկաց. — այս ինքն ընդ երջանիկ արդարս։

Հեռագոյն լինիցի ընդ ձեզ և ընդ նոսա՝ որչափ կանգունք երկուց հազարաց. — այս ինքն երկու հազար կանգունք։

Յայն աւուրս եօթանց կամ եօթեանցն. — այս ինքն յայն եօթն աւուրսն։

623. Զորրորդ հոլովման նախդրիւ վերջահոլով տրականին աւելի համարձակ ու բնականաբար կ'ըլլայ ատ բանդ, ինչու որ՝ ոյ ալ ո—մի պէս ամենեւին տրական է (33). ուստի շատ տեղ կ'ըսուի,

Յաւուրն առաջնոյ. — որ ըսել է առաջնում։

Իմաստութիւն ոչ բնակէ 'ի մարմնի վարեցելոյ մեղօք։

Նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ։

Ի լծին այրեցելոյ հրով և ծծմբով։

Ի յաւանակի նորոյ նստեալ։

Նիզակն արի ՚ի ձեռին իւրում աջոյ, և յահեկումն վահան։

Ի մարմնի իմոյ, ՚ի սրտի իմոյ, ՚ի հեծութեան իմոյ, ՚ի ձեռին քոյ կամ քում։

Ի հանդստեան ձերոյ․ յերկրորդում ամին իւրոյ․ — այս ինքն իմում, ձերում, իւրում։

624. Երբեմն ալ գոյականին հոլովն ածականը կ՚առնէ, ու գոյականը սեռական կըդրուի յատկացուցչի պէս.

Թագաւորեաց ամսօրեայ մի աւուրց․ — այս ինքն ամսօրեայ մի աւուրս։

Աջակողմն թևին բեկաւ․ — այս ինքն աջակողմ թևն։

Հակառակորդք բաղումեն գործակցաւ բանսարկուին․ — այս ինքն գործակից բանսարկուաւն։

Ցիւրմէ բարեսէր առատութեանն․ — այս ինքն յիւր բարեսէր առատութենէն։

Յահեկէ զստին երկսայրի․ — այս ինքն յահեակ զստէն։

Արգելականք կուսանաց․ — այս ինքն արգելական կուսանք։

Ընդհնգեկան կամարարն կուսանաց․ — այս ինքն կամարար կուսանն։

Սատակել զսատակիչսն չարացելոց թշնամեացն․ — այս ինքն զսատակիչ չարացեալ թշնամին։

Բաշխել նոցա զդահեկանաց տարեորն․ — այս ինքն զտարեոր դահեկանն։

Ճակատեցաւ ութ հարիւր հազարօք զօրաւորօք պատերազմողաց․ — այս ինքն ութ հարիւր հազար զօրաւոր պատերազմողօք։

Ընտրեաց երեսուն հազար արանց զօրաւորս զօրութեամբ․ — այս ինքն արս։

Անկան քսան հազար արանց. Սատակեաց ութ հազար արանց. — այս ինքն արք, արս։

Տաց քեզ տասն արծաթոյ կամ երկուս հազարս երիվարաց. — այս ինքն արծաթ, երիվարս։

Զհազար և զհարիւր արծաթոյն զոր առեր… դարձոյց անդրէն զհազար և զհարիւր արծաթն։

Երիւք սոցին. Յերկուց սոցա. Յերկոցունց սոցա. — այս ինքն երիւք սոքօք, յերկուցս ՚ի սոցանէ։

625. Երբեմն ալ գոյականն ածականի պէս առաջ կըդրուի ուղղական, և ածականն ետև՝ գոյականին հոլովը.

Ընտիր ընտիր երիտասարդ վառելովք. — այս ինքն վառեալ երիտասարդօք։

Եկին յոր հասարակին. — մ՚ի հասարակ աւուրն։

Լուեալ ՚ի քահանայից և ՚ի նախարար պատգամաւորացն եկելոց. — այս ինքն ՚ի պատգամաւոր նախարարացն։

Զարթոյց տէր զոգին Կաւոս պարսկի. Զքորոտութիւն Նեեման ասորւոյ. Զկնի Յովհան մանդակունւոյ. — այս ինքն պարսիկ Կաւոսի, ասորի Նեեմանայ, մանդակունի Յովհաննու կամ Յովհաննու մանդակունւոյ։

Առ Աղէքսանդր մակեդոնացւով. — այս ինքն առ մակեդոնացի Աղէքսանդրիւ կամ առ Աղէքսանդրիւ մակեդոնացւով։

Առ Անտիոքոս ամպարշտաւ։

ՅԱրիստոտէլ՝ նրբախօսէն. — այս ինքն ՚ի նրբախօս Արիստոտէլ՚էն։

626. Երբեմն ալ ածականն առանց նայելու իր գոյականին համաձայնութեան օրէնքին՝ կըդրուի ինչպէս որ յարմարի նէ բային կամ խնդիր առնողի մը.

Առեալ անձնադեղոյն և քաջաղեղան արին Վաղարշակ կորովաբանոյն և հանձարեղի. — սեռական ուղղական մէկտեղ են, առեալ անցեալ դեր-

բային համար, որ ուղղական ալ կ'առնէ անուն բայի, սեռական ալ (328, 330)։

Մտաց աչաց իմաստնոց և ոչ թէ չգալեաւ տեսանէն.— վասն զի տեսանէմ գործիական ալ տրական ալ կ'առնէ խնդիր (352, 353)։

Յառաջնում յարձակել անդ.— վասն զի յառաջին յարձակել ըսեր ես՝ յառաջնում յարձակել, երկուքը մէկ է, յարձակելը յարձակման տեղ ըլլալուն։

Մերձ առ մեծիմաստն Ատրներսեհ Թագաւորն կացելոյ յայնմ Նահանգի.— վասն զի առ ուղղական ալ սեռական ալ կ'առնէ նոյն մտքով։

Այս մեծի չարչարանօքն Քրիստոսի։ Ընդ մեծի մեղադրութեամբ է։ Զգալի այն ասի, որ ընդ զգայարանացս 'ի ներքոյ անկանի, կամ ընդ ամենեքումբք կամ ընդ ոմամբք կամ ընդ միով.— վասն զի առ, ընդ, գործիական ալ սեռական ալ կ'առնեն մէկ մտքով։

Ըստ ազգի ազգի և պէսպէս տուեցելովք 'ի նմանէ շնորհացն.— վասն զի ըստ գործիական ալ կ'առնէ երբեմն տրականի մտքով։

Տես և 'ի 582։

627. Միջակ անուններուն ու դերանուններուն հոլովները շատ անգամ մէկմէկու տեղ կըդրուին, և ասուել սեռական ու տրական իրարու տեղ կամ գործիականի ու բացառականի տեղ, մանաւանդ ածական որ ըլլան դիւականի մը։ Իսկ մինակ՝ քիչ։

628. Նա դերանունն երբեմն ինքն, ինք, դերանուանց տեղ ալ կըբանի.

Զոր նա և նա միայն գիտէին.— այս ինքն, ինքն և նա։

Գիտաց Յիսուս թէ կամէին զնա հարցանել.— այս ինքն զինքն։

Ասէ Յիսուս ցեկեալսն 'ի վերայ նորա. — այս ինքն 'ի վերայ իւր։

Ասէ Աբրաամ՝ ցծառայն իւր ցերէց տան իւրոյ՝ ցիշխան ամենայն ընչից նորա. — այս ինքն ամենայն ընչից իւր կամ իւրոց։

Վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա. — այս ինքն եղբօր իւրոյ։

Աղաչէր զնա կինն զի զդեւն հանցէ 'ի դստերէ նորա. — այս ինքն 'ի դստերէ իւրմէ։

Գոհանային զԱստուծոյ հարցն նոցա. — այս ինքն հարցն իւրեանց։

Բայց զգուշանալու է որ ծուռ միտք չելլէ։

629. Ուղղական յարաբերականը որ՝ ամէն հոլովի տեղ կըբանի շատ անգամ, ու շատ տեղ՝ ետեւէն պէտք եղած հոլովովը դերանուն մը կ'աւելցուի. աշխարհաբառերնուս մէջն ալ կայ աս. ինչպէս,

630. Մէտ. Իբրեւ զանաստուած ոք որ չիք այլ ինչ յոյս 'ի միտս նորա. — այս ինքն յորոյ միտս չիք, եւ որոյին տեղը աւելցած է նորա։

Են՝ որ ոչ գոյ բանք 'ի բերան. — այ̃ որոց ոչ գոյ։

631. Տրտ. Զօրութիւն է՝ որ մեկին է նմա ամենայն. — այս ինքն որում։

Աստուած զոր գիտէ՝ կամի, եւ զոր կամի՝ գիտէ. որ առ մերս բնութիւն անհնար է այժմ լինել. — այս ինքն որում անհնար է լինել։

632. Գործ. Այնու որ պակաս գտար, եղեր ամենայն օրինացն պարտական. — այս ինքն որով պակաս գտար։

Որ ամենայն ինչ նովաւ եղեւ, հարկ էր զի նովաւ սրբեսցին. — այս ինքն որով ամենայն ինչ եղեւ։

633. Բաղ. Մտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ եւս ելանիցեմք 'ի նմանէ. — այս ինքն յորմէ ոչ եւս ելանիցեմք։

Հատանել յազգէ յայնմանէ՝ որ էրաւունք Աստուծոյ տարամերժեալ տրոհեալ է ՚ի նոյնն է. — այս ինքն յորոց տարամերժեալ տրոհեալ է (571)։

634. Հայց. Զպսակն որ պարտիք։

Տեսեալ զայն որ յառաջն ուրանային։

Զամենայն որ միանգամ կամիջիք։

Զամենայն որ ինչ ասացի ձեզ։

Զամուրսդ որ ամրացուցեր։

Զամենայն բանսն որ ուխտեաց նմա։

Մեծ էր ատելութիւնն որ ատեաց զնա. — այս ինքն զոր, որով (374, 377)։

635. Ուրիշ նախդրով հոլովներու տեղ.

Զայն որ նոքա հուպ լինել չիշխէին. — այս ինքն յոր։

Մինչև յօրն որ ամենայն խորք ՚ի վեր գան. — այս ինքն յորում։

Մի յայնցանէ է որ երկբայութիւն ասի ՚ի նոսա. — այս ինքն յորս։

Ունիմք չինուածս յերկինս առանց մարմնաւոր ձեռագործի, որ ոչ երբէք ձեր արքունիքդ աս Նո֊քօք. — այս ինքն առ որովք ոչ երբէք։

636. Ուր շատ տեղ կ՚ի շաղկապ ալ կընշանակէ, որ աշխարհաբառ ալ որ կ՚ըսենք.

Աղաչէին որ զայս ողջ անարատ հաստուցանել մարթասցեն։

Կամիս որ դու միայն իցես. — կ՚ուզես որ դու միայն ըլլաս։

637. Զի միջակ անունն ալ (80) որ յարաբերականի պէս կըբանի շատ տեղ, և անոր պէս ալ ուղղական՝ ամէն հոլովի տեղ բանեցուցած կայ նախնեաց լաւ շարադրութեան մէջ.

Եւ որպէս խուլ զի ոչ լսէ, որպէս համր որ ոչ բանայ զբերան իւր. —

Ես որպէս խուլ որ ոչ լսէ, և իբրև զհամր զի ոչ բանայ զբերան իւր։

Իբրև զջուրս բազումս որ ծածկեն զծովս. — Իբրև ջուրք բազումք զի ծածկեն զծովս։

Որպէս հանդերձ զի ագանի, որպէս գօտի որ ածի հանապազ ընդ մէջ։ —

Է ինչ զի և 'ի մարգարէսն յիշի, և է ինչ որ միայն 'ի գիրս յայս։ —

Լաւ անուն կին՝ զի անուն էր նորա Ողոմպի. — այս ինքն որոյ անուն էր։

Եկն մարախ և խառնիճ՝ զի ոչ գոյր թիւ. — այս ինքն որոյ չափ որոց։

Գոյ սաստ այր մի 'ի դրան քում՝ զի իրքդ այդ նո-ճա վճարին. — այս ինքն որով իրքդ այդ վճարին։

Եւ զայս՝ զի ոչ համբերեմք մեք տեսանել, գործեաք և մեք. — այս ինքն զոր ոչ համբերեմք տեսանել։

Ի ժամանակի՝ զի հարկանէր զԴարեհ արքայ. — այս ինքն յորում հարկանէր։

Հանդիպի յայնմ ժամու՝ զի մկրտէր զԳրիգոր. — այս ինքն յորում մկրտէր։

638. Մակբայներ ու շաղկապներ ալ կան շատ, որ մէկը, մէկալի մտքով իրարու տեղ կըբանին երբեմն. բայց ատ իրենց այլևայլ նշանակութիւնին ըլլալով բառգրքին կ'իյնայ սորվեցընելը։

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ԱՐՏՈՒՂՈՒԹԻՒՆ

639. Արտուղութիւն է պարզ շարադրութեան բնական կարգէն դուրս ելլել աղուորութեան մը համար, կամ աւելի ազդու կամ բացայայտ ընելու խօսքը։

640. Շարադրութեան բնական կարգն է՝ առաջ անուն բային դնել, ետքը բայն, ետեւէն խնդիրը կամ մակբայն. անուն բայիին ու խնդիրին յատկացուցիչը կամ բացայայտիչն ամէն մէկին իր քովը, նոյնպէս ածականները գոյականներուն քովը. ուրիշ խնդիր առնողներուն խնդիրն իրենց քովն, ու նախդիրներն ամէն մէկին իր վրան։ Ասկէ դուրս եղած շարքն՝ արտուղութիւն կըսեպուի։

641. Ասանկ, անուն բային շատ անգամ ետեւ կըդրուի, ու բառերով կըբաժնուի, ու խնդիրն ալ շատ անգամ առաջ կըդրուի.

Զարմացեալ էր ընդ միտս Պետրոս։

Եմուտ առնել խունկս և ողջակէզս Յէու։

Մատեաւ և յարդարեան երբեմն փորձ մահու։

Հրամայեաց զնա վաճառել տէրն նորա և զկին նորա և զորդիս նորա։

Այնու ևս յայտ լինէր՝ եթէ 'ի ծառայութեան և 'ի հնազանդութեան կայ ակամայ Առաքելոցն սատանայ։

Զի՞նչ ընդհատ 'ի մանկտւոյ իցեմք՝ որ ընդ խաղս տունս շինիցեն, մեք որ գեղեցիկ ապարանս շինիցեմք։

Դու զյանդուգն զբուռն արքայն սաստիկ զփարա-
ւոնն, որ արկ՚ի ծառայութիւն զժողովուրդ քո՛ք
զիսրայէլ, պէսպէս հարուածովք կշտամբեցեր:
Նոցա ամենայն ոք չէ հնար եթէ բարիս ասիցեն:
Որ ՚ի վեր քան զամենեսեան է, առ այն որ՚ի
խոնարհ քան զամենեսին էր՝ էջ:
Զմարգարէականն ընդ որ հանապազ անցանէ՝
յիշեսցէ:
Գոնէ յօժարութիւն յորժամ այսր ժողովիցիմք՝
ցուցանիցեմք:
Եկի զանէծս օրինացն որ վասն յանցուածոց ե-
դան՝ լուծանել:

642. Գերբայն ու իր էական բային մէջ շատ տեղ այլ և այլ բառ կըմնէ, ինչպէս անուն բայի, խնդիր, մակբայ, և այլն, և անով կըզատուին մէկմէկէ.

Ես ծնեալիսկ ՚ի դմին եմ: Հանեալչև ես է:
Իմէ օրն լինելութեան նշոյլեալ:
Էր ժողովն նոցա խառնեալ:
Որ էր վասն խռովութեան իրիք եղելոյ ՚ի քաղա-
քին և սպանութեան մտեալ ՚ի բանտ:
Բարկացեալ յոյժ էին քաղաքացիքն:
Քեզ Տուր լիցի ընդ ձեռամբ անկեալ:
Եղիցին մնացեալքն Յակոբայ յԱստուած վստահացեալ:
Է արդարև լուեալ մեր:
Ոչինչ է դորա արժանի մահու գործեալ:
Զի՞ իմ՚ի նոցանէ գտեալ զառողջութիւն:
Թէ չէր նախ բողբոջեալ:
Թէ չէր զմանուկն տեսեալ:
Մինչ չև ձեր խնդրեալ ինչ իցէ:
Զև իցէ հաւու խօսեալ:
Իցէ քերովբէիցն Բառացեալ զԹևս իւրեանց:
Ընդ ամենեցուն եմ համարս տուեալ:
Զէ զհարկն ՚ի դուրս հատուցանելոյ:
Անդ էր նաւուն Բաժնելոյ զբեռինսն:

643. Այլ և այլ խնդիր առնողներ մէկտեղ որ գան նէ, երբեմն մօտին միայն կը տրուի խնդիր, երբեմն ալ հեռուին, ու մէկալը զօրութեամբ կը հասկցուի. ինչպէս,

644. Մօտին խնդիր.

Զքեզ Աստուած հարցն մերոց գոհանամ և օրհնեմ:
Նեղեալ անձինք օրհնեն և գոհանան զԱստուծոյ:
Կացէք մնացէք պահեցէք դուք առ մեզ զնոյն հաւատս:
Կարիցեմք 'ի դէպ մտանել և ելանել 'ի ճառէս:
Իջմամբն և ելիւքն 'ի խորոց:

645. Հեռուին խնդիր.

Զպաղատանս ապրեալս առաքեցին և այրեցին հրով:
Զտեսութեան եկին գտին փախուցեալ:
Առաւել գայր զհրաման իշխանութեանն:
Առէն գնային զնա:
Առնուլ ելանէ զկրօնս նորա:
Առնուլ վարէ գնայ Աստուած զորդիս նոցա:
Հերձոյր անցանէր զգետինն:
Թողուն և գնան ճարտարքն զգործն իւրեանց:

646. Շատ հեղ ալ բայի կամ անունի մը խնդիրը միջանկեալ բառերով կը հեռանայ.

Առ հասարակ աղօթս անկեալ մատուցանէին:
Անծանօթ հրաման է զտեղիդ կացուցանել:
Տեսանեմ զմարդիկս զի շրջին՝ իբրև զծառս. — այս ինքն՝ զմարդիկս որ շրջին (637) տեսանեմ իբրև զծառս:
Արար Աստուած այս որդւոցն Իսրայելի:
Արկ Հերովդէս արքայ ձեռն չարչարել զոմանս:
Ածէք կամ ոտամբ կամ ձայնիւ առնիցէ:
Զինչ ինչ յայտ և օրհնութիւնքն առնիցեն:
Արգել հայելւոյ 'ի յստակութիւն լուսոյն ընդէն:
Ոչ գոսանալ ձեռաց նորոգողացն հրամայեցէր օրհնեալ գագաթանց:
Եւ ապա աղօթութեանն 'ի նմանէ կատարեալ լինի 'ի գերեզման անտի:

Զհնազանդութեան արարածոյս պատմէ՝ արարչին։
Ո՞յր ուրուք դի կանգնեալ երևեցաւ 'ի կենդանեաց։

647. Յատկացուցիչը յատկացեալէն ու բացայայտիչը բացայայտեալէն շատ հեղ կըհեռանան՝ մէջերնին բառեր լինալով.

Զայն ողորմ ելանէր տանջանացն սգացելոց։
Ոգի առաւել գոյ 'ի նմա իմաստութեան և հանճարոյ։
Իմ փոքր մի և սասանեալ էին ոտք։
Ամենեցուն որ 'ի ժողովրդեանն էին աչք 'ի նա հայէին։—
Ամենեցունց ճարտարապետն ուսոյց ինձ, իմաստութիւն։
Որում և Աբրահամ տասանորդս ետ յաւարէ անտի՝ նահապետն։
Եկն Վարդ ողջ զերծեալ 'ի կապանացն զօրութեամբն Աստուծոյ՝ եղբայր զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի։

648. Ածականներն ալ կերպ կերպ բաժնուիլ ունին գոյականէն, ինչպէս մէկ քանին տեսանք 'ի 409, 410, 412։—Նմանապէս որ ինչ, որ ոք իրարմէ կըզատուին շատ տեղ՝ մէջերնին բայ կամ ուրիշ բառ մանելով.

Որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է։
Զոր ունիցի ոք ինչ՝ հրամայէ ընկենուլ։
Զոր և ինչ հայցեն՝ առնուն։
Զինչ շնորհս որ տայ քեզ Աստուած։—
Որ պարտիցի ոք ինչ յարքունիս։
Որ անմարմին ոք է։
Որ լաւ ոք եկեալ յաշխարհ մեռանէր։
Որ 'ի բռնութենէ ոք ակամայ կալեալ էր զմոգութիւնն։
Ամենայն որ միանգամ ոք կայր 'ի պատիժս։
Որ ոչն կամիցի ոք գործել։

649. Ասանկ ալ ոք, ինքն, իրենց գոյականէն կըզատուին.

Է՞ ոք այդր այր. — այս ինքն է՞ այդր այր ոք:

Մի՛ ոք մնացի այսօր այր յիսրայելէ. — այս ինքն մի՛ ոք այր մնացի:

Ինքն հիմունս արկ նմա Բարձրեալն:

Ինքն հաւանեալ տեղի ետ Տարքին:

Եւ նա եդ ինքն ՚ի մտի իւրում:

Ի ջեղ բերիցէք յինքեանս:

650. Այս, այդ, այն, ածական դերանունները շատ անգամ առաջ դրուելով՝ հեռու կըզատուին իրենց գոյականէն.

Այս երիցս անգամ երևեցաւ չքնաղ տեսիլս:

Զայս մեծ և փրկագործ աւարտեալ ՚ի մահուն իւր Քրիստոս խորհուրդս:

Որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ էր:

Հաստատեաց նա զայն որ առ մեզ բարեկամութիւն:

Զայն որ փոքր մի յառաջ խռովութեամբ լցեալ էր զբանակն՝ ուրախութեամբ լնուլ:

Ա. այն որ ամենայն զօրութեանց և բարձրութեանց տիրէ Աստուած:

Այն որ ՚ի հրէաստանէ անտի ազգն փախստական գնացեալ էին:

Բազում ինչ և մեծամեծ այն էր որ ՚ի նմանէ անդր ընդ եկեղեցին անցանէին. – այս ինքն այն անցք էր որ անցանէին:

Զայն որ խառնիճաղանճ զօրս յինքն կուտեալ էր՝ յիւրաքանչիւր տեղիս արձակէր. — այս ինքն զայն խառնիճաղանճ զօրս որ յինքն կուտեալ էր:

Ցայն զնոսա բերէր ՚ի ծարբս. — ի յայն մարտս:

651. Նմանապէս սոյն, դոյն, նոյն, որ ոչ միայն վերջահոլով առաջ կըդրուին (417), հապա նախդրիւ հոլովով ալ սովորաբար, երբեմն կըխախտին իրենց սովորական տեղէն՝ զատ առնելով մը.

Կապէձ՝ նոյն լոյսի տալոյ և առնլոյ։

Օրէն՝ մի և նոյն կացցէ ձեզ։

Մարմինն որ անկաւ՝ նոյն և յառնելոց է։

Ձեռք որ զերկինս և զերկիր հաստատեցին՝ նոյն և տախտակս քարեղէնս փորագրեցին։

Անօրէնն—Թեամբն իւրով զոր արար՝ նովին մեռցի։

Ալլ.ւշտէր՝ զնոյն զՔրիստոս սուրբ առնիջիք։

Զայրն որում զգուռնն յանձն արարին՝ զնոյն դեսպանս արձակեցին։

Ցորդայն ՚ի նոյն անկցին։ Կայր մնայր ՚ի չարեան ՚ի նոյն։

Ընդ այնու հետև յընդունայն եղեալ՚ի նոյն խորհուրդս։ — փոխանակ՚՚ի նոյն ընդունայն խորհուրդս։

Ընդ ճանապարհ ընդ նոյն ոչ յաւելուցուք տեսանել զնա։

Ի մեղս իւր զոր մեղաւ՚՚ի նովին մեռցի։

**652.** Անունի մը նախդիրը շատ անգամ իրմէ առաջ դրուած խնդիրին կամ մակբային վրայ կըդրուի, թէ վերջահոլով ըլլայ ան խնդիրն և թէ ուրիշ նախդրով հոլով մը. ինչպէս,

**653.** Խնդիրին վրայ նախդիր.

Զգուշանալ՚ի կւոց զոհելոյ.—Այս ինքն ՚ի զոհելոյ կւոց։

Ասել զմեծի ողբոց և արտասուաց արժանի սոցա գործս.—այս ինքն զգործս արժանի մեծի ողբոց և արտասուաց։

Յառաքինի գործոյն խոստացեալ վարձուց.—այս ինքն ՚ի վարձուցն խոստացելոյ առաքինի գործոյ։

Զհուրբ կիզեալն և զհողմով հոսեալն և զժանեօք գազանաց ծախեալն յարուցանես։

Ի բազում բանս խօսելոյ.—այս ինքն ՚ի խօսելոյ։

Ի բազում արուեստս քաջութեան ցուցանել։

Յօժարեալք 'ի զդադար 'ի նմին առնուլն:
Զ'ի լոյս անմատոյց ծածկեալդ:
Զառ 'ի յԱստուծոյ հաստատեալ Թագաւորութեանդ հրաման:
Զյաւտեան ածելն: Ասել զայն ժամու պատահիցն: Զյետ մահու կեանս:
Զընդ աջմէ Հօրն նստեալն: Զըստ մարմնոյ ծնունդ Փրկչին:
Ի զայնոսիկ մատակարարողէ:
Անապատ լեալ յառ 'ի նմանէ փրկութենէն:
Ա— 'ի սպասն յոր կարգեցաւ՝ հասանելոյ:
Որպէս խորթս առ 'ի ծննդենէ աղատոյն:
Զյաղագս սորա բանն: Քննեցան 'ի նախ քան զմեզ սուրբ հարցն:

654. Մակբայլին վրայ նախդիր.
Զյառաջագոյն ասացեալ պատգամն:
Զերբեմն ախորժելի խորհուրդն:
Զանտի մնասն և զաստի օգուտն:
Յաստի անտի ծայրիցն:
Զգոգցես կենդանին: Զևս գերազանցն:
Յևս զարմանալի կենդանեաց:
Յընդդէմ դառնալ նորա: Յառաւել զմարդն պատուելոյ: Յգլխի եկելոյս:

655. Նոյնպէս կ'ըլլայ Թէ և նախդիրն առնելու բառը զեղչմամբ յայտնի դրուած չըլլայ, և միայն դիմորոշ յօդով լռելեայն իմացուած ըլլայ ըստ 442.
Ոչ զսուկ աղքատն, այլ զհոգւովն, — այս ինքն զհոգւով աղքատն:
Ի բանիւք յանցանելն, 'ի գործով և 'ի խորհրդովք. — այս ինքն 'ի գործով յանցանելն, եւն:
Ոչ առ մարմնով խոնարհն և ոչ առ մարմնով մաշեալն, այլ առ սրտիւն և հոգւով. — այս ինքն առ սրտիւ և հոգւով խոնարհն և մաշեալն:

Զառ 'ի մէնջն՝ զամենայն կատարեսցուք. Ըն-կալայ զառ 'ի ձէնջն. — այս ինքն զայն որ է 'ի մէնջ, 'ի ձէնջ։

Մատուսցեն զվասն մեղացն և զվասն փրկու-թեանն. — այս ինքն զայն որ է վասն մեղաց և զայն որ է վասն փրկութեան։

Զդիւրալուրն և զառանց խոր բանիցն յարգեն. — այս ինքն զայն որ է առանց խոր բանից։

Նետիւք խոցոտել զ'ի վերայ պարսպին. — այս ինքն զայնոսիկ որ 'ի վերայ պարսպին։

Լուեալ իմացան զհիւրընկալութեան աղագաւն. — այս ինքն զայն զի էր կամ զլինելն հիւրընկա-լութեան աղագաւ։

Զվասն որոյ եղեն սոքա՝ եղծանել. — այս ինքն զայն վասն որոյ եղեն։

Ի բաց թօթափել իբրև զոչ 'ի բնութենէս. — այս իբրև զայն, իբրև զիր՝ որ ոչ է 'ի բնութենէս։

Զառնելն և զոչն։ Ի բանալն և յոչն. — այս ինքն զոչ առնելն, յոչ բանալն։

656. Բայց երբեմն աւելադրութեամբ կըկրկնուի նախդիրն՝ եթէ դրուած բուն նախդրին տէր եղող խնդրառուին վրայ կամ նաև խնդիրին վրայ, նոյնպէս ալ մակբայէն եթէ դրուածին վրայ. ինչպէս,

657. Բուն նախդրին տէր եղող խնդրառուին վրայ.

Զգացուցանել մեզ զհոգւոյ չափ զսէրն։

Զառ Դարեհիւ զկախւն։

Զվրացն զբժշկիչ պատուիրանս։ Զառ 'ի քեզ զապաւինեալ և զյուսացեալ ժողովուրդս քո։

Կամիմ զվասն նոցա կշտամբութեան յարմարել զբանս։

658. Խնդիրին վրայ.

Զփառս զառ 'ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք։

Զտաճարն զառ 'ի քէն հովանացեալն։

Զզուարակն զվասն մեղաց․ Յարենէ առ 'ի վասն մեղացն սրբութեան․ — որ աւելի որոշ կըհասկըցընէ թէ՝ զզուարակն՝ որ է վասն մեղաց, յարենէն յայնմանէ՝ որ է վասն սրբութեան մեղացն։

Յանկարօտ բարեօք զուարճացեալ յամենալից տեղւոջէս՝ անկանիմ յալէկոծութեամբ սահուն եղեալ 'ի ցաւագին կեանս կենցաղոյս։

659․ Մակբայէն եւ դրուածին վրայ․

Զամենեսեան զյառաջագոյն զննջեցեալսն։

Զայսր գալոյն զորպիսութիւն։

Ի միւսանգամ'ի գալստեանն։

660․ Երբեմն ալ առաջ դրուած խնդիրն ու մակբայն ամենեւին առանց նախդրի կըթողուի, եւ եւ դրուած բուն նախդիր առնելուքին վ̃ր միայն կըդրուի․

Յերկինս զհամբառնալն Քրիստոսի մարգարէանայ։

Մի խափանեսցէ ըստ Աստուծոյ զգնացս սրբութեան։

Ի ծանրութենէ մեղաց զաշխատեալքս։

Ի նմա եղեալ զկրման խօսէին։

Եթէ ոչ կացցուք 'ի բաց՝ զաղքատսն 'ի լքելոյ։

Զերկնիցն ժառանգութիւն, ընդ որդւոյն Աստուծոյ զաղգականութիւն։

Ոչ զպարանոցի խնդրէ կորացումն, այլ հոգւով եւ ճշմարտութեամբ զերկիր պագանելն։

Յայսպիսի իրս անհարթս առ ոչ ուղիղ հայելոյ․ — որ կրնար ըսուիլ նաեւ՝ առ յայսպիսի իրս անհարթս ոչ ուղիղ հայելոյ, ըստ 652։

Ոչ գնայցեր բարկութեամբ խոտորնակ՝ խոտորնակի ընդ քեզ հետեւողս․ — այս ինքն ընդ խոտորնակի քեզ հետեւողս, ընդ հետեւողս քեզ խոտո̊րնակի։

661. Հայցական յատկացեալին նախդիրը շատ անգամ եւս գրուած յատկացուցչին կըդրուի, ու յատկացեալն անորիշ հայցականի պէս կ'առնուի (354).

Պնդեցաւ զկնի նորա Ճանապարհ զեօթն աւուր. — այս ինքն զՃանապարհ եօթն աւուր։
Եթէ ոք տացէ ընկերի իւրում արծաթ կամ այլ ինչ կարասի զիւր՝ յաւանդ։
Առնել հրամայէ սեղան զխնկոցն։
Առնուցուք պտուղս զգեղեցիկ ծառոց։
Թագ առ նա զասխացւոց։
Նմա էր յանձն հանել հարկ զաշխարհին։
Գաւառս բազումս հատեք զիմոյ տէրութեան։
Հանդերձ զմեր զգեցցուք։
Քանի՞ սակաւի բարձէք զկոտորոցն լի. — այս ինքն զքանի՞ սակաւի կոտորոցն։ —
Ոչինչ գիտէր բանտապետն զբանտին։
Ոչ ոք 'ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն։
Զունին ինչ զանձանց։ Ոչ խնդրեմ ինչ զձեր։
Որ առաքեալ է՝ չասէ ինչ զիւր։

Միջակ անունը էն՝ վրան ամենեւին զայ նախդիր չառներ (83), բայց յատկացուցչին վրայ կ'առնէ, ինչպէս տեսար 'ի 477, ու հիմայ ալ հոս։

662. Շատ անգամ նախդիրներն եւս գրուած յատկացեալին միայն կըդրուին։

Այս ժողովուրդ է զոր Թլփատեաց Յեսու, ամենայն ժողովրդեանն ելելոց յԵգիպտոսէ զարու մանուկ. — այս ինքն զարու մանուկ ամենայն ժողովրդեանն։
Ազգի ազգի գանձիցն զԹիւ իսկ և զհամար ոչ մարթէ ոք ունել։
Քաղաքի միոյ մեծի զիշխանութիւնն հաւատալ (եպիսկոպոսին)։
Ուղիղ լողութեամբ չլսէ ուրուք զբանս։

Ստորին Ասորւոյն և տաճկաստանի քաղաքացն
 զաշակերտութեամբ շրջել։
Այլ նոցա որպէս զմորթն զգենումք և ոչ վնասէ,
 և զմիսն եթէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր՝ ոչ
 վնասէր։
Զփիղսն վառեալս՝ գնդաց գնդաց 'ի գլուխ յորի-
 նեալ կացուցանէին։
Եւ ոչ մեծին Գրիգորի յառաքինութիւնսն ուշ
 եդին։
Միոյ ոչխարի եկն 'ի խնդիր։
Թագաւորութեան հասանեն յաստիճան։
Տղայական մտաց մեր յարբումն։
Շատից յաչաց ելանէին։
Աստուծոյ յաչաց ելին։
Հանէ զքեզ առնն յաչաց։
Արքայից արքայի 'ի ծառայութենէ մի ելանէք։
Թեթևագոյն արուեստից պակասագոյն 'ի գիտու-
 թենէն ազգք երկրածնաց։
Ազգ՝ որոյ ոչ լսիցես զլեզու նորա։
Որոյ հուր յաչացն արձակիցի։
Որոյ էիր ընդ աղջկունս նորա։
Որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նո-
 ցա։ Որոց 'ի խռովելն՝ այր մի սպանեալ էր։
Որոց ընդ բարս և ընդ գնացս նախանձէին։

663. Շատ տեղ ալ հայկական գոյականին նախ-
դիրն ետև դրուած ածականին միայն կըդրուի, ու
գոյականն անորոշ հայցականի պէս կ'առնուի.

Ա՛ռ քեզ կինամոմոն զանոյշ՝ զկէս այնորիկ։
Ճանապարհ զարքունի գնասցուք։
Անհնար համարեցան առնել զիր զաշխարհամար՝
 Հրէիցն։
Խնդրեցէք 'ի Տեառնէ անձրև ըստ ժամանակաց
 զկանուխ և զանագան։

Տացէ զուարթութիւն զանտրտումն։
Մեծութիւն բազում զհայրենի ժառանգեալ։
Ունեալ դպրութիւն զյոյն։
Կերան հաց նեղութեան զչորաբեկն։
Զգեստ զյուլին զգենուն։
Բան զայդպիսի ոչ հարցանէ։
Գտին անդ այր զոմն՝ մոգ։
Թագաւոր զոմն՝ ասեն զՅիսուս։
Բայց բան զայս կատարեցէք։
Օրինակ զայս գրել։
Եւ կերակուրս ժանտս զայն ուտէ՝ զոր և ոչ գա-
զանք և անասունք ուտեն։
Բաժանեաց աչս ամենեցուն զնոյն, ձեռս և ոտս
զնոյն։
Տեղի մի և զնոյն ցուցանեն երեքեան նոքա։

664. Երբեմն ալ առաջ դրուած ածականին չդրուիր ու մինակ ետև դրուած գոյականին կամ երկրորդ ածականին կըդրուի նախդիրը.

Բազում զայրուձի զասխացւոցն կոտեալ. — այս
ինքն զբազում այրուձի։
Մեծամեծս ևս քան զսոյնս՝ ցուցանէ նմա զգործս.
— այս ինքն զգործս մեծամեծս։
Յաղել զխօղս և խառնակ զանասունս։
Այլ իմն բարձրագոյն զիրս նշանակէ։
Եւ մեծամեծ զայդպիսի վնասանի առնելով։
Յաղթօղ և զնոր օրհնութիւն երգեսցուք։
Սուրբ զարիւն իւր. սուրբ զորդիսն. սուրբ զկա-
նայսն։
Շատ զոք ընդ միմեանս շփոթեաց։
Տեսանել նոր զոմն Ոդիսեւս։
Եւ կամ ընաւ հայ զոք թողուլ։
Սակաւս զոմանս ընտրեալ։
Նոյն զաղօթսն կատարեմք՝ զոր յեկեղեցին. —
այս ինքն զնոյն աղօթսն։

Նոյն զինքն ես վաճառեցի։
Նոյն ինքն զՔրիստոսն։
Նոյն ինքն արժանաւոր լինել զԱստուած տեսանել։
Բազումիշխեցելոյն 'ի բանսարկուէն զերծեալք. — այս ինքն 'ի բազումիշխեցելոյն։
Մեծաւ զօրութեամբ բարձր 'ի ձայն աղաղակէ. — այս ինքն 'ի բարձր ձայն կամ 'ի ձայն բարձր։
Բոլորդ 'ի հիքութեան ընկեցայ գոգ. — այս ինքն 'ի բոլոր հիքութեանդ գոգ։
Կամ այլ ինչ 'ի սրբութիւնսն մերձենալ. — այս ինքն յայլ ինչ սրբութիւնսն։
Նոյն ինքն 'ի հօրէ։ Նոյն ինքն յինէն։ Նմին իսկ 'ի ցուցէս։

665. Հոլովառու բառերն ալ շատ տեղ ան հոլովին յատկացուցչին կամ ածականին մէջը կ՚իյնան, ու շատ բառերով անկէ կը հեռանան ու նախդիրնին կը խախտի.
Յորոյ վերայ պարսպացն ճեմէի. — այս ինքն յորոյ պարսպացն վերայ, 'ի վերայ որոյ պարսպացն, որուն պարիսպներուն վրան պտուտ կուգայի։
Յերկուց միջոյ քրովբէից. — այս ինքն 'ի միջոյ երկուց քրովբէից։
Ջուարձալից հանդերձ բերկրանօք։
Դժնդակն հանդերձ մահու։
Իւրեանց վասն խնդրի։ Անարժան վասն դիմադարձութեանն։ Քոյինն սակս բանի։
Սոցա յորժամ անհնարին բարկութիւն գազանացն եհաս 'ի վերայ. — այս ինքն 'ի վերայ սոցա։
Ի տանն, յորոյ կոչեցեալ էր անուն իմ 'ի վերայ նորա. — այս ինքն յորոյ վերայ։
Ի պէսպէս փորձութեանց 'ի մէջ անկանիցիք։
Յամենայն նեղութեան իբրև զձեզ և աւելի քան զձեզ 'ի մէջ եղեալք։

վաան և ոչ մի ինչ այնուհետև խիղճ մնաց ու-
նելոյ:

Նա գհետ եղեալ Պաւղոսի և մեր՝ աղաղակէր:
Զհետ երթիցուք խաղաղութեան:
Զո՞յր հետ ելեալ ես: Զմեր կնի ոչ շրջէր:
Առաջի կացուցին նորա:
Փոխանակ որ մինչև ցայժմ հայհոյութեանցն:
Ընդդէմ դարձցի քո:
Ընդ հողմոյն դէմ:
Հանդերձ Թափէր հարազատաւն:

666. Մակբայներէն՝ երկու բառով եղողներն՝ եր-
բեմն միջանկեալ բառերով կը հեռանան մէկմէկէ.
Մինչ նա դեռ կամէր:
Մուրուքն դեռ տակաւին սեաւ էր կային:
Այլ ինչ աղէ արարեալ: Քան եթէ այլ ոք ինչ
աղէ յոք վտանգ լինիցի: Եւ ոչ այսչափ միայն,
այլ և՝ այլ ևս աղէ. — այս ինքն այլազգ ևս:
Գրէ իսկ Բէ ամենայն:
Թէ և բիւր հնար դմա գոյր անգամ մեռանել. —
այս ինքն բիւր անգամ:
667. Ոմանք ալ առաջ դրուելուն տեղ՝ ետև կը դր-
ուին, կամուրիչ կերպով բնական տեղէն կը խախտին.
Բնաւ և անուանի իսկ 'ի ձեզ ընդէ՞ր պոռնկու-
թիւն. — փոխանակ ըսելու՝ ընդէ՞ր բնաւ և ա-
նուանի իսկ:
Այլ և փրկէր իսկ ընդէ՞ր զայլոյ արարածս:
Եւ բնաւ իսկ սուտ ընդէ՞ր կոչիցի:
Եւ գոհանայն զկա՞րդ:
Եւ լինի այս ո՞րպէս:
Մեծամեծս ո՞րչափ քան զմարդն իցեն:
Մեք յորժամ բանութեամբ կռուեսցուք ընդ աշ-
խարհիս, աշխարհս 'ի բաց քանդի. — փոխանակ
ըսելու՝ յորժամ մեք:

Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ. — փոխանակ՝ յորժամ կոյր կուրի։

Զաղջիկն յորժամ յարոյց, զձեռանէն ունէր. — փոխանակ՝ յորժամ զաղջիկն։

Ըստ որում 'ի լերինն Սինայ և Դանիէլ՚ի յորժամ երևեցան։

Մին մինչդեռ ընկենոյր։ Ջերմ մինչդեռ էր։

Եւ որպէս հաւանեալ եմ։

Կասկածեն թէ վնաս գուցէ ինչ մտանիցէ. — այս ինքն թէ գուցէ վնաս ինչ։

Զի մի պղծիցին գուցէ. — այս ինքն մի գուցէ։

Ցասուցեալ միշտ են։

Ճանաչեմք զնա ամենեքին գրեթէ։

Որոձայ ոչ. որոձիցէ ոչ. տկարանայ ինչ ոչ քեզ. գրեցաւ իսկ ոչ. եթէ սպանանիցես ոչ. բնաւ և յիշեմ իսկ ոչ. բնաւ և էր իսկ ոչ. բայց գիտէի ոչ զնա. և գիտէր իսկ ոք ոչ։

Որ ոչն կամիցի գործել, և կերիցէ մի։ Որ գործէ ոչ, կերիցէ մի։ Սքանչանայք մի։ Բնաւ և յայտնել մի։ Ասեր իսկ դու մի։ Լեր՝ մի յիննունցն ապերախտից, այլ՝ տասներորդ ի նմանեաց. — փոխանակ ըսելու՝ մի լինիր յիննունցն։

668. Կամ միջանկեալ բառերով կը հեռանան բայէն.

Զերկիրս շուրջ ջուր պատէ. — այս ինքն շուրջ պատէ։

Ցորժամ, որ այժմս բանապահոյձ խրոխտաձայն սըգացող բարձրապարանոց, անշնչեալ դնիմ դի անկենդան։

Եւ Տ ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն՝ հորատանէր զլս։

Մի այդքան մեծ քաղաք չինէր։

Մի, որ ստեղծն զնոսա, ողորմեսցի նոցա։

Մի, զի չեմք ակն, ասասցուք՝ թէ չեմք 'ի մարմնոյ անտի։

Եւ ոչ ամենևին թէ վիշտս ինչ կրիցեմ՝ ըմբայէն ։
Զայս ոչ, ասէ, առ պարծել ինչ ունեմ.— այս ինքն ոչ ասեմ առ պարծել։
Եթէ ոչ ոք ծնցի. Թէ ոչ ոք առաջնորդեսցէ. Ապա եթէ ոչ ոք հնազանդեսցի.— այս ինքն եթէ ոք ոչ ծնցի կամ եթէ ոչ ծնցի ոք, և այլն։

Այսանկ ալ՝ չ մակբայն հրամայել բային վրայ կըդրուի՝ ետևի անորոշ դերբային դրուելու տեղը.

Զգրաստն անկեալ ընդ բեռամբ՝ չհրամայէ անտես առնել.
Ծառոյն՝ յոր հուպն չհրամայեաց երթալ.
Բանիւ անգամ ոչ հրամայեն հաղորդել ընդ ապականեալսն.

այս ինքն հրամայէ անտես չառնել, հրամայեաց չերթալ, հրամայեն ոչ հաղորդել. կամ աւելի աղէկ՝ չհրամայել կ'իմացուի չտալ թոյլ, չներել, չհամարձակել։

669. Առաւել.. քան, նախ.. քան, մանաւանդ.. քան, մակբայ ու շաղկապները՝ շատ անգամ ներհակ կըբանին՝ քանն առաջ, կամ երկուքը քովէ քով. շատ տեղ ալ առաւելը կըձգուի.

Քան յանձն իւր, առաւել 'ի նա էր յուսացեալ։
Առաւել քան ընդ ճարտարաբանութիւնն՝ ընդ համարձակութիւն աներկիւղութեանն զարմանային ։
Նախ քան բանիւք՝ գործովք փառաւորեսցուք ։
Հեշտանայ 'ի տեսութիւն նոցին՝ քան 'ի կերակուր առաւել։
Թագաւորի քան քաղաքին վայել է առաւել զարդարել։
Եւ մանաւանդ քան ամենայնի՝ խոնարհութեանն և ողորմածութեանն նախանձաւոր լիցուք ։—
Քան զաւետիս՝ զբօթ սիրեմք լսել.— այս ինքն առաւել զբօթ քան զաւետիս.

670. Նէթ մակբայն սովորաբար ետ կըդրուի. Ոտիւք նեթ անցից: Երթիցեն արք նեթ: Կոչեաց նեթ 'ի գերեզմանէն և յարոյց:

Բայց երբեմն առաջ ալ կըդրուի.

Եւ նեթ զբարիս խօսել. — այս ինքն զբարիս նեթ:

Ի ծննդենէն՝ նեթ մոլութեամբ լեալ. — այս ինքն մոլութեամբ նեթ:

Եթէ դու՝ նեթ առ վայր մի կարասցես յանձն առնուլ. — այս ինքն առ վայր մի նեթ:

671. Շաղկապներէն ԵՒ, ԹԷ, ԵԹԷ, ԶԻ, ՎԱՍՆ ԶԻ, ԹԷՊԷՏ, խօսքին սկիզբն կենալուն տեղ՝ անունէ կամ մակբայէ ետև կըդրուին շատ հեղ.

Զի մարմինն և նոցա 'ի չորից հիւթոյն կայ. — այս ինքն զի և նոցա մարմինն:

Թէ արդար միայն էր, յայտ է եթէ՝ զարդարութեան և պատուիրանս տայր:

Արդ այս թէ ուստի սկսաւ՝ ասացաք. — այս ինքն թէ այս ուստի սկսաւ:

Սով եթէ լինիցի յերկրի, կամ ժանդ եթէ լինիցի, լուիցես յերկնից:

Իմ եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա:

Զի կամակար մտօք եթէ յանցանիցեմք, այնուհետև ոչ ևս պիտոյ է:

Ընդ առաւօտս եթէ սերմանեսցես, ծաղկեսցէ յամառն:

Սակաւիկ մի եթէ 'ի բաց թողացուցանէիր զփքումն տէրութեանդ:

Եւ ես ոչ եմ կոչեցեալ մտանել առ արքայ, զի են այս աւուրք երեսուն. — այս ինքն և են այս աւուրք երեսուն զի ես ոչ եմ կոչեցեալ:

Ո՛ն եկայք, և մեք զի ընդ նմա մեռցուք. — այս ինքն զի և մեք:

Իմ զի աղ և հաց կերեալ է յաշխարհին ձերում,
գութ և սէր ունիմ ընդ աշխարհն:

Իսկ զսուրբ քահանայսն վասն զի կապանօք տա-
նէին, յետ երկուց ամաց և քսան աւուր հասա-
նէին:

Զի զայն թէպէտ և ցանկութիւն շահից հնա-
րեցաւ, սակայն, և այլն:

Մարմնով թէպէտ 'ի խաղաղութեան էին առ ժա-
մանակ մի, այլ, և այլն:

Բայց եւս դնել ասենք՝ մեր լեզուին սովորութիւն չէ:

672. Բայց, Բայց սակայն, շաղկապները Թէպէտ և էն եւքը դրուելուն տեղը՝ շատ անգամ առաջ կըդրուին. երբեմն ալ կ'աւելցուի նորէն այլ, սակայն.

Բայց թէպէտ և նորա աւերեալ էր ատրուշան մի,
ոչինչ զանգիտեաց գալ:

Բայց սակայն թէպէտ և ամենայն գործքս այս
դժնեայ էին, չև էր ուրուք ձեռն արկեալ յայտ-
նի յեկեղեցին:

Բայց նա թէպէտ և 'ի ներքոյ յոյժ գսրովէր զնա,
այլ արտաքին դիմօք մեծարեաց զնա:

Բայց թէպէտ և յանխծից մտին ցաւք յաշխարհ,
սակայն էն և այլ պատճառք:

673. Սակայն, ուրեմն, արդ, արդէն, Համատանդ, շաղկապներն ալ երբեմն եւս կըդրուին անունէ ալ, բայէ ալ, մակբայէ ալ. ու մէկ կտորը մէկալէն կըբաժնուի.

Նա սակայն ոչինչ թուլ՛անայր:

Տես սակայն նմին միաբան:

Էր սակայն և 'ի ներքս:

Բայց մի սակայն կարծիցես:

Բայց այժմ սակայն հսկեսցուք:

Ապա և ջուրք ուրեմն ընկլուզանէին զմեզ:

Զի հաստատութեամբ ուրեմն պահէին զօրէնս:

Սպաներ ուրեմն: Մերժեցայ ուրեմն:

Ջուր ուրեմն վաստակէի: Ուստի՞ լինին ուրեմն:

Ահա յայտ է ապա, թէ, և այլն։

Այս ցուցանէ ապա, թէ, և այլն։

Որ օր լուան ապաքէն զմէնջ մարդիկ,.. արտասուս բազում հեղան։

Գուսանաց համբերեմք մանաւանդ քան աստուածային գրոց վարդապետութեան։

Անդիտացեալ թէ նուաստացուցանեն մանաւանդ։

674. Իսկ անգամ շաղկապն որ սովորաբար դիտուած բառէն ետև դրուելու է, ինչպէս, Եւ հա՛ց անգամ չժամանէին ուտել, Եւ թաղելո՛յ անգամ չէին բաւական, Մինչև օձից և գազանա՛ց անգամ երկիր պագանել. — երբեմն առաջ ալ կրդրուի, կամ ամենէն ետև։

Զի անգամ ոսկերք թագաւորացն փոփոխեցան յօտարութիւն. — փոխանակ՝ ոսկե՛րք անգամ։

Մինչ անգամ վասն կաշոյ միոջ խնայ արարեալ՝ թագոյց. — Վասն կաշոյ միոջ անգամ։

Այնպէս սրանալ՝ի փախչելն, որ անգամ և հետք մի երևեսցին. — և հետք անգամ։

Եւ անգամ ոչ գիտէր զայլն. — և ոչ գիտէ՛ր անգամ։

Զոր անգամ և ոչ յիշեմք երբեք զմերն։

Ոչ տասն անգամ արդարք գտան. — այս ինքն տասն արդարք անգամ ոչ գտան։

Եւ ոչ զայն արդարութիւն գտեր անգամ. — և ոչ զայն արդարութիւն անգամ։

Մարթի և յաղքատն հասանել անգամ անիրաւութիւն. — յաղքատն անգամ։

Մինչև զգայ ոչ անգամ։

---

# Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

675. Քերականութիւնը լեզուին հաստատուն կանոնները սորվեցընելէն ետև, որ երկրորդ մասին մէջ ըրինք, ձևաւոր շարադրութեան ու վսեմ հայկաբանութեան վրայօք՝ արթնցընօղ մը միայն կրնայ ըլլալ այսպիսի համառօտութեան մէջ. աւելին ուզօղն՝ ընդարձակին մէջ կրնայ գտնել: Բայց ա՛լ աղէկն և ա՛լ աւելին սորվելու համար՝ բուն հին նախնեաց ազգային հասարակաց լեզուին ընտիր գրքերը շատ կարդալու է ուշադրութեամբ. որոնց շատ տեսակ բանի յարմար գրուածներն են Աստուածաշունչ գիրքը, Եզնիկն, Եղիշէն, չորս եկեղեցական գրեանքն, և ասոնց նմաններն ըստ ոճոյ դարուն. ինչպէս, տղայոց ախորժակին յարմար ընտրանաւ առնելով, տպածներէն քանի մը երևելիներ, Ագաթանգեղոս, Բիւզանդ, սուրբ Բարսղի Վեցօրեայն, Ոսկեբերանին հին Թարգմանութիւնքը, Կիւրղի կոչումն ընծայութեան, Սեբերիանոս, Եւսեբիոս, Եփրեմ, Մանդակունին, Փարպեցին, Խորենացին:

Յատակ և ընտիր ոճի մէջ զարգանալէն ետքը՝ կրնան շատ օգտիւ կարդացուիլ նաև Ղեւոնդ երէց, Լաստիվերտեցին. Ներսէս Շնորհալին, Սարգիս, Իգնատիոս, Մխիթար Գօշ, Յովհան կաթողիկոս, Արծրունին, Նարեկացին, մանաւանդ ասոնց ծաղկաքաղ կտորները:

Բայց միշտ լաւ է աննման հեղինակներ անխտիր խառն չկարդալ, մանաւանդ ՚ի համբակութեան, և շատ չհեռանալ լեզուին ոսկեղէն ժամանակին բուն հարազատ շարադրութենէն, որ է չորրորդ և հինգերորդ դարը:

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ԿԱՐԵՒՈՐ ԻՐԱՑ ՑԱՆԿ

## ԸՍՏ ԹՈՒԱԲԱԺՆԻՑ

Ա վերջացած անուններն ինչպէս կ'առնեն վերջահոլովի ձայնաւորը, 21. յոգնակի .քէն ու .ւէն, 21, 67. դիմորոշ յօդը, 141:

Ածական անունն ինչ է, 9. ուրիշի բաղդատութեամբ ինչ խնդիր կ'առնէ, 390-392. առանց բաղդատութեան շատի մէջ աւելին կամ պակասը ցուցընելու ինչ խնդիր կ'առնէ, 393. — Ածական հասարակ անունը նախադաս ինչպէս կըքանի ըստ հոլովի, 407-413. յետադաս ամէն ածական ինչպէս, 422, 423, 425. նախադաս և յետադաս՝ ըստ Թուոյ ինչպէս, 426-430. — Ածական դերանուանց նախադաս համաձայնութիւնը, 414, 417, 420, 421. յետադաս համաձայնութիւնը, 417, 422, 424, 428, 429. — Ածական գոյականի տեղ, 585. մակբայի տեղ, 506. — Ածականի համաձայնութեան բակառութիւն, 570. ածականի փոխադրութիւն, 622-626. արտուղութիւն, 648-651:

Ամենայն, 110. ըստ Թուոյ համաձայնութիւնը, 430:

Ամենքեան, ամենքին, 76:

Ամէն կամ ամեն, 110:

Այլ, միջակ անուն, 106:

Այքան այսչափ, 107:

Այքանի, 107:

Ան, ա մասնիկներով ածականներն ինչ խնդիր կ'առնեն, 387:

Անձնիւր կամ անցնիւր, 108:

Աննախդիր կամ անորոշ հայցական խնդիր, 354-356:

Անուն բային ինչ է, 513. դիմաւոր բային ինչ հոլով կըդրուի, 327. անորոշ և անցեալ դերբային ինչ հոլով, 328-332. — Անուն բայի զեղչումը, 513-515. փոխադրութի, 586-592. արտուղութի, 641:

Անցեալ ժամանակ բայի, 159. անցեալ անկատար, 159, 272. անցեալ կատարեալ, 159:

Ապաթարց, 494, 500:

Ապառնի ժամանակ բայի, 159, 269, 270, 274, 275:

Առ, առ'ի, նախդիր, 148:

Առնելու, տալու, բայերն ինչ խնդիր կ'առնեն, 380:

Առնեմ, արտուղի բայ, 239:

Առոգանութիւն, 486:

Արբի, պակասաւոր բայ, 248:

Բաղաձայն տառք, 5:

Բայանուններն ինչպէս խնդիր կ'առնեն, 382-386։
Բայից արմատներ, 168· 181 ծան· 205 ծան։
Բայք որ արմատին ու յանգին մէջ ածանցական մասնիկ ունին, 168· որոց ան մասնիկը ձգուած է, 206· չիմ, նչիմ վերջացած բայք, 222· բայն անուն բայերն ինչպէս պիտի գրուի, 327· նոյն դէմքով շատ անուն բայերու ինչ թիւ կըդրուի բայն, 334-337· այլ և այլ դէմքով անուն բայերու ինչ դէմք ու թիւ կըդրուի, 338, 339· Բայից զեղչումն, 340, 516-520, բակառութիւն, 560, 561· փոխադրութիւն, 593, 594, 607, 608։
Բան կամ խօսք, 2, 6, 312։
Բառ, 2, 5· բառք որ կըփոխուին կամ չեն փոխուիր, 7։
Բարդ և ածանցեալ անուանց բակառութիւն, 574։
Բացայայտիչ, 320, 400-406· բացայայտչի բակառութիւն, 564-569· արտուղութիւն, 647։
Բացառական հոլով, 56-58· անսովոր, 68։
Բոլորեքեան, բոլորեքին, 76։
Բութ, 486, 487, 494, 503։
Գամ, արտուղի բայ, 237։
Գծիկ —, ուր կըբանի, 509։
Գոգցես, պակասաւոր բայ, 259։
Գոյական անունն ինչ է, 9· թուի մը հետ ինչպէս կըբանի, 431-435· ինչպէս խնդիր կ'առնէ, 389· ածականի տեղ 435, 585· — Գոյական անունին զեղչումն, 523։
Գործիական հոլով, 55, 58։
Գրադարձ, 495-499։
Դերանուանական ածականք, 134-139· ինչպէս կըհամաձայնին գոյականի հետ, 414, 418, 420, 428, 429։
Դերանուանց (գոյական և ածական) զեղչումն, 524· աւելադրութիւն, 538-540· բակառութիւն, 571-573· հոլովի փոխադրութիւն, 627։
Դերբայ անորոշ, անցեալ, ապառնի, 162· անորոշ' իբրև բայ, 278, 279· իբրև գոյական անուն, 280-283· անցեալ' իբրև բայ, 284-286· ըլլիմ, էմ բայերուն հետ, 287-290; ինչ խնդիր կ'առնէ, 358· իբրև ածական անուն, 291, 292· ապառնի' էմ բային հետ, 293, 294, իբրև ածական անուն, 295· — Անորոշ դերբային զեղչումն, 521, 522· աւելադրութիւն, 535, 536· փոխադրութիւն, 595-605· անցեալ դերբային աւելադրութիւն, 536· փոխադրութիւն, 597, 606· դերբայից արտուղութիւն, 642։
Դէմք բայի, 158· դերանուանց, 112-115· դիմաց փոխադրութիւն, 607։
Դիմորոշ յօդք ինչ են, 140· ս դ ինչպէս կ'որոշեն, ն ինչպէս, 441· գոյականին դիմորոշ յօդն ուրիշ բառի վրայ դրուած, 446-452· շատ գոյականներու ինչպէս կըդրուի, 453· աւելի դրուած, 454· ածական դերանուանց հետ ինչպէս կըբանի, 455-458· դիմորոշ յօդերուն տեղ ինչ կրնայ դրուիլ, 459· դիմորոշ յօդ չառնող բառերն որն են, 461· և ան ատենն ինչ ընելու է, 462-470։
Դնեմ, արտուղի բայ, 241։
Ե կմ՞ է, բայից կատարեալին միավանկ եզակի երրորդ դէմքին վրայ, 186։
Եւք յոգնականի վերջը որ բառերու կըդրուի, 64։
Եզակի անուն, 10· եզակի չունող անուններ, 11· երբ եզակի կ'ըլլան, 72։
Եղանակ բայի, 160։
Ենթամնայ, 494, 495։
Երթամ, արտուղի բայ, 238։

Երկար, 486, 492։
Երկաքանչիւր, 79, 109։
Երկբարբառք, 4· որ հոլովելու ատեն կըփոխուին կամ ոչ, 17, 18։
Երկոքեան, երեքեան, և այլն, 76։
Զ, Նախդիր, 144, աւելադրեալ, 552։
Զի, միջակ անուն, 80 որ յարաբերականին տեղ, 637։
Զինչ, 80· 84· Զինչ, ինչ, 84։
Էական բայն ինչ է, 165։
Ընդ, Նախդիր, 149։
Ըստ, Նախդիր, 150։
Թիւ անուան, 10· բայի, 158։
Թուոյ կամ Թուական անուանք, 74· ինչպէս կըհամաձայնին գոյականի հետ, 414, 415, 420, 424, 431-434։ Կարգ ցուցընող Թուականք, 75։
Ժամանակք բայի, 159։
Ի, Նախդիր, 145։
Իբրև, Նախադրութեան բակառութիւն, 583։
Իմն, 82, 83, 85, Իմն իմն, 85։
Ինչ, 80, 82, 83· զինչ ինչ, 84· ինչ ինչ, 85· ոչ ինչ, 86։
Իրերաց, 102։
Իւրաքանչիւր, 108։
Իք, միջակ անուն, 82։
Իք, չիք, բայ, 180, 332։
Լի վերջացած բայածական, 296· առանց ունենի հոլոված, 297, 299· է բային հետ, 298· ող բայածականի և անցեալ դերբայի տեղ, 299· մինակ ինչ խնդիր կ'առնէ, 388· է բային հետ ինչ, 359։
Լծորդութիւն բայից ինչ է, 167։
Լուայ, պակասաւոր բայ, 250։
Խնդիր բայի ինչ է, 314· խնդիր էական բայից, 341-351· խնդիր սեռէ ներգործական բայից, 316, 332 կրաւորական բայից 317, 352, 353· խնդիր բնութեան ամէն բայից, 318 360-362· ուղղական բնութեան խնդիր, 363-365· բնութեան խնդրի տեղ հայցական, 366-377· անունէ և բայէ մէկ եղած բայերուն խնդիրը, 357· էական բայով խոնարհած անցեալ դերբային խնդիրը, 358· էական բայով Լի բայածականինը, 359։
Խնդրոյ Նախդրաց և հոլովառու բառից զեղչումն, 530· խնդրոյ բայից բակառութիւն, 562, 563· փոխադրութիւն, 611, 614· դերբայից խնդրոյ փոխադրութն, 612, 613· խնդրոց արտուղութն, 643-646։
Ծանեայ, պակասաւոր բայ, 252։
Կէտք, 494· կէտ կէտ..., ուր կըբանի, 509։
Կրաւորական բայն ինչ է, 163· Ներգործականէն չորոշուած խոնարհմունքի տեղերն ինչ ընելու է, 188· հասարակ բայի պէս, 267, 611։
Կրաւորակերպ չէզոք բայ, 164, 191, 192, 211, 212, 215, 216, 266։
Համաձայնութիւն մասանց բանի ինչ է, 524։
Հասարակ անուն, 8։
Հասարակ բայ, 165, 191-193, 210, 212, 215։
Հոլովառու բառք, 152· անոնց զեղչումն, 529· աւելադրութիւն, 551· արտուղութիւն, 665։
Հոլովմունք անուանց ինչ են, 15· քանի են, 16· պարզ հոլովմունք, 16, 19-38· խառն հոլովմունք, 16, 39-47· զարտուղի հոլովմունք, 48-54· մէկմէկու կըփոխուին, 69-70, 72։
Հոլովք անուան, 12, 72· հոլովք անուան մակբայի տեղ, 307։

Հրամայական եղանակ բայի, 160, 269, 271։
Ձայնաւոր տառք, 3. որ հոլովելու ատեն կըփոխուին, 17. որ չեն փոխուիր, 18։
Ձև շարադրութեան ինչ է և քանի, 510, 511։
Մակակէտ, 494, 501. — կամ փշիկ, 502։
Մակբայից զեղչումն, 531, 532. աւելադրութիւն, 533-535. արտուղութիւն, 666-670։
Մասունք բանի, 5։
Մարթի, անդէմ բայ, 261։
Մէ վերջով որ հոլովման բառերը կ'ըլլան բացառական, 33, 34։
Մէն, մէն մի, 104։
Մի, թուական, 74. անորոշ՝ մը, 103. մի մի. 104։
Միմեանց, 101։
Միջակ կամ անորոշ անուններն ինչ խնդիր կ'առնեն, 394, 395. անոնց համաձայնութիւնը, 414, 416, 419, 428. 429, 430. աւելադրութիւն, 536. հոլովի փոխադրութիւն, 627։
Միջակէտ, 494, 505։
Միւս, 105։
Յ, նախդիր, 13, 145, 146։
Յանեմ, արտուղի բայ, 245։
Յատկացուցիչ, 319, 396-399. յատկացուցչի փոխադրութիւն, 615-621. արտուղութիւն, 647։
Յատուկ անուն, 8, 20, 21-23. ինչպէս յոգնական կ'ըլլայ, 67. ինչպէս գրելու է, 508։
Յարաբերական որ եզակի յոգնակիի տեղ, 636. յարաբերեալի աւելադրութիւն, 541. յարաբերականի և յարաբերեալի բակառութիւն, 575-581, փոխադրութիւն որ ուղղականին ամէն հոլովի տեղ, 629. որ՝ զի շաղկապին տեղ, 636։
Յոգնակի ուղղական, 10, 59, 61, 63, 65. յոգնակի չունող անուններ, 11. յոգնակի սեռական և բացառական, 57, 58. հայցական, 60, 61, 63, 65. բառի մը հոլովքը յոգնակիի ք ու ս կ'առնեն և ինչ կընշանակեն, 68։
Նա դերանունը, ինքն, իւր դերանուանց տեղը, 628։
Նախադրութիւն, 152։
Նախդիր, 13, 142. կրկնուած անուններուն ինչպէս դնելու է, 471. յատկացուցիչ կամ ածական ունող անունին նախդիրն ո՛ւր կըդրուի. 476, 479, 482, 483. բացայայտիչ ունող բառին նախդիրն ո՛ւր կըդրուի, 481. — Նախդիրներու զեղչումն, 525-528. աւելադրութիւն, 543-551, 656-659. բակառութիւն, 582. արտուղութիւն, 652-655, 660-665։
Նախդրիւ հոլովք ինչ են, 14։
Նախնեաց գրքերէն որո՛նք աւելի կարդացուելու հեղինակք են, 675։
Ներ յոգնականի վերջը որ բառերու կըդրուի, 64։
Ներգործական բայ, 163, 268. չէզոքի պէս խնդիր առած, 379։
Ներգործակերպ չէզոք բայ, 164, 268։
Ներկայ ժամանակ բայի, 159, 272, 273։
Շաղկապաց զեղչումն, 533. աւելադրութիւն, 556, 557. արտուղութիւն, 669, 671-674։
Շարադրութիւն, 312-315. պարզ, 326. ձևաւոր, 326. շարադրութեան բնական կարգը, 640։
Շեշտ, 486. 488-491։
Ո, ով, 87-90։

Ոլորակք 486։
Ող կամ օղ վերջացած բայածական, 300-303։
Ոմն, 94-97։
Ո ոք, ով ոք, 98։
Ոչ ինչ, 86։
Ոչ ոք, 100։
Ոջ վերջով որ հոլովման բառերը կ'ըլլան սեռական ու տրական, և ոջէ վերջով բացառական, 46, 47։
Որ, միջակ անուն, 91, 92, 125. յարաբերական, 124, 125. որ ինչ, 93. որ ոք, 99։
Որպէս նախադրութեան բակառութիւն, 583։
Ու վերջով որ հոլովման բառերը կ'ըլլան սեռական ու տրական, 33, 34։
Ունիմ, պակասաւոր բայ, 254։
Ուտեմ, արտուղի բայ, 243։
Ուցանել վերջացած բայք, 203. ուսկից շինուած են, 203 ծան. տեղը ինչ կրնայ ըսուիլ, 204. կրաւորականնին, 249։
Ուք, 94-100։
Չափ, կշռաքի անունները ինչպէս խնդիր կ'ըլլան, 381։
Չեզոք բայ, 164, 166. ներգործականի պէս խնդիր առած, 378։
Չոգամ, անսովոր բայ, 238 ծան.։
Պարոյկ, 486, 493։
Պարտիմ, պակասաւոր բայ, 237։
Պիտի, անդէմ բայ, 262։
Սահմանական եղանակ բայի, 160։
Սեռական ու տրական հոլով, 57, 58։
Ստորադասական եղանակ բայի, 160, 172 ծան. 269, 274, 275։
Ստորակէտ, 494, 504, 507։
Վանկ, 2։
Վերջակէտ, 494, 506։
Վերջահոլովք անուան, 12. վերջահոլով չունեցող անուանք, 14. երբ վերջահոլով կ'ըլլան, 72։
Տամ, արտուղի բայ, 234։
Տրոհակք, 494։
Տրոհութիւն, 494։
Ր, բառին ընական նուէ առաջ՝ միշտ — է, 49 ծան. 182, 195։
Ց, նախդիր, 147։
Ցաւէ, անդէմ բայ, 263։
Փակագիծ, 509։
Փշիկ կամ մակակէտ, 502։
Քանի, 107։
Քեան կամ քէն վերջացած թուական անուններ, 76։
Քերականութիւնն ինչ է, 1։
Օղ վերջացած բայածական. տես Ող։

Զտարերս Հայերէն Քերականութեան Հ. Ա. Կ. Բագրատունւոյն, յաղագս մասանցն գեղեցիկ դասաւորութեամբ, ոճոյն պարզութեամբ, կանոնացն ճշգրտութեամբ և բազմահմուտ և սուր դիտողութեամբքն պատկանաւոր գոլոյ՝ ի հաւաստի ուսումն լեզուիս, արժանաւոր համարիմք տպագրութեան առ՝ ի պէտս դպրոցաց ազգիս։

ՔՆՆԻՉՔ ԳՐՈՑՍ

5499